Ջ.Մ. ՂԱՍԱԲՅԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ
ОТДЕЛ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ
ЗАРУБЕЖНЫХ АРМЯНСКИХ ОБЩИН

З. М. КАСАБЯН

ОЧЕРКИ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ В БОЛГАРИИ

(1896 - 1970)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1986

9Հ
Հ-43
հ
2825

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԺԻՆ

Զ. Մ. ՂԱՍԱԲՅԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(1896 - 1970)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1986

ԳՄԴ 63.3 (4 Բուլ)+63.3 (2ՀՍ)
Ղ 430

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի և ՀՍՍՀ ԳԱ սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր
Ռ. Հ. Խաչատրյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ պատմական գիտությունների դոկտոր Վ. Ա. Միխայլյանը և պատմական գիտությունների թեկնածու Ս. Է. Քալանջյանը

Ղասաբյան, Ջ. Մ.

Ղ 430 *Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության (1896—1970) /Պատ. խմբ. Ռ. Հ. Խաչատրյան, ՀՍՍՀ ԳԱ. Պատմ. ինս-տ՝ Սփյուռքահայ համայնքների պատմ. և մշակույթի բաժին.—Եր.՝ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986.—302 էջ.*

Աշխատության մեջ արխիվային, մամուլի և հրատարակված գրականության հարուստ նյութի հիման վրա ուսումնասիրվել և վեր են հանվել բուլղարահայ գաղութի (1896—1970) սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի բազմակողմանի հարցերը։ Ընդգծված է հայ և բուլղար ժողովուրդների պատմական կապերն ու ռուս ժողովրդի անմիջական օգնությունը երկու ժողովուրդների ազգային և սոցիալական ազատագրման գործում։ Վերլուծված են բուլղարահայերի մասնակցությունը բուլղար աշխատավորների սոցիալական պայքարին, Բուլղարիայում ֆաշիզմի և կապիտալիզմի տապալման ու սոցիալիստական կարգերի հաստատման համար մղվող պայքարի հարցերը։

Հասցեագրվում է պատմաբաններին և ընթերցող լայն շրջաններին։

0505040000 ԳՄԴ 63.3 (4 Բուլ)+63.3 (2ՀՍ)
Ղ————————17—86
703 (02)—86

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բյուզանդական կայսրության և Սասանյան Իրանի միջև Հայաստանի համար դարեր տևող հակամարտությունը վերջացավ նրանով, որ Արշակունիների հայկական պետությունը դադարեց գոյություն ունենալուց։ Հայաստանը բաժանվեց երկու ախոյանների միջև։ Երկրում ստեղծված անապահով վիճակը պատճառ դարձավ, որ մեծ ծավալ ստանա հայերի արտագաղթը հայրենիքից։ Բյուզանդական կայսրության տարբեր շրջաններում առաջանում են գաղութներ՝ հայերի հոծ զանգվածներով։

Բուլղարահայ գաղութը բազմադարյան պատմություն ունի։ VI դարից սկսած բյուզանդական կայսրերի կազմակերպած բռնագաղթերի, ապա նաև արտագաղթի հետևանքով Բալկաններում, Բուլղարիայի այժմյան տարածքում առաջացան առաջին հայկական գաղթավայրերը, որոնք զգալի դեր խաղացին Բյուզանդական կայսրության, հետագայում նաև բուլղարական պետության տնտեսական—քաղաքական և մշակութային կյանքում։ Մինչ բուլղարական պետության կազմավորումը (681) Բյուզանդիան օգտագործում էր հայկական առանձին զորամասեր՝ կայսրության հյուսիսային սահմանները սլավոնների, հոների, ավարների, բուլղարների և պեչենեգների հարձակումներից պաշտպանելու համար[1]։

Հայերի զանգվածային արտագաղթը Բալկաններ տեղի ունեցավ VIII դարում։ Կոստանդին V կայսրը (741—775) Հայաստանի Մելիտենե և Կամբին (Թեոդոսուպոլիս) քաղաքներից մեծ թվով հայ պավլիկյաններ գաղթեցրեց Բուլղարիա և հաստատեց Ֆիլիպպուպոլիս (Պլովդիվ) քաղաքում և նրա շրջակայքում[2]։ Բալկաններում ստեղծվեց հայաշատ հայկական գաղութ։

Հայերի գաղթը Բալկաններ շարունակվեց նաև X—XI դարերում։ Մեծ թվով թոնդրակեցիներ բյուզանդական կայսրերի կողմից բռնագաղթվեցին Թրակիա և այլուր[3]։

1018 թ. Բյուզանդիային հաջողվեց իրեն ենթարկել բուլղարներին և վերացնել նրանց անկախությունը։ Մեկ ու կես դար շարունակ բուլղար ժողովուրդը պայքարում էր իր պետականության վերականգնման համար։

Այդ պայքարում իրենց գործուն մասնակցությունն են ունեցել նաև Բուլղարիայում հաստատված հայերը[4]։

Բյուզանդական կայսրերը բռնագաղթերի միջոցով Բալկաններից բուլղարներին վերաբնակեցնում էին կայսրության արևելյան շրջանները։ Հայերը և բուլղարները համատեղ պայքարի են դիմում բյուզանդական կայսրերի ոտնձգությունների և նենգ քաղաքականության դեմ։

Հայերի և բուլղարների համագործակցությունը վառ կերպով արտահայտվեց, երբ սելջուկյան հորդաները ասպատակում էին Հայաստանը[5]։ Սելջուկները զգալի հարված հասցրին Բյուզանդական կայսրության տնտեսական-քաղաքական հզորությանը, ընդհատեցին կայսրության սահմաններում բնակվող ժողովուրդների սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքը։ Հետագայում, երբ օսմանյան թուրքերը նվաճեցին Հայկական լեռնաշխարհն ու Բալկանները, խորտակեցին Բյուզանդական կայսրությունը, Օսմանյան կայսրության սահմաններում ապրող քրիստոնյա ժողովուրդների համագործակցությունը նոր ընթացք ստացավ։ Նրանք համատեղ պայքար ծավալեցին թուրքական զավթիչների դեմ։

Ժամանակի ընթացքում Բուլղարիայի հայկական գաղութը անկում ապրեց ու սկսվեց գաղութի հայության ձուլումը տեղական ժողովուրդների՝ առաջին հերթին բուլղարների հետ։ Այդ պրոցեսը XVI դարում մոտենում էր իր ավարտին, երբ XVII դարի սկզբին և նույն դարի 70-ական թվականներին տեղի ունեցավ հայերի նոր գաղթ դեպի Բալկանները[6]։

XVII դարի թուրք-պարսկական պատերազմների և ջալալիների խռովությունների պատճառով Արարատյան դաշտից ու Նախիջևանի շրջաններից բազմահազար հայեր գաղթում են Բալկաններ[7]։ 70-ական թվականներին այստեղ են գաղթում նաև հայեր՝ Ղրիմից։ Նրանց մեծ մասը բնակություն է հաստատում Ֆիլիպպուպոլիս քաղաքում[8]։

Թուրքական ծանր լծի տակ հեծող հույն, բուլղար, սերբ, չերնոգորցի, մակեդոնացի, հայ և մյուս ժողովուրդների մեջ առաջանում են ազգային-ազատագրական շարժումներ, ինչպես նաև միացյալ ուժերով հանդես գալու ձգտումներ։

Միջազգային ասպարեզում՝ միավորված ռուսական հզոր պետությունը սկսում է հանդես գալ ստրկացված քրիստոնյա ժողովուրդների ազատարարի դերում։ Ազատագրական շարժման հայ և բուլղար ղեկավարներն իրենց ժողովուրդների մեջ սեր ու հարգանք, խոր հավատ սերմանեցին դեպի Ռուսաստանը և ռուս ժողովուրդը՝ նրա անմիջական օգնությամբ օտարի լուծը թոթափելու գործում։

1828 և 1829 թթ. ռուսական բանակի փայլուն հաղթանակները Պարսկաստանի և Թուրքիայի դեմ մեծ ոգևորություն առաջացրին սուլթանական ռազմաֆեոդալական կայսրության մեջ ապրող ժողովուրդների շրջանում։ Թուրքմենչայի և Ադրիանուպոլսի պայմանագրերով Արևելյան Հայաստանը և Մերձդանուբյան շրջանները միացվեցին Ռուսաստանին։

XIX դարի 60—70-ական թվականներին Օսմանյան կայսրությունը ցնցվեց մի շարք ապստամբություններից։ 1862 թ. Զեյթունի, 1875 թ. Բոսնիայի և Հերցեգովինայի, 1876 թ. բուլղարական Ապրիլյան ապստամբությունները իրենց վրա բևեռեցին եվրոպական երկրների առաջադեմ մարդկանց ուշադրությունը։ Այդ ապստամբությունների խեղդվեցին արյան մեջ և օսմանյան լծի դեմ ծառացած ժողովուրդները իվերջո համոզվեցին, որ առանց արտաքին և, առաջին հերթին, Ռուսաստանի օգնության հնարավոր չէ ազատագրվել օտար տիրակալից։

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը նշել են. «Սերբը, բուլղարացին, Բոսնիայի ռայան, մակեդոնացի և Թրակիացի սլավոն գյուղացին ազգային մեծ համակրանք են տածում դեպի ռուսները...։ Ինչ որ էլ լինի, նրանք Պետերբուրգից են սպասում մեսիային, որը փրկելու է նրանց բոլոր չարիքներից»[9]։ Նույնը վերաբերվում էր նաև հայ ժողովրդին։

Օսմանյան կայսրության ոտնձգությունները, Բալկանյան թերակղզում և Հայկական լեռնաշխարհում իրագործած արյունալի կոտորածները մի կողմից, ռուս և համաշխարհային առաջադեմ հասարակայնության պահանջները՝ մյուս կողմից, ստիպեցին ցարական կառավարությանը դիմել կտրուկ միջոցների, քանի որ ո՛չ Կոստանդնուպոլսի կոնֆերանսը և ո՛չ լոնդոնյան որոշումները չկարողացան լուծել արևելյան հարցի մաս կազմող Բալկանների և Հայաստանի կնճռոտ խնդիրները։

1877 թ. ապրիլի 24-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային։ Ստեղծվեցին Դանուբյան կամ Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատները։ Ռուսական բանակների զորակոչման և համալրման ընթացքում կազմակերպվեցին կամավորական բազմաթիվ ջոկատներ, գնդեր ու աշխարհազորներ՝ բուլղարներից, ուկրաինացիներից, ռումինացիներից, սերբերից, չերնոգորցիներից, մակեդոնացիներից, հույներից, հայերից ու այլ ժողովուրդներից։ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության մեջ մեծ տեղ էին գրավում հայ գեներալները։ Ռուսական բանակի կազմում Թուրքերի դեմ կռվում էին բազմաթիվ հայեր, որոնց մասնակցությունը մեծ օժանդակություն էր Հայկական լեռնաշխարհում ռուսական բանակի առաջխաղացման համար։ Կարճ ժամանակամիջոցում գրավվեցին Կարսը, Արդահանը, Բայազետը, Էրզրումը[10]։ Այն մեծ նշանակություն ունեցավ Բալկանյան ռազմաճակատի հաղթանակների, մաս-

նավորապես Պլևնայի (Պլևեն) գրավման գործողությունների համար։ Բազմաթիվ հայ սպաներ ու շարքայիններ մարտնչում էին Բալկանյան ռազմաճակատում[11]։

Այդ պատերազմին իրենց մասնակցությունը բերեցին նաև Բուլղարիայում ապրող հայերը։ Պլովդիվի, Պազարջիկի, Վառնայի, Կավառնայի, Ռուսեի և այլ վայրերի ազատագրման համար մղվող մարտերում նրանք բոլոր հնարավոր միջոցներով օգնում էին ռուսական բանակների առաջխաղացմանը[12]։ Պատերազմի ընթացքում բազմաթիվ բուլղարահայեր, որոնք գտնվում էին թուրքական ծառայության մեջ և բանակում, լքում էին իրենց պաշտոնն ու ծառայությունը և անցնում ռուսական բանակի կողմը։ Այդ պատերազմում իրենց խիզախությամբ ու սխրագործություններով աչքի ընկան Հովհաննես Սվաճյանը, Երանոս Երանոսյանը, Թաֆվոր Էլմասճյանը, Ստեփան Աբգարյանը և ուրիշներ[13]։

Պատերազմի հաղթական ավարտից հետո, սկզբից Սան-Ստեֆանոյի, ապա՝ Բեռլինի խորհրդաժողովների որոշումներով բալկանյան ժողովուրդները, այդ թվում՝ բուլղարները ստացան ազգային անկախություն։ Սակայն պայքարը սուլթանական լծի դեմ շարունակվեց Արևելյան Ռումելիայի, Արևմտյան Հայաստանի և Մակեդոնիայի ազատագրման համար։

Բուլղար ժողովրդի ազգային ազատագրումը մեծապես նպաստեց հայ-բուլղարական և հայ-մակեդոնական կապերի հետագա ընդլայնմանը։ Այդ հարաբերություններն առավել ևս աշխուժացան Համիդյան ջարդերի ծանր օրերին։ Նրանց ռազմական համագործակցությունը ընդունեց առավել կազմակերպված բնույթ հատկապես այն ժամանակ, երբ ասպարեզ իջան այդ ժողովուրդների հայդուկային ջոկատներն ու քաղաքական կուսակցությունները։

1903 թ. Իլինդենյան և Պրեոբրաժենյան ապստամբությունները Մակեդոնիայում և Արևելյան Թրակիայում[14], 1904—1905 թթ. Սասունի և Զեյթունի հերոսամարտերը խթան հանդիսացան հայերի և մակեդոնացիների ազգային-ազատագրական պայքարի հետագա զարգացման համար։

Պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանում հայ աշխատավորական զանգվածները հարազատ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրումը, նրա վերածնունդը շաղկապեցին Ռուսաստանում լայն ծավալ ստացած սոցիալ-դեմոկրատական շարժման հետ։ Մեծ Հոկտեմբերի հաղթանակից և Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո միայն բուլղարահայերին հնարավորություն ստեղծվեց անքակտելի կապ հաստատել Մայր Հայրենիքի հետ։ Հետագայում սովետաբուլղարական հարաբերություններում նոր բովանդակություն ստացան նաև հայ-բուլղարական կապերն ու փոխհարաբերությունները։

* * *

Հայ ժողովրդի հոծ զանգվածներն օտար զավթիչների ասպատակություններից, նրանց ծանր լծից փրկվելու համար դարեր շարունակ ստիպված լքում էին հայրենի հողն ու շենքերը և հանգրվանում հեռավոր երկրներ, հույսեր փայփայելով, թե օրերից մի օր հնարավոր կլինի վերադառնալ հայրենիք։

Բուլղարահայ համայնքի պատմությունը միահյուսված է բուլղար ժողովրդի պատմության հետ, այն ինչպես հայ, այնպես էլ բուլղար ժողովրդի սոցիալ-տնտեսական, հասարակական, քաղաքական և մշակութային կյանքի անբակտելի մասն է։

Հայկական սփյուռքի, այդ թվում բուլղարահայ համայնքի պատմության ուսումնասիրությունը սկսվել է վաղուց, թեև առանձին պատմական կարճ ժամանակահատվածներով։ Այն առավել լայն ծավալ ստացավ վերջին տասնամյակներում, հատկապես սովետահայ պատմաբանների աշխատություններում։

Սովետահայ պատմաբաններ Ա. Գ. Հովհաննիսյանը[15], Մ. Գ. Ներսիսյանը[16], Ծ. Պ. Աղայանը[17], Գ. Բ. Ղարիբջանյանը[18], Գ. Ա. Գալոյանը[19], Ջ. Ս. Կիրակոսյանը[20], Վ. Ա. Միքայելյանը[21], Հ. Ռ. Սիմոնյանը[22], Վ. Բ. Բարխուդարյանը[23], Հ. Մ. Բարթիկյանը[24], Հ. Ա. Ավետիսյանը[25], Վ. Ա. Պարսամյանը[26], Ա. Ս. Համբարյանը[27], Վ. Կ. Ոսկանյանը[28], Վ. Ռ. Գրիգորյանը[29], Լ. Ա. Պողոսյանը[30] և ուրիշներ իրենց աշխատություններում՝ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, հայ-ռուսական հարաբերությունների, գաղթերի ու բռնագաղթերի, հայկական եղեռնի ուսումնասիրության առնչությամբ անդրադարձել են հայ-բուլղարական հարաբերություններին։

Սփյուռքի առանձին համայնքների պատմությունը և այլ հարցեր ուսումնասիրելու ժամանակ նման պրոբլեմներ են մշակել իրենց աշխատություններում՝ Լ. Խուրշուդյանը, Ս. Գասպարյանը, Կ. Դալլաքյանը, Հ. Թուփուզյանը, Տ. Դրամբյանը, Ս. Քոլանջյանը, Հ. Մելիքսեթյանը և ուրիշներ։

Բուլղարահայ համայնքի պատմության առանձին ժամանակահատվածների վերաբերյալ աշխատություններ են գրել Ա. Գ. Աբրահամյանը[31], Ռ. Հ. Խաչատրյանը[32], Կ. Հ. Ճինգոզյանը[33]։

Հայ-բուլղարական պատմական կապերին ու բուլղարահայ համայնքի պատմությանն է նվիրված Ս. Վ. Հովհաննիսյանի[34] ծավալուն աշխատությունը, որտեղ հեղինակը այդ կապերն ու համայնքի պատմությունն ուսումնասիրում է վաղ միջնադարից մինչև XIX դարի վերջը։ «Հայ-բուլղարական պատմական կապերը և բուլղարահայ գաղթավայրերը XIX դարի երկրորդ կեսում» մենագրությունը հայ և բուլղար պատմագրության մեջ առաջին լուրջ աշխատությունն է։ Հեղինակը շեշտը դնելով հայ-բուլղարական պատմական կապերի վրա, դրանք դիտում է զարգացման պրոցեսում, երբ այդ կապերը վերաճում են համատեղ զինված պայքարի՝ ուղղված սուլթանական Թուրքիայի դեմ։ Ս. Վ. Հովհաննիսյանը հաղթահարելով գաղութի ներքին կյանքին վերաբերվող փաստական նյութերի սակավությունը, արժեքավոր տեղեկություններ է տվել բուլղարահայերի սոցիալ-տնտեսական վիճակի մասին։ Սովետական արխիվների հարուստ փաստական նյութի հիման վրա նա համոզիչ կերպով ցույց է տվել Թուրքական կոտորածներից փրկված տասնյակ հազարավոր հայերի հանգրվանումը Բուլղարիայում և բուլղարական կառավարության բարյացակամ վերաբերմունքը տարագիր հայերի նկատմամբ։ Ուսումնասիրության մեջ առանձնապես ընդգծված է Բլագոևյան սոցիալ-դեմոկրատական կուսակցության դերը հայերին ապաստան տալու գործում։ Հեղինակը հետևողականորեն ուսումնասիրել է հայ-բուլղարական կապերի փոխադարձ ազդեցությունը երկու ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների և մշակութային կյանքի տարբեր բնագավառների վրա, ընդգծելով Ռուսաստանի և ռուս ժողովրդի պատմական դերը երկու ժողովուրդների ազատագրության գործում։

Ա. Գ. Աբրահամյանը՝ «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» երկհատորյակում, բազմաթիվ աղբյուրների հիման վրա ամփոփել է բուլղարահայ գաղութի առաջացման, միջնադարյան և նոր շրջանի պատմությունը։ Այն առաջին փորձն է գաղութի ամբողջական պատմությունը շարադրելու գործում։

Ռ. Հ. Խաչատրյանը «Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից» մենագրության մեջ նյութերի խոր իմացությամբ վերլուծել է բուլղարահայ գաղութի հետպատերազմյան (1919—1923) ժամանակաշրջանը և վեր հանել Բուլղարական կոմունիստական կուսակցության կատարած աշխատանքը 1919 թ. Պլովդիվում Հայկական բանվորական կոմունիստական սեկցիայի ստեղծման ուղղությամբ։ Հեղինակը վեր հանելով կոմունիստական մամուլի դերը աշխատավոր զանգվածների կազմակերպման գործում նշել է Բուլղարիայում և առհասարակ սփյուռքում լույս տեսած հայ կոմունիստական անդրանիկ թերթի՝ «Կարմիր լուրերի» և «Նոր աշխարհի» դերն ու նշանակությունը սփյուռքահայ կոմունիստական շարժման համար։ Ռ. Հ. Խաչատրյանը առանձնապես ընդգծել է բուլղարական կոմունիստական կուսակցության ղեկավար դերը հայ աշխատավորական շրջաններում Սովետական Ռուսաստանին և այնուհետև Սովետական Հայաստանին նյութական օգնություն կազմակերպելու գործում, ընդգծելով Մեծ Հոկտեմբերի պատմական նշանակությունը հայ ժողովրդի համար։ Բացահայտելով Բուլղարիայում ֆաշիզմի առաջացման պատճառները և բուլղար կոմունիստների պայքարը նրա դեմ, շեշտել է հայ աշխատավորների գործուն մասնակցությունը այդ պայքարին։ Զնացած ուսումնասիրության մեջ ընդգրկված որոշակի, սեղմ ժամանակաշրջանին, այն ունի սկզբնաղբյուրի նշանակություն, շարադրված է արխիվային հարուստ փաստական նյութերի հիման վրա։

Գ. Բ. Ղարիբջանյանը, արխիվային հարուստ նյութերի հիման վրա վեր է հանել հայ-ռուս-բուլղարական հեղափոխական կապերի պատմության հարցերը[35]։

Կ. Հ. Ճինգոյանը «Հայ-բուլղարական գրական կապերի պատմությունից» մենագրության մեջ հանգամանորեն ուսումնասիրել է XIX դարի հայ-բուլղարական գրական առնչությունները։ Հեղինակը գրական կապերին զուգահեռ անդրադարձել է նաև երկու ժողովուրդների պատմական ճակատագրի ընդհանրության, նրանց հոգևոր կյանքի բազմաթիվ կողմերին, վեր հանելով սովորությունների, ավանդույթների, երաժշտության, ճարտարապետության և մշակույթի այլ բնագավառների փոխադրդեցությունը։ Շեշտը դնելով գրական կապերի վրա, հեղինակը ընդգծել է այդ կապերի անմիջական ազդեցությունը երկու ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների վրա։ Կ. Հ. Ճինգոյանի աշխատությունը արժեքավոր ներդրում է ինչպես հայ, այնպես էլ բուլղար գրականագիտության մեջ։

Բուլղարահայ գաղութի առաջացման, զարգացման և տնտեսական-մշակութային կյանքի առանձին հարցերին, տարբեր ժամանակաշրջաններին անդրադարձել են նաև բուլղարահայ պատմաբան-բանասերներ ու քաղաքական գործիչներ Ստեփան Շահբազյանը, Անդրեաս Հակոբյանը, Գրիգոր Շիշմանյանը, Ներսես Գասապյանը, Դանիել Ռազկրաթյանը, Արմեն Սևանը, Սարգիս Փաշաճյանը, Արա Մակոսը, Պարույր Ասատուրը, Հրանտ Հրահանը, Վիկտորյա Մոմճյանը, Տիգրան Մարտիրոսյանը, Վահե Ջերչյանը, Միքայել Տոնիկյանը, Հակոբ Օրմանճյանը, Կարո Հայրապետ-

յանը, Հակոբ Կիլիկյանը, Էդուարդ Սելյանը, Մարտիկ Հագիգյանը և ուրիշներ։

Բուլղարահայ գաղութի մասին որոշ տեղեկություններ են հաղորդել Արշակ Ալպոյաճյանը[35], Ասատուր Մագարյանը[36], Երվանդ Թոփչյանը[37], Հակոբ Մարաշլյանը[38], Երվանդ Փերտահճյանը[39] և ուրիշներ։ Նրանց աշխատություններն ու հոդվածաշարերը լի են բուլղարահայ գաղութի տնտեսական ու մշակութային կյանքի վերաբերյալ հարուստ փաստական նյութերով՝ վաղ միջնադարից մինչև մեր օրերը։

Իրենց աշխատություններում հայ ժողովրդի պատմության և բուլղարահայ գաղութի վերաբերյալ պրոբլեմներ ու պատմական նշանակություն ունեցող դեպքեր են ուսումնասիրել բուլղար պատմաբաններ, բանասերներ, հասարակական-քաղաքական գործիչներ Վասիլ Կոլարովը[40], Նիկոլա Գինևը[41], Գ. Կացարովը[42], Վ. Զլատարսկին[43], Յ. Իվանովը[44], Դ. Անգելովը[45], Ի. Դուչևը[46] և ուրիշներ։

Անհրաժեշտ է առանձնապես ընդգծել բուլղար պատմաբանների և հասարակական-գրական գործիչների դրական վերաբերմունքը դեպի հայ ժողովրդի պատմական և հոգևոր արժեքները։

Աշխատության մեջ ցույց են տրված այս նույն ժամանակաշրջանում օսմանյան Թուրքիայում կառավարման վայրագ մեթոդների, ազգային ճնշման ու կրոնական խտրականության, կեղեքումների ու հարստահարությունների, փաշաների անզուսպ կամայականությունների փաստագրված նկարագիրը, կոտորածների ու չարդերի հետևանքով հազարավոր հայերի բռնագաղթն ու փախուստը Արևմտյան Հայաստանից ու Թուրքիայի տարբեր վիլայեթներից դեպի օտար երկրներ, այդ թվում և Բուլղարիա։ Վեր է հանված բուլղար ժողովրդի եղբայրական օգնությունը, որի հետևանքով հազարավոր հայ տարագիրներ ապաստանություն գտան բուլղարական հողում։

Հանգամանորեն ուսումնասիրելով տարագիրների տնտեսական ծանր վիճակը, հանգել ենք այն հետևության, որ բուլղարահայերի մեծամասնությունը ևս, որպես կանոն, կողմնորոշվել է դեպի առաջադեմ գաղափարներն ու կազմակերպությունները, համալրել է բուլղարական պրոլետարիատի շարքերը, կազմակերպել առաջին հայ մարքսիստական խմբակները և կոմունիստական կազմակերպությունները՝ Բուլղարական կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։ Վերլուծության ենք ենթարկել բուլղարահայ կոմունիստների գործունեությունը ինչպես նախապատերազմյան, այնպես էլ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին։ Հայ կոմունիստները Բուլղարական կոմունիստական կուսակցության ցուցումներով սոցիալ-դեմոկրատական հնչակյան և ռամկավարական կուսակցությունների հետ ստեղծեցին «Ազգային ճակատ»[47] և միասնաբար պայքարեցին բուլղարահայ բուրժուազիայի և դաշնակցության գաղափարախոսության ու գործելակերպի դեմ։ Օգտագործել ենք մեծ թվով արխիվային նյութեր, մամուլ ու գրականություն՝ Բուլղարական ժողովրդական հանրապետության ու Սովետական Միության արխիվներից ու գրադարաններից։ Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Բուլղարիայի տեղական արխիվների նյութերը, այդ թվում Սոֆիայի օկրուգային և քաղաքային պետական արխիվի, Պլովդիվի, Վառնայի, Ռուսեի, Հասկովոյի, Յամբոլի օկրուգային արխիվների փաստաթղթերը։

Աշխատության առանձին բաժինների համար օգտագործել ենք Բուլղարական ժողովրդական Հանրապետության Պետական կենտրոնական պատմական, Ներքին գործերի մինիստրության և Բուլղարական կոմունիստական կուսակցության կենտրոնական արխիվներում պահվող փաստաթղթերը, որոնք վերաբերվում են բուլղարահայ առաջադեմ գործիչների և հայ կոմունիստների հասարակական-քաղաքական գործունեությանը։ Այս նյութերի ուսումնասիրությանը զուգահեռ օգտագործել ենք կոմունիստական կուսակցությունների հայ և բուլղար ականավոր գործիչների՝ Ստեփան Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի, Ալեքսանդր Մյասնիկյանի, Աշոտ Հովհաննիսյանի, Ստեփան Շահրազյանի, Դիմիտր Բլագոևի, Գեորգի Դիմիտրովի, Վասիլ Կոլարովի և ուրիշների աշխատությունները, բուլղարահայ և սփյուռքի առաջադեմ կազմակերպությունների գործունեության մասին։

Կարևոր տեղեկություններ ենք քաղել Բուլղարիայում հայկական եկեղեցիներին կից գործող եկեղեցական խորհուրդների արձանագրությունների մատյաններից, որտեղ հաղորդվում են թվական տվյալներ Թուրքիայից գաղթած և տվյալ քաղաքում բնակություն հաստատած հայերի մասին[48]։

Մեր գիտական գործուղումների (1970, 1972, 1978, 1979, 1981, 1984 թթ.) ժամանակ Բուլղարիայի հայաշատ քաղաքներում ծանոթացել ենք առանձին հայ մտավորականների, հասարակական-քաղաքական գործիչների հետ, որոնք սիրով մեզ են տրամադրել իրենց անձնական արխիվները։ Այդ արխիվներում ուսումնասիրել ենք բազմաթիվ նամակագրություններ, դիմումներ, մամուլի ժողովածուներ և այլ նյութեր։

Աշխատության համար լայնորեն օգտագործել ենք ՀՍՍՀ ԳԱ հիմնարար գրադարանում պահվող Շավարշ Պոսթանճյանի, Արշակ Ալպոյաճյանի, Մինաս Թերլեմեզյանի, Գ. Պողարյանի և ուրիշների արխիվային

ֆոնդերը, Մաշտոցի անվան մատենադարանի, Ալեքսանդր Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի հարուստ գրականությունն ու մամուլի հրատարակությունները։

Արդի դարաշրջանում գաղութատիրության դեմ ազգային-ազատագրական և դասակարգային պայքարի բուռն վերելքի, մյուս կողմից սոցիալիստական երկրների համախմբման և միասնության պայմաններում կարևոր նշանակություն է ստացել սոցիալիստական երկրների ժողովուրդների փոխհարաբերությունների ուսումնասիրությունը։ Ինչպես պատմական անցյալի, այնպես էլ այժմ նրանց համագործակցությունն ու փոխադարձ օգնությունը սոցիալիզմի կառուցման ճանապարհին։ Այդ պրոբլեմի լուսաբանումը՝ բուլղարահայ համայնքի պատմության հիման վրա հատուկ տեղ է ներկա աշխատության գիտական ու քաղաքական նշանակությունը։

Ներկա աշխատության գիտական-քաղաքական նշանակությունը ոչ միայն նրանում է, որ վեր է հանում բուլղարահայ գաղութի պատմությունը և հայ-բուլղարական կապերը XIX դարի վերջից մինչև XX դարի 70-ական թվականները, այլ մի նոր էջ է բացում բուլղարական հակաֆաշիստական դիմադրական շարժման պատմությունից, որին մասնակցեցին բազմաթիվ բուլղարահայեր, որոնց թվում աշխատության հեղինակը։

Մեր համեստ աշխատությունով հատուցում ենք մեր հարգանքը նրանց նկատմամբ, որոնք իրենց կյանքը զոհեցին հանուն Բուլղարիայում սոցիալիզմի հաղթանակի, հայ և բուլղար ժողովուրդների մերձեցմանը և համագործակցությանը, երկու եղբայրական ժողովուրդների փայլուն ապագայի համար։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ, ՀԱՅԱԲՆԱԿ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

1. ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ ԵՎ ՀԱՅՈՑ ԳԱՂԹԸ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ 1922 ԹՎԱԿԱՆԻՆ

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական զենքի հաղթական ավարտով բուլղար ժողովուրդը ստացավ ազգային անկախություն, իսկ 1885 թ. Արևելյան Ռումելիայի միացմամբ հիմնականում ավարտվեց բուլղարական պետության տարածքային ու ազգային կոնսոլիդացիան։ Թուրքական տիրապետության ներքո շարունակում էր մնալ Մակեդոնիայի և Արևելյան Թրակիայի բուլղար բնակչությունը, որի ազատագրման համար մղվող պայքարը շարունակվեց նաև հետագա տարիներին։

Երկրի քաղաքական իշխանությունն անցավ ցարի, նրա գլխավորած պալատական վերնախավի և նոր ձևավորվող արդյունաբերական-առևտրական ու գյուղական բուրժուազիայի ձեռքը։ Երկրում վերացվեցին թուրքական ֆեոդալական հողատիրության մնացորդներն ու ինստիտուտները։ Կառավարությունն ուժեղացրեց հովանավորական քաղաքականությունն արտաքին առևտրի նկատմամբ, խթանելով երկրի էկոնոմիկայի՝ արդյունաբերության ու գյուղատնտեսության տարբեր ճյուղերի զարգացումը։ Ներմուծվող ապրանքների մաքսային տարիֆների ավելացման գնացահեռ, կառավարությունը վարկերի ու փոխառությունների միջոցով օգնություն էր ցույց տալիս ձեռնարկություններին՝ ներմուծվող սարքավորումներ ձեռք բերելու համար։

1894 թ. բուլղարական կառավարությունը օրենք ընդունեց տեղական արդյունաբերության մասին, մի շարք առևտրական պայմանագրեր կնքեց Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի և այլ երկրների հետ։ Երկրում ընդլայնվում էին երկաթուղային ճանապարհները[1]։

Այդ միջոցառումները նպաստեցին երկրում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը և բուրժուազիայի իշխանության ամրապնդմանը։ Նախկին արհեստագործական-մանուֆակտուրային արդյունաբերությանը փոխարինելու էր գալիս ֆաբրիկագործարանային արդյունաբերությունը։ Երկրում խորանում էր սոցիալական շերտավորումը։ Քայքայվող մանր արտադրողների և գյուղական չքավորների հաշվին ձևավորվում էր բանվոր դասակարգը։

Բուլղարական արդյունաբերության նոր ասպարեզներում, հատկապես թեթև արդյունաբերության տարբեր ճյուղերում և առևտրում բուլղար և օտարերկրյա ձեռնարկատերերի կողքին զգալի տեղ էին գրավում հայ ձեռնարկատերերը և առևտրականները։ Այն քաղաքներում ու վայրերում, որոնք գտնվում էին առևտրական ճանապարհների ու երկաթգծերի մոտակայքում։

Համիդյան ջարդերից ու բռնագաղթերից հետո Թուրքիայից Բուլղարիա հանգրվանեցին ավելի քան 20 հազար հայ։ Մինչ այդ Բուլղարիայում բնակվում էր մոտավորապես 13 հազար հայ[2] Պլովդիվ, Վառնա, Ռուսե, Սոֆիա, Շումեն, Սլիվեն, Պազարջիկ, Յամբոլ քաղաքներում և այլ շրջաններում։ Ստվարացած ու աշխուժացած բուլղարահայ համայնքը 33—35 հազար շնչի էր հասել։

1896 թ. ղանգվածային գաղթը հիմնովին վերափոխեց բուլղարահայերի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքը։ Մինչ այդ բուլղարահայերի մեծամասնության առօրյա գործածական լեզուն (հատկապես առևտրի բնագավառում) թուրքերենն էր, որը թափանցել էր նաև նրանց մշակութային կյանքի ոլորտը։

XX դարի սկզբին բուլղարական իշխանությունների թույլտվությամբ համայնքը ձեռք բերեց ներքին ինքնավարություն (թեմական խորհուրդ՝ թեմի առաջնորդով, դատաստանական, թաղական խորհուրդներ և դպրոցական հոգաբարձություններ)։ Օրինական, նոր հիմքերի վրա դրվեցին հայկական համայնքի և բուլղարական կառավարության փոխհարաբերությունները ու անմիջական կապերը։

Սոցիալ-տնտեսական պայմանների կայունացման հետ աշխուժացավ նաև հայերի քաղաքական-մշակութային կյանքը։ Նոր հիմքերի վրա դրվեցին կրթական աշխատանքը և աճող սերնդի դաստիարակությունը հայերեն լեզվով։ Լայն զարգացում ստացան տպագրական գործը և պարբերական մամուլը։ Լույս տեսան առաջին բուլղարահայ քաղաքական-մշակութային թերթերը։

1890-ական թվականներին Բուլղարիայում էին ապաստանել սուլթանական Թուրքիայից հալածված, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գործիչների, քաղաքական կուսակցությունների ղեկավարներ, ուսուցիչներ, հայ մտավորականության ներկայացուցիչներ։ Նրանք Բուլղարիայից շարունակում էին ղեկավարել Արևմտյան Հայաստանի իրենց կուսակցական կազմակերպությունները և սերտ կապերի մեջ էին ինչպես բուլղարական իշխանությունների, այնպես էլ երկրում գործող մակեդոնական կազմակերպության (ВМОРО-ի) ղեկավարների հետ։

1890-ական թվականներից բուլղարահայ գաղութն ակտիվորեն հեռանում և մասնակցում էր հայ ազգային-ազատագրական պայքարին՝ զինված ջոկատներ ու զենք մատակարարելով։ Բուլղարական իշխանությունների գործողությունները՝ Մակեդոնիայի և Արևելյան Թրակիայի բուլղարաբնակչությունը թուրքական ջարդերից փրկելու, ինչպես նաև որոշ շրջաններ երկրին միացնելու ձգտումները լրիվ համընկնում էին հայ ազգային կուսակցությունների՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման համար մղած պայքարի ծրագրումներին։

Այս ամենը քաջալերվում էր Ֆերդինանդ Թագավորի և բուլղարական կառավարության վարչապետ Ռոդոսլավովի կողմից։

1901 թ. հայ-մակեդոնական զինված մի ջոկատ Արևելյան Թրակիայից անցնելով Մակեդոնիա, ընդհարվեց թուրքական զինված ուժերի հետ։ Մարտում շատերը զոհվեցին. մակեդոնացիներ Սլավի Մերջանովը, Հրիստո Հաջիիլիևը, իսկ հայերից Պետո Սերեմճյանը, Օնիկ Թորոսյանը ձերբակալվեցին և Սայիդ փաշայի հրամանով Ադրիանուպոլսի կամուրջի վրա կախաղան բարձրացվեցին[3]։

1903 թ. մակեդոնական Իլինդենյան և Արևելյան Թրակիայում Պրեոբրաժենյան ապստամբությունները, ինչպես նաև 1904—1905 թթ. Սասունի և Զեյթունի ապստամբությունները էլ ավելի ամրապնդեցին հայ-բուլղարական և հայ-մակեդոնական մարտական համագործակցությունը։ Ապստամբությունների ղեկավարներն իրենց ելույթներով ձգտում էին արևմտաեվրոպական պետությունների ուշադրությունը գրավել Մակեդոնիայում և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող արյունալի իրադարձությունների վրա։

1905 թ. ռուսական առաջին հեղափոխության ազդեցության ներքո հայ և մակեդոնական ազգային-ազատագրական զինված խմբերն ավելի հանդուգն գործողությունների անցան։ Սակայն թե՛ մակեդոնական և թե՛ հայ քաղաքական կուսակցությունների սխալ քաղաքականությունը կորըստաբեր հետևանքներ ունեցավ երկու ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հետագա զարգացման համար։ Դա մի ժամանակա-

շրջան էր, երբ հայ և մակեդոնական քաղաքական կազմակերպություննե-
ները հավակնություն ունենալով գլխավորել այդ շարժումը, յուրաքանչյու-
րը գործում էր սեփական ծրագրով, մեկը մյուսից անջատ։ Այդ կուսակ-
ցությունները սուլթանական Թուրքիայի դեմ կազմակերպած մի շարք
անհաջող ելույթներից հետո բախվեցին միմյանց և պատակտվեցին։
Առանձին խմբերն ու խմբակները, որդեգրելով տեռորիստական գործելա-
կերպը, սկսեցին ահաբեկել իրենց իսկ շարժման ղեկավարներին ու կու-
սակիցներին։

Հայ քաղաքական կուսակցությունների նման գործելակերպը վրդո-
վեցրեց հայ ժողովրդին ընդհանրապես և բուլղարահայ գաղութին մաս-
նավորապես։ Այս ամենը վկայում էր այդ կուսակցությունների՝ ազգային-
ազատագրական պայքարը գլխավորելու անընդունակության մասին։
1907 թ., երբ դաշնակցության ղեկավարներից Ռոստոմ Զորյանը կուսակ-
ցության՝ Վիեննայի 4-րդ ընդհանուր ժողովի որոշմամբ վերադարձավ
Բուլղարիա և մակեդոնական կազմակերպության օգնությամբ Ռիլսկի
վանքում հիմնեց ռազմական դպրոց, այն գոյատևեց ընդամենը 10 ամիս,
քանի որ դպրոցի ղեկավար Ռաշիդը (Նիկոլա Պանով)[4] դաշնակցության
կենտրոնի հետ ունեցած տարաձայնությունների հետևանքով ցրեց դպ-
րոցի սաներին (մոտավորապես 80 հայ երիտասարդներ) և ամբողջ գույքն
ու զենքերը վաճառեց մակեդոնական շարժման աջ թևի ղեկավարներին[5]։

1908 թ. Թուրքիայում երիտթուրքերի հեղաշրջումը և Աբդուլ Համիդի
ապանության ոչնչով չփոխեցին դրությունը Մակեդոնիայում և Արևմտյան
Հայաստանում։ 1909 թ. կոտորածներն ու հալածանքները Մակեդոնիայում
և Ադանայում նորից ընդունել էին համատարած բնույթ[6]։

Բուլղարական կառավարությունը, նկատի ունենալով ռուս-բուլղարա-
կան ավանդական կապերը և ցարական Ռուսաստանի շահերի համընկնու-
մը Բալկաններում բուլղարական քաղաքական տերիտորիալ ձգտումների
հետ, որոշեց հատուկ պատվիրակություն ուղարկել Պետերբուրգ՝ Մակե-
դոնիայի և Արևելյան Թրակիայի հարցերի դրական լուծման ուղղությամբ
ցարի օգնությունը հայցելու համար։ Պատվիրակությունը գլխավորեցին
Բուլղարիայի Ֆերդինանդ թագավորը, արտաքին գործերի մինիստր Մալի-
նովը և գեներալ Պապրիկովը[7]։ Սակայն Ռուսաստանը չէր շտապում պա-
տերազմ սկսել Թուրքիայի դեմ, քանի որ այն կարող էր համաշխարհայի-
նի վերածվել, թեև պատերազմի հաղթական ավարտի դեպքում Ռուսաս-
տանը հնարավորություն կունենար լուծել նեղուցների հարցը, որը դարեր
շարունակ կարևոր տեղ էր գրավում ռուսական արտաքին քաղաքականու-
թյան մեջ։

Ռուսական դիվանագիտության շնորհիվ Բալկաններում իրականաց-
վեց սերբ-բուլղարական և հունաբուլղարական համագործակցությունը։
1912 թ. մայիսին բանակցություններն ավարտվեցին Բուլղարիայի, Սեր-
բիայի և Հունաստանի միջև կնքված «Պաշտպանության դաշինքով»[8]։ Հե-
տագայում դաշինքին միացավ նաև Չերնոգորիան։ Ցարական Ռուսաստա-
նի դիվանագիտական հաջողությունները Բալկաններում բոլորովին հա-
ճելի չէին կենտրոնական Եվրոպայի գաղութատիրական պետություններին։
Ավստրո-Հունգարիան և Գերմանիան ձգտում էին քայքայել բալկանյան
դաշինքը, որը հակասում էր իրենց շահերին Բալկաններում։ Բուլղար ժո-
ղովուրդը մեծ ոգևորությամբ պատրաստվում էր պատերազմի Թուրքիայի
դեմ, այն պարզ գիտակցությամբ, որ ազատագրելու էր Մակեդոնիայում
և Արևելյան Թրակիայում ապրող իր եղբայրներին։

Բալկանյան պատերազմի նախօրեին մեծ աշխուժություն առաջացավ
նաև հայ քաղաքական կուսակցությունների ղեկավար շրջաններում, որոնք
նույնպես կողմնորոշվել էին դեպի Ռուսաստանը։

Բալկաններում Թուրքիայի դեմ ծագած պատերազմի հետ կապված
ոգևորությունը համակեց հայ ժողովրդին, մասնավորապես բուլղարահայ
հատվածին։ Պատերազմի նախօրեին Բուլղարիայում էին գտնվում Անդ-
րանիկը և բազմաթիվ հայ կամավորներ։ Այդ տագնապալի օրերին Արշակ
Զոպանյանը Փարիզից հետևյալ նամակն է ուղարկում բուլղարական կա-
ռավարության վարչապետ Իվան Գեշովին.

«Այս բացառիկ պահին, երբ Ձեր ազնիվ ժողովուրդը կանգնել է պա-
տերազմի եզրին, ես պարտավոր եմ և ինձ թույլ եմ տալիս հոգու խորքից
արտահայտելու հիացմունքս Ձեր հերոս ժողովրդի նկատմամբ ու ամե-
նայն անկեղծությամբ բարձրացնում եմ իմ ձայնը բուլղարական բանակի
օգտին։ ...Մենք երբեք չենք մոռանա Համիդյան ջարդերից հետո Ձեր ժո-
ղովրդի հյուրընկալությունը բազմաթիվ հայերի, որոնք հանգրվանեցին
Բուլղարիա։ Նրանց գաղթը եղեռնի արդյունք էր։ Այժմ այդ հայերը ղժ-
վարանում են արտահայտել իրենց զգացումները։ Սակայն կովկասահա-
յերը ամենուրեք համարձակությամբ գրում են իրենց թերթերում և ար-
տահայտում հանդուգն որոշումներ բալկանյան ժողովուրդներին օգնելու
գործում։ Ես հավատացած եմ, որ Ռուսաստանից մի մեծ խումբ ուսանող-
ներ պատրաստ են, որպես կամավորներ, ռուսների հետ կռվելու թուր-
քերի դեմ»[9]։

Ա. Զոպանյանը վարչապետ Ի. Գեշովից խնդրում էր չհրապարակել իր
նամակը, նկատի ունենալով այն վտանգը, որ սպառնում էր Թուրքիայում
ապրող իր եղբայրներին։ Պատասխան նամակում Ի. Գեշովը Ա. Զոպան-

յանին ուղարկում է իր աշխատություններից մեկը, որտեղ նկարագրված էր հայերի վիճակը Բուլղարիայում։

Բալկանյան պատերազմի նախապատրաստման օրերին բուլղարական բանակի սպա Կարապետ Վարդազարմյանը հրավիրում է Բուլղարիայում բնակվող Անդրանիկ Օզանյանին, հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին և առաջարկում հայկական կամավորական խմբեր կազմակերպել բալկանյան պատերազմին մասնակցելու համար։ Հետագայում խորհրդակցություն են հրավիրում Պլովդիվում, որին մասնակցում են Կարապետ Վարդազարմյանը, Լևոն Ֆեններճյանը, Անդրանիկը, Աստուր Պետիկյանը[10]։ Կամավորների ցուցակագրման և կազմակերպման աշխատանքներին մասնակցում է սոֆիահայ Ղուկաս Մինասյանը (բուլղարահայ կոմունիստ, հասարակական գործիչ Սոֆի Մինասյանի հայրը—Ջ. Ղ.)։

Խորհրդակցության ընդունած որոշման համաձայն ստեղծվում է 270—300 մարտիկներից բաղկացած հայկական կամավորական գումարտակ, որը պատրաստվում է մեկնել ռազմաճակատ։ Բալկանյան առաջին պատերազմի ժամանակ բուլղարական բանակի շարքերում զորակոչված էին բազմաթիվ բուլղարահայեր։ 1903 թ. Իլինդենյան և Պրեոբրաժենյան ապստամբությունից հետո մեծ թվով մակեդոնացիներ և բուլղար տարագիրներ ապաստանել էին երկրի տարբեր վայրերում։ Նրանք ևս մեծ ոգևորությամբ ստեղծեցին Մակեդոնա-Ադրիանուպոլս-աշխարհազոր՝ 16840 կամավորներով, գեներալ Գենովի հրամանատարությամբ[11]։ Այդ աշխարհազորի կազմում հայկական գումարտակը ակտիվորեն մասնակցեց բոլոր մարտերին և Ֆերայի մոտ՝ Յավեր փաշայի բանակը գերելու գործողություններին։ Ռազմի դաշտում զոհվեցին բազմաթիվ հայեր։

1912 թ. դեկտեմբերին Թուրքիան պարտվեց։ Լոնդոնում, բալկանյան դաշնակիցների և Թուրքիայի միջև սկսեցին խաղաղության պայմանագրի ստորագրման բանակցությունները, որոնց հավասար իրավունքներով մասնակցում էին նաև մեծ պետությունների ներկայացուցիչները։

1912 թ. դեկտեմբերի 21-ին Կոստանդնուպոլսի հայոց Ազգային ժողովը ցանկություն հայտնեց, որպեսզի իր ներկայացուցիչները ներկա լինեն լոնդոնյան բանակցություններին և առաջ քաշեն հայկական վեց վիլայեթների ինքնավարության հարցը՝ եվրոպական պետությունների երաշխավորությամբ[12]։ Թուրքիան չէր ուզում զիջումների դիմել։ Սրվեցին հարաբերությունները Ռուսաստանի, Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիայի միջև։ Առիթից օգտվելով թուրքական բանակը Ջաթալջայի և Շար-Քյոյի մոտ անցավ հակահարձակման։ Բանակցություն-

ները Լոնդոնում ընդհատվեցին։ Սակայն թուրքական բանակը կրկին պարտություն կրեց։

1913 թ. մայիսին Թուրքիան ստորագրեց խաղաղության պայմանագիր։ Արևելյան Թրակիան էնոս-Միդիա գծով զիջեց Բուլղարիային։ Բայց պատերազմի երկրորդ փուլի ավարտին Թուրքիան կարողացավ նորից ետ վերցնել լոնդոնյան պայմանագրով իր զիջած տարածքները։ Բուլղարական բանակի և հունական զորքերի նահանջը շատ վատ անդրադարձավ Արևելյան Թրակիայում բնակվող հայերի, բուլղարների ու հույների տնտեսական-քաղաքական իրավիճակի վրա։ Բուլղարական բանակի հետ բազմաթիվ հայեր արտագաղթեցին Բուլղարիա։ Այնուամենայնիվ բալկանյան պատերազմները մեկընդմիշտ վերացրին թուրքական ֆեոդալիզմի մնացորդները՝ հարավարևելյան Եվրոպայում։ Լայն հնարավորություններ ստեղծվեցին կապիտալիստական հարաբերությունների արագ զարգացման համար, որն առաջընթաց քայլ էր հասարակական-քաղաքական վերափոխությունների ուղղությամբ։

Բալկանյան պատերազմի առաջին փուլի հաղթական ավարտը ոգեվորեց հայ ազգային-ազատագրական պայքարի ղեկավարներին։ Պատերազմի երկրորդ փուլին հայկական գումարտակը չմասնակցեց։ Անդրանիկը մի խումբ մարտիկների հետ անցավ Անդրկովկաս[13]։

Լենինը Բալկանյան պատերազմների մասին գրել է. «Բալկանյան պատերազմը Ասիայում և Արևելյան Եվրոպայում միջնադարի փլուզումը նշանավորող համաշխարհային իրադարձությունների շղթայի օղակներից մեկն է։ Բալկաններում միացյալ ազգային պետությունների ստեղծում, տեղական ֆեոդալների ճնշման վերացում, բալկանյան ամեն մի ազգության, գյուղացիների վերջնական ազատագրում կալվածատիրական լծից. այս էր բալկանյան ժողովուրդների առաջ ծառացած պատմական խնդիրը»[14]։

Բուլղարիայում պրոլետարական հեղափոխական շարժումների բուռն վերելքի տարիներին հայ բանվոր-բանվորուհիները, բուլղարական սոցիալ-դեմոկրատական (տեսնյակների) կուսակցության ղեկավարությամբ երկրում ծավալվող դասակարգային մարտերի մասնակիցը դարձան։ Այս շրջափուլում մարքսիզմ-լենինիզմի գաղափարների ազդեցության ներքո Բլագոևյան կուսակցության կազմակերպություններում աճեց հայ հեղափոխականների մի ամբողջ սերունդ։ Նրանք բազմաթիվ հայ բանվորների և արհեստավորների ընդգրկում էին բուլղարական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության շարքերում և տարածում հեղափոխական գաղափարներ։ Բուլղարահայ տեսնյակները սուր քննադատության

էին ենթարկում Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցում դաշնակցության որդեգրած սխալ, կործանարար քաղաքականությունը։ Երբ պայթեց առաջին համաշխարհային պատերազմը, բուլղարական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը, այդ թվում և նրա հայ անդամները, պայքար ծավալեցին իմպերիալիստական պատերազմի դեմ, ցույց տալով նրա վավաշոտական բնույթը։

Բուլղարական կառավարությունը Ֆերդինանդ Քսափավորի և վարչապետ Ռադոսլավովի գլխավորությամբ, պատերազմի սկզբին հայտարարեց իր չեզոքության մասին, քանի որ երկիրը նոր էր դուրս եկել բալկանյան պատերազմներից։ Չեզոք դիրքը հնարավորություն էր տալիս ժամանակ շահել, վերականգնել քայքայված անտեսությունը և պատրաստվել հնարավոր հանձնի։ Իրականում սակայն բուլղարական բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունները կողմնակից էին մասնակցելու պատերազմին՝ հարելով այս կամ այն խմբավորմանը։

Բուլղարական իշխող վերնախավը միասնական չէր արտաքին քաղաքականության հարցերում։ Կողմերից մեկը պահանջում էր վերականգնել բարեկամական հարաբերությունները Ռուսաստանի և Անտանտի մյուս պետությունների հետ ու պատերազմին մասնակցել նրանց կազմից։ Երկրորդ խմբավորումը Ֆերդինանդի և Ռադոսլավովի գլխավորությամբ կողմնակից էր միանալ կայզերական Գերմանիային։ Ռադոսլավովի պրոգերմանական քաղաքականության դեմ հանդես եկավ նաև բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների օպոզիցիան (դեմոկրատներ, պրոգրեսիստներ, ռադիկալներ), որը կողմնակից էր պատերազմին մասնակցել Անտանտի պետությունների կազմում։

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվել էր 1914 թ. օգոստոսի 1-ին։ Ահա էին երկու գիշատիչ խմբավորումներ. մի կողմից կայզերական Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Թուրքիան, որոնց մեկ տարի անց միանալու էր նաև միապետական Բուլղարիան, մյուս կողմից Անտանտի պետությունները՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի գլխավորությամբ։ Այս առթիվ Վ. Ի. Լենինը գրում էր. «Երկրների գրավում և օտար ազգերի նվաճում, մրցակից ազգի քայքայում, նրա հարստությունների թալանում, Ռուսաստանի, Գերմանիայի, Անգլիայի և այլ երկրների ներքին քաղաքական ճգնաժամերից աշխատավոր մասսաների ուշադրության հեռացում, բանվորներին իրարից բաժանում ու ազգայնականությամբ հիմարացում և նրանց ավանգարդի ոչնչացում՝ պրոլետարիատի հեղափոխական շարժումը թուլացնելու նպատակով—այս է արդի պատերազմի միակ իսկական բովանդակությունը, նշանակությունն ու իմաստը»[15]։

Բուլղարիայում Բլագոևյան (տեսնյակների) սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը համարձակ և հետևողական պայքար էր մղում պատերազմի դեմ։ «Կորչի պատերազմը, կեցցե խաղաղությունը և եղբայրությունը ժողովուրդների միջև», «Կորչի զավթողական միապետությունը և կապիտալիզմը», «Կեցցե Բալկանյան Ֆեդերացիան և սոցիալիզմը»[16], սրանք էին այն լոզունգները, որոնցով առաջնորդվում էր կուսակցությունը։ Նրա պառլամենտական խումբը բուլղարական ժողովրդական ժողովում քվեարկեց ռազմական վարկերի դեմ։

Պատերազմի առաջին իսկ օրերից բուլղարական կառավարությունը անտեսելով երկրի չեզոքության վերաբերյալ իր հայտարարությունը, նախաձեռնեց մի շարք միջոցառումներ։ Երկրում հայտարարվեց ռազմական դրություն, հաստատվեց մամուլի խիստ գրաքննություն, սկսվեց լայնածավալ պրոպագանդա՝ պատերազմին մասնակցելու օգտին։ Ռադոսլավովի կառավարությունը գաղտնի բանակցություններ վարելով կայզերական Գերմանիայի հետ, հարմար ժամանակ էր որոնում համաշխարհային սպանդին մասնակցելու համար։

1915 թ. մայիսին Անտանտի պետությունները նորից դիմեցին բուլղարական կառավարությանը՝ իրենց միանալու առաջարկով։ Նրանք խոստանում էին Բուլղարիային վերադարձնել այն բոլոր տարածքները, որոնք նա կորցրել էր բալկանյան պատերազմների ժամանակ։

1915 թ. հոկտեմբերի 14-ին Եոյակ միության կազմում Բուլղարիան մտավ պատերազմի մեջ։ Մինչ այդ Բուլղարիայի բոլոր հայաշատ քաղաքներում՝ 1915 թ. ապրիլից հզոր շարժում ծավալվեց Թուրքիայում երիտթուրքերի կառավարության կողմից կազմակերպված հայ ժողովրդի ցեղասպանության դեմ։ Սլիվեն, Շումեն, Ռուսե, Պլովդիվ, Վառնա, Ստարա Զագորա և այլ քաղաքներում բուլղարների ու հայերի համատեղ բողոքի ժողովներ ու միտինգներ կազմակերպվեցին՝ թուրքական նոր նախճիրների դեմ։ Ողջագրեր ու բանաձևեր էին ուղարկվում բուլղարական կառավարությանը, պահանջելով նրա միջամտությունը։ Այդպիսի մի ժողովում, որը տեղի ունեցավ Ռուսե քաղաքի հայկական գաղութի ղեկավարության հրավերով, հետևյալ դիմումն ուղարկվեց կառավարության նախագահ Ռադոսլավովին. «Ահա տարի մըն է, որ հայ ժողովուրդը ենթակա է բնաջնջման թուրք կառավարության կողմեն։ Հակառակ մեր ժողովուրդի օրինական ընթացքին թուրք պետության հանդեպ, կառավարությունը սոսկալի հալածանքով, բռնություններով ու չարդերով կոչնչացնե խաղաղ հայ ազգաբնակչությունը։ Հատուկ պատրաստած ծրագրով ան սիստեմատիկ կերպով կը հանե ամբողջ շրջաններու հայերը և կաքսորե

Փոքր Ասիայի ամենախուլ անկյունները, իսկ հայ օջախները կը ղրկե մահմեդականների և քուրդական խմբեր, պարպելու համար հայկական գավառները հայ տարրերեն։ Վաղվան զարհուրելի կատաստրոֆի նախօրյակին մենք Ռուսեի հայերս հավաքվելով այսօր՝ սգալու համար մեր թանկագին նահատակ զոհերը, կդիմենք ազատ Պուլկարիայի, կոշում կընենք իր ամենանվիրական զգացմունքներուն և կխնդրենք, որ ինչպես միշտ, այս անգամ ալ միջամտե Թուրք կառավարության առջև՝ դադարեցնելու համար հալածանքները՝ ընդդեմ խաղաղ հայ ժողովուրդին Թուրք կայսրության սահմաններու մեջ»[17]։ Բուլղարական բոլոր մինիստրություններին այսպիսի բազմաթիվ նամակներ ու հեռագրեր էին ուղարկվել ինչպես երկրի ներսիցէ, այնպես էլ սփյուռքի մյուս գաղութներից։ Եղեռնի կապակցությամբ բուլղարական մամուլի էջերում լույս էին տեսնում հոդվածներ՝ ուղղված Թուրքական բարբարոսությունների դեմ։ «България» թերթը գրում էր. «Հանուն քաղաքակրթության և մարդասիրության, մենք պարտավոր ենք ձայն բարձրացնել և բողոքել երիտթուրքերի ռեժիմի բարբարոսությունների դեմ։ Բուլղարիան կարող է այսօր շատ բան անել հայ ժողովրդի վիճակը թեթևացնելու համար։ Այդ ժողովրդի նկատմամբ մենք միշտ համակրանք ենք տածել»[18]։

Պլովդիվում բազմաթիվ նամակներ էին ստացվել բալկանյան երկրների և այլ գաղթավայրերից՝ համազգային ցույց կազմակերպելու առաջարկություններով։ Սոֆիայում ստեղծվեց հանձնախումբ, որը մի կոչով դիմեց բալկանյան հայկական գաղթավայրերին։ Կոչում ասված էր. «Բնաջնջվող ժողովուրդի օգնության հասնելու ամեն ձեռնարկ գրեթե ապարդյուն մնացած է։ Կը դիմենք վերջին անգամ մըն ալ»[19]։ Հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների նախաձեռնությամբ որոշվեց.

ա) 1915 թ. օգոստոսի 4-ին փակել բոլոր հայկական խանութներն ու ձեռնարկությունները՝ որպես ընդհանուր սգի օր։

բ) Նույն օրը հայկական և բուլղարական եկեղեցիներում մատուցել հոգեհանգստի պատարագ և կազմակերպել սգո միտինգներ։

գ) Հրավիրել օտար բարեկամներին, պետական հասարակական ներկայացուցիչներին և պարզաբանել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած դեպքերը, ընդունել բողոքի բանաձևեր և դրանք հանձնել բուլղարական կառավարությանն ու օտար երկրների ներկայացուցիչներին, հրավիրել մամուլի ներկայացուցիչների ուշադրությունը և գործնական միջոցներ նախաձեռնել սգո օրին համազգային բնույթ տալու համար։

1915 թ. օգոստոսի 10—12-ին Սոֆիայում տեղի ունեցավ բուլղարա-

կան սոցիալ-դեմոկրատական կուսակցության XXI համագումարը, որն ընդունեց բողոքի բանաձև՝ ճնշված ժողովուրդների պաշտպանության օգտին։ Բլագոևյան կուսակցությունը, մյուս քաղաքական կուսակցությունների հետ, դիմում ներկայացրեց բուլղարական կառավարության նախագահ Ռոդոսլավովին՝ հայկական եղեռնի վերաբերյալ, խնդրելով նրա միջամտությունը ջարդերը կանխելու համար։ Դիմումներին կից ժողովների բանաձևերում բուլղար աշխատավորներն իրենց զայրույթն էին արտահայտում երիտթուրքերի կատարած ոճրի դեմ։

Այդ օրերին բուլղարական բոլոր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները, այդ թվում սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչը բուլղարահայ թեմի առաջնորդ Դուրյան եպիսկոպոսի գլխավորությամբ ներկայացան կառավարության նախագահ Ռոդոսլավովին։ Վերջինս ընդունեց առաջնորդին ու պատվիրակության անդամներին և հայտնեց, որ ինքը քաջ ծանոթ է հայ ժողովրդի ողբերգական վիճակին և իր ժամանակին դիմել է Թուրք կառավարությանը, սակայն բոլոր դիմումները և բարի խորհուրդներն ապարդյուն են անցել։ Ռոդոսլավովը հայտնեց, որ ամերիկահայերը և եգիպտահայերը նույնպես դիմել են Ֆերդինանդ Թագավորին և վերջինս իր անունից համապատասխան կարգադրություններ է կատարել Կոստանդնուպոլսի բուլղարական դեսպանին և խնդրել Թուրքական կառավարությանը՝ դադարեցնել հայկական կոտորածները։ Ռոդոսլավովը վերջում հավաստիացրեց, որ դիմումը և բացատրագիրը նույնպես կուղարկվեն Թուրքական կառավարությանը։ Առաջնորդի այն խնդրանքին, որ Թուրքիայից գաղթող հայերին կառավարության կողմից դժվարություններ չհարուցվի Բուլղարիայի սահմանն անցնելիս, նախագահը պատասխանեց, որ 20 տարի շարունակ Թուրքիայից եկող հայերը վայելել են և կվայելեն անկեղծ, անշահախնդիր հյուրընկալություն և ոչ մի հայից փաստաթուղթ կամ անձնագիր չի պահանջվի սահմանն անցնելու դեպքում[20]։

1915 թ. վերջին բուլղարական կառավարությունը ուժեղացրեց պատերազմի պրոպագանդան և խստությունը մամուլի նկատմամբ։ Գրաքննությունը տարածվեց նաև հայկական թերթերի վրա և ավելի ուշ փակվեցին «Պալքանեան մամուլ» ու «Հայաստան» թերթերը։

Պատերազմի առաջին օրերին զորակոչվեցին 20—46 տարեկան հայերը։ Բուլղարահայ թեմի առաջնորդ եպիսկոպոս Ղևոնդ Դուրյանի միջամտությունը և բազմաթիվ դիմումները բուլղարական կառավարությանը ստիպեցին զորակոչել միայն բուլղարական քաղաքացիություն ունեցող հայերին։ Օտար քաղաքացիություն ունեցողները և 3 տարուց պակաս

Բուլղարիայում ապրողները զինվորական ծառայությունից ազատվում էին։ Սակայն հետագայում զորացրված հայերը նոր հրամանով դարձյալ զորակոչվեցին։ Հրաժարվողները պարտավոր էին 24 ժամվա ընթացքում հեռանալ Բուլղարիայից[21]։

Այսպիսով, բուլղարահայերը, բուլղար աշխատավորական զանգվածների հետ մեկնում էին ռազմաճակատ՝ մասնակցելու համաշխարհային սպանդին՝ հակառակ իրենց ազգային ու դասակարգային շահերի։ Բուլղարական բանվորական սոցիալ-դեմոկրատական կուսակցության Պլովդիվի «Նարոդեն դոմ» ակումբի դահլիճում հավաքված բանվորների, ծառայողների և արհեստավորների ժողովում այդ օրերին ելույթ ունեցավ Սահակյան Շահրազյանը։ «Վաղը մենք գնում ենք պատերազմ, մենք սոցիալիստներս—տեսնյակները դեմ ենք պատերազմին, բայց մեզ բռնի ուժով են ուղարկում։ Մեզ ուղարկում են մեռնելու բուրժուազիայի շահերը պաշտպանելու համար։ Ջմոռանանք, որ ունենք կուսակցական պարտականություն՝ պայքարել իմպերիալիստական պատերազմի դեմ։ Ջմոռանանք մեր պարտականությունները որպես կուսակցության մարտիկներ»[22]։

Պատերազմի ընթացքում տարբեր ռազմաճակատներում բուլղարական բանակի կազմում մարտնչում էին բազմաթիվ բուլղարահայեր։ Նրանցից շատերը որպես հրամանատարներ ու շարքայիններ զոհվեցին մարտի դաշտում[23]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը բուլղարական բանակում և ռազմաճակատում ուժեղացրեց հեղափոխական տրամադրությունները և զինվորական հուզումները։ Ռազմաճակատում զինվորները լքում էին խրամատները։ Սկսվեց նահանջը, որը վերջացավ պարտությամբ։ 100 հազար սպանվածներ, երկրի տնտեսության քայքայում, աշխատավորական զանգվածների աղքատացում... Ֆերդինանդ թագավորը հեռացավ Բուլղարիայից, տապալվեց Ռադոսլավովի գլխավորած կառավարությունը։

Ռազմաերազմյան տարիներին Սոֆիայում, Պլովդիվում, Վառնայում, Ռուսեում և այլ քաղաքներում վերակենդանացավ բուլղարահայ գաղութի քաղաքական-մշակութային կյանքը։ Վերակազմվեցին թաղական խորհուրդները և հոգաբարձությունները, վերահրատարակվեցին հայկական թերթերն ու պարբերականները, վերաբացվեցին հայկական դպրոցներն ու գրադարանները։ Պատերազմի ընթացքում և նրա ավարտից հետո բուլղարահայերը սերտ կապերի մեջ էին Կոստանդնուպոլսի, Ադրիանուպոլսի, Արևելյան Թրակիայի մյուս քաղաքների հայերի հետ։ Նրանք հսկայական աշխատանք կատարեցին Թուրքիայում աքսորվածներին ու որբերին

օգնելու գործում։ Կոստրաձներից ու աքսորավայրերից փրկված հայ ժողովրդի բեկորները օգնության մեծ կարիք էին զգում։ Բուլղարահայ գաղութից հավաքված դրամական միջոցներն ու հագուստեղենն ուղարկվում էր Կոստանդնուպոլիս։ Օգնություն էր հավաքվում ոչ միայն հայերից, այլև բուլղարներից։

Այդ օրերին «Պալքանեան մամուլ» թերթի էջերում լույս տեսավ Պլովդիվի հայերի կոչը, որտեղ ասված էր. «Հայրենակիցներ, տեղյակ ենք այն սարսռազդեցիկ ու սրտակեղեք վիճակին, որ կը գտնվին Տաճկաստանի մեր տեղական եղբայրներն ու քույրերը, որոնք այսօր տուն կվերադառնան Պոլիս տանող կայարաններու երկայնքով։ Ոչ մի օտար իրենց օգնության կհասնի։ Ջմեռային ցուրտը, անօթությունը, փոխիկ հիվանդությունները հոն են ի սպառ մահացնելու համար դժբախտ ցեղի մը այդ վերջին մնացորդները։

Ուրեմն կարևորը այս վայրկյանիս անհետաձգելիորեն կարևորն է այդ թշվառները մահվան ճիրաններեն փրկել։ Անոնք տառապեցան, որովհետև կը կրեն անուն մը, որ մերն է... որովհետև կխոսին լեզու մը, որ մերն է...»։

Թրեաճայ տառագրչաներու ի նպաստ ճվիւռաւոյթեան ճաճգաճակիչ մասնախումբ, Ֆիլիպե, 7 դեկտեմբերի 1918 թ.[24]։

Այդ օրերին Սոֆիայի հայկական գաղութը հայերից և բուլղարներից հավաքել էր 250.000 ֆրանկ, Լոմ քաղաքի հայկական փոքրիկ գաղութը հավաքել էր 14.000 լևա։ Յամբոլի մի քանի ընտանիքներից բաղկացած գաղութը իր ընդհանուր ժողովում հավաքել էր 4.000 ֆրանկ։ Նրանք ստեղծեցին «Տարագրյալներու ֆոնդ» և կոչ արեցին մյուս հայաշատ քաղաքներին՝ հետևել իրենց օրինակին[25]։ Սլիվենի և Այտոսի հայերը հավաքեցին հագուստեղեն և Բուրգասի նավահանգստից ուղարկեցին Կոստանդնուպոլիս[26]։ Պլովդիվում հիմնադրվեց մալգարացիների «Մամիկոնյան» հայրենակցական միությունը, որը համաքաղաքացիներից դրամական միջոցներ էր հավաքում Մալգարայի տարագրյալների համար։

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո անգլիական նավատորմը գրավել էր Եգեյան ծովի արևելյան ափերը և պաշարել Գեմլեզը (19 հունիսի 1920 թ.)։ Դաշնակիցները գրավել էին Փոքր Ասիայի արևմտյան ափերը և դրանք պահում էին իրենց հսկողության ներքո։ Գրավումից դուրս էին մնացել բազմաթիվ հայաշատ քաղաքներ, հայկական ու հռոմեական գյուղեր, որտեղ ասպատակություններ էին կատարում թուրք

ավազակախմբերը[27]։ Որոշ գյուղերում (Զենդիլեր, Նոր Գյուղ, Քարձի, Յալակդերե, Սելոզ և այլն) ինքնապաշտպանության նպատակով կազմակերպվել էին զինված ջոկատներ[28]։ Մարտերի ընթացքում ավազակներն ավերեցին այդ գյուղերն ու կոտորեցին հայերի մեծ մասը։

1920 թ. Հունաստանը ներգրավվեց նոր պատերազմի մեջ։ Օգտվելով Թուրքիայի պարտությունից Հունաստանը ցանկանում էր վերամիավորել իր երբեմնի կորցրած հողերը։ Հունական բանակն արագ թափով դուրս եկավ փոքրասիական ափը և շարժվեց դեպի երկրի խորքերը։ Ուժասպառ հունական բանակը, սակայն, Փոքր Ասիայի խորքերում կտրվել էր թիկունքից։ Դժվարանում էր նոր ուժերի և ռազմամթերքի փոխադրումը։ Սկսվեց նահանջը, ապա խուճապահար փախուստը Թուրքիայից։

1922 թ. օգոստոսի 26—27-ին հունական բանակը Դոմլու-Բունարի մոտ պարտվեց։ Հետապնդելով նահանջող հունական բանակին, քեմալականները Զմյուռնիայի և Նիկոմիդիայի շրջաններում հրդեհում, ավերում էին հայկական ու հունական գյուղերը։ Զմյուռնիայի աղետից հետո Բուրսայի, Գեմլեգի, Բանդրմայի և այլ շրջանների փախուստի մատնված հայերը կուտակվել էին Մուդանիայի[29] և Գեմլեգի նավամատույցներում՝ նպատակ ունենալով անցնել Բալկաններ։ Թեև այստեղ գտնվող ֆրանսիական բանակը պիտի պաշտպաներ արտագաղթող հայերին, սակայն խուճապի հետևանքով շատերը ծովահեղձ եղան, և կամ թուրքական բանակի զոհը դարձան։ Գաղթականների միայն մի մասին հաջողվեց անցնել Արևելյան Թրակիա։

Զմյուռնիան և Բրուսան գրավելուց հետո, քեմալականները շարժվեցին դեպի Դարդանել և Կոստանդնուպոլիս, նպատակ ունենալով մտնել Արևելյան Թրակիա[30]։ Կոտորածի վտանգ էր սպառնում թե՛ տեղի հայ բնակչությանը, թե՛ այստեղ ապաստան գտած տարագիրներին։ Այդ օրերին Ռոդոստո քաղաքում հանգրվանել էին 8400 գաղթականներ, Մալգարայում՝ 1000, Չորլուում՝ 900, Սիլիվրիայում՝ 500 հայ գաղթականներ։ Մոտավորապես 1500 հայեր ցրվել էին Էրեյլիում, Շար-Քյոյում և Էգեյան ծովի կղզիներում[31]։ Զմյուռնիայից զատ հույն-թուրքական պատերազմի զոհ դարձած Նիկոմիդիայի և Բութանիայի շրջանների 130.000 հայերից Արևելյան Թրակիա էր անցել սոսկ 15—18 հազարը։ Մեծ մասը կոտորվել էր փախուստի ժամանակ[32]։

Սոֆիայի հայերը, տեղեկանալով կոտորածների մասին, կազմակերպեցին նյութական օգնություն և հավաքած գումարները ուղարկեցին Արևելյան Թրակիայի զանազան քաղաքները։ Ռոդոստոյում, հունական վարչական մարմիններն օրընդմեջ 1500—2000 կգ հաց էին բաժանում գաղթական հայերին։ Տեղի հայերը և օտար հանձնախմբերը զբաղվում էին նրանց տեղավորման աշխատանքներով։ Սակայն այստեղի քրիստոնյա բնակչությունը, վախենալով թուրքական բանակի ներխուժման վտանգից, արտագաղթում է։ Հայերը գաղթում էին խմբերով, խուսափելով ավազակների ու մարդասպանների խմբակային հարձակումներից[33]։

Չորլուից և Ադրիանուպոլսից գաղթականները գնում էին դեպի Ուզուն-Քյուփրի, որտեղից բաժանվում էին դեպի Հունաստան և Բուլղարիա։

1922 թ. սեպտեմբերի 21-ին գաղթականների առաջին քարավանները հասան բուլղարական սահմանը։ Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով թեև Բուլղարիան գտնվում էր տնտեսական ծանր վիճակում, այնուամենայնիվ բուլղարական կառավարությունը՝ Ալեքսանդր Ստամբոլիյսկու գլխավորությամբ որոշեց չփակել սահմանները հայ գաղթականների առաջ։ Այդ առթիվ ընդունված որոշման մեջ ասված էր. «Բուլղարական կառավարությունը և ժողովուրդը իր այս դժվարին օրերին չի լքում ավանդական դարձած բարեկամական վերաբերմունքը հայերի նկատմամբ»[34]։

1922 թ. հոկտեմբերի 3-ին Պլովդիվում տեղի ունեցավ գաղութի ներկայացուցիչների խորհրդակցական ժողով, որին մասնակցում էին բոլոր հասարակական և կուսակցական կազմակերպությունների, այդ թվում նաև հայ կոմունիստների ներկայացուցիչները։

Հրավիրվել էին թաղական խորհրդի, ազգային վարժարանի հոգաբարձության դեկավարությունը, «Վահան Մանվելյան» գեղարվեստասիրաց ընկերության վարչության ներկայացուցիչները, «Գրասիրաց եղբայրության», «Կարմիր խաչի», «Շանթ» միության, բոլոր հայրենակցական միությունների ներկայացուցիչները և այլն[35]։

Խորհրդակցությանը մասնակցում էին նաև հայ մտավորականության, արդյունաբերական, առևտրական և արհեստավորական շրջանների 22 ներկայացուցիչներ[36]։ Խորհրդակցական ժողովը «Գաղթականական հանձնաժողով» էր ստեղծելու, որը զբաղվելու էր գաղթականների ընդունման, տեղավորման և այլ հարցերով։ Որոշվեց կազմել 7 անձից բաղկացած հանձնաժողով, որը պետք է զբաղվեր միայն Պլովդիվ ժամանող գաղթականների հարցերով։ Այն գործելու էր ինքնուրույն և հաշվետու էր լինելու, այսպես կոչված, «Ազգային իշխանության առաջ։ Սակայն դաշնակցության ներկայացուցիչ Հրանտ Տեմիրքափուլյանը պահանջեց, որ հանձնաժողովը կազմվի անկախ և հաշվետու լինի գաղութի առաջ։ Այս առաջարկի կողմնակիցներն ամեն կերպ ձգտում էին, որ հանձնաժողովը դուրս մնա «Ազգային իշխանության»[37] հսկողությունից, քանի որ այնտեղ ընտրված էին

«Ազգային բլոկի» ձախ կուսակցությունների ներկայացուցիչները՝ ներառյալ կոմունիստները[38], 23 : 3 հարաբերությամբ ձայների մեծամասնությամբ ընդունվեց «Բլոկի» առաջարկությունը: Հանձնաժողովի կազմում ընտրվեցին Առնակ Մյունկյուճյանը, Ալեքսանդր Տեմիրճիպաշյանը, Աստիկ Իպոյանը, Գրիգոր Նահապետյանը, դոկտոր Թ. Թովմասյանը, Պետրոս Աֆեյանը և Հրանտ Տեմիրքափուլյանը: Ժողովը որոշեց բոլոր հասարակական կուսակցական կազմակերպություններին ներգրավել տարագրյալներին օգնելու աշխատանքներում: Պլովդիվի քաղաքային խորհուրդը «Գաղթականական հանձնաժողովին» հատկացրեց 10000 լևա: Ժողովի ավարտից հետո հանձնաժողովի նախագահ, դոկտոր Թ. Թովմասյանը, Պլովդիվի ս. Գևորգ եկեղեցու ավագ քահանա Վ. Տեր-Մինասյանի և հանձնաժողովի այլ անդամների հետ մեկնեցին Սվիլենգրադ (բուլղարթուրքական սահմանը), գաղթականներին ընդունելու և տեղաբաշխելու համար:

Տարագրվածներին օգնելու նպատակով բուլղարական կառավարության որոշումով ֆինանսների մինիստրը հրամայել էր նրանց գույքն ու ունեցվածքը աղատել մաքսից: Կառավարությունը միաժամանակ կարգադրել էր հատուկ ձրի գնացքներ հատկացնել գաղթական հայերին և նրանց տեղափոխել երկրի զանազան քաղաքներն ու բնակատեղիները: Նրանք, ովքեր ունեին փոխադրական միջոցներ՝ սայլեր, կառքեր, ձիեր և այլն, ուղղակի մուտք էին գործում Բուլղարիա, ապա տեղաբաշխվում Սոֆիա-Բուրգաս երկաթուղու վրա գտնվող տարբեր քաղաքներում: Բացառությամբ մեծ քաղաքների, քանի որ բուլղարական կառավարությունը դրանք փակ էր հայտարարել:

Բուլղարիայի հայաշատ քաղաքներն էին Պլովդիվը, Վառնան, Ռուսանն, Բուրգասը, Սլիվենը, Շումենը, Այտոսը, Պազարջիկը և այլն: Մինչև 1922 թ. հոկտեմբերի 18-ը Բուլղարիա ներգաղթեցին 15000 հայեր, որոնցից մեծ դժվարություններով, և տեղական իշխանությունների հատուկ թույլտվությամբ 1055 հայեր հասել էին Պլովդիվ (մեծ մասամբ Բրուսայի շրջանի գյուղերից): Շուրջ 6000 գաղթականներ տեղավորվել էին սահմանամերձ քաղաքներում (Հարմանլի, Սվիլենգրադ, Կրջալի, Հասկովո, Յամբոլ, Էլհովո և այլն): Շատերն ապաստանել էին իրենց բարեկամների, համաքաղաքացիների, ծանոթների կամ օգնության հասնող հայերի ու բուլղարների մոտ: Մնացած 8000 գաղթականներ ժամանակավորապես տեղավորվեցին այլ քաղաքների հայկական դպրոցներում, եկեղեցիներում, ակումբներում, զորանոցներում ու հիվանդանոցներում:

Պլովդիվի «Գաղթականական հանձնաժողովի» տվյալներով 1922 թ. վերջերին Պլովդիվում բնակություն էին հաստատել 1280 հոգի, Բուրգասում՝ 1000, Այտոսում՝ 350, Կարնոբատում՝ 180, Սլիվենում՝ 1290, Յամբոլում՝ 600, Վառնայում՝ 1000, Նովա Զագորայում՝ 700, Ստարա Զագորայում՝ 1000, Պազարջիկում՝ 1000, Բորիսովգրադում (Պրովոմայ)՝ 800 հոգի և այլն[39]:

1922 թ. հոկտեմբերի 21-ին Պլովդիվի նահանգապետի հրավիրած ժողովում գաղութի ներկայացուցիչներից ընտրվել էր նոր «Գաղթականական հանձնաժողով», որը շարունակելու էր գաղթականների հետ տարվող աշխատանքները: Հանձնաժողովին տրվել էին լայն իրավունքներ՝ պետական հսկողության ներքո[40]:

Ի վիճակի չլինելով հոգալու գաղթականների հերթական քարավաններ ընդունելու նյութականը, հանձնաժողովն օգնության նպատակով դիմել էր Կոստանդնուպոլսի պատրիարքարանին, Բուխարեստի թաղական խորհրդին և Ամերիկայի «Relief» ընկերությանը: Ակտիվ գործունեություն էին ծավալել գաղութի ղեկավարներ դոկտոր Թ. Թովմասյանը, դոկտոր (կոմունիստ) Գառնիկ Թյուֆյունճյանը և Գևորգ Ադամյանը: Նրանց նախաձեռնությամբ Բուլղարիայի զանազան քաղաքներում գաղթականների օգտին հավաքվեց 300.000 լևա:

1922 թ. հոկտեմբերի 4—15-ը հայ տարագիրների օգտին Սոֆիայում հավաքվել էր 12000, Ռուսեում՝ 10000, Շումենում՝ 3000, Նովա Զագորայում՝ 2750, Պանագյուրիշտեում՝ 2000, Բորիսովգրադում՝ 2000 լևա[41]: Սակայն հավաքած գումարներով հնարավոր չէր բավարարել գաղթականների պահանջները: Նրանցից 1600-ի վիճակը չափազանց ծանր էր:

Առաջին իսկ օրերից գաղթականներին խնամելու համար կազմվել էին «Կարմիր խաչի» խմբեր, որոնք հագուստ և սնունդ էին մատակարարում նրանց, հիվանդանոցներում բուժում ու խնամում էին հիվանդներին: Այդ աշխատանքները ղեկավարում էին Պլովդիվի հայ բժիշկներ Թ. Թովմասյանը, Գ. Օրմանյանը և Գ. Թյուֆյունճյանը, որոնք իրենց հիվանդանոցները տրամադրել էին հիվանդ գաղթականներին և առանց հերթափոխի աշխատում էին օր ու գիշեր:

Գաղթականների տեղավորման հարցը դժվար էր հատկապես Բուրգաս քաղաքում: Առաջին քարավանով այստեղ էին ժամանել 210 հայեր: Ո՛չ դպրոցի շենքը, ո՛չ եկեղեցին ու բակը չէին բավականացնում նրանց տեղավորելու համար: Գաղութի ղեկավարները և «Գաղթականական հանձնախումբը» վարձեցին Բուրգասի թատրոնի շենքը և ժամանակավորապես տեղավորեցին նրանց: Այնուհետև գաղթականների մի մասին վերաբնակեցրին Այտոս և Կարնոբատ քաղաքներում:

1922 թ. նոյեմբերին նման իրավիճակ էր ստեղծվել նաև մի շարք այլ

քաղաքներում։ Այսպես, Սլիվենում գաղթականների որոշ մասին տեղավորեցին Կերմենլի կայարանում։ Նրանց մեծ օգնություն ցույց տվեցին նաև բուլղարներ Վանել Դանչևը, Վասիլ Օվչարովը, Գենչևները և Անաստասովները[42]։

Փոխգնդապետ Բոշնակովի և մայոր Դամյանովի կարգադրությամբ առաջին քարավանով Յամբոլ ժամանած 194 հայերին տրամադրել էին տեղի ռազմական հիվանդանոցն ու զորանոցը, հոգալով նաև նրանց անունդը։ Յամբոլի 7—8 ընտանիքներից բաղկացած հայ գաղութը կազմակերպել էր գաղթականների հացի և վառելանյութի մատակարարումը։

Ռուսե քաղաքում ապաստանել էին ավելի քան 1110 գաղթականներ, որոնց զգալի օգնություն ցուցաբերեցին տեքստիլ մանարաններում աշխատող հայ բանվորները, ինչպես նաև տեղի թեղուտական խորհուրդն ու «Գաղթականական հանձնախումբը»։ Բժիշկ Մ. Գարաճյանի ղեկավարությամբ կազմակերպվել էր հատուկ հիվանդանոց, որն ապահովված էր անհրաժեշտ դեղորայքով։

Բոլոր գաղթականական հանձնախմբերը հրահանգներ էին ստանում Պլովդիվից, սակայն առանձին քաղաքների միջև սերտ համագործակցություն չկար։ Փաստորեն գաղութում գործում էին երեք կենտրոններ։ Անհրաժեշտ էր ստեղծել մեկ միասնական կենտրոնական հանձնաժողով։ Դրան հավակնում էր Սոֆիայի հանձնախումբը, որն ուներ «Գաղթականական ֆոնդ» և ձգտում էր միասնության։ Նման ֆոնդեր ստեղծվել էին նաև Պլովդիվում և Ռուսեում։

1922 թ. նոյեմբերի սկզբներին Սոֆիայի հանձնախումբը դարձյալ դիմեց Պլովդիվի հանձնախմբին՝ պահանջելով կենտրոնականի պարտականությունները հանձնել Սոֆիայի հանձնախմբին, իր պահանջը փաստարկելով բուլղարական կառավարության հետ ունեցած անմիջական կապերով։ Նոյեմբերի կեսերին նույն հանձնախումբը կապ հաստատեց կառավարության և տեղական հանձնախմբերի հետ ու իր վրա վերցրեց «Կենտրոնական հանձնախմբի» պարտականությունները, ստեղծելով «Գաղթականական կենտրոնական հանձնաժողովը»։

Բուլղարական կառավարությունը հաստատեց նրա գործունեությունը և այն դրեց ներքին գործերի մինիստրության հսկողության ներքո։

1922 թ. հոկտեմբերի 30-ին բուլղարական կառավարության ներքին գործերի մինիստր Ռայկո Դասկալովը «Էկո դի Բուլգարի» թերթի խմբագրի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ հայտարարեց, որ «Մինչև օրս Բուլղարիայում ապաստանել են 20000 հայ գաղթականներ։ Սոֆիայում ստեղծված «Գաղթականական հանձնաժողովը» զբաղվելու է նրանց

հարցերով։ Այդ կենտրոնական կազմակերպությունը այժմ ստեղծել է «Գաղթականական ֆոնդ»՝ կառավարության հսկողության ներքո։ Հանձնաժողովը կարող է դիմել ոչ միայն Բուլղարիայում ապրող ազգակիցներին, այլև բուլղարներին և օտարներին։ Նրա գործունեության մեջ է մտնում գաղթականներին նաև աշխատանքով ապահովելու հարցը։ Այժմ՝ աշնանը և մոտեցող ձմռանը դժվար է աշխատանք գտնել, սակայն գարնանը գործի են դրվելու նրանց բազուկները։ Մենք հուսով ենք, որ Բուլղարիայում ապրող հայերի բախտավոր մասի (խոսքը տեղացի բարեկեցիկ հայերի մասին է—Ղ. Ղ.) օժանդակությամբ կհաղթահարվեն դժվարությունները»[43]։ Հետագայում նա իր մոտ հրավիրելով «Գաղթականական կենտրոնական հանձնաժողովի» անդամներին, հայտարարել էր. «Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, բալկանյան պատերազմներից հետո, մոտավորապես 500.000 բուլղար գաղթականներ ներգաղթեցին Արևելյան Թրակիայից, Մակեդոնիայից, Դոբրուջայից, Կոստանդնուպոլսից և այլ վայրերից։ Նրանք բուլղարներ էին և մենք պարտավոր էինք նրանց ընդունել... Այսօր հայ գաղթականներն են բախում մեր դռները։ Նոր գաղթականներ ընդունել այլևս հնարավոր չէր, սակայն դժբախտների առաջ մենք բաց արեցինք մեր դռները, որովհետև մենք սիրում ենք հայ ժողովուրդը, կարեկցում նրան։ Այժմ տեղացի հայերը պետք է կատարեն իրենց պարտքը՝ Սոֆիայի «Կենտրոնական գաղթականական հանձնաժողովի» միջոցով, որը ճանաչված է կառավարության կողմից և ունի իր մասնաճյուղերը 12 քաղաքներում»[44]։

1923 թ. սկզբին բուլղարական կառավարության թույլտվությամբ Սև ծովի վրայով Վառնա էին հասել հայ գաղթականների վերջին քարավանները։ Նրանք բուլղարական կառավարությանը հետագրեցին. «Այսօր՝ 26 նոյեմբերին, ժամը 11-ին Վառնայի մեջ գտնված հազարավոր հայությունը միտինգի մը մեջ որոշեց իր անկեղծ զգացմունքները և երախտագիտությունը հայտնել բուլղար կառավարության և աղնիվ ժողովուրդին, հայ ազգին հանդեպ ցույց տված մարդասիրության և ասպնջականության համար»[45]։

Իր գործունեության առաջին իսկ օրերին Սոֆիայի «Գաղթականական կենտրոնական հանձնաժողովը» հավաքեց 70000 լևա և բաշխեց Բուրգաս, Սլիվեն, Յամբոլ, Ստարա Զագորա, Պազարջիկ, Հասկովո քաղաքներում տեղավորված գաղթականներին։ Բացի այդ, հանձնաժողովը, բուլղարական կառավարության ֆինանսների մինիստրության միջոցով կարողացել էր վերացնել մաքսը և հարկերը՝ գաղթականների գույքի, լծկան անասունների, սայլերի և կառքերի համար, հանձնաժողովին հաջողվել էր նաև

առողջապահության մինիստրությունից ու այլ պետական մարմիններից Թուրքիայից գաղթած հայ բժիշկների և այլ մասնագետների համար հատուկ թույլտվություն ձեռք բերել:

«Գաղթականական կենտրոնական հանձնաժողովի» ջանքերով-վերացվեց մեծ քաղաքներում և Սոֆիայում հայ գաղթականներ հաստատվելու արգելքը: Ձեռք բերվեց ռազմական մինիստր Տոմովի հատուկ թույլտվությունը՝ մի շարք զորանոցներ, զինվորական հիվանդանոցներ ու պահեստներ գաղթականներին տրամադրելու մասին: Ռոդոստոյից, Զորլուից, Մալգարայից և Ադրիանուպոլսից փոխադրված եկեղեցական գույքը մաքսից ազատվեց և հանձնվեց Պլովդիվի ս. Գևորգ եկեղեցուն:

Դրսից օգնության չսպասելով, 1922 թ. նոյեմբերի 20-ին «Գաղթականական կենտրոնական հանձնաժողովը» Սոֆիայի հայ գաղութին և բոլոր սիրուհահայերին դիմեց հետևյալ խնդրանքով. «Յարդ 20000 գաղթականներ հասած են Բուլղարիա, մեծ մասամբ թշվառ և կարոտ: Երեկ շեն բույն մը, տաքուկ օջախ մը ունեին անոնք, այսօր անտուն թափառական մերկ և անոթի: Հայրենակիցներ, մեր ամենէն բախտավորներուն պարտքն է գերագույն զոհողությունը հանձն առնել թույլ շտալու համար, որ մեր եղբայրներուն ու քույրերուն անոթի գալարվին՝ ցուրտեն սառին»[46]:

Գործադրված ջանքերի շնորհիվ 1922 թ. դեկտեմբերի վերջին Սոֆիայի «Գաղթականական կենտրոնական հանձնաժողովը» ռումինահայ «Կարմիր խաչից» ստացավ 40000 լեյ, Կոստանցայի հայերից՝ 50000 լեյ, Կոստանդնուպոլսի «Կարմիր խաչից»՝ 1089 կտոր սպիտակեղեն, Անգլիայի «Հայ տիկնաց միությունից»՝ 20 անգլիական ոսկի (12000 լևա), ամերիկահայ գաղութից՝ 5500 դոլար: Բուլղարիայում և արտասահմանում գաղթականների համար հավաքված գումարը կազմեց 2.000.000 լևա[47]:

1922 թ. դեկտեմբերին «Գաղթականական կենտրոնական հանձնաժողովին» կից ստեղծվեց աշխատանքի տեղավորման բյուրո: 1923 թ. սկզբին գաղթականների մեծ մասն արդեն անցել էր աշխատանքի:

1923 թ. 47.000-ի հասնող բուլղարահայ համայնքում արդեն օրակարգի հարց էր դարձել ներքին կառավարման, կենտրոնական դեկավարության, հասարակական և մշակութային կյանքի կանոնավորման խնդիրները: Այս և գաղութի առջև ծառացած մյուս հարցերի լուծման գործում վճռական դեր խաղացին առաջադեմ ուժերը, առաջին հերթին հայ կոմունիստները: Նրանք ամրապնդեցին բուլղարահայ գաղութում գործող «Ազգային բլոկի»[48] միասնությունը, գաղութի դեկավար մարմիններից դուրս մղեցին դաշնակներին և իրենց ձեռքը վերցրին տեղերում գործող «Գաղթականական հանձնախմբերը»: Նրանք ակտիվ գործունեություն ծավալեցին նաև գաղթականներին աշխատանքի տեղավորման գործում, նախապատրաստեցին գաղութի թաղական խորհուրդների ու դպրոցական հոգաբարձությունների նախընտրական աշխատանքները: «Ազգային բլոկի» կուսակցություններն իրենց գործունեությամբ աշխատում էին սերտ կապ ստեղծել բուլղարահայ գաղութի և հայրենիքի միջև: Քննադատելով սիրուհահայ հենարան փնտրող դաշնակցական գործիչներին, բուլղարահայ կոմունիստների «Նոր աշխարհ» թերթը գրում էր. «Արտասահմանի հայ աշխատավորությունը և Տաճկաստանեն փախած գաղթականությունն է, որ պետք է վերջապես արթնանա իր քունեն և ըսե այդ պարոններուն, բավական է, որքան գործիք դարձաք եվրոպական իմպերիալիստներուն ձեռքը և դժբախտ ժողովուրդի մը դատը միջոց դարձնել ձեվիք անոնց ավելի ու ավելի դիջումներ ձեռք բերելու Տաճկաստանեն ի նպաստ իրենց կոպիտ կապիտալիստական շահերուն: Դադարեցեք քալելե այդ կործանարար ճանապարհեն, դադարեցեք շռայլելե հասարակական գումարները Եվրոպայի մայրաքաղաքներու մեջ, այդ գումարները պետք է գործածվին Սուրիո, Պուլկարիայի, Հունաստանի, Պարսկաստանի և Միջագետքի մեջ անտուն, անտեր թափառող գաղթականներուն համար, այդ գումարները պետք է տրվին Խորհրդային Հայաստանի միակ օրինավոր կառավարության տրամադրության տակ, այդ նպատակին գործածելու համար: Լուծեցեք «Պատվիրակները», «Դեսպանները» և «Հյուպատոսարանները», փակեցեք խանութները»[49]:

2. ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅԱԾԱՏ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ 1923—1944 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Բուլղարիայի վրայով Եվրոպայից դեպի Մերձավոր Արևելք տանող առևտրական ճանապարհների ու երկաթուղիների շուրջ գտնվող Սոֆիա, Պլովդիվ, Պազարջիկ, Սլիվեն, Յամբոլ, Հասկովո և Դանուբի ու Սև ծովի ափերին Ռուսե, Վառնա, Բուրգաս քաղաքներում բնակվում էր բուլղարահայերի հիմնական մասը:

Բուլղարական վիճակագրական գլխավոր վարչության 1910, 1920, 1926 թթ. տվյալների համաձայն Բուլղարիայում հայերի թիվը եղել է[50]:

Տարի	Արտաքին	Ինքնին	Ընդամենը	Գյուղերում	Քաղաքներում
1910	7134	5796	12932	1595	11337
1920	6005	5504	11509	723	10786[51]
1926	13974	13348	27322	1908	25324

1934—1936 թթ. մարդահամարի համաձայն բուլղարահայերի թիվը եղել է մոտավորապես 25000 հոգի[52]։ Նրանք տեղաբաշխված են եղել հետևյալ քաղաքներում.

Քաղաքներ	Արական	Իգական	Ընդամենը
Պլովդիվ	3232	2968	6200
Վառնա	2105	2058	4163
Սոֆիա	1415	1447	2862
Ռուսե	1118	1109	2227
Բուրգաս	901	899	1800
Հասկովո	583	543	1126
Յամբոլ	535	593	1128
Պազարջիկ	469	661	930
Սլիվեն	412	400	812
Շումեն	300	301	601
Ստարա Զագորա	193	179	272
Նովա Զագորա	116	115	231
Կարնոբատ	163	152	315
Այտոս	93	89	182
Սվիլենգրադ	83	79	162
Բորիսովգրադ	43	40	83
Պրովադիա	37	35	83
Էլհովո	23	22	45

Ընդամենը 22911 հոգի

Այս թվին եթե գումարենք նաև փոքր քաղաքներում և գյուղերում բնակվող հայերի թիվը (Կազանլըկ, Կրջալի, Կերմենլի, Պլևեն, Լոմ, Սաեռնովգրադ, Հարմանլի և այլուր), ապա բուլղարահայերի ընդհանուր թիվը կհասնի շուրջ 25000-ի, որը մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը մնաց գրեթե անփոփոխ։ Այն զգալի փոփոխությունների ենթարկվեց 1940 թ. հետո, երբ Բուլղարիային միացվեց Դոբրուջայի հարավային մասը՝ Սիլիստրա, Դոբրիչ (Տոլբուխին), Տուտրական, Բալչիկ քաղաքներով։ 1941—1944 թթ., երբ հիտլերականները և բուլղարական բանակները օկուպացրին Հունաստանը, էգեյան ծովափի հայաշատ քաղաքներից զգալի թվով հայեր բնակություն հաստատեցին Բուլղարիայի զանազան քաղաքներում։ Մինչև 1946 թ. ներգաղթը Սովետական Հայաստան՝ բուլղարահայեր հաշվվում էին ավելի քան 34000 հոգի։ Բուլղարահայերը կազմել են երկրի բնակչության փոքր տոկոսը (1910 թ.՝ 0,30, 1920 թ.՝ 0,24, 1926 թ.՝ 0,05)։ Միայն 1922—1923 թթ. այն կազմել է մեկ տոկոս[53]։

Բուլղարական ժողովրդական Հանրապետության երկրորդ քաղաքն է և իր մեծությամբ, և թե որպես տնտեսական-մշակութային կենտրոն։ VII դարից այստեղ գոյություն է ունեցել հայկական գաղութ, որը գոյատևել է դարեր։ Պլովդիվի հայկական գաղութը սավարացել է 1895—1896 թվականներին։ 1922 թ. գաղթից հետո այստեղ կար 10.000-ից ավելի հայ, երբ Պլովդիվի ամբողջ բնակչությունը շուրջ 80.000 էր։

Դեռևս XX դարի սկզբին պլովդիվահայերը ունեցել են ներքին ինքնավարության մարմիններ (թաղական խորհուրդ և հոգաբարձություն), հայկական դպրոցներ և եկեղեցիներ։ Սկզբից այստեղ էր գտնվում բուլղարահայերի առաջնորդարանը և թեմական խորհուրդը, գործում էին բազմաթիվ հասարակական-մշակութային կազմակերպություններ։

Պլովդիվի հայերը հիմնականում բնակվում էին քաղաքի «Բունարջիկ», «Հաջի Հասան», «Կապանա», «Հիսար Կապու» թաղամասերում։ Նրանք հիմնականում արհեստավորներ էին (կոշկակարներ, դերձակներ, ոսկերիչներ, գորգագործներ, երկաթագործներ և այլն) և առևտրականներ։ Պլովդիվում գործել են բազմաթիվ առևտրական տներ՝ հայկական ցուցափեղկերով ու սեփական կնիքներով։ Հետագայում նրանց մի մասը կապիտալները ներդրել է գործարաններ ու ձեռնարկություններ հիմնադրելու գործում։ Քաղաքի բազմաթիվ արհեստանոցներում, մանուֆակտուրային և կիսագործարանային հիմնարկներում ու ֆաբրիկաներում աշխատում էին մեծ թվով հայ բանվորներ։ Վերջիններից շատերը ներգրավված էին ծխախոտի և մետաքսաթելի արդյունաբերության մեջ՝ հայ ձեռնարկատերերի ֆաբրիկաներում։

Պլովդիվում 1675 թ. գործում էր այժմյան ս. Գևորգ առաքելական եկեղեցին։ Քաղաքում եղել է հայ ավետարանական ժողովարան և հայ կաթոլիկների մատուռ։ 1834 թ. հիմնադրված «Վարդանանց-Վասվասյան» ազգային վարժարանից բացի այստեղ գործում էին մի քանի հայկական մասնավոր դպրոցներ։

Դարասկզբին Պլովդիվում միակ հայ հասարակական կազմակերպությունն էր «Գրասիրաց եղբայրությունը»՝ 100 անդամներով[54]։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, և հատկապես 30-ական թվականներին՝ գաղութում արդեն գործում էին 30-ից ավելի հասարակական կազմակերպություններ և ընկերություններ, որոնք իրենց վրա էին կրում այս

կամ այն քաղաքական կուսակցության ազդեցությունը։ Նրանց մեջ ամենամասսայականը հայրենակցական միություններն էին։ Գործում էին բազմաթիվ մշակութային, սպորտային, բարեգործական, տուրիստական և այլ կազմակերպություններ՝ իրենց ակումբներով, գրադարաններով, ընթերցասրահներով, սպորտային հրապարակներով և ֆուտբոլի մարզադաշտերով։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո գաղութում գործող հնչակյան, ռամկավար-ազատական և դաշնակցական կուսակցություններին զուգահեռ բլագոևյան-դիմիտրովյան կոմունիստական կուսակցության շարքերում աճեց բուլղարահայ կոմունիստների ավագ սերունդը։ Նրանք Պլովդիվում ստեղծեցին բուլղարահայ կոմունիստների սեկցիա՝ ԲԿԿ ղեկավարությամբ, ինչպես և բուլղարահայ կոմունիստական մամուլ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Պլովդիվի առաջադեմ երիտասարդները «Շանթ», «Արարատ», «Արծիվ» և այլ հասարակական ու սպորտային կազմակերպություններում ծավալեցին ընդհատակյա կոմունիստական գործունեություն, ակտիվ մասնակցություն բերեցին Բուլղարիայում դաշնակցության գործունեության դեմ և իրենց ավանդը ներդրեցին գերմանական օկուպանտների ու ֆաշիզմի դեմ բուլղար ժողովրդի դիմադրական շարժման մեջ։

ՍՈՖԻԱ

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ Բուլղարիան ազատագրվեց ու դարձավ անկախ պետություն, Սոֆիան դարձավ պետության մայրաքաղաքը։

Ինչպես Պլովդիվի, այնպես էլ Սոֆիայի հայկական համայնքը դարերի պատմություն ունի։ Սոֆիայի հայկական առաքելական ս. Աստվածածին եկեղեցու բակում հայտնաբերված տապանաքարերից և գրավոր աղբյուրներից պարզվում է, որ XVII դարում Սոֆիայում եղել է հայկական համայնք, և որ 1673 թ. հայտնի հայ առևտրական Աբրո Չելեբին սեփական միջոցներով կառուցել է հայոց եկեղեցին[55]։ Եկեղեցու բակում հայտնաբերած տապանաքարերի վկայությամբ Սոֆիայի հայերի մեծ մասը եկել է Արարատյան դաշտից։ XVII դարի վերջին զգալի թվով հայեր գաղթել են Կաֆայից (Ղրիմ թերակղզուց) և հաստատվել Սոֆիայում։

1878 թվականին Սոֆիայում կար 100 հայ, որոնց պահանջով Կոստանդնուպոլսի հայ պատրիարքը 1880 թ. հայկական եկեղեցու համար տեղապահ է ուղարկում տեր Կարապետ Սահակյան քահանային, իսկ

1896 թ. Սարգիս Ֆեսլիքյան քահանային, որը եկեղեցուն կից ստեղծում է հայկական «Արամյան» վարժարանը՝ 30 աշակերտներով։

1905 թ. Սոֆիայի հայերի թիվը հասնում է 300-ի[56]։ Այն առավել ևս աճեց ի հաշիվ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքական բանակը լքած և Բուլղարիա եկած հայ զինվորների։ Նրանց մեծ մասը հաստատվեց Սոֆիայում և հայ բնակչության թիվը հասավ շուրջ 1800 հոգու։ Նրանք հիմնականում զբաղվել են առևտրով և արհեստներով։ Եղել են քաղաքի լավագույն ոսկերիչները, ժամագործները, կոշկակարները, փականագործները և տպագրիչները։ Սոֆիահայերի մեծամասնությունը բնակվել են «Հայկական թաղամասում»՝ հայկական եկեղեցու շուրջը։

Հայերը, օգտվելով բուլղարական կառավարության բարյացակամությունից, Սոֆիայում ստեղծում են տեքստիլ և գալանտերեայի բազմաթիվ արհեստանոցներ՝ կազմակերպում մանուֆակտուրային արտադրություն։

1922 թ. հետո Սոֆիայի հայկական գաղութի ազդեցությունը բուլղարահայերի կյանքում էլ ավելի ուժեղացավ։ Սոֆիայում գործող հայ ազգային կուսակցությունները, և բազմաթիվ մշակութային, հայրենակցական, մարզական ու այլ միություններ իրենց կազմակերպվածությամբ սկսեցին ազդել մյուս քաղաքների հայկական կազմակերպությունների վրա, որպես առաջատար և տոն տվող, իսկ հետագայում ստեղծեցին իրենց մասնաճյուղերը բոլոր հայաշատ քաղաքներում։

1924 թ. հետո Սոֆիայի հայկական համայնքը փաստորեն իրականացնում էր անմիջական կապը բուլղարական կառավարության և բուլղարահայ գաղութի ղեկավար մարմինների հետ։ Սոֆիայում էին հաստատված բուլղարահայերի Թեմական խորհուրդի առաջնորդարանը, Դատաստանական բարձրագույն խորհուրդը և մի շարք կազմակերպությունների կենտրոնական վարչություններ։

1929—1934 թթ. տնտեսական ճգնաժամի հետևանքով Սոֆիայի հայկական գաղութում զգալի փոփոխություններ տեղի ունեցան։ Աշխատանք գտնելու նպատակով Բուլղարիայի տարբեր քաղաքներից այստեղ տեղափոխվեցին մեծ թվով հայեր, նրանց թիվը հասավ մոտ 4000-ի։ Աշխատունակ հայերի 50 տոկոսը հիմնականում արհեստավորներ էին, մյուս կեսը՝ հիմնարկ-ձեռնարկություններում աշխատող բանվորներ ու ծառայողներ։ Կային առևտրականներ, գործարանատերեր, և ազատ զբաղմունքի մարդիկ (բժիշկներ, արվեստագետներ, ուսուցիչներ)։

1934—1936 թթ. Սոֆիայում հիմնադրվեցին «Թրակիա» և «Սևան» հայկական վարկային բանկերը։

Չնայած հայ աշխատավորների տնտեսական ծանր վիճակին, Սոֆիայում հայ հասարակական-մշակութային ու կրթական կյանքը վերելք ապրեց։ 1933 թ. սկսվեցին քառահարկ «Հայկական տան» շինարարական աշխատանքները, որոնք ավարտվեցին 1936 թ.[57]։

Շենքի առաջին հարկում կային մի քանի խանութներ, որոնցից գանձվող վարձը հատկացվում էր հայոց «Արամյան» վարժարանին, երկրորդ հարկում էր ս. Աստվածածին եկեղեցին, երրորդ հարկում՝ «Արամյան» վարժարանը, իսկ չորրորդ հարկում՝ Թեմի առաջնորդարանը, թաղական խորհրդի և դպրոցի հոգաբարձության գրասենյակները։

1936—1939 թթ. Սոֆիայի թաղական խորհուրդը բուլղարահայ Թեմի առաջնորդի նախաձեռնությամբ և մի շարք հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների ջանքերով աշխատանք ծավալեցին բուլղարահայ նահանգյան հպատակություն ունեցող հայերի համար բուլղարական քաղաքացիություն և աշխատանքի հավասար իրավունքներ ձեռք բերելու ուղղությամբ։ Սակայն ամեն տեսակի դիմումներն ու խնդրագրերը մնացին անհետևանք։ Այս վիճակը տևեց մինչև 1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխությունը։

ՎԱՌՆԱ

Դարերի ընթացքում Վառնան եղել է առևտրական կենտրոն Սև ծովի ափին և ունեցել է նավամատույց։ Այժմ այն Բուլղարական ժողովրդական Հանրապետության խոշորագույն նավահանգիստն է։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Վառնան դարձավ տնտեսական, քաղաքական ու մշակութային խոշոր կենտրոն և այժմ իր բնակչության թվով ու տնտեսական նշանակությամբ Հանրապետության երրորդ քաղաքն է։

XVII դարում Վառնայում եղել է հայկական փոքր համայնք։ Այդ մասին են վկայում ս. Սարգիս հայկական եկեղեցու կառուցման ժամանակ օգտագործված հայերեն արձանագրություններով մարմարե տապանաքարերը[58]։ Վառնայում հայկական համայնքի գոյության մասին գրել են Գրիգոր Դարանաղցին, Թուրք և օտար ճանապարհորդները, որոնք այցելել են այդ քաղաքը և ծանոթացել հայերի նիստուկացին, սովորույթներին։ Հայերը բնակվել են առանձին թաղամասում՝ իրենց եկեղեցու շուրջ[59]։ Պարզվում է, որ համայնքի հիմնադիրները եղել են Ղրիմից, Բեսարաբիայից և Լեհաստանից գաղթած հայերը, որոնց շատերի նախնիները եղել են շուռթիներ, նախիջևանցիներ և վահրեվանցիներ[60]։

Բուլղարիայում անցկացված առաջին մարդահամարի (1881 թ.) ժամանակ Վառնայում բնակվում էին 1282 հայեր, իսկ 1895—1896 թթ. ջարդերի նախօրեին՝ 2001։ Մինչև նոր դարասկիզբը Վառնայի հայ համայնքը ամենամեծն էր Բուլղարիայում։ Նրա թիվը հասել էր մինչև 10000-ի, երբ Վառնայի ամբողջ բնակչությունը 28 հազար էր։

Վառնայում բնակվող հայերը, շնորհիվ քաղաքի աշխարհագրական դիրքին, մշտական հաղորդակցության մեջ են եղել հարևան Ռումինիայի և Կոստանդնուպոլսի հայերի հետ։ Վառնայի եկեղեցին ենթարկվում էր Կոստանդնուպոլսի պատրիարքարանին և վերջինս հաճախ ուղարկում էր առաջնորդի տեղապահներ։ Վառնայի հայ առևտրականները կապեր ունեին Զմյուռնիայի, Կիպրոսի, Եգիպտոսի, ինչպես նաև Տրապիզոնի, Բաթումի և Անդրկովկասի այլ քաղաքների հայ առևտրականների ու արդյունաբերողների հետ։

Վառնայի ս. Սարգիս եկեղեցին, ինչպես վկայում են եկեղեցու բակում հայտնաբերված տապանաքարերը, կառուցվել է 1842 թ., սակայն նրա տեղում այդ թվականից առաջ եղել է մատուռ[61]։ Նրան կից գործող հայկական դպրոցը, որ կոչվել է «Սիսական», հիմնադրվել է 1863 թ.։ Դպրոցի այժմյան շենքը կառուցվել է մեր դարասկզբին՝ ճարտարապետ-հնագետ Թորոս Թորամանյանի կազմած նախագծի հիման վրա։ 1886 թ. Վառնայում լույս տեսավ բուլղարահայ մամուլի առաջին հայկական «Իրավունք» թերթը, որն ուներ հայատառ թուրքերենով հավելված։ Մինչև 1904 թ. Վառնայում մնացել էին ավելի քան 4000 հայեր[62]։ Հայերի մեծ մասը տեղափոխվել էր Բուլղարիայի տարբեր քաղաքները, իսկ մյուս մասը արհեստավորներ ու առևտրականներ էին, սակայն, պայմաններին բերումով նրանցից շատերը որպես բեռնակիրներ և բանվորներ աշխատանքի անցան քաղաքի նավամատույցում և վանադան արդյունաբերական ֆաբրիկաներում։ Կային փոքր թվով խոշոր առևտրականներ ու ֆաբրիկատերեր։

1922 թ. վերջին Վառնայում ապաստանեցին Թուրքիայից տարագրված հայերի քարավանները։ Այդ գաղթականները Թուրքիայի տարբեր շրջաններից էին և աչքի էին ընկնում իրենց սոցիալական խայտաբղետությամբ։ 78 ընտանիք եկել էին Կոստանդնուպոլսից, 45՝ Բրուսայից, 6՝ Իզմիրից, 6՝ Ռոդոստոյից, 23՝ Կեսարիայից, 20՝ Սեբաստիայից, 46՝ Բաղեշից, Կարինից, Մուշից, Վանից և այլ շրջաններից[63]։

1923—1926 թթ. Վառնան ուներ 5000-ից ավելի հայ բնակչություն։ 1934—1936 թթ. նրանց որոշ մասը տեղափոխվեց Բուլղարիայի տարբեր շրջաններ ու արտասահման։

1934—1937 թթ. Վառնայի հասարակական-քաղաքական կազմակերպություններն աշխույժ գործունեություն ծավալեցին հայ երիտասարդության շրջանում։

1937 թ., երբ գաղութում արգելվեց ՀՕԿ-ի մասնաճյուղի գործունեությունը, Վառնայի հայ կոմունիստներն իրենց ընդհատակյա գործունեությունը ծավալեցին սպորտային-տուրիստական լեգալ միություններում, մասնավորապես «Կայծ» միության շարքերում։ Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին և ընթացքում Վառնայի հայկական գաղութը տվեց մեծ թվով կոմունիստական գործիչներ՝ բուլղարական հակաֆաշիստական պայքարի մասնակիցներ։

ՌՈՒՍԵ (Ռուսեում)

Ռուսե քաղաքը, որ գտնվում է Դանուբի ներքին հոսանքի աջ ափին, Բուլղարական Ժողովրդական Հանրապետության գլխավոր նավահանգիստն է Սև ծովից դեպի կենտրոնական Եվրոպա ուղևորվող նավերի համար։ Այժմ Ռուսեն իր մեծությամբ երկրի չորրորդ քաղաքն է և տնտեսական, առևտրական ու երկաթուղային կարևոր կենտրոնը։

Հնարավոր է, որ քաղաքի հիմնադրման ժամանակ (XIV—XV) այստեղ եղել է հայկական համայնք։ Այդ մասին են վկայում Ռուսեի ս. Աստվածածին հայկական եկեղեցու բակում գտնվող տապանաքարերի արձանագրությունները, որտեղ հիշատակվում է Երևանի, Շոռոթի, Ղափանի և այլ շրջաններից գաղթած հայերի մասին[64]։

XVIII դարում Ղրիմից եկած մեծ թվով հայեր հաստատվում են Ռուսեում։ Նրանց մեծ մասը Արարատյան դաշտից էր և Նախիջևանի շրջաններից։ XIX դարի 60-ական թվականներին Ռուսեում բնակվում էին 550 հայեր[65]։

Ռուսեի հայկական համայնքը ստվարանում է հատկապես 1896 թ., երբ Թուրքիայից գաղթած հայերը հանգրվան են գտնում բուլղարական հողում։ Դարասկզբին այստեղ կային ավելի քան 2000 հայեր։ Նրանց հիմնական մասը գաղթել էր Արևմտյան Հայաստանից՝ Բաղեշից, Կարինից, Խարբերդից, Վանից և այլ շրջաններից, ինչպես նաև Կոստանդնուպոլսից։

Հարմարվելով տեղական պայմաններին, նրանք պահպանել են իրենց լեզուն, ավանդույթները, կառուցել են եկեղեցի, դպրոց։ Ռուսեում հաստատված հայերը բնակվել են առանձին թաղամասում, որը կոչվել է «Հայկական թաղ»։ Քաղաքի այժմյան ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել

է 1830—1833 թթ.։ Նրան կից գործող հայկական «Մեսրոպյան» վարժարանը դարասկզբին ունեցել է 120 աշակերտ՝ 5 դասարաններով։ Դպրոցին կից եղել է մանկապարտեզ՝ 80 երեխաներով[66]։ Հայկական դպրոցում առարկաները դասավանդվում էին բուլղարերեն։ Հայոց լեզուն (գրաբար) դասավանդում էր եկեղեցու քահանան, կամ առանձին ուսուցիչ։ Դպրոցի այդ վիճակը շարունակվել է մինչև առաջին համաշխարհային պատերազմը։

1922 թ. Ռուսեում ապաստան գտան 1100 հայ տարագրյալներ, որոնց մեծ մասը գաղթել էր Թուրքիայի արևմտյան վիլայեթներից։ Գաղթականների տեղավորման և նյութական օգնություն կազմակերպելու բոլոր աշխատանքները կազմակերպեց համայնքի թաղական խորհուրդը։ Ստեղծվեց «Գաղթականական հանձնախումբ», որը մինչև Սոֆիայի «Կենտրոնական գաղթականական հանձնաժողովի» ստեղծումը գործում էր ինքնուրույն։

Ռուսեի «Գաղթականական հանձնախմբին» հաջողվեց 670 գաղթականներից բաղկացած առաջին քարավանը տեղավորել քաղաքում՝ հայկական դպրոցի, մանկապարտեզի և եկեղեցու շենքերում։ Նյութական օգնությունից բացի հանձնախումբը գաղթականների համար կազմակերպեց առանձին հիվանդանոց։ 1923 թ. Ռուսեի նորաբնակների մեծ մասը տեղավորվեց աշխատանքի։ 1926 թ. Ռուսեի հայկական գաղութը բաղկացած էր 2050 հայերից։

Ռուսեի հայ կոմունիստները համագործակցելով հնչակյանների և ռամկավարների հետ, նախապատրաստեցին քաղաքում ՀՕԿ-ի կազմակերպության ստեղծման աշխատանքները։ Սկզբնական շրջանում Ռուսե քաղաքը բուլղարահայ ՀՕԿ-ի կազմակերպության կենտրոնական վարչության նստատեղին էր։ Մինչև 1938 թվականը և նրանից հետո ՀՕԿ-ի կազմակերպության ղեկավարության՝ հայկական համայնքում գործում էին բազմաթիվ հայրենակցական, սպորտային և տուրիստական կազմակերպություններ։ Նրանցից շատերը Սոֆիայի կամ Պլովդիվի մայր միությունների մասնաճյուղերն էին։ Առանձին միությունների կենտրոնական ղեկավարությունները գտնվում էին Ռուսեում, որոնք ակտիվ գործունեություն ծավալեցին հատկապես 1933 թ. ներգաղթի ժամանակ. «Ոդիմպոս» հայրենակցական միությունը աչքի էր ընկնում իր թատերախմբով ու մշակութային գործունեությամբ։ Սպորտային-մշակութային միություններից էին «Արծիվ» տուրիստական միությունը, «ՀՄԸՄ» (հայ մարմնամարզական ընդհանուր միություն), «Սպորտային-սկաուտական միությունը», «Արարատ» ֆուտբոլային խումբը, «Գիրքի խաչ» կանանց, «Մարո» և

«Շանթ» սպորտային միությունները, «Կոմիտաս» երգչախումբը և այլ երիտասարդական կազմակերպություններ։

1939—1944 թթ. Ռուսեում ընդհատակյա դժվարին պայմաններում հայ կոմունիստները հսկայական աշխատանք ծավալեցին. նրանց հաջողվեց հայ պատանիներին ու երիտասարդներին դուրս բերել դաշնակցության հակասովետական ու նացիոնալիստական ազդեցությունից և մասնակից դարձնել բուլղար ժողովրդի հակաֆաշիստական դիմադրական շարժմանը։

ԲՈՒՐԳԱՍ

Բուրգասը Բուլղարական Ժողովրդական Հանրապետության երկրորդ նավահանգիստն է Վառնայից հետո՝ Սև ծովի ափին։ Այն նույնպես արդյունաբերական ու առևտրական խոշոր կենտրոն է։

Որպես քաղաքատիպ բնակատեղի, այն ձևավորվել է XVIII դարի սկզբին։ Նույն դարի վերջին այստեղ բնակություն են հաստատել Երևանի և Կարինի շրջաններից եկած 10 հայ ընտանիք։ Հիմնականում զբաղվել են առևտրով ու արհեստներով։

1828 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո այստեղ բնակություն են հաստատել ևս երկու տասնյակ հայ ընտանիքներ՝ մոտավորապես 80—85 հոգի, որոնցից և բաղկացած էր Բուրգասի հայկական համայնքը[67]։

Բուրգասի ս. Խաչ եկեղեցին կառուցվել է 1853 թ.[68]։ 1861 թ. եկեղեցուն կից գործող հայկական դպրոցը, որ կառուցվել է Միսակ Թորոսյանի հատկացրած 150 ոսկե դրամ գումարով, սկզբում ունեցել է 15—20 աշակերտ, որոնց ուսուցիչը եղել է եկեղեցու քահանան։

1893 թ. բուլղարական գլխավոր վիճակագրական տվյալների համաձայն Բուրգասում բնակվել են 258 հայեր։

1896 թ. դեպքերից հետո Թուրքիայից մեծ թվով հայեր նավերով հանգրվան են գտնում Բուրգասում։ Հայկական համայնքի թիվը հասնում է 432-ի։

Բուրգասի հայկական համայնքն առանձնապես ստվարացավ 1922 թ.։ 1923 թ. մոտավորապես 70 հայ ընտանիքներ տեղափոխվեցին Բուրգասից և մշտական բնակություն հաստատեցին Այտոսում, Կարնոբատում և Սլիվենում։ Բուրգասում մնացին 1570 հայեր։ Նրանցից 432-ը իրենց համարում էին բնիկ բուրգասցիներ, իսկ մյուսները եկել էին Արևմտյան Թուրքիայից, Արևմտյան Հայաստանի և Արևելյան Թրակիայի տարբեր շրջաններից։

Համայնքի թիվը զգալի փոփոխության ենթարկվեց 1929—1934 թթ.։ Բազմաթիվ հայ ընտանիքներ աշխատանք գտնելու նպատակով Բուրգասի շրջաններից եկան և բնակություն հաստատեցին քաղաքում։ Այդ թվականներին հայ համայնքի թիվը հասավ 2500 հոգու (600 ընտանիք)[69]։

Բուրգասի հայերի մեծ մասը, ինչպես բոլոր հայաշատ քաղաքներում, զբաղվում էր արհեստներով ու առևտրով։ Զգալի թիվ էին կազմում շրջիկ առևտրականները և նավամատույցում աշխատող բեռնակիրները։ Գաղթականների այն մասը, որ տարագրվել էր գյուղերից՝ հող չունենալու պատճառով, համալրում էր բուլղարական պրոլետարիատի շարքերը։ Նրանց մի մասը աշխատանքի անցավ Բուրգասի նավամատույցում (բեռնակիրներ և ձկնորսներ)։ Շատ քչերին էր հաջողվում վարձու հող ձեռք բերել և զբաղվել բանջարաբոստանային կուլտուրաների մշակումով։

Բուրգասի հայկական համայնքում չկային խոշոր գործարանատերեր կամ առևտրականներ։ Միակ խոշոր առևտրականը, որ զբաղվում էր երկաթեղենի վաճառքով, Ն. Աստվածատրյանն էր, որի ձեռնարկությունը Սոֆիայի և Պլովդիվի Աստվածատրյանների մասնաճյուղն էր։

1933 թ. Բուրգասի նավամատույցում կանգ առավ հունական «Հելլենի» նավը։ Նավում Սովետական Հայաստան ներգաղթող հունահայերին միացան 1000-ից ավելի բուլղարահայեր, այդ թվում 25—30 հոգի Բուրգասից։ Բուրգասի հայերը ատեղծեցին բոլոր անհրաժեշտ պայմաններն իրենց հայրենակիցներին ճանապարհելու համար։

1929—1934 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով Բուրգասից 800 հայեր արտագաղթեցին Ֆրանսիա։ Հավաքագրման ժամանակ առաջին հերթին ցուցակագրվում էին հայ սևագործ բանվորներն ու մանր առևտրականները, որոնք հիմնականում գործազուրկներ էին։

Ներգաղթից ու դեպի Արևմուտք արտագաղթից հետո Բուրգասում մնաց 1570 հայ։ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին այդ թիվը հասավ 1800-ի։

1935—1944 թթ. Բուրգասի հայկական համայնքի հասարակական-քաղաքական կազմակերպությունները հակաֆաշիստական աշխատանք ծավալեցին երիտասարդության շրջաններում։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նրանք բուլղար աշխատավորների հետ միասին մասնակցում էին հակաֆաշիստական պայքարին, պրոպագանդում սովետա-բուլղարական համագործակցությունը։ Նրանք նյութական օգնություն էին կազմակերպում Սվետա Անաստասիա կղզում համակենտրոնացման ճամբարում գտնվող հակաֆաշիստներին և կոմունիստներին։

ՍԼԻՎԵՆ

Սլիվենը գտնվում է Ստարա Պլանինա (Բալկանյան) լեռնաշղթայի արևելյան մասի ստորոտում: Այն հարավարևելյան Բուլղարիայի խոշոր քաղաքներից մեկն է:

Բուրժուական Բուլղարիայի արդյունաբերական այս կենտրոնի գործարաններում և ֆաբրիկաներում աշխատում էին հազարավոր բանվոր-բանվորուհիներ, որոնք բանվորական-կոմունիստական շարժմանը տվեցին մի շարք ականավոր կազմակերպիչներ:

Գրավոր աղբյուրների համաձայն XV—XVI դդ. Սլիվենում եղել է հայկական համայնք[70]: 1830 թ. Սլիվենի կենտրոնում, որտեղ գտնվում էր հայկական թաղամասը, հայերը կառուցել են ս. Ստեփաննոս եկեղեցին, որին կից ունեցել են ս. Լուսավորիչ դպրոց-վարժարանը: Դարասկզբին եկեղեցու քահանա Վաղինակ Տեր-Մինասյանը վարում է նաև 69 աշակերտ ունեցող դպրոցի ուսուցչի պարտականությունները: Տվյալ շրջափուլում Սլիվենի հայկական համայնքը բաղկացած էր 55 հայ ընտանիքներից (մոտավորապես 200 հոգի): Պարզվում է, որ Սլիվենի հայերի մեծ մասը եկել է Թոկատից: Հետագայում այստեղ բնակություն են հաստատել նաև Բուրգասից և Այտոսից եկած բազմաթիվ հայ ընտանիքներ: Այսպիսով համայնքի ընդհանուր թվաքանակն հասել է ավելի քան 400 հոգու[71]: Նրանց հիմնական մասը զբաղվել է առևտրով և արհեստագործությամբ:

Համայնքի մեծ մասը հայախոս էր, սակայն առօրյա կյանքում, մինչև 1922 թ., գործածական էին նաև բուլղարերենն ու թուրքերենը:

1906 թ. հայկական դպրոցում դասավանդումը կատարվել է հայերեն և բուլղարերեն՝ Կոստանդնուպոլսի Ազգային կենտրոնական վարչության ուսումնական ծրագրով: Համայնքի ղեկավարությունը գտնվում էր առանձին անհատների ձեռքին, որոնք պատկանում էին ունևոր, աղայական դասին:

Դարասկզբին Սլիվենի հայերն ունեցել են «Անդրանիկ» ընթերցասրահը, որի շուրջ համախմբված երիտասարդներն ունեցել են իրենց «Արաքս» երգչախումբը:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին, երբ դեռ Բուլղարիան չէր մասնակցում պատերազմին, Սլիվենի հայերը բողոքի նամակներ են ուղարկում բուլղարական և արևմտաեվրոպական կառավարություններին, բողոքի ձայն բարձրացնելով Թուրքիայում կատարվող հայկական եղեռնի դեմ: Այդ օրերին հայկական եկեղեցու բակում հրավիրվում է

բողոքի միտինգ, որտեղ ներկա են լինում ինչպես համայնքի հայերը, այնպես էլ տեղական իշխանությունների ներկայացուցիչները: Միտինգում ընդունվել է բանաձև և ուղարկվել Բուլղարական կառավարությանը, խնդրելով միջամտել և պահանջել թուրքական կառավարությունից՝ վերջ տալ հայերի հալածանքներին ու կոտորածներին:

1922 թ. Սլիվենի «Գաղթականական հանձնախումբը» մեծ ջանքեր է գործադրում 1250 տարագիրների տեղավորման համար: Բուլղարները նույնպես մասնակցեցին այդ մարդասիրական գործին: Բազմաթիվ բուլղար ընտանիքներ իրենց բնակարանները հատկացրին գաղթական հայերին:

Սլիվենում հաստատված հայերի մեծ մասը Բրուսայի վիլայեթից էին, հիմնականում բանդրմացիներ, ենիչեգիներ, սելոզգիներ, մեծ նորգյուղցիներ: Արևելյան Թրակիայից էին ռոդոստոցիները, չորլուցիները, մալգարացիները: Սոցիալական կազմով գյուղացիները մեծամասնություն էին: Նրանցից շատերն աշխատանքի անցան Սլիվենի գործարաններում և քարհանքերում: Ուրիշները բուլղար հողատերերից հողամասեր էին վարձակալում և զբաղվում հողագործությամբ: Արհեստավորների մի մասն էլ աշխատանքի անցավ հայազգի արհեստավորների մոտ:

1931—1939 թթ. Սլիվենում ապրում էին մոտավորապես 1000 հայեր: Համայնքում գործում էին հայ քաղաքական կուսակցությունները և բազմաթիվ հասարակական-մշակութային միություններ (երկու ՀՄԸՄ-ի կազմակերպություններ, ՀՕԿ-ի մասնաճյուղ, հայրենակցական «Ողիմպիոս» և կանանց «Գթության խաչ» կազմակերպությունները և այլն):

1941—1944 թթ. Սլիվենի առաջադեմ երիտասարդները, ընդգրկվելով ՌՄՄ-ի և Բուլղարական բանվորական կուսակցության շարքերը, որոշակի աշխատանք ծավալեցին Սլիվենի բանտում գտնվող քաղաքական բանտարկյալներին նյութական օգնություն կազմակերպելու գործում:

ՇՈՒՄԵՆ

Շումենը գտնվում է հյուսիսարևելյան Բուլղարիայում, Վառնայից դեպի Ռուսե տանող ճանապարհի վրա: Թուրքական տիրապետության ժամանակ այն եղել է գլխավոր ռազմավարչական կենտրոններից մեկը: Շումենը մինչև ռուս-թուրքական պատերազմը (1877—1878) հանդես էր գալիս որպես առևտրական ու արհեստագործական խոշոր կենտրոն:

XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին մեծ թվով հայեր Նախիջևանի և Արևմտյան Հայաստանի շրջաններից բնակություն են հաստատում

Շումենում: Հետագայում այստեղ են հաստատվում Պրովադիայից, Ռազգրադից, Դոբրիչից (Տոլբուխին) և այլ քաղաքներից տեղափոխված հայեր: Շումենի հայ բնակչությունը ստվարացել է նաև 1895—1896 թթ. կոտորածներից հետո: Դարասկզբին Շումենում ապրում էին մոտավորապես 1100 հայեր: Որպես հայաշատ քաղաք այն չորրորդ տեղում էր՝ Վառնայից, Պլովդիվից և Ռուսեից հետո[72]: Հետագայում արտագաղթի հետևանքով մնացին 927 հայեր, իսկ 1904—1905 թթ. մնաց 100 ընտանիք[73]: Հայերի մեծ մասը առևտրականներ ու արհեստավորներ էին: Համայնքի խոշոր առևտրականներն ու հողատերերը հետզհետե հեռացան քաղաքից՝ բնակություն հաստատելով Բուլղարիայի խոշոր կենտրոններում, իսկ մի մասը արտագաղթեց արևմուտք:

Հայերի նոր հոսքը դեպի Շումեն սկսվեց 1922 թ., երբ քեմալականների բռնություններից փրկված բազմաթիվ հայեր հաստատվեցին նաև այս քաղաքում: Նրանց առաջին քարավանը, որ բաղկացած էր 25 ընտանիքներից, տեղավորվեց «Գաղթականական հանձնախմբի» կողմից վարձված բնակարաններում: Գաղթականների երկրորդ քարավանը, 400 հայեր Շումեն ժամանեցին 1922 թ. նոյեմբերի 18-ին: Շումենի հայկական համայնքի հայերի թիվը հասավ հազար շնչի:

Համայնքը քաղաքի կենտրոնում ուներ ս. Աստվածածին եկեղեցին, որը Թուրքական տիրապետության ժամանակ քաղաքի ճարտարապետական գողտրիկ կառույցներից էր, և աղոթատեղի ոչ միայն հայերի, այլև բուլղարների համար: Եկեղեցուն կից գոյություն է ունեցել «Վարդանյան» ազգային վարժարանը, որտեղ 80-ից ավելի հայ մանուկներ սովորել են հայերեն և բուլղարերեն լեզուներով:

1931—1938 թթ. համայնքում գործում էին տարբեր հայ կուսակցությունների ազդեցության ներքո գտնվող հասարակական և մշակութային կազմակերպություններ: Համայնքի ներքին ղեկավարման աշխատանքներում իրենց ազդեցությունը տարածելու համար մղվող պայքարն այդ կուսակցությունների միջև սուր բնույթ ընդունեց, որից տուժում էր համայնքի մշակութային-կրթական գործը:

1939 թ. Շումենում կառուցվեց «Ազգային տունը»՝ ակումբ-գրադարանը[74]: Շենքի կառուցման բոլոր ծախսերը կատարեց Շումենի հայ բարերարներից Մուրատ Մեոմեթյանը: Ակումբը նպաստեց համայնքի միասնությանը և կազմակերպությունների ակտիվությանը:

1943—1944 թթ. Սոֆիայից (ամերիկյան օդային ուժերի կողմից ռմբակոծումների հետևանքով) Շումեն էին տեղափոխվել մեծ թվով հայեր: Նրանք զգալի աշխուժություն հաղորդեցին համայնքի հասարակական-մշակութային կյանքին:

ԱՅՏՈՍ

Բուլղարահայ գաղութի հնագույն օջախներից մեկը Այտոսի համայնքն էր, որը գոյատևեց մինչև XIX դարի կեսերը: Քաղաքը, գտնվելով Բուրգասի նավահանգստից 40—50 կմ հեռավորության վրա, եղել է Բալկաններում ապաստան փնտրող հայ գաղթականների հանգրվաններից մեկը: Այդ մասին են վկայում նախկին հայկական գերեզմանատանը պահվող XVII դարի տապանաքարերը: Այտոսի հայ բնակիչները գիտեին, որ իրենց նախնիները գաղթել են Անիից, որը հաստատվում է այժմ ավերակ դարձած մատուռ-եկեղեցու արձանագրություններից[75]:

1895—1896 թթ. Թուրքիայից այստեղ են գաղթել 10—12 հայ ընտանիք, որոնք զբաղվել են զանազան արհեստներով և այգեգործությամբ: Համայնքն առանձնապես ստվարացավ 1922 թ. վերջերին, երբ Թուրքիայից այստեղ ապաստանեց 60 ընտանիք: Նրանց մեծ մասը Բրուսայի շրջաններից էին[76]: Տեղի հայկական փոքր համայնքը նրանց տեղավորեց հյուրանոցներում: Որոշ թվով հայեր հյուրընկալվեցին բուլղարների տներում:

1923 թ. գաղթականների մի մասը տեղափոխվեց այլ քաղաքներ: 1926 թ. Այտոսում մնացել էին ընդամենը 45 հայ ընտանիք: Նրանց մեծ մասը աշխատանքի անցավ տեղի ծխախոտի մթերանոցներում, իսկ արհեստով ու առևտրով զբաղվողները բացեցին կրպակներ:

1924 թ. Այտոսում կազմակերպվեց հայկական քառամյա «Սահակյան» դպրոցը: Կիրակի օրերն այն ծառայում էր որպես եկեղեցի: Սկզբից դպրոցի միակ ուսուցիչը Հովսեփ քահանա Քեսեյանն էր: Նա ուներ 34—40 աշակերտ: Բուլղարերեն լեզվի դասընթացները վարել է բուլղար ուսուցիչը: 1928 թ. Այտոսի հայերը որոշեցին ունենալ դպրոցի հատուկ շենք և եկեղեցի, սակայն այն չիրականացավ՝ 1929 թ. վրա հասած համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով: Այդ օրերին Այտոսում փակվեցին բոլոր ծխախոտի մթերանոցները. գործազրկության մատնվեցին առաջին հերթին հայերը: 1931—1934 թթ. բազմաթիվ հայ ընտանիքներ հեռացան Այտոսից և հաստատվեցին Բուրգաս, Սլիվեն, Պլովդիվ և այլուր: Փակվեց հայկական դպրոցը: 1932 թ. Այտոսի հայերը Լեվոն Արապյանի նախաձեռնությամբ դիմեցին Սովետական Հայաստանի կառավարությանը՝ Բուլղարիայից հայերի ներգաղթ կազմակերպելու հա-

մար։ Ընդառաջելով բուլղարահայերի ցանկությանը, կազմակերպվեց առաջին ներգաղթը մայր Հայրենիք[77]։ Դրանից հետո Այտոսում մնացին մի քանի տասնյակ հայեր։ 1946 թ. նրանք ևս ներգաղթեցին Սովետական Հայաստան։

ՅԱՄԲՈԼ

Յամբոլը գտնվում է Բուլղարիայի հարավարևելյան մասում, Տունջա գետի ափին։ XX դարի սկզբին քաղաքը եղել է գյուղատնտեսական և արհեստագործական ապրանքների արտադրման գլխավոր կենտրոններից մեկը։ Դարասկզբին քաղաքում արագ թափով զարգանում են տեքստիլ և ծխախոտի արդյունաբերությունը։ Յամբոլի հայկական համայնքը ստեղծվել է 1922 թ., երբ քաղաքում ասպնջականություն գտան 1300-ից ավելի հայ գաղթականներ։ Մինչ այդ Յամբոլում բնակվում էին 5—6 հայ ընտանիքներ։ Տարագրված հայերի մի մասը Փոքր Ասիայի քաղաքներից ու գյուղերից էր, մյուսը՝ Արևելյան Թրակիայից։ Մինչև 1926 թ. Յամբոլի հայերի մի մասը տեղափոխվեց Բուլղարիայի այլ քաղաքներ, որի հետևանքով համայնքում մնացին շուրջ 700 հայեր[78]։ Նրանց խայտաբղետ սոցիալական կազմում մեծամասնություն էին կազմում գյուղացիները և արհեստավորները։ Փոքր թվով հայեր զբաղվում էին մանր առևտրով և սուրճի վերամշակումով։ Տարագրյալների այն մասը, որ գաղթել էր գյուղերից, որպես հմուտ գյուղատնտեսներ վարձով վերցնում էին հողակտորներ և զբաղվում բանջարաբոստանային ու տեխնիկական բույսերի (պիստակ, արևածաղիկ, քնջութ և այլն) մշակումով։ Հայերի որոշ մասը վարձու բանվորներ էին, որոնք աշխատում էին շինարարության, ծխախոտի մշակման, տեքստիլ և այլ արդյունաբերական հիմնարկ-ձեռնարկություններում։

1923 թ. Յամբոլի հայերը Թուրքիայից տարագրված Ռոդոստոյի նախկին հայկական դպրոցի տնօրեն, հայտնի մանկավարժ Ռուբեն Մանավյանի նախաձեռնությամբ և թաղական խորհրդի օգնությամբ կազմակերպեցին հայկական քառամյա «Օշական» դպրոցը։

1931—1939 թթ. Յամբոլում գործում էին հնչակյանների «Սարգիս Տխրունի» բարեգործական միության և դաշնակցության գրադարան-ընթերցարանները։ Այդ նույն ժամանակաշրջանում համայնքում մինչև 1937 թ. գործում էր ՀՕԿ-ի մասնաճյուղը։ Մինչև 1944 թ. Յամբոլի հայերը ակտիվորեն մասնակցում էին բուլղար աշխատավորների բոլոր ձեռնարկումներին, սոցիալական վիճակի բարելավման և աշխատանք ապահովելու գործին։

ՍՏԱՐԱ ԶԱԳՈՐԱ

Ստարա Զագորան հարավարևելյան Բուլղարիայի ամենախոշոր քաղաքն է՝ Սոֆիա—Բուրգաս երկաթուղային ճանապարհի վրա և գյուղատնտեսական ու արդյունաբերական կենտրոններից մեկը։

1922 թ. առաջ այստեղ բնակվում էր 8—10 հայ ընտանիք։ Քաղաքի հայկական համայնքն ստեղծվեց Թուրքիայից հայերի վերջին գաղթից հետո։ Այն բաղկացած էր 1200 հոգուց։ Կարճ ժամանակամիջոցում ստեղծվեցին ներքին ղեկավարման մարմիններ՝ թաղական խորհուրդ, հոգաբարձություն, որոնք 1923 թ. հիմնեցին «Սահակ Մեսրոպ» հայկական քառամյա դպրոցը։ Դպրոցի ընդարձակ սրահը կիրակի օրերը ծառայում էր որպես եկեղեցի։

1924 թ. Ստարա Զագորայում հիմնադրվեց «Աշտիշատ» մշակութային ընկերությունը, որն իր շուրջը համախմբեց գաղութի ողջ հայությունը։ Այս միությունն ուներ ակումբ-գրադարան և թատերական խմբակ։ Քաղաքական ներքին տարաձայնությունների հետևանքով միությունը շուտով լուծարքի ենթարկվեց։ 1929 թ. հետո տնտեսական ճգնաժամի հետևանքով քաղաքում մնացել էին 150 հայ ընտանիք՝ շուրջ 750 հոգի[79]։ Արտագաղթը շարունակվեց նաև հետագա տարիներին և 1937 թ. Ստարա Զագորայում մնացել էին ընդամենը 350 հայեր[80]։ Նրանք 1939 թ. ստեղծեցին «Շանթ» մարմնամարզական միությունը, որն իր շուրջը համախմբելով հայ երիտասարդներին, ծավալեց ապրելային-մշակութային գործունեություն։

ՆՈՎԱ ԶԱԳՈՐԱ

Ստարա Զագորայից հյուսիսարևելք, Սոֆիա—Բուրգաս երկաթուղու վրա է գտնվում Նովա Զագորա քաղաքը։ 1922 թ. այստեղ հանգրվան գտան մոտավորապես 1000 հայեր, որոնք ժամանակի ընթացքում տեղափոխվեցին Բուլղարիայի մյուս հայաշատ քաղաքները։ Տարագրյալների որոշ մասն էլ արտագաղթեց արևմտաեվրոպական երկրներ։ 1926 թ. այստեղ մնացել էին մոտավորապես 125 հայ ընտանիք, շուրջ 600 հոգի[81]։ Նրանց մեծ մասը որպես բանվոր աշխատանքի անցավ ծխախոտի և այլ արդյունաբերական հիմնարկ-ձեռնարկություններում։

Նովա Զագորայի հայերը 1926 թ. ստեղծեցին համայնքի ներքին ղեկավարման մարմիններ և բացեցին «Մամիկոնյան» հայկական տարրական դպրոցի դռները: 35—40 հայ երեխաներ սովորում էին հայերեն և բուլղարերեն: 1934 թ. հետո քաղաքում մնացին 300 հայեր: Այդ տարիներին հնարավոր չէր ծավալել հասարակական-մշակութային գործունեություն. 1935 թ. փակվեց հայկական դպրոցը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Նովա Զագորայի հայերի մի մասը տեղափոխվեց մոտակա Սլիվեն և Ստարա Զագորա քաղաքները:

ՀԱՍԿՈՎՈ

Հասկովո քաղաքը գտնվում է Բուլղարական ժողովրդական Հանրապետության հարավարևելյան մասում, որտեղ վերջանում են հյուսիս-արևելյան Ռոդոպները և սկսվում է Արևելյան Թրակիայի հարթավայրը: Քաղաքն արագ թափով զարգացավ ռուս-թուրքական (1877—1878) պատերազմից հետո: Մինչ այդ այն գյուղաքաղաք էր, որի 15—18 հազարանոց բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն ու արհեստներն էին: Քաղաքի և նրա շրջակայքի բնակլիմայական պայմանները նպաստավոր էին ծխախոտի, բամբակի, շերամաբուծության և տեխնիկական այլ կուլտուրաների մշակման համար:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը քաղաքում բնակվում էին 7—8 հայ ընտանիք, որոնք մոռացել էին իրենց մայրենի լեզուն ու ավանդույթները: Բալկանյան պատերազմներից հետո այստեղ բնակություն են հաստատում Արևելյան Թրակիայից գաղթած երկու տասնյակ հայ ընտանիքներ, որոնք զբաղվում էին ոսկերչությամբ, մանածագործությամբ, շերամաբուծությամբ և մետաքսաթելի արտադրությամբ, ինչպես նաև առևտրով: Նրանք ունեցել են փոքրիկ մատուռ-եկեղեցի: Միակ հասարակական կազմակերպությունը եղել է «Ազգային միությունը», որը և վարել է համայնքի ներքին գործերը: Ունեցել են ակումբ-գրադարան, որը որոշ ժամանակ ծառայել է որպես վարժարան:

1922 թ. գաղթի ժամանակ Հասկովոյում բնակություն են հաստատում ևս 532 հայ ընտանիք: 1925 թ. նրանց թիվը հասավ 590-ի, իսկ 1927 թ. նրանց որոշ մասը տեղափոխվեց մոտակա Կրչալի և Հարմանլի քաղաքները, որով Հասկովոյում մնաց 553 ընտանիք՝ 2460 հոգի[82]:

Հասկովոյի հայերի մեծ մասը զբաղված էր ծխախոտի արդյունաբերության մեջ: Նրանք Բուլղարիայի մյուս քաղաքների հայերի համեմատությամբ ավելի բարվոք վիճակում էին: Զգալի թիվ էին կազմում հյուսները, որմնադիրները, նպարավաճառները և շրջիկ մանր առևտրականները[83]:

1926 թ. առաջ եկան առաջին հայ ֆաբրիկանտները՝ հիմնականում շերամաբուծության և մետաքսաթելի արտադրության բնագավառներում: Մեծ թվով հայեր ներգրավվեցին արդյունաբերության այդ ճյուղերում: Սակայն 1937 թ. տնտեսական ճգնաժամի խորացման պատճառով բազմաթիվ հայեր արտագաղթեցին Հասկովոյից: 3000 մարդու հասնող համայնքում մնացել էին 1000-ը:

Հասկովոյի հայկական դպրոցը և ս. Ստեփաննոս եկեղեցին հիմնվեցին դեռևս 1924 թ. համայնքի սեփական միջոցներով: «Մեսրոպյան» դպրոցը հիմնականում կազմակերպվեց Վիկտորյա Մումճյանի ջանքերով: Վերջինս հայոց լեզվի և պատմության ուսուցիչ էր և ժամանակի ընթացքում հասարակական-մշակութային լայն գործունեություն ծավալեց Հասկովոյի հայկական համայնքում: Նրա Սոֆիա տեղափոխվելուց հետո այդ աշխատանքները շարունակեց (հատկապես 1937-ից հետո) դպրոցի տնօրեն Գևորգ Մեսրոպը[84]: Նա դպրոցում կազմակերպեց երեկոյան բաժին, որտեղ հայերեն էին սովորում բուլղարական դպրոց հաճախող հայ աշակերտները:

1939 թ. Հասկովոյի հասարակական-մշակութային կազմակերպությունները աշխուժացրին իրենց գործունեությունը: Բարելավվեց հայկական դպրոցի վիճակը:

1941—1944 թթ., երբ Բուլղարիային միացվեցին Էգեյան ծովափի մի շարք քաղաքներ, Հասկովոյի հայկական համայնքը սերտ կապեր հաստատեց այդ քաղաքների հայերի հետ, աննդամթերքներով ու դրամական միջոցներով օգնության ձեռք մեկնեց Գյումուլջինայի, Կավալայի և Դեդեաղաչի հայերին: Հետագայում հիշյալ քաղաքների բազմաթիվ հայ ընտանիքներ տեղափոխվեցին և բնակություն հաստատեցին Հասկովոյում:

ՊԱԶԱՐՋԻԿ

Պազարջիկը գտնվում է Բուլղարիայի վերին Թրակիական հարթավայրում, Մարիցա գետի ափին, Պլովդիվից 30 կիլոմետր հեռավորության վրա: Քաղաքը հիմնադրվել է XV դարում և արագ թափով զարգացել Բուլղարիայի ազատագրումից հետո:

Այժմ Պազարջիկը սոցիալիստական Բուլղարիայի գյուղատնտեսական և արդյունաբերական կենտրոններից է՝ իր տեքստիլ ու պահածոների գործարաններով, հանքահորերով և էլեկտրակայաններով:

Դեռևս XVI դարի սկզբին Պազարջիկում եղել է հայկական համայնք, որը ըստ գրավոր աղբյուրների, մեծ դեր է խաղացել քաղաքի տնտեսական կյանքում։

Պազարջիկում 1830 թ. «Սահանլըք» կոչվող թաղամասում բնակվել են 30 հայ ընտանիք[85]։ Նրանք հիմնականում զբաղվել են առևտրով և բարեկեցիկ կյանք են ունեցել։

Բուլղարիայի բնակչության առաջին մարդահամարի (1881) տվյալներով Պազարջիկում կար 60 հայ ընտանիք։ Նրանք ունեցել են քարաշեն եկեղեցի[86], և նրան կից դպրոց՝ երկուսն էլ կառուցված 1820-ին։

1894 թ. հոկտեմբերի 1-ին Պազարջիկի հայերը հիմնադրում են «Խորենյան» ընկերությունը, որի հավաքած միջոցներով կառուցվել է դպրոցի նոր շենքը։ Սկզբնական շրջանում այն ունեցել է 25—30 սան, որոնք բացի հայերեներից, սովորել են նաև բուլղարներեն։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Պազարջիկում կային 237 հայեր[87]։ 1922 թ. եկած գաղթականներով Պազարջիկի հայ մայնքը հասավ 1400 մարդու։ Այդ ժամանակ կազմակերպվեց «Բաֆֆի» ընկերությունը՝ իր գրադարանով ու ակումբով։

Բուլղարիայում խորացող տնտեսական ճգնաժամը սուր կերպով անդրադարձավ նաև Պազարջիկի փոքրաթիվ հայկական համայնքի վրա։ Բազմաթիվ ընտանիքներ ստիպված եղան հեռանալ քաղաքից և հաստատվել Պլովդիվում, որտեղ գործարաններում և արհեստանոցներում հնարավոր էր աշխատանք գտնել։ Համայնքի հայերի որոշ մասը արտագաղթեց Հարավային Ամերիկա։ 1932 թ. մարդահամարի տվյալներով Պազարջիկում մնացել էր ընդամենը 145 հայ ընտանիք։ Հետագա տարիներին, մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը, հայերի թիվը հասավ 200 ընտանիքի[88]։

1937—1939 թթ. Պազարջիկի հայերը ընդլայնեցին կապերը մյուս հայաշատ քաղաքների հետ և ծավալեցին հասարակական-սպորտային աշխույժ գործունեություն։ Պլովդիվի «Շանթ» միության նախաձեռնությամբ 1938 թ. քաղաքում կազմակերպվեց «Շանթ» սպորտային միությունը՝ Գրիգոր Սինանյանի գլխավորությամբ։

ԿՐՋԱԼԻ, ՀԱՐՄԱՆԼԻ, ՍՎԻԼԵՆԳՐԱԴ

Այս քաղաքները գտնվում են Հարավարևելյան Բուլղարիայում՝ Թուրքիայի սահմանամերձ շրջաններում։ Բնակչության հիմնական զբաղմունքը եղել է գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը և մթերված ծխախոտի, հացահատիկի և տեխնիկական բույսերի վերամշակումը։

Այս քաղաքատիպ ավաններում մինչև 1922 թ. հայեր չկային։ 1922 թ. նրանք դարձան առաջին կայանները, որտեղ ապաստանեցին Թուրքիայից գաղթած տարագրյալները։ Հետագայում նրանք աստիճանաբար տեղափոխվեցին Բուլղարիայի մյուս հայաշատ քաղաքները։

Կրջալիում 1934—1941 թթ. կար 20—25 հայ ընտանիք, որոնք մեծ մասամբ զբաղվում էին արհեստագործությամբ ու մանր առևտրով։ Կրջալիի հայերն ունեին իրենց ներքին ղեկավարման մարմինները և փորձեցին առեղծել հայկական դպրոց, սակայն, կուսակցական պատակտումների հետևանքով հաջողության չունեցան։

1922 թ. առաջ Հարմանլիում կար 3—5 հայ ընտանիք, որոնք ժամանակի ընթացքում մոռացել էին իրենց մայրենի լեզուն։ 1922 թ. այստեղ բնակություն են հաստատել ևս 25 հայ ընտանիք։ 1932 թ. Հասկովոյից մի խումբ հայեր տեղափոխվում են Հարմանլի։ Հայ կանայք հիմնականում աշխատում էին ծխախոտի մթերանոցներում։ Հայերի երեխաները սովորում էին բուլղարական դպրոցներում։ 1937 թ. Հարմանլիի հայերի մեծ մասը նորից վերադարձավ Հասկովո։

Սվիլենգրադը գտնվում է բուլղարաթուրքական սահմանի վրա, որտեղից 1922 թ. հայ գաղթականները մուտք էին գործում այս հյուրընկալ երկիրը։

1929—1934 թթ. Սվիլենգրադի հայերի մեծ մասը տեղափոխվեց մոտակա Հասկովո, Կրջալի և այլ քաղաքներ։ Տեղափոխման պատճառներից մեկը քաղաքում հայկական դպրոցի և հասարակական կազմակերպությունների բացակայությունն էր։

ՍԻԼԻՍՏՐԱ, ԴՈԲՐԻՉ

Այս քաղաքներում հայերը հիշվում են դեռևս XVII—XVIII դարերում։ Սիլիստրայի հայկական եկեղեցու բակում գտնվող տապանաքարերից պարզվում է, որ առաջին հայերը այստեղ են եկել Արևելյան Հայաստանից։ Հետագայում մեծ թվով հայեր եկել են Բրաիլայից, Յաշից և Սուլինայից։

1673 թ. Սիլիստրա է այցելել Մարտիրոս վարդապետ Ղրիմեցին և հանդիպել հայերի, որոնք ունեցել են եկեղեցի և նրան կից դպրոց։ Օսմանյան լծից Բուլղարիայի ազատագրումից հետո Սիլիստրայում հաշվվել է 381 հայ։ Սիլիստրայի հայությունը զգալիորեն ավելանում է 1895—

1896 թթ. դեպքերից հետո, երբ Թուրքիայից բազմաթիվ հայեր գաղթում են Բալկաններ։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հարավային Դոբրուջայի հայաշատ քաղաքները միացվեցին Ռումինիային, սակայն երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ այդ քաղաքները կրկին վերամիավորվեցին Բուլղարիային (1940)։ Պատմական այդ ակտի օրերին Սիլիստրայում բնակվում էր 100 հայ ընտանիք՝ շուրջ 450—500 հոգի[89]։ Համայնքում մեծամասնություն էին կազմում 1922 թ. Թուրքիայից արտագաղթած հայերը։ Թեև ռումինական կառավարությունը արգելել էր տարագրված հայերի մուտքը Ռումինիա, այդուհանդերձ, մեծ թվով հայեր Դանուբի վրայով կարողացան անցնել Սիլիստրա։ Նրանց մեծ մասը արհեստավորներ և բանվոր-բեռնակիրներ էին։ Համայնքը ունեցել է հայկական եկեղեցի և դպրոց։ Վերամիավորումից հետո հայերի մի մասը տեղափոխվեց Ռումինիա (Բուխարեստ, Պլոեշտ և այլուր)։ 1946 թ. հայերի մեծ մասը ներգաղթեց Սովետական Հայաստան։ Քաղաքում մնացին շուրջ 280 հայ[90]։

1944 թ. սեպտեմբերի 9-ի նախօրեին Հարավային Դոբրուջայի ամենահայաշատ քաղաքը Դոբրիչն էր։ Այնտեղ ապրում էր 120 հայ ընտանիք, որոնց հիմնական զբաղմունքը արհեստներն ու առևտուրն էին։ Քաղաքում գործել են հայ գորգագործների 8 արհեստանոց, եղել է ծխախոտի մեկ գործարան, որը նույնպես պատկանել է հայ արդյունաբերողի[91]։

Դոբրիչի հայկական համայնքը ունեցել է ս. Հովհաննես եկեղեցի և հայկական դպրոց-վարժարան՝ 40 աշակերտներով։

1940—1944 թթ. Դոբրիչի հայկական համայնքի ղեկավարությունը՝ թաղական խորհուրդը և հոգաբարձությունը նշանակովի եռանդամ մարմիններ էին։ Քաղաքում գործում էին «Մամիկոնյան» դպրոցը, օրիորդաց՝ «Անահիտ», պատանիների՝ «Վռամ» և «Մշակութային միություն»։ Նրանք կազմակերպում էին զանազան միջոցառումներ, որոնցից ստացված գումարները հատկացվում էին դպրոցին և աղքատախնամ մարմնին։

Հայեր կային նաև Բուլղարիայի Կազանլըկ, Վելիկո Տըրնովո, Պլևեն, Պրովադիա, Լոմ, Վիդին, էլհովո քաղաքներում։

Կազանլըկը գտնվում է համանուն հարթավայրում՝ Ստարա Պլանինա և Սրեդնա Գորա լեռնաշղթաների միջև։ Այն մեծ համբավ է վայելում իր վարդի պլանտացիաներով և վարդի յուղի արտադրությամբ։ 1922 թ. այստեղ բնակություն են հաստատել 20—22 հայ ընտանիք։ Նրանց մեծ մասը արհեստավորներ էին։ Տեղում հայկական դպրոց չլինելու պատճառով, հայերն իրենց երեխաներին ուղարկում էին Պլովդիվ և Ստարա Զագորա՝ հայկական դպրոցներում սովորելու համար։ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին Կազանլըկի հայերը տեղափոխվեցին Պլովդիվ և Ստարա Զագորա։

Յանտրա գետի ափին գտնվող Վելիկո Տըրնովո քաղաքը մինչև Թուրքերի կողմից Բալկանների զավթումը միջնադարյան Բուլղարիայի մայրաքաղաքն էր։ Անցյալում այստեղ եղել է հայկական համայնք՝ առանձին թաղամասում, որ կոչվել է «Հայկական թաղ»։ Ավանդության համաձայն հայերն այստեղ եկել են Անիից։ Ունեցել են ս. Աստվածածին մատուռ-եկեղեցի, որի ավերակները այժմ էլ պահպանվում են որպես պատմական հուշարձան։

1896 թ. Տըրնովոյում բնակություն են հաստատում 80 հայեր, որոնք 1899 թ. տեր Կարապետ Այդինյանի նախաձեռնությամբ վերականգնում են հայկական եկեղեցին, կազմակերպում ակումբ-ընթերցարան։ Եկեղեցու բակում եղել է փոքրիկ ապաստարան՝ հայ ծերունիների և հաշմանդամների համար։

1905 թ. Վելիկո Տըրնովոյում կային 30 հայեր, հիմնականում արհեստավորներ[92]։

1926 թ. քաղաքում մնացել էր ընդամենը 13 հայ։

Պլևեն քաղաքում 1922 թ. կար 7—8 տարագրված հայ ընտանիք, որոնք կարողացան տեղում տնտեսական ապահով վիճակ ստեղծել և մնային քաղաքում մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը։ Ետպատերազմյան տարիներին Պլևենում մնացել էր 2—3 հայ ընտանիք։

Դանուբ գետի ափին գտնվող Լոմ և Վիդին քաղաքներում բնակվել են փոքր թվով հայեր, որոնք զբաղվել են առևտրով. նրանց մեծ մասը հետագայում տեղափոխվել է Սոֆիա։

Պրովադիայում և Ռազգրադում XVII—XVIII դարերում եղել են հայաշատ համայնքներ՝ իրենց եկեղեցիներով ու դպրոցներով։ Ժամանակի ընթացքում նրանց զգալի մասը տեղափոխվել է մոտակա Վառնա քաղաքը։

Էլհովոյում և Կերմենում բնակվող տարագրված հայերը հետագայում նույնպես տեղափոխվել են մոտակա Յամբոլ և Սլիվեն քաղաքները։

1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո բուլղարահայերը աստիճանաբար բնակություն հաստատեցին Բուլղարիայի առավել մեծ քաղաքներում և ներգրավվեցին տնտեսության ու մշակույթի բոլոր ասպարեզներում։

3. ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅԵՐԸ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Օսմանյան տիրապետությունից ազատագրվելուց հետո Բուլղարիայում սկսեցին զարգանալ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունն ու առևտուրը։ Քաղաքային կյանքի զարգացումը կյանքի կոչեց նոր արհեստներ և հումքի վերամշակման ճյուղեր, որտեղ բուլղար և օտար ձեռնարկատերերի կողքին որոշ տեղ էին գրավում նաև հայերը։ Նկատելի էր հայերի ակտիվ մասնակցությունը երկրի ներքին և արտաքին առևտրի բնագավառներում։ Ինչպես նշել է Վառնայի «Իրավունք» թերթը՝ «Առևտուրի և արհեստներու ասպարեզին մեջ լավագույն ներկայացուցիչները հայ անունք էին։ 19-րդ դարու վերջին Պուլկարիո առևտուրի մեծ տոկոսը կատարել են հայերը»[93]։

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Բուլղարիայում մեծաքանակ ապրանքների առևտրի ասպարեզում եղել են 30-ից ավելի հայ առևտրական տներ։

1906 թ. Պլովդիվի 10—12 հայ առևտրական տներն իրենց ձեռքում են պահել քաղաքի առևտրի գլխավոր տոկոսը։ Մեծ թվով առևտրական տներ են եղել Վառնայում, Ռուսեում, Սոֆիայում, Շումենում, Սլիվենում և այլուր։ Մինչև XIX դարի վերջը բուլղարական քաղաքներում ու շուկաներում կարելի էր հանդիպել առևտրական տների՝ հայերեն ցուցանակներով[94]։ Հայ առևտրականները շուկա են հանել հիմնականում անգլիական և ֆրանսիական տեքստիլ արդյունաբերության ապրանքներ։ Զբաղվել են նաև արևելյան համեմունքների և դարձերի վաճառքով։ Թամիրյանց, Պետրոս Աստարճյան, Թերզյան-Հակոբյան, Ասլանյան եղբայրներ, Կրոնիկ և Կարապետ Փափազյաններ, Սարգիս Գույումճյան, Մանուկյան եղբայրներ, Մամիկոն Տամլամանյան, Արամ Ստամպուլուլյան, Արամյան, Գուրպեթյան, Կարապետ Հաճի Ստեփանյան, Պեզազյան եղբայրներ, Մարտիրոս Փափազյան, Գաբրիել Քյուրքճյան, Սարգիս Իթյուճյան, Թիմուրյան եղբայրներ և շատ ուրիշներ, այն առևտրական տներն էին, որոնք բուլղարական կոմպրադորական բուրժուազիայի հետ գործակցելով, ներմուծում էին տարբեր տեսակի բրդյա, բամբակի, վուշի մանած թելեր, ջութ, չիթ, ընտիր կերպասներ և գալանտերեայի տարբեր ապրանքներ։ Սակայն բուլղարական կառավարության որդեգրած հովանավորական քաղաքականությունը և բալկանյան պատերազմները այդ առևտրական դասի ներկայացուցիչներին հասցրին սնանկացման։ Նրանք ստիպված եղան փակել իրենց առևտրական տները։ Նրանց մի մասին հաջողվեց իր կապիտալները ներդնել նոր զարգացող արդյունաբերության տարբեր ճյուղերում՝ հիմնելով զանազան նոր հիմնարկ-ձեռնարկություններ, հատկապես թեթև արդյունաբերության և գյուղատնտեսական ապրանքների վերամշակման ուղղությամբ։ Հայ առևտրականների որոշ մասը պատերազմից հետո ստիպված եղավ արտագաղթել արևմտաեվրոպական երկրներ և Հյուսիսային Ամերիկա։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, հատկապես 30-ական թվականներին բուլղարական շուկաներում հանդես եկավ հայ առևտրականների նոր խավ, որը որոշ չափով կապված էր հայ արդյունաբերողների և օտարերկրյա առևտրական տների հետ։ Այդ տներից էին Երվանդ Ադամյանի՝ թղթի և գրենական պիտույքների առևտրական տունը, որն իր նմանը չուներ Պլովդիվում։ Մեծաքանակ ապրանքներ էին ներմուծում Բարսեղ Զիլյանի և Նաղաշյան առևտրական տները՝ Վառնայում, Հայկ Հակոբյանը և Պետելյան եղբայրները՝ Ռուսեում։ Ստ. Աստվածատրյան և որդիներ՝ Պլովդիվում, Սոֆիայում և Բուրգասում, Հակոբ Մալխասյանը Պլովդիվում, Գ. Կարապետյանը, Արմեն Իթյուճյանը, Կարպիս Սարգիսը, Մ. Բարսեղյանը, Հ. Քուրթիկյանը, Կոպեռ Մխիթարյանը, Սմբատ Արիստյանը և շատ ուրիշներ[95]։ Այս տների ներկայացուցիչները նախկին ազատյական դասի շառավիղներն էին, որոնք հարմարվելով նոր պայմաններին՝ կարողացան շարունակել իրենց առևտրական գործունեությունը։ Նրանք աստիճանաբար ընդլայնեցին իրենց ձեռնարկությունները, սեփական կապիտալների մի մասը տեղափոխեցին նոր զարգացող արդյունաբերական ճյուղերում և բուլղարական բուրժուազիայի կողքին գործեցին տասնամյակներ շարունակ, կուտակելով հսկայական հարստություն։

Հայ առևտրականները համագործակցելով հայ արդյունաբերողների հետ, իրենց առևտրաարդյունաբերական հսկայական կապիտալները ներդրնում էին արդյունաբերական այնպիսի ճյուղերում, որոնց արտադրանքի պահանջը մեծ էր ինչպես Բուլղարիայի, այնպես էլ արևմտաեվրոպական ներքին շուկաներում։ Գործակցելով բուլղար և օտար արդյունաբերողների հետ, նրանք նախաձեռնեցին մետաքսաթելի, կաշվի, ծխախոտի, գլանակների, գորգագործության, ջուլհակության, քիմիական, մետաղաձուլման և տեքստիլ արդյունաբերության ապրանքների արտադրությունը։ Առևտրաազատյական դասի այն ներկայացուցիչները, որոնց կապիտալները հնարավորություն չէին տալիս խոշոր ներդրումներ կատարել վերը նշված արդյունաբերական ճյուղերում, ստիպված անցնում էին մանուֆակտուրային արտադրության այնպիսի ճյուղերի, որոնց պահանջը դեռևս մեծ էր երկրի ներքին շուկայում։ Այս վերջիններն կարողանում էին շա-

բունակել իրենց գործառնությունը, քանի որ քայքայվող մանր գյուղացիները և արհեստավորներն արագ թափով համալրում էին պրոլետարիատի շարքերը, դառնում բանվորական էժան ուժ։

Հայ մանր առևտրականները, արհեստավորները, մանուֆակտուրային-տնայնագործական արտադրության ներկայացուցիչները, ենթարկվելով խոշոր արդյունաբերողների պահանջներին, նրանց առանձին ճյուղերի համար մատակարարում էին հումք կամ կիսամշակված արտադրանք։ Այդպիսի ճյուղերից մեկը լաչակի (յազմայի) արտադրությունն էր, որի պահանջը մինչսոցիալիստական Բուլղարիայում մեծ էր։ Բալկաններում լաչակի արտադրության կազմակերպողները հայ արդյունաբերողներն էին, որոնք առաջինը արհեստագործական-տնայնագործական արտադրությունից անցան մեքենայացված եղանակին[96]։ Լաչակի արտադրության առաջին ֆաբրիկան 1896 թ. փետրվարին Բուլղարիայի Ռուսե քաղաքում հիմնել է կոստանդնուպոլսեցի Սարը՝ Հովհաննես Պեզազյանը, իր որդիներ Կարապետի և Նշանի հետ։ Մի քանի ամիս անց Կրոնիկ և Կարապետ Փափազյանները նույն քաղաքում հիմնեցին լաչակի արտադրության ֆաբրիկա, որտեղ աշխատում էին Կոստանդնուպոլսից հրավիրված հայ վարպետ բանվորներ։ Նրանց թվում էր լաչակի կաղապարներ պատրաստող Վռամշապուհ Ջաբրճյանը։ Մինչև XX դ. սկիզբը նա Բուլղարիայում միակ վարպետն էր այդ ասպարեզում[97]։ 1897 թ. առևտրականներ Պետրոս Աստարճյանը, Խաչիկ Թագվորյանը և Թամիրյանցը ևս Պլովդիվում կազմակերպեցին լաչակի արտադրություն[98]։ 1905 թ. Սարգիս Գույումճյանը Ռուսեում հիմնեց լաչակի արտադրության ֆաբրիկա՝ 50 բանվորներով, որը շուտով վերածվեց խոշոր ձեռնարկության։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Գառնիկ Մազլումյանը և Արիս Գուրպանճյանը գնեցին Փափազյան եղբայրների Ռուսեում գտնվող լաչակի ֆաբրիկան և այն ընդլայնելուց հետո արտադրում էին մեծ քանակությամբ լաչակ։ Նույն քաղաքում լաչակի արտադրություն էին կազմակերպել Կոպեռ Մխիթարյանը, Հայկ Հակոբյանը, Պետելյանը և ուրիշներ։ Իրենց կապիտալներն այդ եկամտաբեր արտադրության մեջ էին ներդրել նաև Վառնայի հայտնի առևտրականներ Արմենակ Իթյուճյանը և Սարգիս Կարպիսը՝ հիմնելով առանձին ֆաբրիկաներ Պլովդիվում[99]։ Մինչև 1929 թ., բազմաթիվ բուլղար արդյունաբերողներ նույնպես կազմակերպեցին լաչակի արտադրություն Սոֆիայում, Տըրնովոյում, Պլևենում, Պլովդիվում և այլ քաղաքներում։ Այսուհանդերձ, Բուլղարիայում լաչակի արտադրության բնագավառում հայերը գերիշխող դիրք էին գրավում։ Հետագայում, Բուլղարիայում քաղաքային կյանքի զարգացմանը զուգընթաց ներքին շուկայում նկատելի էր լաչակի պահանջարկի անկում, որը չէր կարող չհանգեցնել նրա արտադրության նվազմանը։ Այդ իսկ պատճառով հայ ձեռնարկատերերի մի մասը սկսեց իր կապիտալները տեղափոխել զարգացող տեքստիլ արդյունաբերության բնագավառը։

Տեքստիլ արդյունաբերության առաջին ֆաբրիկաներից մեկը Բուլղարիայում (Ռուսե) հիմնել են Հարությունն և Հովհաննես Ասլանյանները, դեռևս թուրքական տիրապետության ժամանակ։ Բուլղարիայի ազատագրումից հետո նրանք ընդլայնեցին այդ ֆաբրիկան, միաժամանակ, տարբեր քաղաքներում հիմնեցին նման ձեռնարկություններ։ 1929 թ. Ասլանյանների անանկացած ժառանգ Գրիգոր Ասլանյանը փակեց այդ ձեռնարկությունները և տեղափոխվեց Ռումինիա։

Բուլղարական կոմպրադորական բուրժուազիայի կարկառուն ներկայացուցիչներից էր Սարգիս Գույումճյանը, որն իր բազմաթիվ մեծ ու փոքր առևտրական ձեռնարկությունների կողքին ուներ անգլիական նորագույն մեքենաներով սարքավորված տեքստիլ ֆաբրիկա և արտադրում էր բարձրորակ կտորեղեն[100]։

Բուլղարահայ արդյունաբերողները, այնուամենայնիվ, չկարողացան գերիշխող դիրք գրավել երկրի տեքստիլ արդյունաբերության մեջ։ Բուլղարական և օտար բաժնետիրական ընկերությունները, որոնք հանդես եկան ավելի ուշ և զինված էին նորագույն սարքավորումներով, նրանց դուրս մղեցին ներքին շուկայից։ Հայ արդյունաբերողների մեծ մասն իր կապիտալները ներդրեց այլ բնագավառներ։ Այդպիսի բնագավառներից էին շերամապահությունը և մետաքսաթելի արտադրությունը։

XX դ. սկզբին համաշխարհային շուկաներում մետաքսի պահանջարկը խիստ մեծ էր։ Ելնելով դրանից, բուլղարական կառավարությունն ամեն կերպ խթանում էր արդյունաբերության այս ճյուղի զարգացումը, քանի որ երկրում դրա համար կային բնակլիմայական նպաստավոր պայմաններ։ Դարասկզբին շերամի բուժոժի ձվիկները Բուլղարիա էին ներմուծվում Մերձավոր Արևելքից։ Ներմուծողները հիմնականում հայ առևտրականներն էին[101]։ Հետագայում հայերը տեղում կազմակերպեցին շերամի ձվիկների աճեցում և բուժոժի ու մետաքսաթելի արտադրություն։ Դրա կազմակերպիչներից էր Մարտիրոս Գուրուլյանը։ Ասենովգրադ (Ստանիմակա) քաղաքից ոչ հեռու գտնվող Վոդինա գյուղում 1896 թ. նրան հաջողվեց աճեցնել շերամի թրթուր և ստանալ բարձրորակ բուժոժ[102]։ Նույն ժամանակամիջոցում բրուսացի Հակոբ Գարակյոզյանն իր որդի Մարտիրոսի հետ Ասենովգրադում կազմակերպեց մետաքսաթելի արտադրություն, որն առաջիններից էր Բուլղարիայում[103]։ Գարակյոզյաններին ընկ-

կերակրում էր նաև Վրլիո Շոպովը։ Նրանք Ադրիանուպոլսից հրավիրել էին հայ և հույն կին մասնագետներ, իսկ ֆաբրիկան սարքավորելու աշխատանքները հանձնել էին 1898 թ. Բրուսայից հրավիրված մասնագետ Հակոբջան Քյուփտելենյանին, որը հետագայում վարեց ֆաբրիկայի տնօրենի պաշտոնը։ Ֆաբրիկան ուներ 80 եփման թաս-ավազանիկներ, և որը լավագույններից էր Բուլղարիայում։ Նրա բարձրորակ արտադրանքն ամբողջությամբ արտահանվում էր Ֆրանսիա և Անգլիա։ Բալկանյան պատերազմների նախօրեին այս գործարանը փակվեց, քանի որ ֆինանսավորվում էր «Օսմանյան» և «Անգլիական» բանկերի կողմից։ Բալկանյան և առաջին համաշխարհային պատերազմների հետևանքով Բուլղարիայում մետաքսաթելի արտադրությունը խիստ կրճատվեց։ Այն վերականգնվեց և նոր վերելք ապրեց ետպատերազմյան տարիներին, երբ Բուլղարիայի էկոնոմիկան հարաբերականորեն կայունացավ, իսկ արևմտաեվրոպական շուկաներում բնական մետաքսի նկատմամբ պահանջարկն աճեց։ Ետպատերազմյան տարիներին երկրում շերամապահության զարգացմանը և մետաքսաթելի արտադրության ընդլայնմանը նպաստեցին 1922 թ. Թուրքիայից տարագրված հայերը։

1923 թ. Պլովդիվում և Կալոֆերում հաջողվեց խաչաձևման միջոցով ստանալ բարձրորակ բոժոժ ու մետաքսաթել։ Այդ գործում գնահատելի աշխատանք կատարեցին հայր և որդի Միհրան և Ներսես Խանճյանները։ Ներսես Խանճյանը, որն ավարտել էր Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի գյուղատնտեսական ինստիտուտը, գալով Բուլղարիա, մեծ հաջողություններ հասավ շերամի բոժոժի ազնվացման գործում։ Խաչաձևման եղանակով նա ստացավ բարձրորակ բոժոժ, որը ոչնչով չէր զիջում «բաղդադի» կոչվող լավագույն բոժոժին։ Ներսես Խանճյանի գործունեությունն արժանացավ բուլղարական կառավարության բարձր գնահատականին. նա պարգևատրվեց ոսկե մեդալով և ստացավ պատվավոր քաղաքացու կոչում[104]։ 1923—1927 թթ. Խանճյանները միայն Պլովդիվի նահանգում շերամի բոժոժի արտադրության մեջ ներգրավել էին 400—500 հմուտ մասնագետների։ Դրանք մեծ մասամբ Թուրքիայից տարագրված հայ կանայք էին։

1922 թ. Բրուսայի վիլայեթի Ջերահ գյուղից տարագրված Խաչիկ Թերզյանը Հասկովոյում հիմնեց մետաքսի արտադրության ֆաբրիկա։ Նույն ժամանակամիջոցում Պետրոս Ագրայանը Պլովդիվում գործարկեց մետաքսաթելի մանարան[105]։

1925—1931 թթ. Բուլղարիայում հայ արդյունաբերողների նախաձեռնությամբ բացվեցին մետաքսի բազմաթիվ ֆաբրիկաներ։ Արդյունաբերության այս ճյուղը, որը համաշխարհային տնտեսական ճգնաժամի

տարիներին չտուժեց, հետագայում լայն զարգացում ապրեց, քանի որ նրա արտադրանքը լայնորեն օգտագործվում էր ռազմական արդյունաբերության մեջ։ Առաջացան բաժնետիրական ընկերություններ և բազմաթիվ մեծ ու փոքր ձեռնարկություններ, որոնք Բուլղարիայի ներքին շուկայի պահանջարկը բավարարելուց զատ մեծ քանակությամբ մետաքսաթել էին արտահանում արևմտաեվրոպական շուկաները։ Պլովդիվում, Ռուսեում, Հասկովոյում, Սլիվենում, Պազարջիկում, Սոֆիայում, Վառնայում և այլ քաղաքներում մետաքսի ֆաբրիկաների ու գործարանների հիմնադիրները մեծ մասամբ հայեր էին, որոնք բարի համբավ էին վայելում երկրում և նրա սահմաններից դուրս։

1925 թ. Խաչիկ Թերզյանը մի խումբ հայ ձեռնարկատերերի հետ մետաքսի արտադրության համար Հասկովոյում ստեղծեց «Սվիլա» բաժնետիրական ընկերությունը, որի անդամներն էին Հրանդ Մարտիկյանը, Իսքենտերյան եղբայրները, Սարգիս Հովհաննիսյանը, Համայակ Խորսիկյանը, Արսեն Թոփճյանը։ Այդ ընկերությանը պատկանող ֆաբրիկան ուներ 42 իտալական և 34 արևելյան (Բրուսայի) եփման թաս-ավազանիկներ։ Այնտեղ աշխատում էին 100—120 հայ բանվորուհիներ։ Ֆաբրիկայի արտադրանքը 1926 թ. Գորնա-Օրյահովիցայի ցուցահանդես-տոնավաճառում արժանացավ ոսկե մեդալի[106]։

1925 թ. Արամ Ավետիսյանը Ռուսեում հիմնեց 102 եփման թասեր ունեցող մետաքսի ֆաբրիկա, որտեղ աշխատում էին 140 բանվոր-բանվորուհիներ։ Այդ ֆաբրիկայի մասնաճյուղերից էին «Ալքալա» ֆաբրիկան և Մալըմյան-Դուրպեթյան ֆաբրիկայի մետաքսի բաժինը։ Առաջինն ուներ 82 եփման թասեր, իսկ երկրորդը՝ 48[107]։

1929 թ. Հասկովոյում սկսեց գործել «Պաշխուլ» բաժնետիրական ընկերությունը, որի անդամները հայ և բուլղար կապիտալիստներ էին։ Հակոբ Մանուկյանը, Գրիգոր Թերլեմեզյանը և Բարունակ Գարալյանը ղեկավարում էին ընկերության մետաքսի ֆաբրիկան։ Նույն քաղաքում գործում էին նաև մետաքսագործական միջին ու մանր բազմաթիվ աշխատանոցներ, որոնք իրենց արտադրանքը վաճառում էին ներքին շուկայում, կամ հանձնում խոշոր ձեռնարկատերերին։ Ղազարոս Տեմիրճյանը և Օնիկ Հովհաննիսյանը ունեին 12-ական եփման թասերով աշխատանոց, Վարդգես Գագանճյանը՝ 10, Բարունակ Գյուլխենյանը՝ 8։ Կային նաև մի քանի աշխատանոցներ՝ 5—7 եփման թասերով։ Բազմաթիվ հայ ընտանիքներ շերամի բոժոժի աճեցման աշխատանքներով զբաղվում էին տներում և արտադրանքը վաճառում գործարանատերերին[108]։

1930-ական թվականներին պլովդիվաբնակ Գևորգ Աստվածատրյանը մի խումբ բուլղար բաժնետերերի հետ հիմնեց «Կոպրինա» գործարանը, որը սարքավորված էր 120 նորագույն եփման թասերով։ Գործարանում աշխատում էին 250 բանվոր-բանվորուհիներ՝ հիմնականում տարագրված հայ կանայք[109]։ Արտադրվում էր բարձրորակ մետաքսաթել, որն արտահանվում էր բացառապես Գերմանիա։

1934 թ. Պլովդիվում կազմակերպվեց «Մետաքս» հայկական բաժնետիրական ընկերությունը, որը գլխավորում էր Խաչիկ Թերզյանը։ Այս ընկերությունը սկզբնական շրջանում ուներ մետաքսի ֆաբրիկա՝ 20 եփման թասերով։ 1935 թ. Խաչիկ Թերզյանի եղբորորդի Ռուբեն Թերզյանը Ռուսեում հիմնեց մետաքսի գործարան, որն ուներ ավելի քան 130 եփման թասեր և 250 բանվոր-բանվորուհիներ։ Այդ գործարանը կառուցվեց Մազլումյան-Գուրպեթյան գործարանատերերի պատվերով և ֆինանսավորությամբ[110]։ Զգալի թվով հայ ընտանիքներ Բուլղարիայի տարբեր քաղաքներից տեղափոխվեցին Ռուսե և աշխատանքի անցան այդ գործարանում։

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը մետաքսի աշխատանոցներ ունեին նաև Հովսեփ Վարդանյանը և Արամ Խորսիկյանը՝ Վառնայում, Հակոբ Եղեկիելյանը՝ Սլիվենում, Բ. Աշիքյանը՝ Պազարջիկում և այլն[111]։

Հայերը Բուլղարիայում առաջնակարգ տեղ էին գրավում նաև գորգագործության ասպարեզում։ 1893 թ. Հովհաննես Պողոսյանը Պանագյուրիշտե քաղաքում հիմնել էր հայկական և պարսկական գորգերի արտադրության արհեստանոց։ 1908 թ. նա մասնակցում է Անվերսի (Բելգիա) միջազգային ցուցահանդես-տոնավաճառին, որտեղ նրա արտադրած գորգերի նմուշներն արժանանում են բարձր գնահատականի[112]։ Բուլղարական կառավարության օժանդակությամբ նա 1924 թ. մեկնում է Լոնդոն, որտեղ ծանոթանում է գորգարդյունաբերողների ու առևտրական հիմնարկների ներկայացուցիչների հետ, այդ թվում և գորգարդյունաբերական «Կոստիկյան ընկերության» ղեկավարների և Կոստիկյան գործարանի տնօրեն Լեոնել Կոստանյանի հետ։ Վերջինս մեկ տարի անց այցելում է Պանագյուրիշտե և Հ. Պողոսյանի հետ ստեղծում «Բուլղարա-ամերիկյան» ընկերությունը, որը զբաղվում էր գորգերի արտադրությամբ ու վաճառքով։ Այս ընկերությանը պատկանող խոշոր գորգագործական ֆաբրիկան հետագայում ընդարձակվեց։ Ստեղծվեց նրա մասնաճյուղերի հսկայական ցանց՝ Պանագյուրիշտեի շուրջը գտնվող բազմաթիվ գյուղաքաղաքներում ու գյուղերում։ Պիրդոպի, Կլիսուրայի, Զլատիցայի, Կոպրիվշտիցայի և այլ բնակավայրերի բազմաթիվ հայ կանայք ու աղջիկներ ընդգրկվեցին

գորգագործության մեջ։ Արտադրվում էին տարեկան ավելի քան 600 մլն լևա արժողության գորգեր, որոնք արտահանվում էին ԱՄՆ և արևմտաեվրոպական երկրներ։ Արտադրության մեջ ընդգրկված բանվորների ու ծառայողների տարեկան աշխատավարձի ֆոնդը հասնում էր 20 մլն լևայի»[113]։ Հովհաննես Պողոսյանից բացի Բուլղարիայում գորգագործական ձեռնարկություններ հիմնեցին Գրիգոր Զաքարյանը, Համբիկ Թումանյանը, Նիկողոս Պողոսյանը, Սերովբե Պահարյանը և Հովհաննես Ավշարյանը, որոնց արտադրանքի զգալի մասն արտահանվում էր արևմտաեվրոպական և ամերիկյան շուկաները[114]։ Սերովբե Պահարյանի և Հովհաննես Ավշարյանի գորգերի նմուշները 1926 թ. Դորնա-Օրյահովիցայի ցուցահանդես-տոնավաճառում արժանացան ոսկե մեդալի[115]։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին, հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին, Բուլղարիայում գորգագործությունն անկում ապրեց, որովհետև բուլղարական ֆաշիստական կառավարությունը բրդի վաճառքը հայտարարեց պետական մենաշնորհ[116]։ Բացի այդ, արտադրության մեջ սկսեցին օգտագործել արհեստական թելեր, որի հետևանքով գորգագործության արվեստը կորցրեց իր որակն ու փայլը։

Բուլղարահայերն աչքի էին ընկնում նաև որպես հմուտ կաշեգործներ։ Նրանց բարձրորակ արտադրանքը լավ էր գնահատվում թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկաներում[117]։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Բուլղարիայում մեծ համբավ ունեին Տատուրյան եղբայրների արտադրած «Զույգ աղավնիներ» մակնիշի լաքի ու ջամշի արտադրատեսակները, որոնց զգալի մասն արտահանվում էր Եվրոպա և Մերձավոր Արևելք։ Նրանք արտադրում էին նաև այլ տեսակի կաշիներ, որոնք գործածվում էին ձեռնոցներ, պայուսակներ և այլ ապրանքներ պատրաստելու համար։ Տատուրյանների կաշվի գործարանը հիմնվել է 1921 թ., Սոֆիայում։ 1926 թ. նրանք մենաշնորհ են ձեռք բերում վերը նշված կաշիների արտադրման համար[118]։ Կաշիների մշակման տեխնոլոգիան նրանք սովորել էին ԱՄՆ-ում՝ 1907—1921 թթ.։ Փոխադրվելով Բուլղարիա՝ նրանք իրենց հետ բերեցին կաշիների մշակման ամերիկյան նորագույն մեքենաներ և կազմակերպեցին փափուկ կաշիների արտադրություն[119]։ Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմն արտաքին շուկաներում նրանց արտադրանքը շատ բարձր էր գնահատվում և միջազգային զանազան ցուցահանդեսներում ու տոնավաճառներում արժանանում էր մրցանակների ու մեդալների։ Երկրորդ համաշ-

հարհային պատերազմի նախօրեին Տատուրյաններն իրենց գործարանի մասնաճյուղը հիմնեցին Լիբանանում։

Բուլղարիայում գործում էին նաև բազմաթիվ արհեստանոցներ, որոնց հայ սեփականատերերն արտադրում էին ցածրորակ փափուկ կաշիներ, դրանք սպառվում էին ներքին շուկայում՝ տնայնագործների կողմից։ Զգալի թիվ էին կազմում նաև այն հայ արհեստավորները, որոնք կատարում էին կաշիների նախնական մշակում՝ հումք մատակարարելով խոշոր ձեռնարկատերերին։

Կաշեգործության հետ անմիջական կապ ուներ կոշիկի արտադրությունը։ Հայ ձեռնարկատերերն արտադրում էին բազմատեսակ ու նորաձև կոշկեղեն, որը մեծ համբավ էր վայելում ամբողջ Բուլղարիայում և մրցում եվրոպական լավագույն նմուշների հետ[120]։ Մալխասյանի, Փանոսյան եղբայրների, Պալըքճյանի, Ավագ Մարգարյանի, Պալյան եղբայրների, Մինասյանի, Հարություն Սվաճյանի, Ա. Սերոբյանի, Սեդրակ Գաբրալյանի, Սարգիս Նալչաճյանի և ուրիշների ձեռնարկությունների արտադրանքը լայնորեն սպառվում էին ներքին շուկայում։ Եթե նկատի ունենանք, որ դրանց կողքին գործում էին նաև հարյուրավոր հայ կոշկակար արհեստավորներ, իսկ կոշկեղենի արտադրության մեջ աշխատում էին հազարավոր հայ բանվոր-բանվորուհիներ, ապա պարզ կլինի, թե որքան մեծ էր հայերի դերը Բուլղարիայում կաշեգործության և կոշիկի արտադրության մեջ։ Նրանցից շատերը ակտիվ պայքար ծավալեցին շահագործողների, բուլղարական ֆաշիզմի և գերմանական օկուպանտների դեմ[121]։

Փափուկ կաշու արտադրության հետ սերտորեն առնչվում էր ձեռնոցների պատրաստումը։ Կանացի և տղամարդկանց բարձրորակ ձեռնոցների առաջին ֆաբրիկան Բուլղարիայում հիմնել է Գևորգ Մելքոպճյանը։ Սոֆիայում գտնվող նրա գործարանի արտադրանքը ներքին շուկայում նախապատվություն ուներ ներմուծվող ձեռնոցների նկատմամբ[122]։

Բուլղարիայում նուրբ կաշիներ ու կտորեղեն ներկելու առաջին ֆաբրիկան հիմնեց Թագվոր Սեդրակյանը[123]։ Բուլղարահայ գաղութի գործարար մարդկանցից էր Գրիգոր Զաքարյանը։ 1929 թ. նա Սոֆիայում իր եղբոր հետ կազմակերպեց արհեստական կաշու, կտորեղենի, գործվածքների ու գորգերի արտադրություն։ Նրանց գործարանի առանձին արտադրամասերում ու բաժիններում արտադրվում էին նաև զանազան տեսակի ներկեր և յուղաներկեր[124]։ Բուլղարական բանակին տարբեր տեսակի ապրանքներ ու հանդերձանք մատակարարելու մենաշնորհը կառավարությունը տվել էր Զաքարյաններին։ Գրիգոր Զաքարյանը վայելում էր բուլղարական բուրժուական կառավարությունների հովանավորությունը և

տարիներ շարունակ դևխավորում բուլղարահայ գաղութի ղեկավար մարմինները (թեմական խորհուրդ, Սոֆիայի թաղական խորհուրդ և այլ հանձնախմբեր)։

Բալկանյան պատերազմներից հետո, երբ Բուլղարիային անցան Արևմտյան Թրակիայի և Մակեդոնիայի շրջանները, երկրում ծխախոտի մշակումը մեծ վերելք ապրեց։ Ինչպես այս շրջաններում, այնպես էլ բուն երկրում ծխախոտի աճեցման ու վերամշակման բնագավառները ներհոսեցին օտար, բուլղարական և հայ ձեռնարկատերերի կապիտալները։ Ծխախոտը զգալի տեղ գրավեց երկրի արտաքին առևտրում։ Հին ձեռնարկություններն ընդլայնվեցին, հիմնվեցին բազմաթիվ նորերը։ Ծխախոտի հայ խոշոր արդյունաբերողները (Թագվոր Թագվորյան, Մկրտիչ Թոմասյան, Գրիգոր Թյուրյումճյան) ընդլայնեցին ու մեծացրին ծխախոտի իրենց մթերանոցներն ու գլանակ արտադրող ֆաբրիկանները։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո նրանք գլանակների արտադրության ասպարեզում երկրում ոչ միայն առաջնակարգ դիրքեր գրավեցին, այլև զգալի քանակությամբ լավորակ ծխախոտ էին արտահանում բալկանյան և արևմտաեվրոպական շուկաները[125]։

Բուլղարիայում ծխախոտի արտադրության մագնատներից էր Թագվոր Թագվորյանը, որը մթերանոցներ ուներ երկրի տարբեր շրջաններում։ Միայն Պլովդիվի նրա մթերանոցներում, գլանակի ու ծխախոտատուփերի գործարաններում աշխատում էին 1000-ից ավելի բանվորներ։ Նրա գլխավորած ընկերությունը գործակցելով բուլղար և օտար բաժնետիրական տների հետ, գոյատևեց մինչև 1947 թ. վերջը։

Մկրտիչ Թոմասյանի և նրա որդիների ծխախոտի գործարանը հիմնվել էր դեռևս 1872 թ., Պլովդիվում[126]։ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին և ընթացքում գործարանում աշխատում էին 600-ից ավելի բանվորներ, որոնց թվում և հայեր։ 1872 թ. էր հիմնվել նաև Գրիգոր Թյուրյումճյանի ղեկավարած ծխախոտի բաժնետիրական ընկերությունը, որը մեծ քանակությամբ ծխախոտ ու գլանակներ էր արտահանում Բելգիա և Անգլիա[127]։ Այս ընկերության գլանակի գործարանում և մթերանոցներում աշխատում էին 300—400 բանվորուհիներ, այդ թվում բազմաթիվ հայեր։ Բուլղարիայում հայտնի էր նաև Տերտերյան եղբայրների ծխախոտի մթերանոցն ու գլանակների գործարանը, որը հիմնվել էր 1921 թ. Սոֆիայում[128]։

Զգալի թվով հայ միջնորդներ երկրի տարբեր քաղաքներում ստեղծել էին ծխախոտի չորանոցներ ու մթերանոցներ, որտեղ կուտակում էին ծխախոտի հավաքած պաշարները և մատակարարում մեծ գործարանա-

տերերին։ Այդպիսիք էին ծխախոտի գնորդ և «Անգլո-բելգիական» բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ Պ. Մահմուրյանը, Մըսըրյան եղբայրները, Ռուբեն Տերտերյանը, Մանուկ Մանուկյանը և ուրիշներ։ Վերջիններս գործում էին որպես պետական ներկայացուցիչ-գնորդներ, քանի որ ծխախոտի արտահանումն ու վաճառքը պետական մենաշնորհ էր։

Բուլղարիայի տնտեսական կյանքում չկար որևէ ասպարեզ, որտեղ բուլղար, հրեա, հույն, թուրք և այլ գործարար մարդկանց կողքին չլինեին հայեր, հատկապես քաղաքներում, որտեղ նրանք հանդես էին գալիս արդյունաբերության, արհեստների ու առևտրի տարբեր ճյուղերում նախաձեռնողների կամ հիմնադրողների դերում։ Այսպես, օրինակ, տպագրական մետաղյա տառերը մինչև XX դ. սկիզբը Բուլղարիա էին ներմուծվում արևմտաեվրոպական տարբեր երկրներից։ Վառնայի Զենոբյան-Բըյըքյան ձուլարանը Բուլղարիայում առաջինն էր, որ սկսեց արտադրել բոլոր տեսակի տպագրական տառեր և երկրի պահանջները բավարարելուց զատ կատարում էր նաև արտասահմանյան պատվերներ[129]։ Հետագայում այդպիսի գործարան ստեղծվեց նաև Սոֆիայում, հայ և բուլղար արդյունաբերողների համագործակցությամբ։

Տնային և խոհանոցային մետաղյա վառարաններ արտադրելու գործում 1920-ական թվականներից հայտնի էին Փարթամյան եղբայրները և Ավետիս Սմբատովը։ Առաջինները գործում էին Վառնայում, իսկ երկրորդը՝ Պլևենում։ Ա. Սմբատովը լավորակ արտադրանքի համար տարբեր ցուցահանդես-տոնավաճառներում պարգևատրվել է 5 մեդալով և բուլղարական կառավարության կողմից արժանացել պատվավոր քաղաքացու կոչման։ Տնային մետաղյա վառարանների արտադրության ասպարեզում հայտնի էին նաև էնկիպարով եղբայրները՝ Վառնայում[130]։

Ջրատար մետաղյա խողովակների և ծորակների արտադրության առաջին ձուլարանը Բուլղարիայում հիմնել են էքիզյան եղբայրները (Վառնա)։ Հետագայում Սոֆիայում նույնանման ձուլարան հիմնեց Փափազյան-Նահապետյան ընկերությունը[131]։ Սպիտակեղենի քիմիական մաքրման առաջին ֆաբրիկան Բուլղարիայում հիմնել է Սմբատ Արիսյանը (Սոֆիա, 1931)[132]։

Ոսկերչության ասպարեզում ևս մեծ էր հայերի ավանդը։ 1930-ական թվականներին Սոֆիայում հայ ոսկերիչներ Օնիկ Հովհաննիսյանի, Գեորգ Քեսթերճյանի, Թոսպըլըքյան եղբայրների և ուրիշների նախաձեռնությամբ հիմնվեց ոսկու և գոհարեղենի մշակման ֆաբրիկա։ Ոսկերչական արհեստանոցներ ու վաճառատներ ունեին Գրիգոր Կարապետյանը Շումենում, Հարություն Թելալյանը Պլովդիվում, Տեր-Սարգիսյան եղբայրները

ու Մանուկ Կարակյոզյանը Սոֆիայում և շատ ուրիշներ՝ Բուլղարիայի տարբեր քաղաքներում[133]։

Հայերը Բուլղարիայում հմուտ մասնագետներ էին նաև ալյուրի արտադրության, շինարարության, քարակոփության, փայտամշակման և բազմաթիվ այլ բնագավառներում։ Նրանք հայտնի վարպետներ էին նաև քաղցրավենիքների, կարկանդակների, երշիկեղեն և այլ ուտեստներ պատրաստելու գործում։

Բուլղարահայ արդյունաբերական ու առևտրական կապիտալին պատկանող վերոհիշյալ բոլոր ձեռնարկությունները դադարեցին մինչև 1948 թ., երբ բուլղարական ժողովրդական իշխանությունն ազգայնացրեց երկրի ամբողջ արդյունաբերությունն ու առևտուրը[134]։

Բուլղարահայ արդյունաբերողները և առևտրականներն անխափեր ունեին բուլղարական քաղաքացիություն և վայելում էին բուլղարական բուրժուազիայի վստահություն։ Նրանք բուլղարական բուրժուազիայի հետ շահագործում էին աշխատավորական զանգվածներին, հեռու մնալով երկրում կատարվող հեղափոխական վերափոխումներից։ Բուլղարահայերի առևտրաարդյունաբերական կապիտալ ներդրումները զգալի տեղ գրավեցին բուլղարական էկոնոմիկայի համախառն արտադրության մեջ[135]։

Բուլղարահայ արդյունաբերական կապիտալը հիմնականում գործում էր շերամաբուծության, մետաքսաթելի, կոշիկի, ծխախոտի վերամշակման ու գլանակների արտադրության մեջ, որոնց շարքում առաջնակարգ տեղ էր գրավում մետաքսաթելի արտադրությունը։ Այս վերջինի արտադրության մեջ Բուլղարիայում գործող երկու տասնյակ հիմնարկությունների մեծ մասը պատկանում էր հայերին, որի հիման վրա հետագայում սոցիալիստական Բուլղարիայում ստեղծվեցին արտադրական խոշոր միավորներ։ Այդ ձեռնարկություններում աշխատող հայ բանվորները զգալի տոկոս էին կազմում երկրի պրոլետարիատի շարքերում։

Բուլղարահայ պրոլետարիատը Բուլղարիայի բանվոր դասակարգի անբաժանելի մասն էր։ Մինչև առաջին համաշխարհային պատերազմը նրա տոկոսային հարաբերությունը բուլղարական երիտասարդ բանվոր դասակարգի նկատմամբ աննշան էր։ Նույնպիսի վիճակ էր գաղութի ներսում ճնշված խավերի նկատմամբ։ 1922 թ. հետո հիմնովին փոխվեց բուլղարահայերի սոցիալական կազմը, երբ գաղութը համալրվեց նոր գանգվածներով, որոնք կապիտալիստական Բուլղարիայում համալրեցին պրոլետարիատի շարքերը։

1925 թ. բուլղարական բանվոր դասակարգը բնակչության 12 տոկոսն էր՝ 387061 բանվոր-բանվորուհիներ։ Պլովդիվի նման հայաշատ քաղաքում (1936) բնակչության 10 տոկոսից ավելին հայեր էին, որտեղ հայ բանվորների տոկոսային հարաբերությունը քաղաքի բանվոր դասակարգի նկատմամբ, համեմատած մյուս ազգային փոքրամասնությունների հետ, ավելի բարձր էր, հատկապես ծխախոտի և մետաքսաթելի արդյունաբերության բնագավառներում։

Հայ բանվոր-բանվորուհիների որոշ տոկոսը աշխատում էր հայ արդյունաբերողների մոտ։ Նույնպիսի վիճակ էր Պլովդիվում, Ռուսեում, Սոֆիայում, Վառնայում, Հասկովոյում և այլուր։ Նրանց զգալի մասը ընդգրկված էր արհեստակցական միությունների մեջ։ Առանձին գործարաններում և արհեստանոցներում, ինչպես նաև թեղամասերում նրանք մըտնում էին ԲԿԿ և ՌՄՄ-ի[136] շարքերը։ Հայ աշխատավորները բուլղար ընկերների հետ մասնակցում էին բանվորական ելույթներին ու գործադուլներին։

1923 թ. հունվարին Ռուսեի Մազըմյան-Գուրպեչյան մանարանի բանվորները, որոնց մեծամասնությունը հայեր էին, գործադուլ հայտարարեցին աշխատավարձի ավելացման համար։ Բանվորների առաջադրած պայմանները, արհեստակցական միության ղեկավարությամբ, ձեռնարկատերերը ստիպված եղան ընդունել և չորս շաբաթյա գործադուլից հետո նրանք վերադարձան աշխատանքի[137]։

Գործադուլ արեցին նաև Վառնայի լաչակի արտադրության բանվորները, որը նույնպես վերջացավ բանվորների հաղթանակով։ Մի շարք գործադուլներ տեղի ունեցան Սոֆիայում՝ հայ և օտար ձեռնարկատերերի կոշիկի արհեստանոցներում ու ֆաբրիկաններում, որոնք ուղղված էին աշխատանքի պայմանների բարելավման, աշխատավարձի ավելացման և 8-ժամյա աշխատանքային օրվա համար։

1924—1927 թթ. կապիտալիզմի հարաբերական և մասնակի կայունացման ժամանակաշրջանում հայ բանվոր-բանվորուհիները բուլղար, հրեա, թուրք և այլ ազգի բանվորների հետ համախմբված կարողանում էին մի կերպ ապահովել ապրուստի նվազագույն չափը։ Սակայն 1929—1934 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով նրանք մատնվեցին անգործության, սովի ու թշվառության։

Պլովդիվում, Հասկովոյում, Այտոսում, Հարմանլիում և այլուր, որտեղ հայ բանվորների մեծ մասը ընդգրկված էր ծխախոտի վերամշակման արտադրության մեջ, հայերն առաջիններն էին, որ ազատվեցին աշխատանքից, որպես օտար քաղաքացիներ։

Որպեսզի պատկերացնենք, թե ինչպիսի չափերի էր հասել գործազրկությունը այդ ժամանակ, վերցնենք Պլովդիվ քաղաքը որպես բանվորական կենտրոն։ Այս հայաշատ քաղաքում 10500 ծխախոտագործ բանվորներից (այդ թվում մոտավորապես 800 հայեր) արտադրության մեջ մնացել էին միայն 4000 բուլղարական քաղաքացիություն ունեցող բանվոր-բանվորուհիներ։ Գործազրկությունը լայն չափերի հասավ նաև կոշիկի, տեքստիլ և այլ արդյունաբերական ճյուղերում։

1932 թ. հուլիսին Բուլղարիայի ծխախոտի վերամշակման շրջաններում 30696 բանվոր-բանվորուհիներ մատնվել էին գործազրկության, որի հետևանքով Աշխատանքի մինիստրությունը հրամայեց Պլովդիվում, Հասկովոյում, Այտոսում, Յամբոլում և այլ վայրերում բոլոր հայ բանվոր-բանվորուհիներին առանց նախազգուշացման ազատել ծխախոտի մշականոցներում աշխատելուց։ Այդ օրերին «Պալքանեան մամուլ» թերթը Հասկովոյի հայ բանվորների մասին գրում էր. «Անգործության ենթարկված են, ահավոր թշվառության, որ հետզհետե ազգային սպետի մը բնույթ կստանա»[138]։

Տնտեսական ճգնաժամի խորացման և գործազրկության ընդլայնման պատճառով հայ բանվորները, որոնք ընդգրկված էին զանազան արհեստակցական միություններում, իրենց վրդովմունքը հայտնեցին բուլղարական բուրժուական կառավարության վարած խորհրդարանական քաղաքականության նկատմամբ։ Նրանք լայն բացատրական աշխատանք ծավալեցին և պլեբսիտ կազմակերպեցին՝ հանուն աշխատանքի և քաղաքացիության հավասար իրավունքների։ Արդյունքն եղավ այն, որ 1933 թ. սեպտեմբերի 9-ին, աշխատանքի նախարարությունը № 18673 հրամանագրով կարգադրեց Պլովդիվի, Հասկովոյի և մյուս հայաշատ քաղաքներում հայ նահանջյան բանվոր-բանվորուհիներին վերընդունել իրենց նախկին աշխատանքի վայրերում՝ ծխախոտի մշականոցներում[139]։

1934 թ. մայիսի 19-ի հեղաշրջումից հետո իշխանության գլուխ անցած «Ռազմական լիգայի» և «Զվենո» խմբի կառավարությունը սահմանափակեց ժողովրդի քաղաքական իրավունքները, բոլոր կուսակցությունները օրենքից դուրս հայտարարեց։

Այդ կառավարությունը, որ երկրում ռազմաֆաշիստական դիկտատուրա էր հաստատել, արգելեց հայ նահանջյան բանվորներին աշխատանքի ընդունելը։ Առանձին վայրերում հայերին կարգադրում էին հեռանալ Բուլղարիայից։ Այս դեպքում միայն ծխախոտագործ բանվորները չէ որ զրկվեցին աշխատանքից, այլ բոլոր նահանջյան քաղաքացիություն ունեցող հայերը։ Հազարավոր հայ ընտանիքներ մատնվեցին դժվարին կացության։

Թեմական խորհրդի և տեղի քաղաքական խորհուրդների դիմումների հիման վրա, ռազմական լիազոր կառավարությունը հատուկ հարկ սահմանեց նահանջյան հայ բանվորների համար։ Աշխատանքի իրավունք ձեռք բերելու համար փաստաթղթեր տրվում էին այն բանվորներին, որոնք ժամանակին վճարել են սահմանված գումարը։ Բանվորներից շատերը հնարավորություն չունեին այդ հարկը վճարելու և աշխատում էին զաղտնի, առանց թույլտվության։ Աշխատանքի տեսուչներից նկատվելու դեպքում նրանք ենթարկվում էին տուգանքի, իսկ տուգանքը չվճարելու դեպքում ընկնում էին աշխատավարձով ենթարկվում էին պարտադիր՝ ճանապարհաշինական և այլ աշխատանքների։

1935 թ. վրա հասան Պազարջիկի դեպքերը[140], որտեղ ընդհանրապես տեղական ֆաշիստական իշխանությունները զրկեցին հայերին աշխատելու իրավունքից։ Քաղաքում փակվեցին հայերի խանութներն ու կրպակները։ Տեղի ունեցան ընդհարումներ ֆաշիստական խմբերի և հայերի միջև։ Այդ տխուր դեպքերի ժամանակ եղան սպանություններ և ձերբակալություններ[141]։

Թեմական խորհրդի և տեղերում քաղաքական խորհուրդների դիմումների ու բողոքների շնորհիվ դադարեցին ընդհարումները և հայերի խանութների փակումը։ Սակայն հայ բանվորների և նահանջյան քաղաքացիություն ունեցող հայերի համար բուլղարական քաղաքացիություն ձեռք բերելու բոլոր ջանքերը մնացին անհետևանք։

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին Բուլղարական կոմունիստական կուսակցության ցուցումով հայ կոմունիստները հսկայական աշխատանք ծավալեցին՝ աշխատանքի հավասար իրավունքներ ձեռք բերելու ուղղությամբ, սակայն, բուլղարական ֆաշիստական կառավարություններն անտարբեր մնացին այդ պահանջների նկատմամբ։ Դեռ ավելին, պատերազմի ընթացքում իշխանությունները պարբերաբար զորակոչում էին նահանջյան քաղաքացիություն ունեցող հայ բանվորներին և տանում պարտադիր աշխատանքի՝ ռազմական օբյեկտների կառուցման և ճանապարհաշինական աշխատանքների համար։

Բուլղարական մանր բուրժուազիայի կազմում մանր առևտրականները, արհեստավորները և ծառայողները զբաղի տեղ էին գրավում երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում։ Նրանք չնայած սեփականատերեր էին, սակայն սոցիալական վիճակով համարյա չէին տարբերվում արդյունաբերական պրոլետարիատից։ Տնտեսական կյանքի ելևէջները, հատկապես տնտեսական ճգնաժամերի ժամանակ, նրանց հասցնում էին քայքայման, որի հետևանքով համալրում էին բանվոր դասակարգի շարքերը։

Նրանք բնակվում էին քաղաքներում և իրենց արհեստին կամ առևտրին զուգահեռ զբաղվում նաև գյուղատնտեսական աշխատանքներով՝ սեփական հողակտորի կամ վարձով վերցրած հողամասի վրա։ Տնայնագործական եղանակով վերամշակած մթերքներն ու ապրանքները վաճառում էին սեփական խանութում կամ կրպակում, իսկ երբեմն հանձնում գործարանատերերին կամ արտահանողներին։

Տնտեսական այլ վիճակում էին գտնվում բուլղարահայ մանր արհեստավորները և շրջիկ առևտրականները։ Նրանք չունեին ոչ մի սեփականություն։ Նույնիսկ սեփական խանութը կամ կրպակը վարձով վերցրած շինություններ էին, որոնց վարձի թանկությունը երբեմն ստիպում էր փակել խանութը և դառնալ վարձու բանվոր։

Հայ նահանջյան բանվորների նկատմամբ բուլղարական բուրժուական իշխանությունների ձեռնարկումներն ու խորականությունները վերաբերում էին նաև սոցիալական վերոհիշյալ խավերին, որոնց համար բավականին դժվար էր աշխատանքի իրավունք ստանալը։ Ճգնաժամի տարիներին մանր արհեստավորների և մանր առևտրականների որոշ մասը համախմբվեց զանազան արտադրական կոոպերացիաների մեջ։ Այդ շարժման մեջ ընդգրկվում էին նաև բանվորներ։

Ինչ վերաբերում է բուլղարահայ ծառայողներին, նրանք առանձին անհատներ էին, որոնք ավարտելով եվրոպական կամ բուլղարական միջնակարգ կամ բարձրագույն ուսումնական հաստատությունները, աշխատում և ծառայում էին իրենց մասնագիտության գծով։ Հայրապի ծառայողների մի մասը արտագաղթել էր Թուրքիայից և առանձին խավ չէր ներկայացնում։ Նրանք մեկ-երկու տասնյակի հասնող բժիշկներ, ատամնաբույժներ, փաստաբաններ, բանկային ծառայողներ, մակլերներ էին, որոնք երբեմն աշխատում էին մասնավոր հիմունքներով։

Զգալի թիվ էին կազմում հայ ուսուցիչները և հիմնարկ-ձեռնարկություններում աշխատող ծառայողները (տեխնիկներ, ինժեներներ, հաշվապահներ, գրասենյակային ծառայողներ), որոնք իրենց սոցիալական վիճակով այնքան էլ չէին տարբերվում գործարանային բանվորներից։

Բանվորական շարժման բուռն վերելքի տարիներին Բուլղարիայի ծառայող խավերից, հատկապես ուսուցիչներից և հիմնարկ-ձեռնարկություններում ծառայողներից, հանդես եկան առաջադեմ գործիչներ, որոնք բանվորների հետ միասին պայքարում էին տիրող կարգերի դեմ, երբեմն էլ իրենք էին գլխավորում պայքարը սոցիալական իրավունքների համար։

Բուլղարիայում սոցիալիստական հեղափոխության նախօրեին ծառայողների, ինչպես նաև մտավորականության մի մասը կողմնորոշվեց

դեպի հակաֆաշիստական, դիմադրական շարժումը և մասնակցեց նոր կարգերի ամրապնդման գործին։

Դարասկզբին Բուլղարիայում հազարավոր արհեստավորներ, մանր առևտրականներ ու ծառայողներ տնտեսական քայքայումից ու անհանգստությունից փրկվելու նպատակով, կոոպերատիվ շարժման ազդեցության ներքո ի մի բերելով իրենց ֆինանսական կարողությունները, աշխատում էին ստեղծել զանազան արտադրական, սպառողական և վարկային կոոպերատիվ հիմնարկ-ձեռնարկություններ, որոնց մեջ ներգրավվում էին նաև տնտեսական ճգնաժամից տուժող աշխատավորական լայն խավերը։

Կոոպերատիվ շարժման ակտիվ ղեկավարները բուլղար, հրեա և հայ առաջադեմ գործիչներ էին, որոնք հետևողական պայքար էին ծավալում սոցիալական առաջադիմության համար։ Ստեղծվում էին բանվորական սպառողական կոոպերացիաներ, որոնք թեթևացնում էին բանվորների և գյուղացիների վատթար վիճակը։

Կոոպերատիվ հիմունքներով առաջին կազմակերպությունը Բուլղարիայում ստեղծել են Պլովդիվի բանվորները՝ «Կրպչիա» անունով։ Հետագայում այդ կազմակերպությունը կոչվեց «Էդինստվո», որի նախագահը պայմ Միհաիլ Գեորգիևն էր, իսկ փոխնախագահը՝ Անտոն Պոյաջյանը։ Կազմակերպությունն ստեղծել էր զուտ փոխօգնության նպատակներով[142]։ Այդ շարժումը լայնորեն տարածվեց արդյունաբերության մյուս ճյուղերում ևս՝ աշխատավորների շրջանում վայելում էր լայն մասսայականություն։

Բուլղարական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը շուտով զբաղավորեց այդ շարժումը և դարձավ բանվորական և գյուղացիական կոոպերատիվ կազմակերպությունների խրախուսողն ու նրա հետագա ընդլայնման նախաձեռնողը։

1899 թ., երբ Պլովդիվում ստեղծվեց առաջին բանվորական սպառողական կոոպերացիան («Ռաբոտնիկ»), բուլղարական իշխանությունները չէին ցանկանում նրա վավերացումը։ Բուլղարական սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ Տիգրան Խմիյանը թարգմանեց Բրյուսելի սոցիալիստական կոոպերացիայի կանոնադրությունը և դատարանում պաշտպանեց «Ռաբոտնիկի» հաստատումը[143]։

Կոոպերատիվ հիմնարկ-ձեռնարկությունների ձևերում Բուլղարիայում ամենալայն տարածումն ստացան վարկային կոոպերատիվ ժողովրդական բանկերը, որոնք վերածվեցին ամուր վարկային հենարանի՝ նորանոր կոոպերատիվ ձեռնարկություններ կազմակերպելու համար։ Այդ կոոպերատիվները, չնայած իրենց կապիտալիստական բնույթին, այնուամենայնիվ, կոչված էին ծառայելու որպես նյութական հենարան աշխատավորական լայն զանգվածների համար։ Կոոպերատիվ շարժումը բանվորներին ու գյուղացիներին դաստիարակում էր կոլեկտիվիզմի ոգով, առաջ քաշելով «Մեկը բոլորի, բոլորը մեկի համար» նշանաբանը։

Դեռ 1892 թ. Ռուսեում ստեղծվել էր Հայկական խնայողական ընկերություն, որի բաժնեթղթերի (ակցիաների) վրա եղել է հետևյալ բնաբանը՝ «Խնայողություն և աշխատություն վանեն զաղքատություն»[144]։ 1906 թ., դարձյալ Ռուսեում, հիմնադրվել էր «Դանուբ» խնայողական ընկերությունը։

1904 թ. Պլովդիվում կազմակերպվում է «Ասպարեզ» հայկական բանկը։ Այն հիմնադրել էին հայազգի ծառայողները։ Բանկի նպատակն էր փոխառությունների միջոցով հայ ծառայողներին օգնել բնակարանային շինարարության, զանազան ձեռնարկություններ հիմնելու և այլ գործերում։ Հետագայում բանկը ընդգրկեց բազմաթիվ հայ արհեստավորներ ու առևտրականներ։ Նրա գործունեությունը դադարեց մինչև 1917 թվականը[145]։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո հայ առևտրականների նախաձեռնությամբ Պլովդիվում հիմնադրվեց նոր՝ «Ասպարեզ» բանկը։ Այն ուներ կանոնադրություն, որը 1918 թ. վավերացվել էր բուլղարական կառավարության կողմից։ 1930 թ. այդ բանկն ունեցել է 900.000 լևա պահեստի կապիտալ։ Նրա գործունեությունը դադարել է 1930-ական թվականներին։

Նույն տարիներին գործազրկության և թշվառության պայմաններում Բուլղարական կոմունիստական կուսակցությունը Սոֆիայում կազմակերպեց «Օավոբոժդենիե» բանվորական սպառողական կոոպերացիան, որին անդամագրվեցին շուրջ 80000 բանվոր-ծառայողներ և մանր արհեստավորներ։ Այդ կոոպերացիայի մասնաճյուղեր հիմնադրվեցին Բուլղարիայի մյուս խոշոր քաղաքներում ևս։ Պլովդիվի մասնաճյուղի նախագահն էր Սաամն Գարաին, իսկ փոխնախագահը Գրիգոր Շիշմանյանը[146]։ «Օավոբոժդենիե» սպառողական կոոպերացիան մատչելի գներով բարձրորակ ապրանքներ էր վաճառում աշխատավորներին։

1920—1921 թթ. այս հիմնարկությունը հսկայական քանակությամբ մթերքներ գնեց և ուղարկեց Սովետական Ռուսաստան, որպես եղբայրական օգնություն ռուսական պրոլետարիատին։ 1922 թ. կոոպերացիան օգնեց Սովետական Հայաստանի կոոպերացիաների ներկայացուցիչներին՝ Բուլղարիայում զանազան մթերքներ ձեռք բերելու գործում[147]։

Բուլղարահայ գաղութում կոոպերատիվ շարժմանը նպաստեցին 1920-ական թվականներին ստեղծված տասնյակ հայրենակցական միու-

թյունները, որոնք աշխատում էին փոխօգնության միջոցով իրենց հայրենակիցներին փրկել սովից ու կարիքից:

1931 թ. փոխօգնության նպատակով Սոֆիայում «Մամիկոնյան» հայրենակցական միության վարչությունը Արտաշես Հալըճյանի գլխավորությամբ ստեղծեց «Փոխօգնության դրամարկղ»: Հիմնադրման ժամանակ 40 համաքաղաքացիներ ներդնում են 100-ական լևա: Այս համեստ գումարով ստեղծված դրամարկղը հետագայում ամրապնդվելով, դարձավ բուլղարական կոոպերատիվ ժողովրդական բանկերի միության անդամ[143]:

Բուլղարիայում կոոպերատիվ բանկի ստեղծման և կազմակերպման աշխատանքներին իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել հայտնի տնտեսագետ, պրոֆեսոր՝ Վահան Թոթոմյանցը, որն այդ տարիներին բնակվում էր Բուլղարիայում: Նա հսկայական աշխատանք է ծավալել Բուլղարիայում կոոպերատիվ շարժման պրոպագանդման գործում և մեծ հարգանք էր վայելում հայ, բուլղար և հրեա կոոպերատորների շրջաններում:

Նորաստեղծ հայկական բանկը կոչվեց «Փրակիա»: Հիմնադրվելուց հինգ ամիս անց նրա անդամների թիվը հասավ 140-ի՝ 181.500 լևա կապիտալով: Բանկի հիմնադրման երկրորդ տարում նրա անդամների թիվը հասել էր 252-ի՝ 474.700 լևա կապիտալով[149]:

«Փրակիա» վարկային բանկը ունեցել է նաև խնայդրամարկղ, ուր 1931 թ. ներդրված էր 31802 լևա կապիտալ: Ներդրված ավանդները 1938 թ. հասել էին 7 միլիոն լևա գումարի:

Հայկական կոոպերատիվ ժողովրդական բանկը վարկեր էր բաց թողնում հայ արհեստավորներին, մանր առևտրականներին, ծառայողներին և բանվորներին, խրախուսում էր արտադրական, սպառողական կոոպերացիաների ստեղծումը: Եթե 1932 թ. բանկը տոկոսով վարկեր էր բաց թողել 249950 լևա, ապա 1934 թ. այդ վարկերի գումարը հասել էր 40 միլիոնի:

«Փրակիա» բանկի օրինակով կոոպերատիվ բանկեր ստեղծվեցին նաև մյուս հայաշատ քաղաքներում, որոնց հիմնադրման համար աշխույժ գործունեություն ծավալեց պրոֆեսոր Վ. Թոթոմյանցը: Պլովդիվում ստեղծվեց սպառողական կոոպերացիա և «Արարատ» վարկային բանկը: Հասկանալի է, որ միայն Պլովդիվի նման բանվորական խոշոր կենտրոնում, որտեղ հազարավոր հայ բանվորներ աշխատում էին ծխախոտի մշակման ոճերանոցներում, մետաքսի գործարաններում և կոշիկի արտադրության մեջ, սպառողական կոոպերացիան կարող էր գոյատևել երկար ժամանակ:

1933 թ. Սոֆիայում հիմնադրվեց երկրորդ հայկական կոոպերատիվ վարկային բանկը՝ «Սևանը», որը 1936 թ. մայիսի 30-ին վավերացվեց և դարձավ բուլղարական կոոպերատիվ ժողովրդական բանկերի միության անդամ[150]: Բանկի հիմնադիրներն ու վարչության անդամներն էին Արամ Մկրտիչյանը, Երվանդ Դավիթյանը, Հրանդ Իթյուճյանը, Սմբատ Արիսյանը և ուրիշներ: Բանկը հիմնադրման ժամանակ ունեցել է 80000 լևա կապիտալ: Երկու շաբաթ անց այդ գումարը հասել էր 200000 լևայի[151]: Այս երկրորդ վարկային բանկը զարգացավ արագ տեմպերով և երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին իր կապիտալներով ու գործունեությամբ հավասարվեց «Փրակիա» բանկի հետ:

1935 թ. բուլղարական կոոպերատիվ բանկերի վարչության նախաձեռնությամբ որոշվեց օգոստոսի 20-ին հրավիրել հայկական բանկերի և կոոպերատիվ ձեռնարկությունների համագումար, որին մասնակցելու հրավիրվեցին սփյուռքի տարբեր գաղութներում գործող կոոպերատիվ հիմնարկ-ձեռնարկությունների ներկայացուցիչները՝ համատեղ միասնական կոոպերատիվներ ստեղծելու համար: Վահան Թոթոմյանցի ղեկավարությամբ նամակներ ուղարկվեցին եգիպտահայ, ռումինահայ, հունահայ, ամերիկահայ, ֆրանսահայ և այլ գաղութների ղեկավարներին ու կոոպերատիվ հիմնարկ-ձեռնարկությունների վարչություններին՝ համագումարին մասնակցելու համար:

1935 թ. օգոստոսի 21-ին Սոֆիայում «Փրակիա» հայկական կոոպերատիվ բանկի սրահում բացվեց համագումարը: Սակայն մասնակիցների քիչ լինելու պատճառով այն ունեցավ խորհրդակցական ժողովի նշանակություն, օրակարգից հանվել էին կրթական, հրատարակչական և այլ հարցեր:

Խորհրդաժողովը սփյուռքի բոլոր գաղութներին կոչ արեց զարգացնել կոոպերատիվ շարժումը և տնտեսական ճգնաժամի տարիներին ամենուրեք ստեղծել արտադրական, սպառողական և վարկային կոոպերացիաներ, ամրապնդել և ընդլայնել կապը հայկական գաղութների միջև և հրավիրել հաջորդ՝ երկրորդ համագումարը Բուխարեստում:

1932 թ. «Փրակիա» բանկը լույս էր ընծայում իր «Տեղեկագիրը», որտեղ պարբերաբար հրատարակվում էին մանրամասն հաշվետվություններ հայ կոոպերատիվ հիմնարկ-ձեռնարկությունների ֆինանսական վիճակի մասին[152]:

1938 թ. «Սևան» բանկն ուներ 203 անդամներ և շրջանառության մեջ՝ 64724457 լևա, իսկ 1939—1940 թթ.՝ 104001763 լևա[153]: Նույն ժամանա-

կամիջոցին «Թրակիա» բանկն ուներ 407 անդամներ և մոտավորապես «Սևան» բանկի կրկնակի կապիտալը։

Ինչպես նշել ենք, կոոպերատիվ բանկի բաժնետերերի մեծ մասը մանր բուրժուական խավերից էին, որոնք իրենց գործունեությամբ առնչվում էին բուլղարահայ գաղութի աշխատավոր լայն զանգվածների հետ։ Բանկերը միշտ դրական վերաբերմունք են ցուցաբերել ինչպես կոոպերատիվ հիմնարկ-ձեռնարկությունների ստեղծման, այնպես էլ համագաղութային ֆինանսական հարցերում (կրթական, փոխօգնության, ներգաղթի, դպրոցաշինության և այլ նախաձեռնությունների ֆինանսավորման գործում)։

Երկրորդ համաշխարհային պատերազմը բացասաբար անդրադարձավ արտադրական, սպառողական և վարկային կոոպերատիվ հիմնարկ-ձեռնարկությունների գործունեության վրա։ 1941 թ. բուլղարական կառավարությունը դաշինք կնքեց Հիտլերյան Գերմանիայի հետ և ռազմական ծախսերը ֆինանսավորելու համար ձեռք գցեց ժողովրդի՝ աշխատավոր մարդկանց խնայողությունների, այդ թվում հայկական «Թրակիա» և «Սևան» վարկային բանկերի կապիտալներին։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1. ԳԱՂՈՒԹԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Բուրժուական Բուլղարիայի սահմանադրության 244-րդ հոդվածի համաձայն, երկրում բնակվող ազգային փոքրամասնություններին տրված էր ներքին ինքնավարության իրավունք։ Նրանց հարցերով զբաղվում էր Բուլղարիայի արտաքին գործերի և դավանության մինիստրությունը, որի հետ անմիջական կապ էր պահպանում տվյալ ազգային փոքրամասնության կենտրոնական մարմինը։

XX դարի սկզբին բուլղարահայերը ևս ունեին իրենց ներքին ինքնավարության մարմինները, որոնց կառուցվածքն ու կանոնները հիմնականում մշակվել էին Կոստանդնուպոլսի 1861 թ. Ազգային սահմանադրության[1] հիման վրա։

Տվյալ ժամանակաշրջանում բուլղարահայ գաղութում գոյություն ունեին թաղական խորհուրդներ, դպրոցական հոգաբարձություններ և առաջնորդական տեղապահ։ Սակայն գաղութը չուներ կենտրոնական թեմական մարմին և առաջնորդարան իր առաջնորդով, որն անմիջական կապ ունենար բուլղարական իշխանությունների հետ, ինչպես հույն, թուրք, հրեա և այլ ազգային փոքրամասնությունները։

Բուլղարահայերը նույնպես ձգտում էին ունենալ իրենց ուրույն կենտրոնական ղեկավար մարմինը։ Տեղերում գործող թաղական խորհուրդները, դպրոցական հոգաբարձությունները և մյուս մարմիններն ընտրվում էին գաղութի հայերի, կամ նշանակվում բուլղարական տեղական իշխանությունների կողմից։ Առաջնորդական տեղապահը նշանակվում էր Կոստանդնուպոլսի պատրիարքարանի կողմից։

Ինչպես հայտնի է, Կոստանդնուպոլսի Ազգային սահմանադրության մեջ ասված է, որ այս կամ այն երկրում գտնվող հայկական գաղութը, որն իր վիճակի է պահել մեկ կամ ավելի հոգևորական, մեկ կամ ավելի դպրոց ու եկեղեցի, կարող է ունենալ իր թեմը։

Մինչև 1922 թ. բուլղարահայ թեմի վարչական կենտրոնը Կոստանդնուպոլսի պատրիարքարանն էր։ Վերջինս վավերացնում էր առաջնորդի տեղապահի ընտրությունը և ընթացք տալիս Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակին։ Կոստանդնուպոլսի պատրիարքարանի միջոցով բուլղարահայ թեմը կապ էր ստեղծում էջմիածնի Մայր աթոռի հետ։ Նրա միջոցով իրականացվում էր Հայաստանյայց եկեղեցիների հետ հոգևոր և վարչական միասնությունը։

Բուլղարահայ թաղական խորհուրդները և դպրոցական հոգաբարձությունները ընտրվում էին փակ, գաղտնի քվեարկությամբ՝ գաղութի 21 տարին լրացրած տղամարդկանց կողմից։ Կանայք ընտրություններին չէին մասնակցում։ Թաղական խորհուրդներն ընտրվում էին բուլղարահայերի կողմից կամ նշանակվում բուլղարական իշխանությունների կողմից՝ երկու տարի ժամկետով։ Ընտրվելու և ընտրելու իրավունք ունեին բոլորը՝ անկախ քաղաքացիության պատկանելիությունից, մինչդեռ հոգաբարձությունները, որոնք զբաղվում էին կրթական հարցերով, ընտրվում էին միայն բուլղարական քաղաքացիություն ունեցող հայերից՝ երեք տարի ժամկետով։ Վերջիններս պետք է ունենային առնվազն միջնակարգ կրթություն։ Ընտրության արդյունքները հաստատվում էին բուլղարական կառավարության կողմից։

Ինչպես Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում, այնպես էլ երկրի մյուս հայաշատ քաղաքներում ընտրված թաղական խորհուրդների և հոգաբարձությունների անդամները «ազգային գործերը» վարում էին հասարակական կարգով։ Նրանք վայելելով բուլղարական տեղական իշխանությունների վստահությունը, գործում էին, ելնելով իրենց դասակարգային շահերից։ Նրանք առաջ են քաշվել իրենց պատկանած կուսակցության կողմից և անցկացրել նրա քաղաքականությունը։

Պետք է նկատել, որ գաղութի ղեկավար մարմինների ընտրությունների ժամանակ արտահայտվում էր այն քաղաքական պայքարը, որը երբեմն սուր բնույթ էր ընդունում բուլղարահայ գաղութի աշխատավորական զանգվածների և ազգայական ու բուրժուանացիոնալիստական ներկայացուցիչների միջև։

Նեղ ավյալ շրջափուլում բուլղարական իշխանությունների գլուխը կանգնած էին լինում բուրժուական լիբերալ կուսակցությունների ներկայացուցիչները և թույլ էին տալիս հայկական գաղութում ընտրություններ անցկացնել, այդ ընտրությունների ժամանակ ստեղծվում էին տարբեր խմբավորումներ (ազգային ճակատ, ազգային բլոկ, ժողովրդական ճակատ և այլն), որոնք ձգտում էին իրենց ձեռքը վերցնել գաղութի ղեկավարությունը։

1903 թ. բուլղարահայ գաղութը կատարեց առաջին քայլը՝ սեփական թեմ և առաջնորդ ընտրելու ուղղությամբ[2]։ Բուլղարիայի 10 հայաշատ քաղաքների թաղական խորհուրդների ներկայացուցիչները հավաքվել էին Սոֆիայում՝ խորհրդաժողովը ընտրելու էր թեմական խորհուրդ և առաջնորդ։ Կոստանդնուպոլսի պատրիարքարանը առաջարկել էր երեք թեկնածուների ցուցակ՝ Ներսես եպիսկոպոս Ասլանյան, վարդապետ Աղավնունի և վարդապետ Վահան Տեր-Հակոբյան։ Վերջինս առաջնորդական հարցը կարգավորելու համար Կ. Պոլսից եկել էր Բուլղարիա։ Նա շտապում էր հարցին արագ լուծում տալ, քանի որ հրավիրվել էր բուլղարական Ազգային ժողովի հերթական նստաշրջանը, որտեղ ժողովի կողմից հաստատավելու էր բուլղարահայ առաջնորդարանի բյուջեն։

1903 թ. հոկտեմբերի 23-ին Սոֆիայի խորհրդաժողովը բուլղարահայ թեմի առաջնորդ ընտրեց Վահան Տեր-Հակոբյան վարդապետին։ Սակայն, քանի որ Կոստանդնուպոլսից առաջնորդի մեկնումը կապված էր նյութական և քաղաքական հարցերի հետ, Թուրքիայի բուլղարական դեսպանությունն անընդհատ ձգձգում էր վիզա տալու հարցը։

Բալկանյան պատերազմի նախօրեին բուլղարական կառավարությունը նկատի ունենալով հայերի ազգային ազատագրական պայքարը Թուրքիայի դեմ և հայ-բուլղարական համագործակցությունը, տվեց իր համաձայնությունը Բուլղարիայում ստեղծելու հայկական թեմ և առաջնորդարան՝ հետևյալ պայմաններով.

1. Առաջնորդարանը պետք է հաստատվեր երկրի մայրաքաղաք Սոֆիայում։

2. Բուլղարահայ թեմի առաջնորդը պետք է ընտրվեր հայկական թաղական խորհուրդների ներկայացուցիչների պատգամավորական ժողովում։

3. Բուլղարահայ թեմի առաջնորդը պետք է լիներ Բուլղարիայի քաղաքացի և զբաղվեր միայն եկեղեցական հարցերով։ Լինելով բուլղարահայ գաղութի պաշտոնական ներկայացուցիչը բուլղարական կառավարության առջև, նա իրավունք չուներ միջամտելու վարչական-կրթական հարցերին։ Ինչպես մյուս ազգային փոքրամասնությունների կրոնական առաջնորդների, այնպես էլ բուլղարահայ առաջնորդի համար ապահովվում էր աշխատավարձ՝ բուլղարական կառավարության կողմից[3]։

Այդ ժամանակ հնարավոր չեղավ առաջնորդի ընտրությունը, սակայն, պատերազմների ավարտին, Կոստանդնուպոլսի պատրիարքարանը, որպես

առաջնորդ ուղարկեց Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանին: Վերջինս հաստատվեց Պլովդիվ քաղաքում:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին թուրքական կառավարությունը պահանջեց, որ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանը վերադառնա Թուրքիա, քանի որ նա թուրքական քաղաքացիություն ուներ: Ռոդոսլովվի բուլղարական կառավարությունը պահանջը օրինական համարելով, առաջնորդին առաջարկեց վերադառնալ Թուրքիա: Վերջինս մերժեց և շարունակում էր մնալ Բուլղարիայում: Բուլղարական կառավարությունը ձերբակալեց նրան, որպեսզի հանձնի թուրքերին: Կառավարության այդ արարքին միջամտեց Բուլղարիայում գործող մակեդոնական հեղափոխական կազմակերպությունը: Ելնելով հայ-մակեդոնական համագործակցության շահերից, այդ կազմակերպության ղեկավարները թույլ չվեցին եպիսկոպոսին հանձնել թուրքերին (այդ տարիներին Բուլղարիայում գործող մակեդոնական կազմակերպությունը (ВМОРО) մեծ ազդեցություն ուներ կառավարող շրջաններում):

Տվյալ ժամանակաշրջանում բուլղարական կառավարությունը որոշեց երկրի ազգային փոքրամասնությունների ներքին ղեկավարման մարմինները ենթարկել ներքին գործերի մինիստրությանը: Դա նշանակում էր սահմանափակել ինքնավարության իրավունքները: Այդ որոշումը հակասում էր բուլղարական սահմանադրության 244-րդ հոդվածին: Ազգային փոքրամասնությունների առաջնորդները բողոքեցին դրա դեմ: Դուրյան եպիսկոպոսը, որպես թեմի առաջնորդ՝ չառարկեց, սակայն դժգոհ էր բուլղարահայ գաղութը: Սրվեցին փոխհարաբերությունները գաղութի և առաջնորդի միջև: Հրավիրվեց պատգամավորական ժողով և ուղարկվեց բողոքի նամակ պատրիարքարան, որը վերջացավ Դուրյան եպիսկոպոսի հրաժարականով: Վերջինս վերադարձավ Կոստանդնուպոլիս:

1920 թ. հետո Ալեքսանդր Ստամբուլիյսկու իշխանության տարիներին Բուլղարիայում գործող բոլոր քաղաքական կուսակցությունները, այդ թվում բուլղարահայ գաղութում գործող հայ քաղաքական կուսակցություններն ու հոսանքները լայն հնարավորություն ստացան լեգալ աշխատանք ծավալելու աշխատավորական շրջաններում:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո դաշնակցության ղեկավարները՝ «Հայաստանի հանրապետության» նախկին մինիստրներն ու զանազան «գործիչներն» ապաստանել էին Բուլղարիայում: Նրանց հաջողվեց բուլղարահայ գաղութում ստեղծել, այսպես կոչված, «Ազգային միության» մարմինը, որը հավակնություն ուներ դառնալու գաղութի ղեկավար մարմինը: Նրա կազմում գործում էին նաև այլ կազմա-

կերպությունների ներկայացուցիչներ, սակայն, քան էության, ղեկավարում էին դաշնակցության պարագլուխներ Ջարեհ Շահապիզը, Գարեգին Նժդեհը, Արմենակ Գասապյանը և ուրիշներ:

1921 թ. բուլղարահայ գաղութում տեղի ունեցան թաղական խորհուրդների և հոգաբարձությունների ընտրություններ: Բուլղարիայի բոլոր հայաշատ քաղաքներում այդ մարմիններում ընտրվեցին «Ազգային բլոկի» թեկնածուները: Ընտրություններից հետո սրվեցին փոխհարաբերությունները տեղական մարմինների և «Ազգային միության» միջև:

1921 թ. էջմիածնից բուլղարահայ թեմի առաջնորդ նշանակվեց Արսեն վարդապետ Վեհունին, որը Կոստանդնուպոլսի վրայով մեկնելու էր Բուլղարիա, գաղութում միասնություն և համերաշխություն հաստատելու համար: Հետագա քաղաքական դեպքերն ու վիզայի ուշացումը հնարավորություն չտվեցին Արսեն վարդապետին մեկնել Բուլղարիա: Մինչ այդ «Ազգային միության» կենտրոնական մարմինը բուլղարահայ գաղութում հավաքել էր 85000 լևա: Այդ գումարը ուղարկել էր Պարսկաստան՝ Հայաստանից փախած դաշնակցական գործիչներին օգնելու համար[4]: Այդ վերաղեկցեց գաղութի հայերին, որոնք պահանջեցին լուծարքի ենթարկել «Ազգային միություն» կոչված մարմինը:

1922 թ. մայիսի 25-ին Վառնայի հայկական եկեղեցու բակում տեղի ունեցավ համայնքի հայերի հրապարակային ժողովը, որն ընդունեց հետևյալ բանաձևը. «Այսօր 25 մայիսի 1922 թ. Վառնայի հայ հասարակայնությունը հրապարակային ժողովի մեջ միաձայնությամբ որոշեց բողոքել «Ազգային միություն» կենտրոնական վարչություն կոչվող ապօրինի մարմնի դեմ, որի պաշտոնականության շրջանը շատոնց վերջացած է, որը սակայն կցանկանա մնալ իր դիրքերում և հանուն պուլկարահայության պահանջել անհրաժեշտ վերջնանալու կապակցությամբ հաշվետվություն տալ և հետ քաշվիլ: Իր մոտը գտնված գումարները հատկացնելով ամբողջությամբ՝ Սովետական Հայաստանի սովատանջ եղբայրներուն»[5]:

Հայ կոմունիստները և գաղութի առաջադեմ ուժերը հանդես գալով միասնական ճակատով, 1922 թ. վերջին տապալեցին «Ազգային միությունը»: Մինչ այդ Գնել սրբազանի գլխավորությամբ Կոստանդնուպոլսից Բուլղարիա էր եկել՛Մի պատվիրակություն, որը շրջելով հայաշատ քաղաքները, միասնություն ու համերաշխություն էր քարոզում: Գնել եպիսկոպոսը կոչ էր անում օգնել Հայաստանի որբերին և նրանց փրկել սովից ու մահից:

1922 թ. հույն-թուրքական պատերազմի ավարտին և Կիլիկիայի ու Նիկոմիդիայի հայերի գաղթից հետո, Կոստանդնուպոլսի պատրիարքա-

ջանի ղեկավար դերն ու նշանակությունը սփյուռքի գաղութներում թուլացավ։ Արտաքին աշխարհում ստեղծվել էին հայկական այնպիսի մեծ գաղութներ, ինչպիսիք էին Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Հունաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի, Ֆրանսիայի գաղթօջախները, որոնց կապը խզվել էր Կոստանդնուպոլսի պատրիարքարանի հետ։ Վերջինս նրանց նկատմամբ չուներ ոչ մի իրավական ու բարոյական իրավունք, այդ գաղութների համար հոգևոր կենտրոն չէր։

1923 թ. հունիսի 9-ի ցանկովյան ֆաշիստական հեղաշրջումից և Սեպտեմբերյան ապստամբության (1923) պարտությունից հետո, չնայած հալածանքներին ու բռնություններին, հայ կոմունիստները և առաջադեմ ուժերը, Պլովդիվի համայնքի ղեկավարների նախաձեռնությամբ, ստեղծեցին հատուկ հանձնախումբ, որը մշակելու էր բուլղարահայ գաղութի ներքին ղեկավարման ծրագիր-կանոնադրությունը։ Բալկաններում ռումինահայ գաղութը մշակել էր ներքին ղեկավարման մարմիններ ընտրելու այնպիսի ձև, որն օրինակ ծառայեց նաև մյուս գաղութներին։ Բուլղարահայ գաղութում նախագիծը պատրաստող հանձնախմբի անդամներն էին Թագվոր և Ստեփան Հինդլյանները, Անդրեաս Հակոբյանը, Թագվոր Թագվորյանը և Հովհաննես Տևեճյանը[6]։ Հանձնախմբի անդամների մեծամասնությունը առաջադեմ հակադաշնակցական գործիչներ էին։ Գաղութին ուղղված նրանց դիմումում գրված էր. «Կազմակերպվիլ և համախմբվիլ գաղութի ղեկավար մարմնի շուրջը։ Ջմոռնալ նաև, որ կազմակերպվելեն հետո օգնել նորաստեղծ Խորհրդային Հայաստանին...։ Դեպի Խորհրդային Հայաստան պետք է հառին բոլորի աչքերը, որպես հայության միակ փրկության օջախը»[7]։ Ծրագիր-կանոնադրության նախագծի համաձայն գաղութի ղեկավարման բարձրագույն մարմինը թեմական խորհուրդն էր՝ իր առաջնորդարանով։ Բուլղարիայի բոլոր հայաշատ քաղաքներում գործելու էին թաղական խորհուրդներ և դպրոցական հոգաբարձություններ։ Առանձին թաղական խորհուրդներին կից գործելու էին դատաստանական ատյաններ, որոնք զբաղվելու էին ապահարզանների հարցերով՝ նախքան գործը բուլղարական դատարաններին հանձնելը։ Թաղական խորհուրդների գործունեության առանցքը կազմելու էին հետևյալ խնդիրները.

ա) Բուլղարիայի բոլոր հայաշատ կենտրոններում ստեղծել հայկական դպրոց-վարժարաններ, որտեղ հայ երեխաներն ու պատանիները մայրենի և բուլղարերեն լեզուներով ստանան տարրական կամ միջնակարգ կրթություն.

բ) Ղեկավարել եկեղեցական-կրոնական գործերն ու ապահովել նրանց բյուջեները.

գ) Համայնքի ներսում կարգավորել ամուսնական-ապահարզանների հարցերը դատաստանական ատյանների միջոցով, նախքան պետական դատարաններ ուղարկելը։

Հոգաբարձությունները հիմնականում զբաղվելու էին դպրոցի շենքի, ուսուցչական կազմի և բյուջեի ապահովման հարցերով։

Բուլղարահայերը ողջունեցին կենտրոնական ղեկավար մարմնի ստեղծման մասին Պլովդիվի հայերի նախաձեռնությունը։

1924 թ. օգոստոսի 10-ին Պլովդիվում հրավիրվեց պատգամավորական ժողով՝ քննարկելու համար Թագվոր Մ. Հինդլյանի գլխավորած հանձնաժողովի կազմած ծրագիր-կանոնադրությունը։ Ժողովում քննարկվեց և ընդունվեց հանձնախմբի կազմած ծրագիր-կանոնադրությունը՝ գաղութի ներքին ղեկավարման մարմինների ընտրության վերաբերյալ։ Ժողովում վեճեր առաջացան ղեկավար մարմիններում ընտրվողների և ընտրողների իրավունքների հարցի շուրջը և մեծամասնությունը կողմնակից էր ընտրելու և ընտրվելու իրավունք տալ 21 տարին լրացրած բոլոր հայերին։ Փոքրամասնության կազմող խումբը գտնում էր, որ ընտրելու և ընտրվելու իրավունք պետք է ունենան միայն բուլղարական քաղաքացիություն ունեցող հայերը, որը մերժվեց ժողովի կողմից։

Որոշվեց թաղական խորհուրդներ ընտրելու և ընտրվելու իրավունք տալ բոլոր հայերին՝ անկախ քաղաքացիության պատկանելությունից, իսկ հոգաբարձություններ ընտրելու, նրանց անդամ ընտրվելու իրավունք տալ միայն բուլղարական քաղաքացիություն ունեցողներին։

Գաղութի բարձրագույն մարմինն Ընդհանուր ժողովն էր, որին մասնակցելու էին առանձին քաղաքների ներկայացուցիչներ։ Պատգամավորներն ընտրվելու էին տեղերում՝ բոլորի մատակարարությամբ։ Ընդհանուր ժողովն ընտրում էր թեմական խորհուրդ, որի նստատեղին Սոֆիան էր։ Թեմի առաջնորդը նույնպես ընտրվում էր գաղութի ընդհանուր պատգամավորական ժողովի կողմից և առաջնորդարանի նստատեղին նույնպես լինելու էր Սոֆիայում։

Թեմական խորհրդին կից ընտրվում էր «դատաստանական ատյան», որը գործելու էր որպես բարձրագույն մարմին՝ ապահարզանների հարցերի լուծման ժամանակ։ Բոլոր թաղական խորհուրդները ցանկացան տեղերում ունենալ իրենց կից դատաստանական ատյաններ, սակայն դա մերժվեց ժողովի կողմից։ Որոշվեց նման մարմիններ ունենալ միայն չորս քաղաքներում (Սոֆիա, Պլովդիվ, Վառնա, Ռուսե), որտեղ ապահարզանների հարցերը նախնական քննության էին ենթարկվելու[8]։

Պլովդիվում կայացած պատգամավորական անդրանիկ ժողովն ընտ-

ցեց 7 հոգուց բաղկացած ժամանակավոր թեմական խորհուրդ։ Այն պարտավորվեց բուլղարական կառավարությանը վավերացնել տալ ծրագիր-կանոնադրությունը, որը բուլղարահայերի համար կդառնար օրինական գործող փաստաթուղթ։ Ծրագիր-կանոնադրությունը վավերացնելուց հետո պետք է հրավիրվեր պատգամավորական նոր ժողով և ընտրվեր մշտապես գործող թեմական խորհուրդ։ Այս բոլորը տեղերում իրականացնելու էին թաղական խորհուրդները և հոգաբարձությունները։ Առաջիններիը կարգավորելու էին կրոնական-եկեղեցական, վարչական, իսկ հոգաբարձությունները՝ դպրոցական-կրթական հարցերը[9]։ Թաղական խորհուրդներն ու հոգաբարձությունները գործելու էին համատեղ։ Պատգամավորական ժողովը միաձայն որոշում ընդունեց, որ ժամանակավոր թեմական խորհուրդն առայժմ առաջնորդվի ծրագիր-կանոնադրության նախագծով, մինչև բուլղարական կառավարության կողմից նրա վավերացումը։

Բուլղարահայ գաղութը, որպես կենտրոնական ղեկավար մարմին ստեղծելով ժամանակավոր թեմական խորհուրդը, գնահատելի քայլ կատարեց իր կազմակերպվածության և միասնության ամրապնդման ուղղությամբ։ Նրա նախագահ ընտրվեց ճարտարապետ Էմմանուիլ Ճերահովը, իսկ անդամներ՝ Արմենակ Հակոբյանը, Անդրեաս Հակոբյանը, Գարեգին Նժդեհը, Թագվոր Թագվորյանը, Ստեփան Փափազյանը, Գեվորգ Գույումճյանը։ Հետագայում Գարեգին Նժդեհը տեսնելով հակադաշնակցական մեծամասնությունը թեմական խորհրդում, հրաժարվեց նրա անդամը լինելուց։

Է. Ճերահովը ժամանակավոր թեմական խորհրդի ծրագիր-կանոնադրությունը հանձնեց Վառնայի ս. Սարգիս եկեղեցու ավագ քահանա Սարգիս Ղարիբյանին, որպեսզի նա որպես առաջնորդի տեղապահ, այն ներկայացնի Բուլղարիայի արտաքին գործերի մինիստրություն՝ հաստատման։ Սակայն վերջինս, դաշնակցականների դրդմամբ, երկու ամիս ձգձգում էր հարցի լուծումը, քանի որ Ժամանակավոր թեմական խորհրդի անդամներ էին ընտրվել հիմնականում հակադաշնակցական անհատներ։ Դաշնակցության ղեկավարներն ամեն կերպ աշխատում էին ձախողել գաղութում օրինական պատգամավորական ժողովի հրավիրումը և թեմական խորհրդի ընտրությունները։

1924 թ. դեկտեմբերի 17-ին ցանկովյան կառավարության արտաքին գործերի և դավանության մինիստրությունն իր № 322 հրամանով կարգադրում էր 1925 թ. հունվարի 26-ին բուլղարահայ գաղութում անցկացնել թաղական խորհուրդների ընտրություններ՝ միայն բուլղարական

քաղաքացիություն ունեցող հայերի մասնակցությամբ։ Այդ կարգադրությունը դաշնակցականների մեքենայությունների արդյունքն էր, որպեսզի ընտրություններին չմասնակցի տարագրված հայերի մեծամասնությունը։ Նման պարագայում ապահովվում էր դաշնակցական թեկնածուների ընտրությունը ինչպես տեղերում, այնպես էլ թեմական խորհրդում։

Ժամանակավոր թեմական խորհրդի նախագահ է. Ճերահովը բուլղարական կառավարության արտաքին գործերի և դավանության մինիստրությունից խնդրեց գրավոր բացատրություն տալ վերոհիշյալ կարգադրության վերաբերյալ։ Նրան պատասխանեցին, որ նախ անհրաժեշտ է ունենալ օրինական ընտրություններով ընտրված թաղական խորհուրդներ, որոնք հաստատեն գաղութի ներքին ղեկավարման ծրագիր-կանոնադրությունը, ապա ներկայացնել մինիստրության կից գործող «կրոնի տեսչության» հաստատմանը։ Հետևաբար անօրինական էին դառնում թե՛ Ժամանակավոր թեմական խորհուրդը և թե՛ ընդունված ծրագիր-կանոնադրությունը։ Թեմական խորհրդի նախագահը գրավոր բացատրություն ուղարկեց կարգադրության անհիմն լինելու մասին։ Այդ բացատրագրում ասված էր, որ թաղական խորհուրդների ընտրությունները անցկացնելը, ըստ բուլղարական սահմանադրության 40 և 42 հոդվածների, հայ առաքելական եկեղեցու իրավահաստության հարց է, ոչ ոք իրավունք չունի այդ խնդրում թելադրելու իր ցանկությունը[10]։ Այդ լրացումներն ու կարգադրությունները սահմանափակում էին բուլղարահայերի ինքնավարության ավանդական իրավունքները, որոնք բխում էին ցանկովյան ֆաշիստական իշխանության էությունից և դաշնակցության վարած հակաժողովրդական քաղաքականությունից։

Այդ միջոցին տեղի ունեցան կառավարության որոշած բուլղարահայ թաղական խորհուրդների ընտրությունները։ Ռեակցիայի պայմաններում ընտրված թաղական խորհուրդների անդամների մեծամասնությունը դաշնակցության ներկայացուցիչներ էին։ Այդ մեծամասնությունը հրավիրեց պատգամավորական ժողով և ընտրեց «Թեմական հանձնախումբ»։ Կյանքի կոչվեց երկրորդ թեմական մարմին։ Պառակտումների հետևանքով մոռացության մատնվեցին գաղութի կենսական հարցերը, հատկապես տարագրված հայերի բուլղարական քաղաքացիություն ստանալու ուղղությամբ տարվող աշխատանքները։ Միջկուսակցական վեճերի հետևանքով բուլղարահայերից շատերը չկարողացան ձեռք բերել բուլղարական քաղաքացիություն։ Նրանք բոլորը ստացան նանսենյան անձնագրեր և համարվում էին օտարահպատակներ։

Այդ նույն ժամանակամիջոցում էջմիածնի հոգևոր խորհուրդը բուլ-

ղարահայ գաղութի ներկայացուցչին հրավիրում էր ներկա լինել 1926 թ. սեպտեմբերի 26-ին էջմիածնում սուրբ մեռոնի օրհնության արարողությանը։ Այդ հարցը նույնպես դրական լուծում չստացավ վեճերի և պառակտումների հետևանքով, և գաղութի ներկայացուցիչը չկարողացավ մեկնել Սովետական Հայաստան[11]։

1926 թ. սկզբին «Ազգերի լիգայի» Սոֆիայի ներկայացուցիչ Գ. Սեբաքֆիմովը բուլղարահայ գաղութի ղեկավարներին հայտնեց նանսենյան անձնագրի ստացման կարգը, ըստ որի ձրի անձնագիր ստանալու իրավունք ունեին բոլոր անաշխատունակները, գործազուրկները ու չքավորները, պատերազմի հաշմանդամները, աշակերտները և ուսանողները։ Մնացած բոլոր հայերն անձնագիր ստանալու համար բուլղարական տեղական և նահանգային ոստիկանական մարմիններին մուծում էին որոշ գումար։ Դրանք տրվում էին մեկ տարի ժամկետով, սկսած 1926 թ. նոյեմբերի մեկից։ Բուլղարիայում այդպիսի անձնագրեր ստացան հայ ուսուցիչները։ Նրանք պայքարում էին բուլղարական քաղաքացիություն ստանալու համար, սակայն այդ հարցի լուծումը կապված էր հայկական գումարների հետ։ Այսպես, բուլղարական քաղաքացիություն ստանալու համար պետական դրամարկղը 6000 լևա մուծելուց հետո, յուրաքանչյուր դիմող պարտավոր էր կատարել նաև լրացուցիչ ծախսեր, որով ստացվում էր շուրջ 8610 լևա։ Գաղութում ծավալվող ներքին վեճերն ու պառակտումները, բուլղարական քաղաքացիություն ընդունելու կենսական հարցի լուծում չստանալը՝ հետագայում, հատկապես 1929—1934 թթ. ճգնաժամի և գործազրկության տարիներին պատճառ եղավ արտագաղթի և հազարավոր բուլղարահայերի հեռացան երկրից։

1926 թ. տապալվեց ցանկովյան ֆաշիստական դիկտատուրան։ Այն փոխարինվեց Լյապչևի «Դեմոկրատիչեսկի սգովորի» նոր կառավարությունով, որը որոշ ազատություններ տվեց մանրբուրժուական քաղաքական հոսանքներին, այդ թվում հայ ս. դ. հնչակյան և ռամկավար կուսակցություններին։

Այս պայմաններում, 1926 թ. ապրիլի 10-ին թաղական խորհուրդների մասնակցությամբ հրավիրվեց բուլղարահայ պատգամավորական ժողով՝ ժամանակավոր թեմական խորհրդի նախաձեռնությամբ, որը ընտրելու էր նոր, մշտական գործող թեմական խորհուրդ և առաջնորդ[12]։

Անցած ժամանակաշրջանում տեղի ունեցած դեպքերի և թեմական խորհրդի կատարած աշխատանքների մասին զեկուցեց Թագվոր Թագվորյանը։ Ժողովը սուր քննադատության ենթարկեց դաշնակցության «Թեմական հանձնախմբի» դավաճանական քաղաքականությունն ու գործունեությունը, պահանջեց, որ դաշնակցական «Թեմական հանձնախումբը» բոլոր փաստաթղթերն ու արխիվը հանձնի նորընտիր թեմական խորհրդին, որի կազմում պատգամավորական ժողովն ընտրեց էմանուիլ Ճերահովին, Կրոն Միքայելյանին, Թագվոր Թագվորյանին, Անդրեաս Հակոբյանին, Գրիգոր Զաքարյանին, Աբրահամ Գրիգորյանին և Մկրտիչ Ներսիսյանին։ Լրացուցիչ փոխարինող անդամներ ընտրվեցին Ստեփան Փափազյանը, Գևորգ Դուրումճյանը և Գրիգոր Ասլանյանը։ Բուլղարահայ թեմի առաջնորդ ընտրվեց Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանը (վերջինս Նիկոմիդիայի թեմի նախկին առաջնորդն էր, որ 1922 թ. Թուրքիայից գաղթել էր Բուլղարիա և ծառայում էր Ռուսեի ս. Աստվածածին եկեղեցում—Ջ. Դ.)։

1927 թ. դեկտեմբերի 25-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը հաստատեց նրա ընտրությունը, որից հետո բուլղարահայ գաղութը և թեմական խորհուրդը հրավիրեցին հերթական պատգամավորական ժողով և քննարկեցին թեմի առաջնորդի՝ բուլղարական իշխանությունների կողմից հաստատման հարցը[13]։ Բուլղարական կառավարությունը հաստատեց պատգամավորական ժողովում ընտրված թեմական խորհուրդը և թեմի առաջնորդին։ Թեմական խորհուրդը հիմնականում կազմված էր հակադաշնակցական բլոկի ներկայացուցիչներից՝ էմ. Ճերահովի նախագահությամբ։

1929 թ. և 1930 թ. սկզբին տեղի ունեցան բուլղարահայ հոգաբարձությունների և թաղական խորհուրդների ընտրություններ, իսկ 1930 թ. ապրիլի 6—7-ին՝ պատգամավորական ժողով, որը քննարկեց կաթողիկոսական ընտրությունների կապակցությամբ էջմիածին պատգամավորներ ուղարկելու հարցը։ Սակայն ներկայացուցիչներին հնարավոր չեղավ մեկնել, քանզի Բուլղարիայում չկար սովետական հյուպատոսարան, ուստի և վիզա ստանալն անհնարին էր։

Պառակտումների հետևանքով թեմական խորհրդի անդամների մեծ մասը հրաժարական տվեց։ Թեմի առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանը դիմեց բուլղարական կառավարությանը և հայտնեց այդ երևույթի մասին։ Նա խնդրեց նոր պատգամավորական ժողով հրավիրել և ընտրել օրինական թեմական խորհուրդ։ Արտաքին գործերի և դավանությունների մինիստրությունը նշանակեց երեք հոգուց բաղկացած թեմական խորհուրդ՝ Սոֆիայի հայտնի հայ առևտրական Գրիգոր Չաքարյանի գլխավորությամբ։

1931 թ. փետրվարի 9-ին Սոֆիայում հրավիրվեց արտահերթ թեմական պատգամավորական ժողով (15 թաղական խորհուրդների ներկայա-

ցուցիչներ՝ 20 ձայնի իրավունքով)։ Սոֆիան, Պլովդիվը, Վառնան, Ռուսեն ժողովին ուղարկեցին 2-ական պատգամավոր։ Արտահերթ ժողովին մասնակցում էին նաև նախկին թեմական խորհրդի այն անդամները, որոնք չէին հրաժարվել իրենց պարտականություններից։ Ժողովից բացակայում էր թեմի առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանը։ Նա չէր ճանաչում երեք հոգուց բաղկացած նշանակովի թեմական խորհուրդը, որը օրինական ձևով չէր ընտրված թաղական խորհուրդների կողմից։ Նորընտիր թեմական խորհուրդն ընտրվեց գաղութի երկու կողմերի՝ դաշնակցության և «Ազգային բլոկի» թեկնածուներից։ Նորընտիր թեմական խորհուրդը որոշում ընդունեց ամեն տարի հրավիրել թեմական պատգամավորական ժողով և ընտրել թեմական խորհուրդ։

1932 թ. թեմական խորհուրդը դիմեց արտաքին գործերի և դավանության մինիստրությանը՝ հերթական պատգամավորական ժողով հրավիրելու թույլտվություն ստանալու համար, սակայն մերժում ստացավ և լուծարքի ենթարկվեց։ Մինչ այդ մինիստրությունը նկատի ունենալով բուլղարահայ թեմի առաջնորդի առողջական վիճակը և տարիքը, նրան օգնական նշանակեց Գրիգոր քահանա Կարապետյանին[14]։

Արտաքին գործերի և դավանության մինիստրությունը լուծարքի ենթարկված թեմական խորհրդի փոխարեն Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանի նախագահությամբ նշանակեց երեք հոգուց բաղկացած թեմական խորհուրդ, որոնք դաշնակցության ներկայացուցիչներ էին։ Կառավարության այս միջոցառումն ու նոր թեմական խորհրդի նշանակումն արդյունք էր այն զրպարտչական նամակների և ամբաստանագրերի, որոնք առատորեն դաշնակցությունն ուղարկում էր բուլղարական կառավարությանը։

1932 թ. փետրվարի 29-ին արտաքին գործերի և դավանության մինիստրության № 1935 հրամանագրով հայկական գաղութի թաղական խորհուրդների ընտրություններին մասնակցելու էին բոլոր օտար քաղաքացիություն ունեցող հայերը, այդ թվում նաև նեյտրալ քաղաքացիություն ունեցողները[15]։

Բուլղարիայում առաջին անգամ լինելով անկաշկանդ, առանց խտրականության, փակ, գաղտնի քվեարկությամբ հայերը մասնակցելու էին թաղական խորհուրդների ընտրություններին։ Այդ տեղի ունեցավ «Նարոդեն բլոկի»[16] կառավարության ժամանակ։ Ապրիլի 3-ին տեղի ունեցան ընտրությունները և Պլովդիվի թաղական խորհուրդը գլխավորեցին «Ազգային բլոկի» կողմից ընտրված թեկնածուները։ Երկու ընտրական տեղամասերում ընտրություններին մասնակցեցին 1359 ընտրողներ (երբ ընտ-

րողների թիվը գերազանցում է 1000 մարդ, այդ դեպքում հաջորդ հազար ընտրողները քվեարկում են առանձին տեղամասում)։ 1243 ընտրողներ իրենց ձայնը տվել էին «Ազգային բլոկի» թեկնածուներին։ Թաղական խորհրդի անդամներ ընտրվեցին Գառնիկ Թյուբյունճյանը (կոմունիստ), Արամ Պողարյանը, Հովհաննես Գազազյանը, Հարություն Թելլալյանը, Սարգիս Սարգիսյանը, Պողոս Շիշմանյանը, Երվանդ Ադամյանը[17]։

Սոֆիայում նույնպես թաղական խորհրդի կազմը գլխավորեցին «Ազգային բլոկի» թեկնածուները։ Ատենապետ ընտրվեց Գրիգոր Ջաքարյանը, ատենադպիր՝ Պերճ Միքայելյանը, գանձապահ՝ Օնիկ Ասլանյանը։

Արդյունքներն այդպիսին էին նաև մյուս հայաշատ քաղաքներում։ Դաշնակցությունը պարտություն կրեց նաև 1932 թ. վերջին տեղի ունեցած հայկական դպրոցների հոգաբարձությունների ընտրությունների ժամանակ։

1933 թ. հունվարի 1-ին «Նարոդեն բլոկի» կառավարության արտաքին գործերի և դավանության մինիստր Նիկոլա Մուշանովը № 133 հրամանով նոր եռանդամ թեմական խորհուրդ նշանակեց (դոկտոր Բ. Յազմաճյան, Կարապետ Աճեմյան և Պերճ Միքայելյան)։ Նոր նշանակված թեմական խորհուրդը դիմեց մինիստրությանը՝ հերթական թեմական պատգամավորական ժողով հրավիրելու մասին։ Նույն թվականի օգոստոսի 6—7-ը Սոֆիայում հրավիրվեց թեմական պատգամավորական ժողով[18]։

Ժողովին հակիրճ զեկուցումով հանդես եկավ դոկտոր Բ. Յազմաճյանը և բացահայտեց նախկին թեմական խորհրդի դաշնակցական ներկայացուցիչների կատարած կեղծիքները։

Թեմական պատգամավորական ժողովը Մարտիկ Հովհաննիսյանի, Օնիկ Մ. Օվանեսովի և թեմի առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանի գործունեությունը համարեց վնասակար բուլղարահայ գաղութի համար։ Այդ երևորդությունը մոռանալով իր ժամանակավոր նշանակումը, միտումնավոր հետաձգել էր բուլղարական կառավարության որոշումը՝ 1933 թ. մայիսի 31-ին թեմական խորհրդի ընտրություններ անցկացնելու մասին։ Ելնելով թեմական խորհրդի վերը նշված ազգավնաս գործունեությունից, ժողովը որոշեց. ամբողջ գաղութի առջև պարսավանքի ենթարկել դաշնակցական թեմական խորհրդի անդամներին և մերժել ամեն մի գործունեություն, որը հակասում է հայ առաքելական եկեղեցու ժողովրդական ոգուն, իրավունքին ու դիրքին։

Պատգամավորական ժողովը, քննելով դաշնակցական թեմական եոյակի գործունեությունը, միաժամանակ ընտրեց ժամանակավոր թեմական հանձնախումբ, որը նախկին թեմական խորհրդից ընդունելու էր բոլոր փաստաթղթերն ու արխիվը։

Պատգամավորական ժողովի որոշումների մեջ կարևոր տեղ գրավեցին հետևյալ խնդիրների իրականացումը.

1. Գաղութի բոլոր հայերին մասնակից դարձնել թաղական խորհուրդների ընտրություններին, անկախ քաղաքացիական պատկանելությունից։

2. Նորընտիր թեմական խորհրդի գործունեության հիմնական խնդիրը լինի մատչելի միջոցներով բոլոր նանսենյան քաղաքացիությունն ունեցողներին՝ բուլղարական քաղաքացիություն ձեռքբերելու գործը։

3. Աշխատել բոլոր գործազուրկ հայերին աշխատանքի տեղավորել և աշխատանքի իրավունքի հավասար օրենքը տարածել նաև նանսենյան հայերի վրա։

4. Հարձր կանգնել կուսակցական վեճերից ու բախումներից և պաշտպանել հայ առաքելական եկեղեցու և գաղութի շահերը։

5. Բոլոր գումարները, որ նանսենյան հայերից հավաքվել են բուլղարական քաղաքացիություն ստանալու համար, դնել թեմական խորհրդի տնօրինության ներքո և այդ գումարներից ստացված տոկոսները հատկացնել թեմական խորհրդին։

6. Խնդրել բուլղարական կառավարությանը անպարտաճանաչ թաղական խորհուրդներին պարտադրել թեմական խորհրդին վճարել իրենց պարտքերը և շարունակել իրենց գործունեությունը։

7. Վերջնականապես մշակել և բուլղարական կառավարության վավերացմանը ներկայացնել գաղութի ներքին ղեկավարման ծրագիրն ու կանոնադրությունը, որը 1925 թ. գանվում էր արտաքին գործերի և դավանության մինիստրությունում։

Պատգամավորական ժողովը այդ որոշումներից հետո քննադատության ենթարկեց Շումենի թաղական խորհրդի գործունեությունը, որտեղ դաշնակցական պարագլուխները վաճառում էին հայկական եկեղեցու կալվածքն ու գույքը և չարաշահում ստացված գումարները։ Ժողովը որոշեց խնդրել բուլղարական տեղական իշխանություններին՝ արգելել այդ վաճառքը։

Ժողովը լուրջ ուշադրություն դարձրեց Պլովդիվի և Հասկովոյի հայ գործազուրկ բանվորների դիմումներին, որոշեց կազմել պատվիրակություն, որը աշխատանքի մինիստրության առջև միջնորդի՝ նրանց աշխատանքի տեղավորելու համար։

Պատգամավորական ժողովը որոշեց ընտրել թեմական խորհրդին կից նոր դատաստանական ատյան, որը վայելի գաղութի հարգանքն ու վստահությունը։

Թեմական խորհրդի ընտրությունների մասին ժողովի վերջին կետը վերաբերյալ կազմվեց ընտրական հանձնախումբ, բաղկացած երեք հոգուց՝ Գևորգ Մեսրոպ, Սարգիս Գարալյան և Հարություն Թելալյան, որոնք և անցկացրին թեմական խորհրդի ընտրությունները։

Փակ, գաղտնի քվեարկությամբ 13 պատգամավորների մասնակցությամբ թեմական խորհրդի անդամներ ընտրվեցին Գրիգոր Զաքարյանը, Պերճ Մխքայելյանը, դոկտոր Բ. Յազմաճյանը, Շերին Սուքիասյանը, Արտաշես Զաքարյանը, Կարապետ Վարդանյանը, Կարապետ Ամեմյանը։

Պատգամավորական ժողովում թեմի առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանը դիմում ներկայացրեց պաշտոնից հրաժարվելու մասին։

1933 թ. սեպտեմբերի 9-ին Բուլղարիայի արտաքին գործերի և դավանության մինիստրությունը հաստատեց նորընտիր թեմական խորհրդի կազմը։

1933 թ. սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ բուլղարահայերի արտահերթ թեմական պատգամավորական ժողով[19]։ Օրակարգում դրված էր երկու հարց.

1. Բուլղարահայ թեմի առաջնորդի փոխարինողի ընտրություն։

2. Բուլղարահայ գաղութի ներքին ղեկավարման կանոնադրության հաստատում։

Նկատի ունենալով Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանի տարիքը և ծանր հիվանդությունը, ժողովը որոշեց նրան ազատել և փոխարինող առաջարկեց Երվանդ եպիսկոպոս Փերտահճյանին։ Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ, թեմական խորհուրդը դոկտոր Բ. Յազմաճյանին հանձնարարեց անհրաժեշտ լրացումներ կատարել ծրագիր-կանոնադրության առանձին բաժիններում և 1934 թ. հունվարի 19-ին այն ներկայացնել հաստատման։

1934 թ. հունվարի մեկից բուլղարական կառավարությունը բուլղարահայ թեմի առաջնորդ հաստատեց Երվանդ եպիսկոպոս Փերտահճյանին[20]։

1934 թ. մայիսի 19-ին Բուլղարիայում տեղի ունեցավ պետական հեղաշրջում։ Իշխանությունն անցավ «Բոգդանական լբչալի» և «Զվենո» խմբի ձեռքը։ Սահմանափակվեցին նախկին կառավարության տված

աղատությունները։ Երկրում հաստատվեց ռազմաֆաշիստական դիկտատուրա։

Մինչ այդ էջմիածնի գերագույն հոգևոր խորհուրդը թեմի առաջնորդ Երվանդ եպիսկոպոս Փերատահճյանին ուղարկել էր կաթողիկոսական երկու կոնդակ, որտեղ ասված էր. «...Խորհուրդս վատահ է, որ թեմական խորհուրդը աշակից և գործակից կլինի նորընտիր առաջնորդին, հնարավորություն տալով նրան սրբությամբ կատարելու իր ծանր պարտականությունները և արդարացնելու բուլղարահայության և նորին սրբության հույսերն ու ակնկալությունները»[21]։

1934 թ. վերջին բուլղարահայ գաղութում արտակարգ խանդավառություն առաջացրեց էջմիածնի կաթողիկոսական պատվիրակ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի այցելությունը։

Բուլղարական կառավարությունը չեղյալ հայտարարեց 1934 թ. հունիսին ընտրված թաղական խորհուրդները, որոնց մեծ մասը «Ազգային բլոկի» ներկայացուցիչներ էին և ցանկալի չէին կառավարությանը։ Նույն թվականի դեկտեմբերին արգելվեցին նաև հայկական դպրոցների ընտրովի հոգաբարձությունները։ Դպրոցների ղեկավարման աշխատանքները հանձնարարվեցին թաղական խորհուրդների ատենապետներին, դպրոցի տնօրենին և հոգևոր ներկայացուցչին։

1935 թ. հունվարի մեկին բուլղարական «Զորա» թերթում լույս տեսավ կառավարության որոշումը՝ հայկական գաղութի թաղական խորհուրդների նշանակովի լինելու մասին։

Այսպիսով սահմանափակվեցին բոլոր ազգային փոքրամասնությունների, այդ թվում և բուլղարահայերի ներքին ինքնավարության իրավունքները և այդ դրությունը շարունակվեց մինչև 1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխության հաղթանակը։

1933 թ. Բուլղարիայում տնտեսական ճգնաժամի խորացման հետևանքով բուլղարահայ աշխատավոր զանգվածների գործազրկության մատնվելը, ստիպեցին թեմական խորհրդի անդամներին, թեմի առաջնորդին և փոխարինողին բազմիցս ներկայանալ զանազան մինիստրություններ և դիմումներ ներկայացնել նանսենյան քաղաքացիություն ունեցող հայերին աշխատանքի տեղավորելու և մատչելի վճարով բուլղարական քաղաքացիություն ստանալու համար։ Այդպիսի մի պատվիրակություն երվանդ արքեպիսկոպոս Փերատահճյանի գլխավորությամբ ներկայացավ Հանրային վերահսկողության գլխավոր տնօրեն Գ. Պոպզլատեվին։ Թեմի առաջնորդը մանրամասն լուսաբանեց հայ նանսենյան բանվորների, արհեստավորների և մանր առևտրականների տնտեսական ծանր

վիճակը։ Բուլղար բարձրաստիճան պաշտոնյան խոստացավ դրական լուծում տալ հայ փոքրամասնությանը հուզող հարցերին։ 1935 թ. մարտի 7-ի հրամանով ներքին գործերի մինիստր Կրում Կոլևը կարգադրեց դադարեցնել նանսենյան քաղաքացիության պատկանող հայ բանվորների ազատումը աշխատանքից[22]։

Անշուշտ այս ամենը ժամանակավոր բնույթ էր կրում, քանի որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի խորացման պայմաններում գործազրկության էին մատնվել նաև հազարավոր բուլղար աշխատավորներ։

1938 թ. բուլղարական կառավարության արտաքին գործերի և արդարադատության մինիստրությունների կարգադրությամբ 1939 թ. հունվարին նախատեսվեց բուլղարահայ գաղութում անցկացնել թաղական խորհուրդների ընտրություններ։ Կարգադրության մեջ շեշտված էր, որ ընտրություններին կմասնակցեն 21 տարին լրացրած բոլոր հայերը։ Օտար և նանսենյան քաղաքացիություն ունեցող քաղաքացիները մասնակցելու էին միայն ընտրելու իրավունքով։ Ընտրվելու իրավունք ունեին միայն բուլղարական քաղաքացիություն ունեցողները։ Կանայք ընտրություններին չէին մասնակցում։ Բուլղարական կառավարությունը հաստատեց նշանակովի թեմական խորհրդի կազմը՝ Օնիկ Հովհաննիսյան, դոկտոր Մ. Թահրթագրյան, Գրիգոր Զաքարյան, Արտաշես Զաքարյան և Ավետիս Ռումյան։ Միաժամանակ հրատարակվեց նոր կարգ՝ նանսենյան անձնագիր ստանալու մասին։ Ըստ նոր կարգի ամեն մի անձնավորություն աշխատանքի անցնելու դեպքում պետք է վճարեր հատուկ հարկ, որը կոչվում էր «Աշխատելու իրավունքի հարկ»։ Այս վերջին որոշումը մեծ դժգոհություն առաջացրեց աշխատանքի հավասար իրավունքների համար պայքարող բուլղարահայ աշխատավորների շրջաններում։ Մասսաների վրդովմունքը թեմական խորհրդին ստիպեց մամուլում բացատրություններ տալ բազմաթիվ պատվիրակությունների մասին, որոնք դիմել էին բուլղարական կառավարության տարբեր մինիստրություններ և հաստատություններ՝ հայ նանսենյան բանվորների ու ծառայողների համար աշխատանքի և քաղաքացիության հավասար իրավունքներ ձեռք բերելու նպատակով։ Պարզվում էր, որ 1932—1939 թթ. թեմական խորհրդի տարբեր պատվիրակություններ 13 անգամ ներկայացել էին պետական իշխանություններին, բայց ոչ մեկն էլ դրական պատասխան չէր ստացել[23]։

1938 թ. բուլղարական կառավարության արտաքին գործերի և դավանության մինիստրությունը թեմական խորհրդի միջոցով տեղերում

նշանակեց թաղական խորհուրդներ, առանց ընտրությունների։ Նույն թվականին թեմական խորհրդի կազմից հեռացան դաշնակցության ներկայացուցիչները։ Նրանք այն բացատրում էին նրանով, որ մի շարք հարցերի լուծման ժամանակ հաշվի չի առնվել իրենց կարծիքը։ Դա բացահայտ պրովոկացիա էր, որպեսզի ցրեն թեմական խորհուրդը և հետագայում ամբողջությամբ իրենց ձեռքը վերցնեն բուլղարահայերի ներքին ղեկավարման բարձրագույն մարմինը։

1935 թ. Կյոսեիվանովի՝ իշխանության գլուխն անցնելուց հետո Բուլղարիան ընթացավ բացահայտ ֆաշիստական ուղիով։ Այդ պայմաններում Բուլղարիայում իրենց գործունեությունը ակտիվացրին դաշնակցության և հատկապես նժդեհյան թևին պատկանող ղեկավարները։ Նրանք լայն պրոպագանդա ծավալեցին և առաջին հերթին զբաղարտում էին բուլղարահայ գաղութի թեմական խորհրդին և բոլոր առաջադեմ կազմակերպություններին։ Դաշնակցական ղեկավարները այդ անում էին բացահայտորեն, որպեսզի կազմակերպություններն ամբողջությամբ վերցնեն իրենց ձեռքը և այնտեղ «նոր կարգ ու կանոն» սահմանեն իրենց ցանկացած ձևով։ Նրանք չէին հանդուրժում, որ թեմական խորհուրդն անտարբեր էր դաշնակցության մի շարք նախաձեռնությունների նկատմամբ, հատկապես «Մայիսի 28-ի» տարեդարձը նշելու հարցում։

1939 թ. փետրվարի 2-ին Սոֆիայում տեղի ունեցավ թաղական խորհուրդների ներկայացուցիչների խորհրդաժողով։ Թեմական խորհուրդը որոշել էր այդ խորհրդաժողովը վերածել պատգամավորական թեմական ժողովի, սակայն բուլղարական կառավարության մի շարք սահմանափակումները թույլ չտվեցին այն իրականացնելու։ Այնուամենայնիվ խորհրդաժողովը ընդունեց մի շարք կարևոր որոշումներ.

1. Բուլղարական քաղաքացիություն ընդունելու համար բոլոր թաղական խորհուրդներին հանձնարարել կազմել 21 տարին լրացրած հայերի ցուցակներ։

2. Թաղական խորհուրդները պետք է կատարեն դինապարտ հայ երիտասարդների հաշվառում։

3. Յուրաքանչյուր հայ նանսենյան ընտանիքից գանձել 20 լևա՝ ընթացիկ ծախսերի համար։

Նույն խորհրդաժողովում առաջ քաշվեց նաև առաջնորդի հարցը, քանզի երվանդ արքեպիսկոպոս Փերտահճյանի մահից հետո (1937) առաջնորդական աթոռը թափուր էր մնացել։ Ժողովի նիստում թեմի առաջնորդի տեղապահ ընտրվեց Գրիգոր վարդապետ Կարապետյանը։ 1939 թ. մայիսի 4-ին № 124 հրամանագրով արտաքին գործերի և դա-

վանության մինիստրությունը հաստատեց տեղապահի ընտրությունը։ Նույն թվականի մայիսի 1-ին էջմիածնի Մայր աթոռը արդեն իսկ հաստատել էր Գրիգոր վարդապետ Կարապետյանին, որպես առաջնորդի տեղապահ[24]։

1940 թ. հունիսին էջմիածնի գերագույն հոգևոր խորհուրդը և Ամենայն հայոց հայրապետության տեղակալ տեր Գևորգ արքեպիսկոպոս Զորբեքյանը հեռագրով բուլղարահայ թեմի առաջնորդի տեղապահին հայտնել էր, որ 1940 թ. էջմիածնում ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության առիթով հրավիրվելու է համահայկական եկեղեցական խորհուրդ[25]։ Սակայն բուլղարահայ թեմական խորհրդի ֆինանսական ծանր վիճակը հնարավորություն չտվեց թեմական առաջնորդին մասնակցելու էջմիածնի կաթողիկոսական ընտրություններին։

Թաղական խորհուրդները տեղերում հրաժարվել էին միջոցներ հատկացնել թեմական խորհրդին։ Կարծես դադարել էր գործելուց բուլղարահայ գաղութի այս բարձրագույն մարմինը։ Թեմական խորհուրդը չկարողացավ լուծում տալ երկու հիմնական հարցերի, որոնք կենսական նշանակություն ունեին գաղութի աշխատավոր զանգվածների համար՝ աշխատանքի հավասար իրավունք և բուլղարական քաղաքացիություն նանսենյան հայերի համար։

1940 թ. բուլղարական կառավարության ներքին գործերի մինիստրության Սոֆիայի տնօրինությունը հայտնել էր, որ այսուհետև նանսենյան քաղաքացիության պատկանող հայերն իրենց անձնագրերը ստանալու են համաձայն ոստիկանության № 166 կարգադրության, որտեղ ասված էր, որ նանսենյան անձնագրերը տրվելու են ոչ թե «Ազգերի լիգայի» Սոֆիայի ներկայացուցչի միջոցով, այլ ոստիկանության տնօրինությունից։ Բոլոր նանսենյան քաղաքացիները պարտավոր էին վերաարձանագրվել մինչև 1940 թ. դեկտեմբերի 31-ը։ Նույնը վերաբերում էր նաև այն հայերին, որոնք դիմել և մուծել էին բուլղարական քաղաքացիություն ընդունելու համար պահանջված գումարները, սակայն դեռ չէին հաստատվել թագավորական հրովարտակով[26]։

1940 թ. դեկտեմբերի 20-ին բուլղարական կառավարության «Դերժավեն վեստնիկի» 288-րդ համարում հրապարակվեցին այն պայմանները, որոնց համաձայն նանսենյան քաղաքացիություն ունեցող հայերը կարող էին ստանալ բուլղարական քաղաքացիություն։ Բուլղարական քաղաքացիություն կարող էին ստանալ նանսենյան և օտար այն քաղաքացիները, որոնք առնվազն 20 տարի շարունակ բնակվել էին Բուլղարիայում։ Նախկին 600 լևայի փոխարեն այժմ ամեն մի անձ պարտավոր էր վճարել 20000

լևա և ներկայացնել դիմում, որի վրա փակցված լիներ 500 լևայի դրոշմանիշ: Դա մի հսկայական գումար էր, որի մուծելն անհնարին էր հայ աշխատավորի համար: Կառավարության այս որոշման 67-րդ հոդվածի համաձայն ռուս նանսենյան քաղաքացիներին հնարավորություն տրվեց մատչելի գումարով դառնալ բուլղարական քաղաքացիներ:

Բուլղարահայ թեմական խորհուրդը բազմաթիվ դիմումներով ջանաց հայերի համար էլ այդպիսի արտոնություն ստանալ և օգտվել 67-րդ հոդվածից, բայց բուլղարական կառավարությունը ընդառաջ չգնաց: Այդպիսի հնարավորություն տրվեց միայն չքավոր հայ ընտանիքներին, որոնց մի մասը ձրի, առանց ձևականությունների ստացավ բուլղարական քաղաքացիություն:

1940 թ. վերջին բուլղարահայերից նանսենյան քաղաքացիություն ունեին 25963 հոգի, 140 հոգի թուրքական քաղաքացիություն, 119՝ պարսկական, 43-ը՝ հունական: Այսպիսով 26270 հայեր համարվում էին օտար քաղաքացիներ[27]: Մնացած մոտավորապես 7000 հայերն ունեին բուլղարական քաղաքացիություն՝ բուլղարների հետ հավասար իրավունքներով:

1941 թ. մարտի 1-ին Բ. Ցիլովի ֆաշիստական կառավարությունը ժողովրդի կամքին հակառակ, Վիեննայում ստորագրեց Բուլղարիան հիտլերականների ռազմական մեքենայի կցորդը դարձնելու մասին համաձայնագիր: 1941 թ. մարտի 1-ին գերմանաֆաշիստական զորքերը մտան Բուլղարիա:

Բուլղարահայ թեմական խորհուրդը, որի կազմում էին հայ բուրժուազիայի և դաշնակցության ներկայացուցիչները, գաղութի առջև հանդես եկավ բուլղարական կառավարության ներքին և արտաքին քաղաքականության հետ համերաշխ լինելու և պետության հանդեպ «նվիրական պարտականությունները» ամենայն պարտաճանաչությամբ կատարելու կոչով[28]: Դաշնակցության նժդեհյան թևը[29] ձգտում էր թեմական խորհուրդն ամբողջությամբ իր ձեռքը վերցնել, այս անգամ պալքարի սլաքը ուղղելով թեմի առաջնորդի տեղապահ Գրիգոր վարդապետ Կարապետյանի դեմ:

Նժդեհականները միաժամանակ իրենց կուսակցական մամուլի, հասարակական, մշակութային, սպորտային կազմակերպությունների միջոցով սկսեցին լայն պրոպագանդա՝ բուլղարահայ երիտասարդներից կամավորական լեգիոն կազմակերպելու և ՍՍՀՄ-ի դեմ ուղարկելու համար: Այս դավաճանական ակտը էլ ավելի հրահրեց բուլղարահայ աշխատավորների դայրույթը: Հայ կոմունիստներն ու ռեմսիստները պայքարի դուրս եկան նժդեհականների վարած ազգադավ քաղաքականության դեմ:

1942 թ. Բուլղարիայի ռազմական դրությունը և պարբերաբար տեղի ունեցող զորակոչերը բացասաբար անդրադարձան հայ մշակութային կյանքի վրա: Թաղական խորհուրդներն ու դպրոցական հոգաբարձությունները դժվարանում էին ապահովել դպրոցական ծախսերը: Բուլղարահայ թեմական խորհրդի դանձանակը դատարկ էր՝ տեղերից գումարներ չհատկացնելու պատճառով: Թեմական խորհուրդը դիմեց բուլղարական կառավարությանը՝ վարչական միջոցներ կիրառել թաղական խորհուրդների նկատմամբ իրենց պարտքերը վճարելու համար (թաղական խորհուրդներն իրենց եկամուտների որոշ տոկոսը հատկացնում էին թեմական խորհրդին և առաջնորդարանին):

Բուլղարական կառավարությունը թեմական խորհրդից և թաղական խորհուրդներից պահանջեց կազմել տարեկան բյուջե և եկամուտների ու ծախսերի խիստ հաշվառում կատարել: Թաղական խորհուրդներն իրենց հերթին խիստ հսկողություն սահմանեցին եկեղեցական եկամուտների վրա: Առանձին հաշվառման մատյաններ կազմվեցին «Աղքատախնամ», «Բարեսիրաց» և այլ կազմակերպությունների ծախսերի համար: Քանդի բուլղարական կառավարությունը երկրում հայտարարելով ռազմական դրություն՝ ձգտում էր խիստ սահմանափակումներ մտցնել սոցիալական և կրթության բնագավառներին հատկացվող գումարներին: Իսկ բուլղարահայ գաղութում դաշնակցության գլխավորությամբ ստեղծված զանազան «գիության խաչերի» և «համահայկական միությունների» միջոցով տեղերում թաղական խորհուրդներից ու դպրոցական հոգաբարձություններից ստացված դրամական միջոցները հատկացվում էին կուսակցական նպատակների համար: Այդ նույնը դաշնակցությունը կատարում էր նաև թեմական խորհրդի տրամադրության տակ եղած գումարների հետ: Մոռացության մատնվեցին բուլղարահայ գաղութի աշխատավորական զանգվածների կենսական հարցերը: Բուլղարական քաղաքացիության հարցը չլուծվելու պատճառով, այժմ բուլղարահայ նանսենյան քաղաքացիները (21 տարեկանից 45-ը լրացրած տղամարդիկ) զորակոչվում էին պարտադիր ռազմական, շինարարական աշխատանքների: Այդ պարբերաբար անվճար զորակոչումների հետևանքով թշվառության մատնվեցին հազարավոր բանվորական ընտանիքներ:

1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխությունը լուծեց բուլղարահայ գաղութի բոլոր քաղաքացիական հարցերը, որոնք տասնամյակներ շարունակ առկախ էին մնում բուլղարական բուրժուական իշխանությունների անտարբերության պատճառով:

2. ԳԱՂՈՒԹԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա. Հայրենակցական միություններ

XIX դարի վերջից մինչև առաջին համաշխարհային և հույն-թուրքական պատերազմները Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի տարբեր վիլայեթների երբեմնի շեն ու բարգավաճ հայաշատ քաղաքների, գյուղերի եղեռնից փրկված հազարավոր հայեր հանգրվանեցին Մերձավոր Արևելքի, Եվրոպայի, Ամերիկայի ու Աֆրիկայի զանազան երկրներում։

Սփյուռքի նոր գաղութներում հայ գաղթականների շրջաններում հիմնվեցին հայրենակցական միություններ, որոնց հիմնական նպատակն էր ջարդերից փրկված հայրենակիցների որոնումն ու համախմբումը, որբերին ու այրիներին օգնելն ու խնամելը, հետագայում նաև նրանց ներգաղթը դեպի մայր Հայրենիք՝ Սովետական Հայաստան կազմակերպելը։

Բուլղարահայ գաղութում առաջին հայրենակցական միությունը հիմնվեց 1885 թ. Վառնայում՝ Կարապետ Փափազյանի նախաձեռնությամբ։ Վառնայի օրինակով նման միություններ ստեղծվեցին նաև Ռուսեում, Շումենում և այլ տեղերում, որոնք գոյատևեցին մինչև XIX դարի վերջը։ Այս հայրենակցական միությունները հիմնված էին լայն, համահայկական նպատակներով. Հայաստանի պետականության վերականգնում և բոլոր հայերի համախմբումը մայր Հայրենիքում։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծված հայրենակցական միությունները տարբերվում էին իրենց նախորդներից և գործում ավելի նեղ շրջանակներում։ Բոլորն ունեին նույն ծրագիր-կանոնադրությունը և տարածվեցին սփյուռքի բոլոր գաղթօջախներում։

Բուլղարահայ գաղութում նրանց ստեղծմանը օժանդակում էր բուլղարական կառավարությունը (հատկապես Ալեքսանդր Ստամբոլիյսկու իշխանության ժամանակ), քանի որ այդ միությունները ծառայում էին իրենց տարագրված եղբայրներին նյութական օգնություն ցույց տալու գործին։

1923—1926 թթ. ցանկովյան ֆաշիստական կառավարությունը չվերացրեց մի շարք հայրենակցական միությունների գործունեությունը։ Չնայած դրան, նրանք շարունակում էին գործել։ Ցանկովյան դիկտատուրայի տապալումից հետո այդ կազմակերպությունները կրկին ընդլայնեցին իրենց գործունեությունը։

Ինչպես բոլոր հասարակական կազմակերպությունները, այնպես էլ հայրենակցական միությունները բուլղարահայ գաղութում չվրիպեցին դաշնակցության տեսադաշտից։ Այդ կուսակցությունը ջանք էր թափում

հայրենակցական միությունների մեջ տարածել ոչ միայն իր քաղաքական ու բարոյական ազդեցությունը, այլև իր նեղ կուսակցական նպատակների համար օգտագործել նրանց դրամական միջոցները, որը ցայտուն կերպով դրսևորվեց ռեակցիայի տարիներին։ Ցոցանկովյան ժամանակաշրջանում բուլղարահայ հայրենակցական միություններն ընտրեցին նոր վարչություններ և այնտեղից դուրս մղեցին դաշնակցության ներկայացուցիչներին։ Նրանք նոր ոգևորությամբ լծվեցին հայապահպանման գործին, և համաշխարհային անտեսական ճգնաժամի տարիներին հավաքեցին զգալի գումարներ՝ փոխօգնության նպատակով։ Նրանք գործոն մասնակցություն բերեցին գաղութի հասարակական-քաղաքական կյանքում։ Հայրենակցական միություններն իրենց վարչությունների ղեկավարությամբ լայն գործունեություն ծավալեցին թեմական, թաղական և հոգաբարձությունների ընտրությունների ժամանակ։

Բուլղարահայ հայրենակցական միությունների վարչությունների մեծ մասը գտնվում էր Պլովդիվում։ Սակայն մի շարք միություններ ստեղծվեցին նաև Սոֆիայում, Ռուսեում, Բուրգասում, Հասկովոյում և այլուր, որտեղ համախմբված ապրում էին զգալի թվով համաերկրացիներ։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո բուլղարահայ գաղութում առաջին հայրենակցական միությունը «Դարանաղյաց Կամախ-Սեպուհ» կազմակերպությունն էր։ Այն հիմնադրվեց Սոֆիայում և գոյատևեց մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը։ Բուլղարական կառավարությունը հաստատել էր այդ կազմակերպության գործունեությունը 1939 թ., երբ այն ուներ 80 անդամ և 5000 լևա տարեկան բյուջե։ Միության եկամուտների հիմնական աղբյուրներն էին անդամավճարները, նվիրատվությունները և զանազան միջոցառումներ (թատերական ներկայացումներ, պարեկեսություններ, վիճակախաղեր և այլն)։

Միությունը սերտ կապերի մեջ էր բուլղարահայ մյուս հայրենակցական միությունների հետ։ Այն միաժամանակ ձգտում էր կապվել սփյուռքում գործող քույր միությունների և «Դարանաղյաց Սեպուհ-Կամախ» ԱՄՆ-ում գտնվող կենտրոնի հետ՝ միասնական ղեկավարություն ստեղծելու համար։ Սակայն վարչությունը տեղեկանալով, որ սփյուռքի մի շարք կազմակերպությունների ղեկավարները չարաշահել են միութենական գումարները, որոշում ընդունեց գործել ինքնուրույն[30]։ «Դարանաղյաց Սեպուհ-Կամախ» հայրենակցական միության վարչությունը հաշվի առնելով Բուլղարիայի քաղաքական բարդ իրադրությունը, որպես անձեռնմխելի ֆոնդ առանձնացրեց 8000 լևա։

1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխությունից հետո,

նրբ բուլղարահայ գաղութում կյանք առավ «Երևան» առաջադիմական միությունը, «Դարանաղյաց Կամախ-Սեպուհ» հայրենակցական միությունը (ինչպես և բոլոր հայրենակցական միությունները), իր ամբողջ գույքն ու ունեցվածքը հանձնեց «Երևան» միությանը, իսկ դրամական միջոցները հատկացրեց ներգաղթի ֆոնդին։

1937 թ. Սոֆիայում գործում էր «Տարոն-Տուրուբերան» հայրենակցական միության կենտրոնական վարչությունը։ Միության վարչությունը Գարեգին Նժդեհի գլխավորությամբ ուներ իր օրգանը՝ «Տարոնի արծիվ» ամսաթերթը, որի էջերում լույս էին տեսնում նացիոնալիզմով ու հակասովետիզմով ներծծված հոդվածներ։ Այս միությունը մեկ տարվա կյանք ունեցավ։

Պլովդիվում գործել են բազմաթիվ հայրենակցական միությունների կենտրոնական վարչություններ։ Դրանցից էին. «Մամիկոնյան», «Արշակունյաց», «Պետրոս Դուրյան», «Արևելք», «Հովակիմյան», «Նիկիա», «Ռազմիկ», «Վասպուրական», «Սևեռքերիմ», «Աշոտյան» «Մնձուր», «Բյութանիա», «Արարատ», «Մարմարա», «Հայկազյան» և այլ միություններ։ Նշված հայրենակցական միություններն ունեին իրենց մասնաճյուղերը նաև հայաշատ մյուս քաղաքներում։ Դրանց մեծ մասը հիմնադրվեց 1928 թ. երկրաշարժից հետո և գոյատևեց մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը։

Մալգարացիների «Մամիկոնյան» միությունը, որը հիմնադրվել էր 1919 թ., հսկայական գործունեություն ծավալեց համաքաղաքացիների շրջանում։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո միությունը Բուլղարիայում ստեղծեց հատուկ հանձնախումբ, որը մեկնեց Մալգարա և տեղում նյութական օգնություն կազմակերպեց իրենց օջախները վերադարձած հայրենակիցների համար։ Հանձնախումբը որոնեց և միջոցների անապատներից հայրենի քաղաք վերադարձրեց հարյուրավոր որբեր ու այրիներ։

1922 թ. Թուրքիայից գաղթած մալգարացիների «Մամիկոնյան» միությունը հատուկ ֆոնդ ստեղծեց և գումարներ հավաքեց՝ Սովետական Հայաստանում նոր Մալգարա ավան կառուցելու համար։ Սակայն միության ղեկավարությունը, որտեղ դաշնակցության ներկայացուցիչները մեծամասնություն էին կազմում, գումարները ծախսեց կուսակցական նպատակների համար։ Միության ընդհանուր ժողովում սուր քննադատության ենթարկվեց դաշնակցական վարչությունը՝ նրա վարած հակահայանպաստան քաղաքականությունը և 1929 թ. ընտրվեց նոր վարչություն։ «Մամիկոնյան» միությունը կարողացավ տասնյակ մալգարացի ընտանիքներ

ներգրավել Բուլղարիայից Սովետական Հայաստան ներգաղթող առաջին քարավանի կազմում։ Ներգաղթի ֆոնդին հատկացրեց 40000 լևա և իր միջոցներով կազմակերպեց մետաղագործական արտել՝ համապատասխան գործիքներով ու սարքավորումներով։ Այդ ամենը 1932 թ. քարավանով փոխադրվեց մայր Հայրենիք։

1934 թ. «Մամիկոնյան» հայրենակցական միության անդամները կազմակերպեցին վարկային կոոպերատիվ բանկ, որը բուլղարական ժողովրդական կոոպերատիվ բանկերի միության անդամ դարձավ։ Այն կոչվեց «Թրակիա» կոոպերատիվ բանկ և վարկեր էր բաց թողնում հիմնականում հայ արհեստավորներին, ծառայողներին ու բանվորներին[31]։

1919 թ. ապրիլի 30-ին շապինգարահիսարցիների նախաձեռնությամբ Պլովդիվում ստեղծվեց «Ռազմիկ» հայրենակցական միությունը։ Այն զգալի աշխատանք է կատարել համաքաղաքացիներին օգնելու գործում։ Իր գոյության 20 տարիների ընթացքում միությունը կարիքավոր համաքաղաքացիներին բաժանել է 145000 լևա, իսկ 1932 թ. 7000 լևա է մուծել ներգաղթի ֆոնդին։ Զանազան միջոցառումներից հավաքված գումարները հատկացրել են Հայաստանի վերականգնման ու շինարարական աշխատանքի, համաքաղաքացի ընտանիքների երեխաների ուսման թոշակի և այլ նպատակների համար։ Միությունը գոյատևել է մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը։

1924 թ. մարտի 14-ին Պլովդիվում հիմնադրվեց սելոզցիների «Արևվելք» հայրենակցական միության մասնաճյուղը, որը մասնաճյուղեր ուներ նաև Հունաստանում և Ռումինիայում։ Միության կենտրոնը գտնվում էր Փարիզում։

Բուլղարիայի սելոզցիների մեծ մասը հաստատվել էր Պլովդիվ քաղաքում։ Միությունը ի վիճակի չէր համագյուղացի կարիքավորներին նյութական օգնություն ցույց տալու, քանի որ նրանց մեծ մասը, ի տարբերություն Արևելյան Թրակիայի քաղաքներից գաղթած հայերի, կատարյալ ընչազուրկներ էին։

Սելոզցիների «Արևելք» հայրենակցական միությունն ուներ իր «Քնար» թատերախումբը, որը պատմական թեմաներով ներկայացումներ էր տալիս։ Ներկայացումներից ստացված գումարների մեծ մասը հատկացվում էր Պլովդիվի հայկական ազգային դպրոցի բյուջեին[32]։

Գաղութում Բութանիայի շրջաններից գաղթած հայերը համախմբվեցին «Բյութանիա» միության շարքերում։ Ադրիանուպոլսեցիները հիմնեցին «Արշակունյաց» հայրենակցական միությունը, կոստանդնուպոլսեցիները՝ «Պետրոս Դուրյան», որի կենտրոնական վարչությունը գտնվում էր

Սոֆիայում։ Միությունն ուներ 80 անդամներ՝ հիմնականում կոստանդնուպոլսեցիներ և շրջակա բնակատեղիներից գաղթածներ։ Այն աչքի էր ընկնում իր կազմակերպվածությամբ, ձեռնարկում էր գրական-գեղարվեստական միջոցառումներ, նշում արևմտահայ գրականության ու արվեստի ներկայացուցիչների հոբելյաններ, հրավիրում բուլղար և օտար պաշտոնական անձանց՝ գիտնականներ, արվեստի և գրականության գործիչներ։

Բուլղարահայ գաղութում գործում էր «Կովկասահայերի եղբայրություն» հայրենակցական միությունը։ Նրա գործունեության հիմնական նպատակը հայրենակիցներին աշխատանքի տեղավորելն ու նրանց համար հողամասեր ձեռք բերելն էր։ Այդ հողակտորները մշակում էին միության անդամները և եկամուտների որոշ տոկոսը հատկացնում միության բյուջեին։ Այս գեղեցիկ նախաձեռնությունը, սակայն, խափանվեց համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով։ Հետագայում միության անդամներից շատերը արտագաղթեցին այլ երկրներ[33]։

Բուրգաս քաղաքում հիմնադրվել էր մշեցիների «Տարոն-Տուրուբերան» հայրենակցական միությունը։ Նրա անդամները հիմնականում նավահանգստում աշխատող բանվորներ էին։ Այստեղ գործում էր նաև ռոդոստոցիների «Հովակիմյան» հայրենակցական միությունը։ Նրա կենտրոնական վարչությունն իր շուրջն էր համախմբել մոտավորապես 50—60 անդամ և ուներ իր մասնաճյուղերը Հայաշատ մյուս քաղաքներում։ Այս կազմակերպությունն աշխույժ գործունեություն ծավալեց բուլղարահայերի 1933 թ. ներգաղթի ժամանակ։

Հասկովո քաղաքում գործում էր ենիջեցիների «Ողիմպիա» հայրենակցական միությունը, որը 1932 թ. Հայաստանի բնակարանային շինարարության ֆոնդին հատկացրեց 5000 լևա[34]։

Ռուսեում գտնվում էր «Տարոն-Սալնձոր» հայրենակցական միության կենտրոնական վարչությունը։ Նրա շարքերում համախմբվել էին ջերահոգիներ, ենիջեցիներ, որոնք համարվում էին համաերկրացիներ։

Վառնայում գործում էր բիւնեչիկցիների, էսկիշեհիրցիների և քյոթահիացիների «Հայկազյան» հայրենակցական միությունը, որը նույնպես 5000 լևա հատկացրեց ներգաղթի ֆոնդին և համաերկրացիների շրջանում աշխատանք տարավ Հայաստան ներգաղթելու համար։

Բուլղարահայ հայրենակցական միությունները կյանքի կոչվեցին այնպիսի ժամանակաշրջանում, երբ Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի տարբեր վիլայեթներից հազարավոր հայեր գաղթել էին աշխարհի տարբեր երկրներ։ Կատարելով հայապահպանման ուղղությամբ դժվարին

աշխատանք, նրանք ամուր կապ ստեղծեցին նաև մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ, իրենց ավանդը ներդնելով նրա տնտեսական վերաշինության գործին։

Բուլղարահայ գաղութում հայրենակցական միությունները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միացվեցին «Երևան» առաջադիմական կազմակերպության մեջ։

բ. «Որբախնամ միություններ» և «Աղբատախնամ մարմիններ»

Սուլթանական Թուրքիայի կազմակերպած հայկական կոտորածներն ու հալածանքները հազարավոր հայերի ստիպեցին թողնել հայրենի օջախները և ապաստան փնտրել Օսմանյան կայսրության սահմաններից դուրս, աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում նաև Բուլղարիայում։ Նրանց մեջ կային հազարավոր որբեր ու այրիներ։

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքական իթթիհատական կառավարությունը շարունակեց համիդյան հայաջինջ քաղաքականությունը։ Արևմտյան Հայաստանը և Անատոլիայի արևմտյան վիլայեթները դատարկվում էին հայերից։ Սարսափելի եղեռնից հետո հայերի վերադարձած բեկորները 1922 թ. հույն-թուրքական պատերազմի հետևանքով ստիպված եղան դարձյալ դիմելու փախուստի և հեռացան Թուրքիայից։

Որբերին հավաքելու և խնամելու փութացին հայ և օտար բարեխթաց, որբախնամ ընկերություններն ու միությունները։ Հունաստանի, Ֆրանսիայի, Բուլղարիայի, Ռումինիայի և Անդրկովկասի որբանոցներում կենտրոնացան հազարավոր անապաստան որբեր։

1896 թ. Բուլղարիայի Վառնա, Ռուսե, Պազարջիկ, Սլիվեն, Շումեն, Սոֆիա և Պլովդիվ քաղաքներում կազմակերպվել էին զանազան որբախնամ ընկերություններ, որոնք իրենց խնամքի տակ էին վերցրել որբերին ու այրիներին։

1912 թ. բուլղարահայ գաղութում ստեղծվեց «Կարմիր խաչի» մասնաճյուղը, որտեղ հիմնականում գործում էին կանայք։ Այդ միության նպատակն էր 100 որբերի համար կառուցել հանրակացարան։ 1919 թ. վերջին բուլղարահայ «Կարմիր խաչ» միությունը կազմակերպեց հատուկ հիվանդանոց և իր միջոցներով վարձած նավով Սև ծովի վրայով ուղարկեց Հայաստան։ Սակայն հիվանդանոցն իր ողջ անձնակազմով (որը կազմված էր հայերից և բուլղարներից) Տրապիզոնի նավահանգստում զոհ դարձավ թուրքական բարբարոսներին։

Սոֆիայում գործող «Հայուհիների որբախնամ միությունը» ձգտում

էր համանման միություններ ստեղծել նաև Բուլղարիայի մյուս քաղաքներում։ Այդ նպատակով Վառնայում 1918 թ. հոկտեմբերի 11-ին հրավիրվեց որբախնամ միությունների խորհրդաժողով, որտեղ որոշվեց նաև 50 որբերի համար հանրակացարան կառուցել։ Մասնաճյուղեր ստեղծվեցին նաև Ռուսեում, Վառնայում, Շումենում, Սլիվենում։ Պլովդիվում այդ ժամանակ գործում էր «Տիկնաց խնամակալություն» որբախնամ միությունը, որն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայկական ազգային վարժարանին կից ստեղծել էր ձրի սեղանատուն (ճաշարան)՝ չքավոր հայ ընտանիքների երեխաների համար։ Կազմակերպության վարչությունն առաջարկեց դպրոցին կից կազմակերպել հանրակացարան՝ 50 որբ երեխաների համար։ Միությունն առանձին որբ երեխաների հանձնում էր ունևոր հայերի խնամքին և հետևում նրանց դաստիարակությանն և ուսումնառությանը։

1919 թ. նոյեմբերի 28-ին Սոֆիայում հրավիրվեց բուլղարահայ որբախնամ միությունների հաջորդ խորհրդաժողովը։ Պատգամավորներ էին եկել հինգ խոշոր քաղաքներից։ Խորհրդաժողովին հրավիրվել էին հայ քաղաքական կուսակցությունների՝ հնչակյանների, ռամկավար-ազատականների, դաշնակցության և հայ կոմունիստների ներկայացուցիչները։ Խորհրդաժողովը որոշեց, որ գաղութը հանձն առնի 300 հայ որբերի խնամքը, որոնք Հունաստանից գալու էին Բուլղարիա։

1921 թ. հուլիս-օգոստոս ամիսներին հնչակյանների, ռամկավարների և հայ կոմունիստների նախաձեռնությամբ Բուլղարիայի քաղաքներում դրամական միջոցներ հավաքվեցին Հայաստանի որբերի համար։ Դաշնակցությունը բոյկոտի ենթարկեց այդ ազգանվեր նախաձեռնությունը և առաջ քաշեց «Օգնենք հերոս Զանգեզուրին» լոզունգը։ Գաղութի աշխատավորները, սակայն, գիտակցելով Սովետական Հայաստանին օգնելու անհրաժեշտությունը, անդրդվելի մնացին իրենց որոշման մեջ։ Պլովդիվում հրավիրված ժողովում կոմունիստ Գրիգոր Շիշմանյանը և փաստաբան-հրապարակախոս Ստեփան Հինդլյանը մերկացրին դաշնակցության ազգադավ գործունեությունը[35]։ Պլովդիվում հավաքված 140000 լևա օգնությունը Փարիզի հայ բարեգործական ընդհանուր միության կենտրոնի միջոցով հատկացվեց Հայաստանի որբերին[36]։

1923 թ. դեկտեմբերի 22-ին Հունաստանից 100 որբ հայ աղջիկներ բերվեցին Բուլղարիա։ Պլովդիվի «Որբախնամ միության» ներկայացուցիչները և «Դաղթականական հանձնախմբի» անդամները 60 որբերին հանձնեցին հայ ընտանիքներին։ 40 աղջիկներ տեղավորեցին հանրակացարանում, որտեղից աստիճանաբար նույնպես հանձնվեցին հայ ընտանիքների խնամքին։

Ժամանակի ընթացքում «Որբախնամ միությունը» բոլորին աշխատանքի տեղավորեց։ 1927 թ. այդ միությունը դադարեց գործելուց։ Նրա դրամարկղում մնացել էր 50000 լևա, որը հատկացվեց Շիրակի երկրաշարժից տուժողների ֆոնդին[37]։

Բուլղարահայ գաղութում «Որբախնամ միություններին» փոխարինելու եկան առանձին քաղաքներում հայկական թաղական խորհուրդներին կից ստեղծված «Աղքատախնամ մարմինները»։ Սրանք ևս հատուկ ուշադրություն էին դարձնում հայ չքավոր ընտանիքներին նյութական օգնություն կազմակերպելու գործին։ Այդ մարմիններում հիմնականում գործում էին հայ կանայք, որոնք կազմակերպում էին զանազան կուլտուրական միջոցառումներ և հավաքած գումարներով օգնում հայ չքավորներին։

1929 թ. Սոֆիայի «Աղքատախնամ մարմինը» հայկական «Արամյան» դպրոցի չքավոր սաների համար կազմակերպեց ձրի սեղանատուն։ Տոնական օրերին և ձմռանը կարիքավոր ընտանիքներին հատկացնում էր դրամական միջոցներ, վառելանյութ, մթերքներ և հագուստ, հաշմանդամների և ծերերի համար կազմակերպում բժշկական օգնություն և դեղորայքի հայթայթում։ Համանման աշխատանք ծավալեցին նաև հայաշատ մյուս քաղաքների թաղական խորհուրդներին կից «Աղքատախնամ մարմինները»։

Սոֆիայի «Աղքատախնամ մարմնին» զուգահեռ սկսեց գործել «Գթության խաչ» կազմակերպությունը, որը հիմնվեց բուլղարահայ դաշնակցական հատվածի կողմից։ Տնտեսական ճգնաժամի տարիներին այդ կազմակերպությունը նյութական օգնություն էր հատկացնում այն կազմակերպություններին ու դպրոցներին, որոնց ղեկավարները դաշնակցության ներկայացուցիչներ էին։

«Գթության խաչ» կազմակերպությունը առատորեն ֆինանսավորվում էր ԱՄՆ-ի հայկական «Կարմիր խաչի» կողմից։ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին այդ կազմակերպությունը լրիվ ենթարկվեց դաշնակցության ներքին ղեկավարին։ 1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո այն դադարեց գործելուց։

գ. Հայ բարեգործական ընդհանուր միություն

Այս հաստատությունը ստեղծվեց 1906 թ. Կահիրեում։ Այն հիմնադրեցին Պողոս Նուպար փաշայի գլխավորությամբ հայ խոշոր և մանրբուր-

ժուռզիայի ներկայացուցիչները։ 1909 թ. այս հաստատությունը ղեկավարվում է ռամկավար-ազատական կուսակցության կողմից։

Բուլղարահայ գաղութում այդ միության մասնաճյուղը փաստորեն հիմնադրվեց 1930 թվականին։ Սոֆիայում և մի քանի այլ հայաշատ քաղաքներում ՀԲԸՄ-ը ստեղծեց մասնաճյուղեր՝ իրենց ակումբներով։ Սոֆիայի մասնաճյուղը կատարում էր կենտրոնական հանձնաժողովի դեր։ Վերջինս կապված էր ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչության հետ, որը գտնվում էր Փարիզում։ ՀԲԸՄ-ի բուլղարահայ մասնաճյուղի կենտրոնական հանձնաժողովի անդամներն էին Գրիգոր Զաքարյանը (ատենապետ, բուլղարահայ խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչ, հայտնի գործարանատեր-առևտրական։ Երկար տարիներ՝ մինչև 1944 թ. գլխավորել է նաև բուլղարահայ թեմական խորհրդի աշխատանքները), Պարույր Աստուրը՝ փոխատենապետ (բուլղարահայ ՀՕԿ-ի հիմնադիրներից), Հովհաննես Արամյանը՝ ատենադպիր, Օնիկ Ասլանյանը և Արամ Աժտերյանը։ Կանանց բաժնի անդամներ էին Թագուհի Թոփաքպաշյանը, Վիկտորյա Մոմճյանը և Հերմինե Աստուրը[38]։

ՀԲԸՄ-ի բուլղարահայ մասնաճյուղի հանձնաժողովի այս կազմը փոքր փոփոխություններով կազմակերպության աշխատանքները գլխավորեց մինչև 1947 թ., երբ նրա անդամները մտան «Երևան» առաջադիմական միության մեջ և ակտիվ գործունեություն ծավալեցին բուլղարահայ գաղութում։

Մինչև 1944 թ. սեպտեմբերի 9-ը ՀԲԸՄ-ի գործունեությունը, ըստ էության, հակադրվում էր բուլղարահայ առաջադիմական կազմակերպությունների դեմ դաշնակցության մղած պայքարին։ Այնտեղ, որտեղ հայկական դպրոցները նյութական դժվարությունների հետևանքով կանգնում էին փակուղու առջև, ՀԲԸՄ-ը հասնում էր օգնության։ Այն ամրապնդում էր բուլղարահայերի կապը մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ։ Բուլղարահայերի առաջին ներգաղթի ժամանակ ՀԲԸՄ-ի բուլղարահայ մասնաճյուղը զգալի գումարներ հատկացրեց հայրենիք մեկնողների ճանապարհային և այլ ծախսերի համար։ Միության միջոցներով ձեռք բերված մեծ քանակությամբ շինանյութ (ատաղձ, երկաթեղեն և այլ նյութեր) ուղարկվեց Սովետական Հայաստան[39]։

1933—1934 թթ. միությունը աշխույժ գործունեություն ծավալեց շնորհալի հայ աշակերտներին և ուսանողներին նյութական օգնություն ցույց տալու ուղղությամբ, կազմակերպում էր նրանց հետագա ուսումնառությունը Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատություններում։

1934 թ. ՀԲԸՄ-յան բուլղարահայ մասնաճյուղի նախագահ ընտրվեց Սոֆիայի Մեսրոպյան ճեմարանի տնօրեն Գևորգ Մեսրոպը։ 1935 թ. ՀԲԸՄ-ի կենտրոնից Բուլղարիա այցելեց Կ. Խանիկյանը և երկու ամիս շրջեց հայաշատ քաղաքները։ Պրոպագանդելով բարեգործականի գաղափարները, նա նորանոր անդամներ ներգրավեց միության շարքերը։

1939 թ. միությունը բուլղարահայ գաղութում հավաքեց նյութական օգնություն՝ Սանջակից և Ջերել Մուսայից հեռացած հայերին օգնելու համար։ Հավաքված դրամական գումարները պետք է ուղարկվեին Փարիզի կենտրոնին, սակայն բուլղարական կառավարությունն արգելեց և միությունը կենտրոնի հրամանով ստիպված եղավ այդ միջոցները հատկացնել բուլղարահայ ազգային վարժարաններին[40]։

Բուլղարիան հիտլերականների կողմից օկուպացվելուց հետո, ՀԲԸՄ-ի Բուլղարիայի մասնաճյուղի գործունեությունը ևս մյուս հայ առաջադիմական կազմակերպությունների նման խափանվեց։

1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխությունից հետո ՀԲԸՄ-ի Բուլղարիայի մասնաճյուղը վերականգնեց իր գործունեությունը։ Այն առանձին ակտիվություն ցուցաբերեց ներգաղթի ժամանակ, դրամական միջոցներ հատկացնելով Սովետական Հայաստան մեկնող քարավաններին։

1946 թ. Բուլղարիայի բոլոր հայաշատ քաղաքներում նշվեց ՀԲԸՄ-ի հիմնադրման 40-ամյակը[41]։ Նույն թվականի վերջերին նրա անդամներն անցան «Երևան» առաջադիմական կազմակերպության շարքերը։

Բուլղարահայ գաղութի հետ անմիջական կապ ունեին Բուլղարիայում գործող մի շարք բուլղարական և օտար «բարեսիրական» միություններ։ Դրանցից էր «Գերմանական բարեսիրաց ընկերությունը», որը հատուկ դրամական ֆոնդ էր հատկացնում բուլղարահայ ազգային վարժարաններին։

1928 թ. Պլովդիվի նահանգում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի ժամանակ հայերին մեծ օգնություն ցույց տվեց բուլղարական «Կարմիր խաչ» ընկերությունը։ Բազմաթիվ հայ ընտանիքներ այդ դժվարին օրերին ստացան դրամական օգնություն և նրանց համար կազմակերպվեց հատուկ խոհանոց։ Այդ եղբայրական օգնության համար բուլղարահայ թեմական խորհուրդը շնորհակալական նամակ հղեց միության կենտրոնական վարչությանը։

դ. Սպորտային-ակաուտական և տուրիստական միություններ

Բուլղարիայում օսմանյան լուծը թոթափելուց հետո եվրոպական սպորտի ազդեցությամբ հիմնվեցին բազմաթիվ սպորտային-մարմնամարզական միություններ, որոնք 1897 թ. համախմբվեցին Բուլղարական սպորտի ֆեդերացիայի շուրջը:

Սպորտի զանազան ձևերով էին զբաղվում նաև բուլղարահայ երիտասարդներն ու պատանիները: Նրանք հասան զգալի հաջողությունների, որոնք բարձր գնահատվեցին վերոհիշյալ ֆեդերացիայի կողմից:

1906 թ. Պլովդիվում գործում էր «Վահագն» հայկական սպորտային միությունը, որը ջանում էր իր մասնաճյուղերը ստեղծել Բուլղարիայի հայաշատ մյուս քաղաքներում: Բուլղարական սպորտի ֆեդերացիայի կազմավորման 9-րդ տարեդարձին նվիրված սպորտային մրցումներին մասնակցեցին նաև «Վահագն» միության մարզիկները, որոնք սպորտի մի քանի ձևերում նվաճեցին բարձր տեղեր[42]:

Պլովդիվում «Սոկոլ» բուլղարական սպորտային միության շարքերում մարզվում էին նաև հայ երիտասարդներ:

1919 թ. Պլովդիվում հիմնադրվում է «Շանթ» մարզական միությունը 85 անդամներով: Հետագայում նրանց թիվը հասնում է 250-ի: «Շանթին» կից կազմակերպվում է «Վրեժ» ֆուտբոլային թիմ:

Բուլղարահայ սպորտային շարժումն անմիջականորեն կապված էր բուլղարական սպորտի հետ և զարգանում էր նրա բարերար ազդեցությամբ, լայն տարածում գտնելով հայ մարզասեր երիտասարդության շրջաններում:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Պլովդիվում ստեղծվում է Հայ մարմնամարզական ընդհանուր միության (ՀՄԸՄ) մասնաճյուղ: Այդ սկաուտական-սպորտային միությունը կազմակերպվել էր Կոստանդնուպոլսում՝ անգլիական սկաուտական կազմակերպությունների օրինակով, և 1918 թ. իր մասնաճյուղերն էր ստեղծել Զմյուռնիայում, Փարիզում, Ադանայում, Պլովդիվում և այլ գաղթավայրերում: 1924 թ. Պլովդիվում հրավիրվում է ՀՄԸՄ-ի հիմնադիր ժողով, որին մասնակցում են բուլղարահայ սպորտային խմբերի և միությունների ներկայացուցիչները: Ժողովը ստեղծում է «Շրջանային վարչություն», որի նստատեղին Պլովդիվ քաղաքն էր: Այն ղեկավարելու էր 11 հայաշատ քաղաքներում՝ Պլովդիվում, Վառնայում, Սոֆիայում, Սլիվենում, Ռուսեում, Հասկովոյում և այլ քաղաքներում ստեղծված ՀՄԸՄ-ի մասնաճյուղերը՝ կապ հաստատելով Բուլղարական սպորտի ֆեդերացիայի հետ[43]: Հիշյալ մասնա-

ճյուղերը տեղերում հսկայական աշխատանք ծավալեցին՝ բազմաթիվ հայ պատանիներ ու երիտասարդներ սպորտի զանազան ձևերում ներգրավելու գործում:

1925 թ. Գևորգ Մեսրոպի նախագահությամբ ՀՄԸՄ-ը առաջին անգամ կազմակերպեց սպորտի զանազան ձևերի մրցումներ: Նույն թվականին Բուլղարական սպորտի ֆեդերացիան հաստատեց ՀՄԸՄ-ի ֆուտբոլի կանոնադրությունը[44]: Հետագա տարիներին ՀՄԸՄ-ը ամռան ամիսներին Պլովդիվում կազմակերպում էր նավասարդյան մրցումներ, ինչպես նաև սկաուտական հավաքներ, հանդիպումներ, մրցումներ: ՀՄԸՄ-ը մինչև 1929 թ. միակ սպորտային-սկաուտական կազմակերպությունն էր բուլղարահայ գաղութում: Նրա ղեկավարությունը գտնվում էր դաշնակցականների ձեռքում, որոնց հակահայաստանյան ու հակասովետական պրոպագանդայի դեմ հանդես եկան հայ առաջադեմ մարզիկները: Նրանք քննադատում էին ՀՄԸՄ-ի շարքերում տարվող նացիոնալիստական դաստիարակությունը և ցանկանում կապ հաստատել Հայաստանի ֆիզկուլտուրնիկների հետ:

ՀՄԸՄ-ի Սոֆիայի մասնաճյուղի անդամներ Հարություն Երամյանը, Մկրտիչ Մարթայանը, Զավեն Պարսամյանը և ուրիշներ 1930 թ. մայիսի 29-ին տարեկան հաշվետու ընտրական ժողովում մերժեցին Պլովդիվի «Շրջանային վարչության» որոշումներն ու ծրագիրը, և առաջարկեցին նոր կանոնադրություն և գործունեության ծրագիր: Ընտրություններում մեծամասնությունը քվեարկեց այդ խմբակցության անդամների օգտին: Նորընտիր վարչությունը խզեց իր կապը «Շրջանային վարչության» հետ, ստեղծեց ՀՄԸՄ-ի առանձին կազմակերպություն, որը նույնպես դարձավ Բուլղարական սպորտի ազգային ֆեդերացիայի անդամ: ՀՄԸՄ-ի դաշնակցական նախկին ղեկավարությունը շարունակեց իր գործունեությունը «ՀՄԸՄ—18» անվան տակ[45]: Սոֆիայի օրինակով պատակավեցին նաև ՀՄԸՄ-ի մյուս մասնաճյուղերը: Պլովդիվում ստեղծվեց «Շանթ», Վառնայում՝ «Կայծ», Շումենում՝ «Վիշապ», Սլիվենում՝ «ՀՄԸՄ—31», Ռուսեում՝ «Կայծ», Հասկովոյում՝ «Կայծ», և «Արարատ» սպորտային-սկաուտական միությունները: Պլովդիվի «Բունարջիկ» թաղամասում հիմնադրվեց «Արարատ» ֆուտբոլային միությունը: Նորաստեղծ բոլոր կազմակերպություններում ու միություններում ղեկավարներն առաջադեմ երիտասարդներ էին:

Պլովդիվի «Շանթ» սպորտային-սկաուտական միությունը հիմնադրվեց մի խումբ առաջադեմ երիտասարդների նախաձեռնությամբ, որոնք անջատվել էին ՀՄԸՄ-ի մասնաճյուղից: 1930—1940-ական թվականներին այդ միությունն ամենամասսայական կազմակերպությունն էր բուլղարա-

հայ գաղութում։ Այն ուներ իր սեփական ակումբն ու խաղադաշտը, ֆուտբոլի, վոլեյբոլի, թենիսի, աթլետիկայի և սկաուտական խմբերը։ Միության վարչությունը համագործակցելով գաղութի մյուս առաջադեմ կազմակերպությունների հետ, ամեն տարի Պլովդիվում կազմակերպում էր Նավասարդյան մրցումներ։

Առաջադեմ սպորտային միությունների միջքաղաքային մրցումների կազմակերպման համար «Շանթի» վարչության նախաձեռնությամբ ստեղծվեց «Կենտրոնական մրցաշարային կոմիտե», որի կազմում էին Պլովդիվի «Շանթի» և Սոֆիայի «ՀՄԸՄ—32»-ի ղեկավարները (Կարո Քափուլյան, Հարություն Երամյան, Ջավեն Պարսամյան, Սարգիս Այանյան, Մանուկ Կարագյոզյան և ուրիշներ)։

1933—1936 թթ. բուլղարահայ ֆուտբոլը հասավ զարգացման բարձր աստիճանի։ Հասկովոյի և Վառնայի «Կայծ» ֆուտբոլային թիմերն աճեցրին այնպիսի վարպետներ, որոնք որպես լավագույն ֆուտբոլիստներ խաղում էին բուլղարական ազգային հավաքականի կազմում և մասնակցում միջազգային մրցումներին։

Պլովդիվի «Արարատ» ֆուտբոլային թիմը սերտ կապ էր պահպանում բուլղարական «Պետր Պարչևիչ» ֆուտբոլային միության հետ և նրա միջոցով անդամակցում Բուլղարական սպորտային ազգային ֆեդերացիային[46]։ «Արարատ» ֆուտբոլային խումբը համագործակցում էր «Շանթի» նախաձեռնություններին և մասնակցում ամենամյա Նավասարդյան խաղերին։

Բուլղարահայ մարզիկները աչքի էին ընկնում նաև սպորտի մյուս ձևերում։ Պլովդիվից Հ. Սրապյանը և Սոֆիայից Ռ. Երեմյանը Բուլղարիայի լավագույն մարզիկներն էին վազքի և թռիչքի սպորտաձևերում։ Նրանք ընդգրկվել էին երկրի հավաքականի կազմում։ 1930-ական թվականներին նրանք բալկանյան և միջազգային մրցումներում 100 և 800 մետր վազքատարածություններում գրավեցին առաջնակարգ տեղեր։

Հարություն և Հովհաննես Թաշճյանները (Յամբոլից) լավագույն հեծանվորդներ էին և մասնակցում էին միջազգային և Բուլղարիայի առաջնության մրցումներին, հաճախ գրավելով առաջին տեղերը՝ արագության և էտապային մրցումներում։

Բուլղարահայ առաջադեմ սպորտային-սկաուտական միություններին անդամակցող պատանիներն ու երիտասարդները դաստիարակվում էին հայրենասիրական ոգով, ծանոթանում մայր Հայրենիքի պատմությանն ու աշխարհագրությանը, զեկուցումներ լսում Սովետական Հայաստանի նվաճումների, պիոներների ու կոմերիտականների կյանքի ու գործունեության մասին։

«Շանթ» միության վարչությունն ամեն տարի կազմակերպում էր ճամբար Լոդոպի լեռան լանջերում՝ Բոյկովոյի անտառներում, որտեղ ամառանը հանգստանում էին աշխատավոր ընտանիքների 200-ից ավելի պատանիներ ու երիտասարդներ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին «Շանթ» միության վարչության նախաձեռնությամբ Պազարջիկում և Ստարա Զագորայում հիմնադրվեցին «Շանթ» միության մասնաճյուղեր։ Նրանք հաճախ կազմակերպում էին մրցումներ, հանդիպումներ, փոխադարձ այցելություններ։ Նման հանդիպումներ ու մրցումներ էին կազմակերպում նաև մյուս քաղաքների սպորտային միությունները։ Ռուսեի «Շանթ» և «Արծիվ» միությունները ՀՕԿ-ի օժանդակությամբ և հայ կոմունիստների ղեկավարությամբ կազմակերպում էին դաշտային հանդեսներ, պարերեկույթներ, թատերական ներկայացումներ։

1924 թ. օգոստոսի 24-ին մի խումբ երիտասարդների նախաձեռնությամբ (Հրանդ Վարդանյան, Սարգիս Ալթունյան, Սարգիս Թնկրյան, Օնիկ Տերտերյան, Արա Առաքելյան, Գևորգ Միքայելյան, Օնիկ Քանթարյան, Սարիկ Եորամանճյան և ուրիշներ) «Սեր ի բնութիւն, սեր ի հայրենիք» նշանաբանով Պլովդիվում հիմնադրվեց «Արծիվ» տուրիստական միությունը[47]։ Այն ընդունեց բուլղարական տուրիստական միությունների ֆեդերացիայի ծրագիր-կանոնադրությունը և դարձավ ֆեդերացիայի անդամ։ *1925 թ. Բուլղարիայի բոլոր հայաշատ քաղաքներում հիմնադրվեցին* այդ միության մասնաճյուղերը։ 1927 թ. Պլովդիվում հրավիրվեց միության անդրանիկ համագումարը, որտեղ ընդունվեց միության ծրագիր-կանոնադրությունը և ընտրվեց կենտրոնական վարչություն։

1931 թ. «Արծիվ» տուրիստական միությունը հրատարակեց իր օրգան՝ «Արծիվ» թերթի առաջին համարը։ Այն միակ պարբերականն էր սփյուռքում, որտեղ տպագրվում էին հոդվածներ Բուլղարիայի և Սովետական Հայաստանի տուրիստական, պատմական և աշխարհագրական վայրերի մասին։

1933 թ. մայիսի 6—7-ը «Արծիվ» տուրիստական միությունը հրավիրեց իր հերթական պատգամավորական ժողովը, որը քննարկեց միության մի շարք մասնաճյուղերի կազմակերպչական հարցեր։ Ժողովին ներկա էին բուլղարահայ քաղաքական-հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք դրական գնահատական տվեցին միության գործունեությանը՝ հայ պատանիներին և երիտասարդներին հայրենասիրա-

յան ոգով դաստիարակելու գործին։ Պատգամավորական ժողովից հետո «Արծիվ» տուրիստական միության մասնաճյուղերն ուժեղացրին իրենց համագործակցությունը բուլղարական տուրիստական կազմակերպությունների հետ, նախաձեռնելով համատեղ արշավներ դեպի Բուլղարիայի տեսարժան վայրերը։ 1939 թ. հուլիսի 24-ին Ռուսեի և այլ քաղաքների «Արծիվ» միության մասնաճյուղերը բուլղար ընկերների հետ կազմակերպեցին նաչատուր Աբովյանի և բուլղարական տուրիզմի հիմնադիր Ալեկո Կոստանդինովի հիշատակին նվիրված համատեղ արշավ դեպի Ստարա Պլանինա։

1941—1944 թթ. «Արծիվ» տուրիստական միության մասնաճյուղերը ֆաշիստական կառավարության հրամանով դրկվեցին ինքնուրույն գործունեությունից։ Նրանք պարտավոր էին անդամակցել տեղի բուլղարական տուրիստական կազմակերպություններին և գործել այդ միությունների անունից։ Պլովդիվի «Արծիվ» տուրիստական միության մասնաճյուղն ընդլայնեց իր գործունեությունն ու համագործակցությունը բուլղարական «Ռոդոպի» տուրիստական միության հետ և համատեղ գործունեության օրինակ ծառայեց մյուս մասնաճյուղերի համար։

Ինչպես բուլղարահայ բոլոր սպորտային-սկաուտական միությունները, այնպես էլ «Արծիվ» միության մասնաճյուղերը 1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխությունից հետո իրենց գործունեությունը տեղափոխեցին «Երևան» առաջադիմական միության մեջ։

Ե. Ակումբներ

Բուլղարահայ գաղութում հայ հասարակական-քաղաքական կազմակերպություններն ու կուսակցությունները, լեգալ աշխատանքի հնարավորության պայմաններում, բուլղարական իշխանությունների թույլտվությամբ ստեղծել էին իրենց ակումբ-գրադարանները։ Այստեղ հավաքվում էին տվյալ հասարակական կազմակերպության կամ կուսակցության անդամներն ու համախոհները։ Ակումբներում անցկացվում էին խորհրդակցություններ, ժողովներ, կուլտուրական միջոցառումներ։

Կուսակցական ակումբները, ի տարբերություն սպորտային-սկաուտական բարեսիրական, հայրենակցական և այլ ակումբների, միաժամանակ հանդիսանում էին գրադարան-ընթերցարաններ, որտեղ ստացվում էին տեղական և սփյուռքի մյուս գաղութների կուսակցական թերթեր, պարբերականներ ու գրքեր։

Բուլղարահայ գաղութում առաջին ակումբ-գրադարանները ստեղծվեցին XIX դարի վերջին՝ հայ քաղաքական կուսակցությունների նախաձեռնությամբ։ Սկզբնական շրջանում դրանց թիվը փոքր էր, սակայն 1920—1930-ական թվականներին արդեն գործում էին 4—5 տասնյակ ակումբներ։

Առաջին հայկական ակումբները սկսեցին գործել Վառնայում, Շումենում, Ռուսեում, Պլովդիվում, Սլիվենում, Պազարջիկում և այլ քաղաքներում։ 1891 թ. Ռուսեում գործում էր հնչակյանների ակումբ-գրադարանը։ Որոշ ժամանակ անց դաշնակցությունը այստեղ հիմնադրեց «Վ. Տաթեւյան», իսկ 1900 թվականին Վառնայում՝ «Բաբկեն Սյունի» ակումբ-գրադարանները[48]։ Այս ակումբներում գործում էին տարբեր ինքնագործ խմբակներ (թատերական, պարի, նվագախումբ, երգչախումբ և այլն)[49]։

Դարասկզբին նման ակումբներ ստեղծվեցին նաև Շումենում (հնչակյանների «Շաքե», դաշնակցության «Պետո Պուլկարացի», ավելի ուշ «Ազգային ակումբը»)։ Սլիվենում գործում էր «Անդրանիկ», Պլովդիվում դաշնակցության համար ակումբի դեր էր խաղում «Ջորյան» դպրոցը[50]։

Մշակույթի այս օջախներում աշխույժ գործունեություն ծավալվեց մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Պատերազմի տարիներին դրանք դադարեցրին իրենց գործունեությունը և փակվեցին։ Ետպատերազմյան ժամանակաշրջանում և հատկապես Ալեքսանդր Ստամբոլիյսկու կառավարության ժամանակ բոլոր հայ քաղաքական-հասարակական կազմակերպությունները հնարավորություն ստացան լույս ընծայելու իրենց տպագիր օրգանները և բացելու ակումբ-գրադարաններ։

Հայ բուրժուական կուսակցությունների հետ միասին իրենց ակումբներն ու գրադարանները բացեցին նաև բկկ կից առանձին սեկցիա կազմող բուլղարահայ կոմունիստները։ Այդ տարիներին առանձնապես աշխույժ գործունեություն ծավալեց Պլովդիվի «Մտեփան Շահումյան» ակումբ-գրադարանը։ Սակայն 1923 թ. հունիսի 9-ի ցանկովյան հեղաշրջումը և սեպտեմբերյան ապստամբությունը շատ ծանր անդրադարձան ակումբների հետագա ճակատագրի վրա։ Բոլոր քաղաքական կուսակցությունները հայտարարվեցին օրենքից դուրս, և փակվեցին նրանց ակումբներն ու գրադարանները, բռնագրավվեց նրանց գույքն ու ունեցվածքը։ Ռեակցիայի ծանր տարիներին գործում էին միայն դաշնակցականների ակումբ-գրադարանները և նրանց օրգան «Հայաստան» թերթի խմբագրությունը։

1924 թ. Սոֆիայում սկսեց գործել «Հառաջ» ակումբ-գրադարանը։ Նրա շուրջը համախմբվեցին 180 անդամներ, որոնք գործում էին չեզոք հիմքի վրա։ Նրանք ստեղծեցին ինքնագործ տարբեր խմբակներ, կազմա-

կերպում էին թատերական ներկայացումներ, համերգներ, երաժշտական երեկոներ և այլ միջոցառումներ։ Ակումբի անդամները համերաշխ գործում էին մինչև 1928 թ., երբ դաշնակցության ոչնչացությունների հետևանքով պատահավեցին։ «Հառաջի» ներսում գործող հայ կոմունիստներն իրենց գործունեությունը տեղափոխեցին այլ կազմակերպությունների ակումբներ, իսկ բուլղարահայ գաղութում ՀՕԿ-ի ստեղծումից հետո մտան նրա շարքերը։ ՀՕԿ-ի ակումբները դարձել էին հայկական մշակույթի վառ օջախներ և վերածվել բուլղարահայերի գաղափարական ու մշակութային կենտրոնների։

1929—1937 թթ. բուլղարահայ գաղութում դաշնակցության և ՀՕԿ-ի ակումբներից զատ, գործում էին բազմաթիվ ակումբներ, որոնք հայ պատանիների և երիտասարդների հավաքատեղիներն էին։ Սոֆիայում գործում էր հնչակյանների «Դոկտոր Պեննե» ակումբ-գրադարանը, Պլովդիվում՝ «Վանիկ», Վառնայում՝ «Հնչակյանների ակումբը», Հասկովոյում՝ «Փարամազ» և «Կայծ», Ռուսեում՝ «Շաքե» և «Արծիվ», Յամբոլում՝ «Սարգիս Տխրունի» ակումբները։ Սոֆիայում, Պլովդիվում, Հասկովոյում և այլ քաղաքներում ռամկավարները բացեցին բարեգործական ակումբներ։ Պլովդիվում, Սոֆիայում, Շումենում և Վառնայում ստեղծվեցին «Ազգային միության» ակումբները։ Ակումբների այսպիսի առատությունն (շուրջ 50) բուլղարահայ գաղութը երբեք չէր ունեցել իր պատմության ամբողջ ընթացքում։ Ակումբներում ու գրադարաններում խոր ընդհատակում բուլղարահայ կոմունիստներն ու ռեմսիստները տանում էին հակաֆաշիստական պայքար ու կազմակերպում առանձին խմբակներ։

1944 թ. սեպտեմբերի 9-ի հաղթանակը բոլոր կազմակերպությունների ակումբներին միացրեց «Երևան» միության ղեկավարության ներքո։ Բուլղարիայի 17 հայաշատ քաղաքներում ստեղծվեցին «Երևանի» ակումբ-գրադարաններ, որոնք վերածվեցին հայ-բուլղարական բարեկամության և համագործակցության դարբնոցների։

3. ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՈՒՄ

Ռուսաստանի օգնությամբ բալկանյան ժողովուրդների թուրքական լծից ազատագրությունը մեծ ոգևորություն առաջացրեց Անդրկովկասում և մյուս հայկական գաղութներում։ Այն նոր խթան հանդիսացավ սուլթանական դարավոր տիրապետության դեմ ուղղված հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ծավալման համար։ Առանձին հայրենակ-

ցական, հայրենասիրական, հայրենիքի ազատագրության և այլ միություններ ու կազմակերպություններ միավորվում ու ներգրավվում էին այդ շարժման մեջ։ Սկզբնական շրջանում այդ պայքարը բուլղարահայ համայնքում կրելով բուլղարական լիբերալների քաղաքական հոսանքի ազդեցությունը մեծ մասամբ ընդունել էր լիբերալ-բուրժուական բնույթ, իսկ հետագայում բուլղարական բանվոր դասակարգի և սոցիալ-դեմոկրատական շարժման առաջացման հետ, բուլղարահայերի ազգային-ազատագրական պայքարն իր թափով ու մեծամասնությամբ ընդունեց հեղափոխական-դեմոկրատական բնույթ։

Հայտնի է, որ դարասկզբին սուլթանական Թուրքիայում արգելված էին հայ քաղաքական կուսակցությունները ու նրանց գործունեությունը։ Այդ կուսակցությունների հիմնադիրներն ու գաղափարախոսները ապաստանելով եվրոպական երկրներում, այդ թվում և Բուլղարիայում, հեռվից ղեկավարում էին տեղերում գործող խմբակներն ու կազմակերպությունները։

XIX դարի 90-ական թվականներին հայ բուրժուական ու մանրբուրժուական կուսակցությունները Բալկաններում և այլ երկրներում ստեղծել էին իրենց կազմակերպությունների բավականին խիտ ցանց։ Նրանք տեղերում համագործակցում էին տվյալ երկրի առանձին կուսակցությունների հետ՝ համատեղ պայքարի համար։

Բուլղարահայ համայնքում ուժեղացավ հայերի և բուլղարների համագործակցությունը։ Այն ուղղված էր սուլթանական Թուրքիայի դեմ՝ Արևելյան Ռումելիայի, Մակեդոնիայի և Արևմտյան Հայաստանի ազատագրման համար[51]։ Բուլղարական կառավարությունը ուղղակի կամ անուղղակի օժանդակում և օգնում էր հայերի ազգային-ազատագրական պայքարին։

Դեռևս 1880-ական թվականներին Վառնայում, Ռուսեում, Շումենում, Պլովդիվում և այլուր գործում էին «Հայ հայրենասերների միությունը», «Հայրենիքի պաշտպանության կոմիտեն», «Հայկական հայրենակցական ընկերությունը» և այլ կազմակերպություններ, որոնք հետագայում հիմք հանդիսացան Բուլղարիայում հայ քաղաքական կուսակցությունների առանձին կազմակերպությունների առաջացման համար։

Հայ մանրբուրժուական և բուրժուանացիոնալիստական կուսակցությունների առանձին կազմակերպությունների հակամարտ գործունեությունը բուլղարահայ համայնքում խանգարեց միասնական, ներքին դեկավարման մարմիններ ստեղծելու աշխատանքներին։ Այդ կուսակցությունների պառակտողական քաղաքականությունը չլատեց գաղութի միաս-

նութիւնը, որն իր հերթին բացատրաբար անդրադարձով կրթական-մշակութային և հայապահպանման աշխատանքների վրա։

Պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանում բուլղարահայ աշխատավորները համախմբվեցին բուլղարական սոցիալ-դեմոկրատական (տեսնյակների) կուսակցության դրոշի ներքո և հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրումը շաղկապեցին Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժման հետ։ Հակադրվելով պատակտողական գործելակերպին բուլղարահայ բանվորներն ու մանր արհեստավորները պայքարում էին հանուն միասնության ու հայապահպանման գործի համար։

Սույն աշխատության մեջ համառոտակի անդրադառնում ենք հայ մանրբուրժուական և բուրժուանացիոնալիստական կուսակցությունների գործունեության վերաբերյալ այնքանով, որքանով որ այն կապված էր բուլղարահայ համայնքի հասարակական-քաղաքական կյանքի հետ։

ա. Արմենականներ

XIX դարի վերջին բուլղարահայ համայնքն աշխույժ կապեր էր ստեղծել Արևմտյան Եվրոպայի, Կոստանդնուպոլսի, Անդրկովկասի, Ռուսաստանի և այլ վայրերի հայկական գաղութների մշակութային ու քաղաքական առանձին գործիչների և թերթերի խմբագրությունների հետ։ Բուլղարիայում գործող հայրենասիրական, որբախնամ, դպրոցասիրաց, գրասիրաց և այլ միություններն ու խմբակներն իրենց ընթերցարան-ակումբների, գրադարանների ու դպրոցների համար ստանում էին տարբեր թերթեր, ամսագրեր, գրականություն։ Ռուսե, Վառնա, Պլովդիվ, Սլիվեն, Տամբոլ, Շումեն և այլուր առանձին գործիչներ այդ ճանապարհով հաղորդակից էին դառնում նրանց գաղափարական ուղղությանը, այն ծանոթացնում Բուլղարիայի հայկական շրջանակներին։

Բուլղարահայ գաղութում մեծ աշխուժություն առաջացրեց Մարսելում լույս տեսնող Մկրտիչ Փորթուգալյանի «Արմենիա» ամսաթերթը, որի բանժանորդները Բուլղարիայի հայաշատ քաղաքներում ստեղծեցին արմենականների խմբակներ[52]։

1890 թ. նրանք Ռուսեում կազմակերպեցին «Հայկական միությունը», որի ստեղծման գործում աշխույժ գործունեություն ծավալեց Գրիգոր Ֆ. Թյությունճյանը[53]։ *Սակայն նրա գործունեությունը կարճատև եղավ, քանի որ հայ հասարակական կյանքում նրան փոխարինելու եկան քաղաքական նոր կուսակցությունները՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման վերաբերյալ իրենց ուրույն ծրագրերով։ Հետագայում արմենականների առանձին գործիչներ հարեցին այդ կուսակցություններին։*

1892 թ., երբ բուլղարահայ գաղութում առաջացան սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության կազմակերպությունները, Ռուսեի արմենականների մի մասը հարեց նրանց, իսկ 1895 թ. հետո, երբ ստեղծվեցին Հայ հեղափոխական դաշնակցության կոմիտեները, արմենականների մյուս մասը (Արիստակես և Ռուբեն Փափազյաններ, Հաջի Սարգիս Տիգրանակերտցի, Մարտիրոս Խոստանճյան և ուրիշներ) անցավ նրանց կողմը։ Հետագայում առանձին արմենականներ «Վերակազմյալ հնչակյանների»[54] *հետ ստեղծում են Ռամկավար-ազատական կուսակցության խմբակներ։ Այսպիսով, բուլղարահայ գաղութում գործող արմենական խմբակները հաղիվ կազմակերպված, տրոհվեցին և ձուլվեցին նոր ստեղծված հնչակյան և դաշնակցություն կուսակցությունների միջև։*

բ. Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը

1887 թ. երբ լույս տեսավ «Հնչակի» առաջին համարը և հիմնվեց հնչակյան կուսակցությունը (հիմնադիրներ Ավետիս Նազարբեկյան (Նազարբեկ), Մարո Վարդանյան (Նազարբեկ), Ռուբեն Խանազատյան, Գաբրիել Կաֆյան (Շմավոն), Հակոբ Մելավորյան, Հմայակ Խաչպալյան), առանձին գործիչներ անցնելով Բուլղարիա, կազմակերպել էին հնչակյան կուսակցության խմբակներ։

Բուլղարահայ գաղութում հնչակյան կուսակցության գործիչներից էին Մուրատը, Արամ Ալիքպաշյանը, Գրիգոր Ամբարձյանը, Նազարեթ Լուսինյանը, Արշակ Հայկունին, դոկտոր Թիրյաքյանը, Մարգար Մոմճյանը, Գրիգոր Քըլըճյանը, Հարություն Ջաքըրյանը, Տաճատ Պեյլերյանը և ուրիշներ[55]։

Սասունի ապստամբության պարտությունից, բաբ Ալիի անհաջող ցույցից, 1896 թ. Կարինի, Վանի, Տրապիզոնի հայկական կոտորածներից հետո 20000-ից ավելի հայեր ապաստանել էին Բուլղարիայում, մեծ մասամբ Վառնա քաղաքում։ Այստեղ հնչակյանները ծավալում են ակտիվ գործունեություն, ստեղծում կազմակերպություններ, պրոպագանդում Արևմտյան Հայաստանի ազատագրման գաղափարները։ Նրանք «Իրավունք» թերթի էջերում հանդես են գալիս բազմաթիվ հոդվածներով (Թերթը լույս էր տեսնում Հակոբ Գուրբեթյանի խմբագրությամբ) և պրոպագանդում իրենց գաղափարները[56]։

1894 թ. բուլղարահայ գաղութում դաշնակցության կազմակերպությունների ասպարեզ գալը սրեց պայքարը երկու կուսակցությունների կազմակերպությունների, այդ թվում «Իրավունքի» և դաշնակցության օրգան «Շարժումի» միջև, որ բացասաբար անդրադարձավ գաղութի կազմակերպչական, կրթական-մշակութային կյանքի վրա:

1895 թ. Շումենում գործում էր հնչակյան կազմակերպությունը և «Ազգային ընթերցարան» ակումբը: Այս կազմակերպությունը լայն գործունեություն էր ծավալում, որի ղեկավարներն էին բուլղարահայ հայտնի հնչակյաններ Խաչիկ Մարտիրոսյանը, Մուրատ Մեռմեջյանը, Մյուռեն Թորոսյանը, քահանա Մանդակունին, Հովհաննես Մաճառյանը, Տաճատ Պեյլերյանը: Վերջինս հայկական դպրոցի տնօրենն էր և «Հայոց հայրենակցական միության» հիմնադիրը: Շումենում դաշնակցության կազմակերպության ստեղծումից հետո պայքարը հնչակյանների և դաշնակցականների միջև այն աստիճան սրվեց, որ այս փոքրիկ քաղաքում սկսեցին գործել երկու դպրոց, երկու եկեղեցի, զույգ ակումբներ և գրադարաններ:

1896 թ. հայկական կոտորածները Արևմտյան Հայաստանում, քաղաքական ծանր իրավիճակը, հնչակյան կուսակցության բոլոր նախաձեռնությունների ձախողումը, պառակտում առաջացրին կուսակցության լոնդոնյան ընդհանուր ժողովում: Լիբերալ բուրժուազիայի կողմն անցած խմբավորումը, որի մեծ մասը արևմտահայ պատգամավորներ էին, անջատվեցին և ստեղծեցին «Վերակազմյալների» խումբը: Այս վերջինները 1897 թ. եգիպտոսում հրատարակեցին իրենց «Մարտ» օրգանը[57]:

Բուլղարահայ հնչակյանների շարքերում նույնպես պառակտում առաջացավ: Ղեկավարներից Պահլավունին, իր շուրջը համախմբելով մի խումբ հնչակյանների, հեռացավ կազմակերպությունից: Պառակտումը տարածվեց բոլոր կազմակերպություններում:

1897 թ. Կոստանդնուպոլսից Բուլղարիա է գալիս հնչակյան գործիչ Պետրոս Փափազյանը: Համախմբելով համակուսակիցներին, վերականգնում է մի շարք կազմակերպություններ և շարունակում պայքարը դաշնակցականների և «Վերակազմյալ» հնչակյանների դեմ:

1898 թ. Վառնայում հնչակյան գործիչ Ս. Սապահ-Գյուլյանի խմբագրությամբ լույս է տեսնում հնչակյանների «Աշխարհ» շաբաթաթերթը, որը, սակայն, կարճատև կյանք ունեցավ:

Դարասկզբին Տիգրան Ճգնավորյանը Ռուսեում հրատարակում է «Հայ թերթ» լրագիրը: Նույն քաղաքում լույս է տեսնում «Տավրոս» շաբաթաթերթը, որի խմբագիրն էր Զեյթունի գործիչներից Հարություն Ջաքըրյանը: Այս թերթերը սկզբում չեզոք դիրքորոշում ունեին, սակայն հետագայում պայքար ծավալեցին դաշնակցության դեմ: Այդ օրերին հնչակյան ղեկավարներից Բուլղարիա էր եկել Հրանդ Կամսարը (Գրիգոր վարդանյան, հետագայում՝ Երևանում ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահ): Շրջելով Բուլղարիայի հայաշատ քաղաքները, նա ամրապնդեց հնչակյան կազմակերպությունների միասնությունը և սրեց գաղափարական պայքարը դաշնակցության դեմ:

1900 թ. Սոֆիայում Մինաս Նալչաճյանի, Մկրտիչ Ներսիսյանի, Պաղտասար Սարգիսյանի, Քեմախցի Մովսեսի (Նապոլեոն) և ուրիշների պլխավորությամբ հիմնադրվում է հնչակյան կուսակցության կազմակերպություն:

1903—1904 թթ. հնչակյան կուսակցության Կենտրոնական կոմիտեի մի քանի անդամներ՝ Ավետիս Նազարբեկյանի գլխավորությամբ գալիս են Բուլղարիա և Ռուսեում հրատարակում «Վերածնություն» շաբաթաթերթը, որի լույս ընծայման առիթով Սարգիս Կասյանը[58] Բեռլինից գրում էր. «Ձեր թերթի առաջին համարը կարդալուց հետո ստիպվեցի հրապարակորեն շնորհավորել Ձեր այդ փառաբանության արժանի ձեռնարկը...»[59]: Նա կոչ էր անում համախմբվել «Վերածնության» շուրջը և չլինել դիտողի դիրքում, այլ մասնակցել հայ ժողովրդի ազգային-ազատագրական և սոցիալական պայքարին:

Այդ թերթի մասին Ստեփան Շահումյանը գրել է. «Հնչակի կուսակցական լրագրերից մեկը, Բուլղարիայում հրատարակվող «Վերածնությունը» արդեն վաղուց իր առաջնորդողներում կոչ է անում նրանց դեպի համագործակցություն՝ սոցիալ-դեմոկրատների հետ, թողնելով շովինիստական-նացիոնալիստական տրամադրությունները»[60]:

Ա. Նազարբեկյանը հնչակյան կուսակցության կենտրոնի կողմից լիազորված էր բանակցություններ վարել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ղեկավարների հետ՝ միավորման ուղղությամբ: Նա ժենևում հանդիպումներ էր ունենում Գ. Պլեխանովի և Վ. Ի. Լենինի հետ: Նման հանդիպումներ Ա. Նազարբեկյանը ունեցել էր նաև Մարտովի հետ[61]: Հնչակյան ղեկավարներից Ռուբեն Խանազատյանը դեմ էր այդ միավորմանը: Բուլղարահայ գաղութում նույն միջոցին Պ. Խուշուկյանը և Գ. Չիթճիյանը աշխատում էին վերականգնել և ամրապնդել հնչակյան կազմակերպությունները, սակայն նրանց չհաջողվեց նպատակին լրիվ հասնել, հատկապես Շահե Միսոյի և Գարեգին Չիթճիյանի ապանությունից հետո: Ահաբեկչական այդ գործելակերպը վրդովեցրեց բուլղարահայ հնչակյաններին: Չնայած

այդ բոլորին, նրանք զգալի գործունեություն ծավալեցին հատկապես Բուրգաս քաղաքում, իրենց «Արարատ» ընթերցարանի միջոցով։

1907 թ. Պլովդիվ եկավ հնչակյան կուսակցության ղեկավար Արշավիր Կամսարականը և աշխատեց ամրապնդել հնչակյան կազմակերպությունները։ Սակայն կարճ ժամանակից հետո անցավ դաշնակցության շարքերը։

1913 թ. սեպտեմբերի 17-ին հնչակյան կուսակցությունը Կոստանդյայում հրավիրեց իր 6-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը։ Նրա որոշումներում հատուկ նշված էր, որ նկատի ունենալով Արևմտյան Հայաստանի մոտիկությունը Բուլղարիային և քաղաքական իրադրության արագ փոփոխությունը, անհրաժեշտ է կուսակցության կենտրոնը Փարիզից տեղափոխել Սոֆիա և այստեղ հրատարակել «Հնչակը»։ Բալկանյան և առաջին համաշխարհային պատերազմները խանգարեցին այդ որոշման իրականացմանը։ Բալկանյան պատերազմների առաջին փուլի ժամանակ բուլղարահայ հնչակյաններն ակտիվորեն մասնակցեցին կամավորական ջոկատների կազմակերպմանը։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նրանք կողմնորոշվեցին դեպի II ինտերնացիոնալը։ Հնչակյանները կամավորական ջոկատներով օգնում էին ռուսական բանակների առաջխաղացմանը դեպի Արևմտյան Հայաստան։ Պատերազմի ընթացքում «Հնչակում» տպված կոչերը վերջանում էին հետևյալ տողերով. «Օն, ուրեմն, ընկերներ, դեպի գործ, մեր մահով արնահատենք Հայրենիքին սպառնացող մահը, որ ապրե, հավերժ ապրե Հայաստան»[62]։

Բուլղարահայ հնչակյանները բացատրական լայն աշխատանք ծավալեցին երիտթուրքերի հայացինչ քաղաքականության դեմ։ Նրանք բազմաթիվ նամակներով դիմում էին մեծ պետություններին, պահանջելով նրանց միջամտությունը՝ բանտերից ու կոտորածներից փրկելու արևմտահայ մտավորականությանը։

Համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում բուլղարահայ հնչակյանները անտարբեր մնացին «Հայաստանի հանրապետության» ստեղծման ու դաշնակցական կառավարության ձեռնարկումների նկատմամբ։ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, երբ «Հայաստանի հանրապետության» ու դաշնակցության պարագլուխները ապաստանել էին Բուլղարիայում և սկսել իրենց հակասովետական և հակահայաստանյան պրոպագանդան, բուլղարահայ հնչակյանները, ռամկավարները և բոլոր առաջադեմ միությունները ու կազմակերպությունները հայ կոմունիստների հետ միասին ստեղծեցին միասնական ճակատ՝ հակահարված

տալով դաշնակցության նկրտումներին ու զրպարտչական պրոպագանդային։

1921 թ. Ալեքսանդր Ստամբուլիյսկու կառավարությունը լեգալ աշխատանքի հնարավորություններ տվեց հասարակական և քաղաքական առաջադեմ կազմակերպություններին, այդ թվում նաև հնչակյան կուսակցությանը։ Այդ օրերին Պլովդիվում հրավիրված «Ազգային բլոկի» ժողովում ելույթ է ունենում կոմունիստ Գրիգոր Շիշմանյանը։ Նա ոգեշնչված պատմում է Հայաստանում հայ բանվորների և գյուղացիների կազմակերպած Մայիսյան ապստամբության և սովետական կարգերի հաստատման մասին, կոչ անում օգնել Սովետական Հայաստանի աշխատավորությանը՝ երկիրը վերականգնելու և սովյալներին փրկելու ուղղությամբ նրանց մղած հերոսական ջանքերին։ Ս. դ. հնչակյանների անունից Ստեփան Հինդլյանն իր ելույթում բացահայտեց դաշնակցության չարաշահումները և մերկացրեց նրանց հակահայաստանյան, ազգադավ գործունեությունը։

1921 թ. դեկտեմբերին Սոֆիայում մեծ խանդավառությամբ նշվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տարեդարձը, որտեղ ելույթ ունեցավ հնչակյանների Ռուսեի կազմակերպության նախագահ Ո. Գրիգորյանը[63]։ Ռուսեում տեղի ունեցավ հրապարակային ժողով, որտեղ ելույթներ ունեցան Բուլղարական կոմունիստական կուսակցության քաղաքային կոմիտեի ներկայացուցիչներ Ն. Կիրովը և Արտաշես Ասլանյանը, իսկ հնչակյանների անունից՝ Հարություն Պողոսյանը։

Հետագայում հնչակյանները հետզհետե հարեցին հնչակյան կուսակցության ԱՄՆ-ի կենտրոնին և սկսեցին գործել նրանց ցուցումներով։ Հնչակյանների բուլղարահայ հատվածի ղեկավարներն էին Վաղարշակ Գույումճյանը, Կարո Քալֆայանը, Սարգիս Փաշաճյանը, Գրիգոր Ահարոնյանը, Մկրտիչ Ներսիսյանը, Մարտիկ Տունիկյանը և ուրիշներ։

Հնչակյան կազմակերպության Վառնայի մասնաճյուղը Վ. Գասապյանի, Ա. Նազարյանի, Ստ. Կորիզյանի, Պարույր Գրիգորյանի և ուրիշների ղեկավարությամբ ուժեղացրեց պայքարը դաշնակցության դեմ և ակտիվացրեց իր գործունեությունը հասարակական կազմակերպություններում՝ նեցուկ կանգնելով Սովետական Հայաստանին օգնելու ուղղությամբ ձեռնարկված բոլոր միջոցառումներին։

1922 թ. Բուլղարիայի այլ քաղաքներում ևս ստեղծվեցին հնչակյան կազմակերպություններ, սկսեցին գործել սպորտային-մշակութային միություններ («Կայծ», «Շանթ», «Վիշապ»), որոնք Հայաստանի աշա-

կերտների ու որբերի համար հավաքեցին միջոցներ, գնեցին գրենական պիտույքներ և ՀՕՄ-ի միջոցով ուղարկեցին Սովետական Հայաստան։

1922 թ. օգոստոսի 13—15-ին Ռուսեում տեղի ունեցավ ս. դ. հընչակյանների կուսակցության Բուլղարիայի շրջանի 7-րդ շրջանային պատգամավորական ժողովը[64]։ Պատգամավորական ժողովը լուրջ մոտեցում ցուցաբերեց գաղութի կրթական-մշակութային, Սովետական Հայաստանին օգնության ցուցաբերելու, ինչպես նաև դաշնակցության դեմ պայքարն ակտիվացնելու հարցերին։ Այդ ակտիվությունը նկատվեց, երբ բուլղարահայ հնչակյանները կողմնորոշվեցին դեպի ԱՄՆ-ի հնչակյան կենտրոնը։ Կուսակցության ղեկավարները սկսեցին գործակցել բուլղարահայ կոմունիստների հետ, որպես Սովետական Հայաստանի ջերմ պաշտպաններ ու հակադաշնակցական պայքարի ակտիվ մասնակիցներ։

1919 թ., երբ Լենինի նախաձեռնությամբ Մոսկվայում ստեղծվեց III Կոմունիստական Ինտերնացիոնալը, բուլղարահայ հնչակյանները ցանկություն հայտնեցին դառնալ նրա անդամը։ Բուլղարահայ հնչակյանների և բալկանյան մյուս երկրներում գործող հնչակյանների մասին III Ինտերնացիոնալի գործադիր կոմիտեն որոշում կայացրեց հարցը լուծել այդ երկրների կոմունիստական կուսակցությունների միջոցով[65]։

Այդ հարցը քննարկվեց 1924 թ. նոյեմբերին ս. դ. հնչակյանների Աթենքում կայացած 8-րդ պատգամավորական ժողովում։—Այստեղ որոշում ընդունվեց անվերապահորեն համակրողի դիրքում լինել III Ինտերնացիոնալի նկատմամբ։ Սովետական Հայաստանի հանդեպ հնչակյանների դիրքորոշման վերաբերյալ որոշման մեջ ասված էր. «Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը անվերապահորեն կը կանգնի Խորհրդային Հայաստանի կողքին, կը ջանա ամեն միջոցով ու եղանակով սատարել անոր բարգավաճման ու վերաշինության, և կապել գաղութահայ աշխատավորության բարոյական, գաղափարական ու տնտեսական կապերով հայ հայրենիքին»։ Պատգամավորական ժողովը որոշել էր Մոսկվա ուղարկել պատվիրակություն՝ Ս. Սապահգյուլյանի գլխավորությամբ և խնդրել 3-րդ Ինտերնացիոնալի Գործադիր կոմիտեից՝ համաձայնություն տալ նրա անդամը դառնալու համար։ Սակայն դրան խանգարեց Ս. Սապահգյուլյանի մահը[66]։

1923 թ. Ա. Ստամբոլիյսկու կառավարության տապալումից հետո, ցանկության սպիտակ տեռորի պայմաններում արգելվեց բոլոր առաջադեմ կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների գործունեությունը, այդ թվում և հնչակյաններին։ Փակվեցին բոլոր ակումբ-

գրադարանները, բռնագրավվեցին գրքերն ու գույքերը։ Գաղութում գործում էին միայն դաշնակցական կազմակերպությունները։

1926—1929 թթ. երբ տապալվեցին ցանկովյան և լյապչևյան ֆաշիստական դիկտատուրաները և հաստատվեց «Դեմոկրատիչեսկի սգռվորի» իշխանությունը՝ Ալ. Մալինովի գլխավորությամբ, հնչակյաններին ու ռամկավարները լեգալ գործելու հնարավորություն ստացան։

1926 թ. Սոֆիայում լույս տեսավ հնչակյանների «Զանգ» շաբաթաթերթը։ 1931 թ. նրան փոխարինելու եկավ «Պալքանեան մամուլ» օրաթերթը, որը խմբագրում էր Հարություն Պողոսյանը։ Վերսկսվեց ակումբների ու գրադարանների գործունեությունը։

1928 թ. օգոստոսին Վառնայում տեղի ունեցավ բուլղարահայ հընչակյանների 10-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը, որտեղ ընդունվեցին մի շարք որոշումներ.

1. Աշխուժացնել բուլղարահայ հնչակյանների գործունեությունը բուլղարահայ թեմական խորհրդի ներսում։ Թույլ չտալ օտարել գաղութին պատկանող կալվածքները։ Նախաձեռնել բուլղարահայերի մարդահամար։

2. Հավատարիմ մնալ մարքսիստական գաղափարներին։ Հայաստանի հողային տարածքների վերամիավորման մասին պրոպագանդա մղել։ Կազմակերպել հայերի ներգաղթը Սովետական Հայաստան։

3. Լոյալ վերաբերմունք ունենալ դեպի Սովետական Հայաստանը[67]։

1930-ական թվականներին, երբ բուլղարահայ գաղութում ձեռնարկվեցին ՀՕԿ-ի կազմակերպություններ ստեղծելու աշխատանքներ, հընչակյանները ակտիվորեն պրոպագանդում էին Սովետական Հայաստանի նվաճումները, պայքարելով դաշնակցության բուրժուանացիոնալիստական գաղափարախոսության դեմ։ Նրանք դատապարտում էին գերմանական իմպերիալիզմի ոտնձգությունները, հանդես գալիս խաղաղության և ժողովուրդների բարեկամության համագործակցության օգտին։

1930 թ. օգոստոսին բուլղարահայ հնչակյանները Բուրգասում հրավիրեցին իրենց շրջանային 11 և 12-րդ պատգամավորական ժողովները, որտեղ որոշեցին. հրաժարվել բուլղարահայ դաշնակցության կենտրոնի հետ համագործակցելուց[68], կազմալուծել Փարիզում հրատարակվող «Նոր երկիր» թերթը, որը լինելով հնչակյանների կենտրոնի օրգանը, տանում էր հակահայաստանյան պրոպագանդա։ Ուժեղացնել հայապահպանման աշխատանքները, մատաղ սերնդին դաստիարակել հայրենասիրության ոգով։ Ուժեղացնել կուսակցական ընկերների մարքսիստական-գաղափա-

րական պատրաստվածությունը և համագործակցել III Ինտերնացիոնալի հետ[69]։

Բուլղարահայ հնչակյանների այս դիրքորոշումը իր էությամբ կրում էր բուլղարական աշխատավորական լայն շրջանների սոցիալ-դեմոկրատական շարժման ազդեցությունը, որը ազգային և սոցիալական ազատագրման պայքարի ճանապարհին զարգացել և աճել էր հակաթուրքական ոգով ու ռուսական կողմնորոշումով։ Մինչդեռ մյուս հայկական համայնքներում և մասնավորապես Ֆրանսիայում՝ քաղաքական պայքարի մթնոլորտը այլ էր։

Պատգամավորական ժողովից հետո բուլղարահայ հնչակյաններն էլ ավելի աշխուժացրին իրենց գործունեությունը։ Համագործակցելով բուլղարահայ կոմունիստների և ռամկավարների հետ, միասնական ուժերով ստեղծեցին «Ազգային միություն» նոր կազմակերպությունը, որը հետագայում փոխարինվեց ՀՕԿ-ի կազմակերպություններով։

1930-ական թվականներին սփյուռքում պայքարը դաշնակցության և առաջադեմ կազմակերպությունների միջև սուր բնույթ ընդունեց, որն առանձին երկրներում վերջանում էր առաջադեմ գործիչների ահաբեկումով, սպանություններով։ Նման երևույթներ նկատվում էին նաև բուլղարահայ համայնքում, երբ դաշնակցության առանձին խմբեր ծեծի և խոշտանգումների էին ենթարկում հակառակորդ կուսակցություններին պատկանող գործիչներին։

Բուլղարիայի ներքին գործերի մինիստրության պետական ապահովության բաժնի պետ գեներալ Լուկովը ուրիպված եղավ հայտնելու. «Եթե մեզ մոտ էլ պատահեն այլ երկրներում տեղի ունեցող վհեներն ու սպանությունները, ապա մասնակիցները խստիվ կպատժվեն, իսկ դրդողները կվտարվեն Բուլղարիայից»[70]։

1934 թ. փետրվարի 8-ին Սոֆիայի ոստիկանության գլխավոր տնօրենը իր մոտ հրավիրեց բուլղարահայ գաղութում գործող երեք լեգալ կուսակցությունների՝ հնչակյան, ռամկավար և դաշնակցության ներկայացուցիչներին։ Տնօրենը նրանց ստորագրել տվեց մի գրություն, որտեղ ասված էր. «Այսօր, 1934 թ. փետրվարի 8-ին, հնչակյանների ներկայացուցիչներ և ստորագրողներ Հարություն Պողոսյանը, Մարտիրոս Նաչիկյանը, Անդրանիկ Տոստուրյանը, դաշնակցության ներկայացուցիչներ Մարտիկ Օհանեսյանը, Հովհաննես Տևեճյանը, Օնիկ Օվանեսովը, ռամկավարների ներկայացուցիչներ Արտաշես Զաքարյանը, Պարույր Մազլումյանը համաձայնվեցինք հետևյալի մասին. այսուհետև կասեցնել պայքարը համայնքում գործող երեք կուսակցությունների միջև[71]։

Այս արձանագրությունը ստորագրելուց հետո հնչակյան և ռամկավար կուսակցությունների ներկայացուցիչները լուրջ հետևություններ արեցին, նկատի ունենալով «Նարոդեն բլոկի» կառավարության բարյացակամ վերաբերմունքը դաշնակցության նկատմամբ։ Այդուամենայնիվ 1934 թ. մարտին Բուլղարիայի բոլոր հայաշատ քաղաքներում տեղի ունեցան հայերի հակադաշնակցական միտինգներ ու հրապարակային ժողովներ Ամն-ում դաշնակցության կողմից կատարվող ահաբեկչական գործողությունների դեմ[72]։

1934 թ. մայիսի 19-ի հեղաշրջումից հետո բուլղարական կառավարությունը արգելեց ՀՕԿ-ի գործունեությունը։ Սահմանվեց խիստ գրաքննություն։ Ուժեղացան կոմունիստների և առաջադեմ գործիչների հալածանքներն ու ձերբակալումները։ Չնայած քաղաքական այդպիսի մթնոլորտին, Բուլղարիայում շարունակում էր լույս տեսնել հնչակյանների օրգան՝ «Պալքանեան մամուլը»։ 1935 թ., երբ տապալվեց Ռազմական լիգայի» կառավարությունը ու վերականգնվեց ՀՕԿ-ի կազմակերպությունների գործունեությունը, հնչակյանները շարունակեցին գործել վերջինի մասնաճյուղերում։ Սակայն 1937 թ. վերջին Կյոսեիվանովի կառավարությունը վերջնականապես արգելեց ՀՕԿ-ի գործունեությունը։ Այդ ժամանակ հնչակյաններն իրենց գործունեությունն աշխուժացրին զանազան սպորտային, սկաուտական, մշակութային և այլ կազմակերպություններում, համատեղ գործելով հայ կոմունիստների և ռամկավարների հետ։ 1938—1941 թթ. շարունակեց լույս տեսնել հնչակյանների օրգան «Պալքանեան մամուլը», չնայած երկրում ստեղծված ֆաշիստական դիկտատուրայի սահմանափակումներին։ Նրա էջերում հիմնականում շոշափվում էին բուլղարահայերին հուզող հարցերը (բուլղարական քաղաքացիություն ընդունելու, աշխատանքի հավասար իրավունքների, համայնքի մարմինների ընտրությունների և այլն։ Հոդվածներ էին հրատարակվում նաև Սովետական Հայաստանի տնտեսական ու մշակութային նվաճումների մասին։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին երբ Բուլղարիայի ֆաշիստական իշխանությունները համագործակցում էին հիտլերականների հետ, դաշնակցության ձախ թևը ուժեղացրեց պայքարը ու զրպարտությունները ինչպես հայ կոմունիստների, այնպես էլ հնչակյանների դեմ։ Բազմաթիվ ամբաստանագրերի արդյունքն եղավ այն, որ բուլղարական ֆաշիստական կառավարությունը արգելեց «Պալքանեան մամուլի» հրատարակումը և փակեց հնչակյանների ակումբ-գրադարանները։ Հնչակյան կուսակցության ղեկավարները

համակրանքով լցված դեպի Սովետական Միությունն ու Սովետական Հայաստանը, ուղղակի կամ անուղղակի օժանդակում էին Բուլղարիայում ծավալվող հակաֆաշիստական դիմադրական շարժմանը։ 1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխության նախօրեին նրանք ընդհատակում գործող հայ կոմունիստների հետ ստեղծեցին «Հայրենական ճակատի» կոմիտեներ և պաշտպանեցին այդ ճակատի ժողովրդական իշխանությունը։ 1944 թ. վերջին, երբ բուլղարահայ գաղութում հիմնվեց «Երևան» առաջադիմական միությունը, հնչակյանները մտան նրա շարքերը։

Բուլղարահայ հնչակյանների մեծամասնությունը, իր գործունեության կես դարում ձգտել և համագործակցել է գաղութի առաջադեմ ուժերի և բուլղարահայ կոմունիստների հետ։ Չնայած իրենց որոշ տատանումների քաղաքականության, բուլղարահայ հնչակյանները միշտ եղել են Սովետական Հայաստանի ջերմ պաշտպաններ և հայապահպանման գործի ջատագովներ։

գ. Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը

Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը հիմնադրվել է 1890 թ. Թիֆլիսում։ Նրա հիմնադիրներ Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը, Ռոստոմ Զորյանը իրենց շուրջը համախմբելով Եվրոպայում սովորող մի խումբ ուսանողների, ժնևում սկսեցին հրատարակել կուսակցության «Դրոշակ» օրգանը։ Այս կուսակցությունը ս. դ. հնչակյաններից հետո հանդես եկավ Արևմտյան Հայաստանի ազատագրման և հայ պետականության վերականգնման ծրագրով և հավակնություն ունենալով գլխավորելու հայ ազգային-ազատագրական պայքարը։ Ստեփան Շահումյանը 1902 թ. այս առնչությամբ գրել է։ «...Ամենուրեք հրահրելով իրենց համար այնքան ձեռնտու շովինիստական զգացումը, հսկայական նյութական միջոցներ են դուրս կորզում Արևմտյան Հայաստանի ազատագրման պատրվակի տակ»[73]։

Մինչև 1893—1894 թթ. դաշնակցությունը բուլղարահայ գաղութում չուներ իր կազմակերպությունները։ Առանձին անհատներ ստանում էին «Դրոշակը» և դարձել էին նրա համակիրները։

Բուլղարիա այցելած դաշնակցական առաջին գործիչը եղել է Գարեգին Խաժակը (Պապա Գասպար)։ 1894 թ. նա այցելում է Յամբոլ քաղաքը, որտեղ, ինչպես նաև մոտակա Սլիվեն քաղաքում, մի խումբ հայերի նախաձեռնությամբ հիմնում են դաշնակցության խմբակ, որի անդամներն էին Ստեփան Գանարյանը, Ամբակում ազան, Խաչիկ Տյոքմեճյա-

նը, Միքայել Մարինովը, Կարապետ Գարակյոզյանը, Հակոբ Փափազյանը և Սեդրակ Սեյտարյանը։ 1895 թ. Խաժակը այցելում է Վառնա և նույնպես ստեղծում դաշնակցության խմբակ։

1895 թ. վերջին բուլղարահայ գաղութում սրվեց պայքարը հնչակյան և դաշնակցական խմբակների միջև։ Նույն թվականի աշնանը Բուլղարիա է գալիս դաշնակցության գործիչներից Վարդոն (Վարդ Պատրիկյանը)։ Նա հրեայի անձնագրով 6 ամիս մնում է Յամբոլում, ապա մեկնում Կոստանդնուպոլիս՝ Բանկ Օտոմանի գրավմանը մասնակցելու համար։ Դրա ձախողումից հետո նա վերադառնում է Բուլղարիա և հաստատվում Վառնայում։ Այստեղ նա դաշնակցության արևմտյան բյուրոյի հրահանգով կազմակերպում է դաշնակցության Բալկանյան կենտրոնական կոմիտե և բյուրո։ Բյուրոյի կազմում ընտրվում են Ստեփան Գանարյանը՝ Յամբոլից, Հակոբ Երկանյանը՝ Պլովդիվից, Հովհաննես Քայաղարեն և Արսեն Էսպաշյանը՝ Վառնայից։ Այս կոմիտեն գործեց մինչև 1898 թ.։ Դաշնակցությունը Բուլղարիայում գործում էր կիսալեգալ հիմունքներով։

1905 թ. Խաժակը այցելում է Ռուսե քաղաքը և այստեղ ևս հիմնում կոմիտե։ Հնչակյաններին չմիացած նախկին արմենականները մտնում են այդ կոմիտեի կազմի մեջ։ Հետագայում Ռուսե եկան Միաբանը, Հայկ Մալխասյանը և ուրիշներ։ 1895—1896 թթ. դեպքերից հետո Ռուսեում էին դաշնակցության գործիչներ Ռոստոմ Զորյանը և Վահան Մանուելյանը, որոնք հետագայում տեղափոխվեցին Պլովդիվ։ Նույն՝ 1896 թ. Շումենում ստեղծվում է դաշնակցության խմբակ, որի շարքերում գործում էին հընչակյաններից հեռացած այլ կուսակցականներ։ Շումենում գտնվում էին դաշնակցության այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք էին «Շարժում» (1898 թ. Վառնայում հրատարակվող դաշնակցության բուլղարահայ կենտրոնական կոմիտեի օրգանը—Ղ. Ղ.) խմբագիր Տիգրան Աճեմյանը, Գրիգոր Թահմաքըրյանը, Խաչիկ Մարտիրոսյանը և ուրիշներ, որոնք համախմբված էին «Պուլկարացի Պետո» ակումբի շուրջը։

Բուլղարահայ գաղութում դաշնակցության կազմակերպություններ գոյություն ունեին նաև Պլովդիվում, Պազարջիկում և այլ քաղաքներում։ Դաշնակցության առանձին խմբակներ գործում էին Պլովդիվ-Բուրգաս երկաթգծի վրա աշխատող հայ գաղթականների շրջանում, որոնց մեծ մասը մշեցիներ և վանեցիներ էին։

1897 թ. օգոստոսի 20—22-ին Վառնայում հրավիրվեց Բալկաններում գործող դաշնակցության առաջին շրջանային ժողովը, որն ընտրեց 5 հոգուց բաղկացած կենտրոնական կոմիտե։ Նրանցից մեկը արևմտյան բյուրոյի ներկայացուցիչն էր[74]։ 1898 թ. Կոստանդնուպոլսից Բուլղարիա է

դալիս Ա. Վոսկյանը և վերակազմում դաշնակցության Բալկանյան բյուրոն։

1900 թ. Պլովդիվում ակտիվ գործունեություն են ծավալում դաշնակցության հիմնադիրներ Քրիստափոր Միքայելյանը, Ռոստոմ Զորյանը, ապա նաև Վահան Շահրիմանյանը, Կարապետ Պոռնյանը և Վահան Մանուելյանը։

Դաշնակցական ղեկավարներն անմիջական կապ ստեղծեցին Բուլղարիայում գործող մակեդոնական կազմակերպության (ՎՄՕՌՕ) ղեկավարներ Բորիս Սարաֆովի և Գարվանովի հետ։ Այդ կազմակերպությունը պայքարում էր Մակեդոնիան թուրքական տիրապետությունից ազատագրելու և Բուլղարիային միացնելու ծրագրով։ Ստեղծվեց «Հայ-մակեդոնական եղբայրությունը», որն ընդհանուր պայքար ծավալեց սուլթանական Թուրքիայի դեմ։ Անշուշտ, բուլղարական կառավարությունը անտարբեր չէր այդ համատեղ պայքարի հանդեպ և աշխատում էր օգնել բոլոր միջոցներով[75]։

Դաշնակցության և մակեդոնական շարժման միջև կային ընդհանուր գծեր, հատկապես պայքարի ահաբեկչական գործելակերպի ձևերում, որոնք շարժման ներսում առաջացրին պառակտում և անջատողական ձգտումներ։

Դաշնակցության կազմակերպած ահաբեկչությունները, արկածախնդրական ելույթներն ու ցույցերը վրդովվեցրին բուլղարահայ աշխատավորներին և բուրժուազիայի որոշ խավերին, որոնք հիասթափվելով, ատելությամբ դարձան իրենց նյութական ու բարոյական օգնությունը[76]։

1912 թ. վրա հասան բալկանյան պատերազմները։ Դաշնակցությունը Բուլղարիայում ակտիվորեն մասնակցում էր հայկական կամավորական դումարտակի ստեղծման աշխատանքներին։ Երբ պայթեց առաջին համաշխարհային պատերազմը, հայկական կամավորական դումարտակի պինվորների և դաշնակցության ղեկավարների մեծ մասը Բուլղարիայից անցան Անդրկովկաս։

1918 թ., երբ ստեղծվեց «Հայաստանի հանրապետությունը», այն առանձնապես չոգևորեց բուլղարահայերին։ Նրանք անտարբեր մնացին դաշնակցության ղեկավարների «օգնել հայրենիքին», «ներգաղթ կազմակերպել» և այլ կոչերի նկատմամբ։ Ընդհակառակը, բուլղարահայ աշխատավորները ԲԿԿ ղեկավարությամբ մեծ ոգևորությամբ ընդունեցին դաշնակցական կառավարության տապալումը և ողջունեցին սովետական կարգերի հաստատումը Հայաստանում։

1919 թ. դաշնակցության պարագլուխները բուլղարահայ գաղութում ստեղծել էին «Ազգային միությունը», որպես գաղութի ներքին ղեկավարման մարմին[77]։ 21 հոգուց բաղկացած նրա կենտրոնական մարմինը Սոֆիայում հանդգնություն ունեցավ հայտարարելու, որ ինքը միակ ղեկավար մարմինն է բուլղարահայ գաղութում։ Բուլղարահայ դաշնակցականները ձգտում էին ստեղծել Բալկանյան վարչություն։ Այդ ընթացքում «Ազգային բլոկը», հայ կոմունիստների գլխավորությամբ, «Ազգային միությունից» պահանջեց հաշվետու լինել դրամական չարաշահումների համար և հրաժարվել գաղութը ղեկավարելու հավակնություններից։

1921—1924 թթ. «Հայաստանի հանրապետության» նախկին նախարարներն ու դաշնակցության պարագլուխները Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո իրենց հայացքն ուղղեցին դեպի սփյուռք, առաջին հերթին դեպի Մերձավոր Արևելք և Բալկաններ։ Գարեգին Նժդեհը, Հովհաննես Տեհճյանը, Ռուբեն Դարբինյանը, Սիմոն Վրացյանը, Ալեքսանդր Խատիսյանը, Ամատունին և ուրիշներ ապաստանել էին Բուլղարիայում։ Նրանք շրջում էին Բուլղարիայի հայաշատ քաղաքներում և ելույթներ ունենում Սովետական Հայաստանի և բոլշևիկների դեմ։ Բուլղարահայ կոմունիստները Վառնայում, Պլովդիվում և Սոֆիայում արժանի հակահարված տվեցին նման ելույթներին։

Յանկովյան ֆաշիստական դիկտատուրայի տարիներին դաշնակցականները համագործակցելով ֆաշիստների հետ, զրպարտում էին առաջադեմ մարդկանց, առաջին հերթին հայ կոմունիստներին։ 1924—1926 թթ. նրանք հայաշատ քաղաքներում հիմնեցին բազմաթիվ ակումբ-գրադարաններ, սկաուտական-սպորտային միություններ։

1929—1933 թթ. բուլղարահայ գաղութում սրվեց պայքարը դաշնակցության դեմ։ Այն առանձնապես սուր բնույթ ստացավ բուլղարահայ գաղութի ներքին ղեկավարման մարմինների ընտրությունների ժամանակ։ Բոլոր հայաշատ քաղաքներում թաղական խորհուրդներից, հոգաբարձություններից և թեմական խորհրդից դաշնակցականները դուրս մղվեցին։ Նրանց փոխարինելու եկան առաջադեմ «Ազգային բլոկի» կուսակցությունների ներկայացուցիչները։

Քաղաքական լարված տարիներին ստեղծվեցին առաջադեմ «Ազգային միությունը», այնուհետև՝ ՀՕԿ-ի կազմակերպությունները, որոնք բացատրական լայն աշխատանք ծավալեցին հայ պատանիների ու երիտասարդների շրջանում։ Դաշնակցությունն իր պրովոկացիաներով ու դավերով վերջնականապես վարկաբեկվեց բուլղարահայ գաղութում։ Պայքարն ավելի սրվեց, երբ 1933 թ. կազմակերպվեց առաջին ներգաղթը և 1000

բուլղարահայեր մեկնեցին Սովետական Հայաստան։ Հայ մտավորականներից, գիտակից բանվորներից և արհեստավորներից շատերը հրաժարվում էին դաշնակցությունից ու անցնում ՀՕԿ-ի շարքերը։

1934 թ. մայիսի 19-ին Բուլղարիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումը ոգևորեց բուլղարահայ դաշնակցականներին։ «Ռազմական լիգայի» և «Զվենո» խմբի կառավարությունը երկար չմնաց, սակայն երկրում հաստատեց ռազմա-ֆաշիստական դիկտատուրա։

1937 թ. Սոֆիայում հաստատված Գարեգին Նժդեհն անջատվեց բյուրոյականներից և սկսեց հրատարակել «Ռազմիկ» թերթը։ Բուլղարիայում առաջ եկան դաշնակցական երկու կազմակերպություններ՝ իրենց առանձին տպագիր օրգաններով՝ բյուրոյականների «Ազատ խոսքը» և նժդեհականների «Ռազմիկը»։ «Ռազմիկը» առաջին իսկ համարից հիտլերականների օրինակով սկսեց պրոպագանդել հակասովետականությամբ ներծծված մոլեռանդ նացիոնալիզմ։ Նժդեհականներն իրենց ենթարկեցին դաշնակցության հասարակական-մշակութային և հայրենակցական միությունները։

1937 թ. վերջին Բուլղարիայում հաստատված Կյոսեիվանովի կառավարությունը վերջնականապես լուծարքի ենթարկեց ՀՕԿ-ի կազմակերպությունը և բուլղարահայ գաղութի թեմական և տեղական մարմինների նշանակման մասին նոր ծրագիր մշակեց։ Նժդեհականները ձգտում էին իրենց ձեռքը վերցնել հայկական հաստատությունների ու կազմակերպությունների ղեկավարումը։

1941 թվականին նժդեհականները Ֆիլովի ֆաշիստական կառավարության աջակցությամբ և օժանդակությամբ անցան ակտիվ գործունեության։ Հիտլերականների Սովետական Միության վրա հարձակվելուց հետո նժդեհականները սկսեցին «կամավորական» ջոկատներ կազմակերպել՝ արևելյան ճակատ ուղարկելու համար։

1942 թ. դեկտեմբերին Բեռլինում Ա. Աբեղյանի նախագահությամբ հիմնվեց «Հայ ազգային խորհուրդ», որը հիտլերականների և իտալական ֆաշիստների գրաված երկրների հայ գաղութների թեմական խորհուրդներին համակներ հղեց, կոչ անելով ստեղծել «Միասնական համահայկական կազմակերպություն» և կամավորական ջոկատներ[78]։ Դաշնակցությունը ծրագրում էր բուլղարահայ գաղութում ստեղծել 1500 հոգուց բաղկացած կամավորական լեգեոն։ Սակայն, ինչպես նշել ենք, նրա ջանքերն ապարդյուն անցան։

1943 թ. սկզբին Ստալինգրադի ճակատամարտից հետո պառակտում առաջացավ նաև դաշնակցության նժդեհյան թևի ներսում։ Դեռ 1942 թ. դեկտեմբերին, երբ ՀՄԸՄ-ի կազմակերպության ղեկավարները պատրաստվում էին նշելու միության հիմնադրման 25-ամյակը, Պլովդիվի և Վառնայի մասնաճյուղերը հրաժարվեցին նժդեհյան ղեկավարությունից և փորձեցին ստեղծել առանձին կազմակերպություններ[79]։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին դաշնակցության պարագլուխները նկատելով Գերմանիայի պարտությունը, հրաժարվեցին կողմնորոշումից և սկսեցին նոր տերեր փնտրել։ Կահիրեում հրավիրվեց դաշնակցության համագումար, որտեղ ընդունվեց ԱՄՆ-ից եկած Սիմոն Վրացյանի առաջարկը՝ «Ամերիկյան կողմնորոշման» վերաբերյալ[80]։

1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխության հաղթանակով և ֆաշիստական Գերմանիայի չախչախումով վերացվեց դաշնակցության գործունեությունը Բուլղարիայում։

Դաշնակցությունը Բուլղարիայում միշտ էլ վայելել է բուլղարական բուրժուազիայի և նրա կառավարությունների վստահությունն ու օժանդակությունը։ Բայց այդ կուսակցությունը չկարողացավ արժանանալ բուլղարահայ գաղութի վստահությանը։ Դեռ ավելին, բուլղարահայ գաղութը, հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին և ընթացքում, աստիճանաբար լցվեց դաշնակցության հակասովետական և հակահայաստանյան քաղաքականության նկատմամբ։

դ. Ռամկավար-ազատական կուսակցությունը

1896 թ. ս. դ. Հնչակյան կուսակցության շարքերից հեռացած «Վերակազմյալների» առանձին խմբեր գործում էին Բուլղարիայում։

1906 թ. Հնչակյան գործիչ Ներսեսը (Գ. Պոզիկյան) Պարսկաստանից անցնում է Բուլղարիա։ Այստեղ պատակված հնչակյանները համախմբվում են և Ներսեսի գլխավորությամբ հիմնում «Հեղափոխական միություն» (հետագայում՝ «Գաղափարական միություն»)։ Ներսեսը որպես «Գաղափարական միության» լիազոր, 1907 թ. մեկնում է Եգիպտոս և բանակցություններ վարում արմենականների հետ։ Այստեղ, 1908 թ. «Վերակազմյալները», «Արմենականները» և «Միութենականները» միանալով հիմնում են հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը[81]։

1920 թ. դեկտեմբերի 13-ին Կոստանդնուպոլսում ռամկավարները հրավիրում են կենտրոնական վարչության ժողով, որտեղ միաձայն ընդունվում է շրջանային վարչություններին ուղղված № 3 շրջաբերականը։

Այնտեղ ասված էր. «...Անդրկովկասի ներկա պայմաններուն մեջ հայերը Թուրքերու սպառնալիքին հանդեպ իրենց ֆիզիկական գոյությունը, ինչպես նաև կարելի է ըսել քաղաքական իրավունքները ապահովելու համար ուրիշ որևէ կողմե գործնական օգնություն չեն կրնար ակնկալել, եթե ոչ Ռուսաստանեն միայն...»[82]:

Շրջաբերականից երևում է ռամկավար կուսակցության կողմնորոշումը դեպի Սովետական Ռուսաստանը և Սովետական Հայաստանը: Այդ կուսակցությունը սկզբում աջակցում էր «Հայաստանի Հանրապետությանը», բայց երբ Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր, չնայած գաղափարական հակասություններին, վճռականորեն կանգնեց Սովետական Հայաստանի պաշտպանության դիրքերում:

1908 թ. Բուլղարիայում գործող հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը 1920 թ. հրատարակում է «Լուսարձակ» օրգանը՝ Սիմոն Բենլյանի խմբագրությամբ (29-րդ համարից՝ Տիգրան Մարտիրոսյանի):

Բուլղարահայ ռամկավարները համագործակցում էին հնչակյանների և բուլղարահայ կոմունիստների հետ: Նրանք միասնական ճակատով հանդես են եկել գաղութի թաղական խորհուրդների, հոգաբարձությունների և թեմական խորհրդի ընտրությունների ժամանակ[83]: Ռամկավարները նույնպես ուժեղացրին պայքարը դաշնակցության «Ազգային միության» դեմ: 1921 թ. «Լուսարձակը» գրում էր. «Պուլկարահայ «Ազգային միության» կոչված վարչությունը, որու մեծամասնությունը անգույն ու դիմակավոր տիպերե է կազմված, դաշնակցության հրահանգներով վերջերս շուրջ 85000 լևա ուղարկած է Պարսկաստան, ժողովուրդեն հանգանակած գումարները կուսակցական հետապնդումներին գործածելով»[84]:

1923 թ. սեպտեմբերյան ապստամբության պարտությունից հետո, ցանկովյան դիկտատուրայի ծանր տարիներին, բուլղարահայ ռամկավարները հանդես եկան դաշնակցության հակաժողովրդական, զրպարտչական գործունեության դեմ:

1924 թ. բուլղարահայ գաղութին այցելեց ռամկավար-ազատական կուսակցության կենտրոնական վարչության անդամ Հովհաննես Պողոսյանը: Նրա գլխավորությամբ բուլղարահայ ռամկավարներն աշխատանք տարան՝ գաղութում ՀԲԸՄ-ի մասնաճյուղ ստեղծելու ուղղությամբ: Նրանք դրական վերաբերմունք ցուցաբերեցին Բուլղարիայում նոր ստեղծվող ՀՕՄ-ի և ապա ՀՕԿ-ի կազմակերպությունների նկատմամբ:

Բուլղարահայ ռամկավարների աչքի ընկնող գործիչներից էին Արտաշես Ջաքարյանը, Պարույր Մազլումյանը, Սարիկ Աստվածատուրյանը, Վիկտորյա Մումճյանը, Տիգրան Մարտիրոսյանը, Հրանտ Հրահանը, Արամ Մարթայանը և ուրիշներ:

1929 թ. նրանց կուսակցության օրգանն էր «Փարոսը», որը սկզբից հրատարակվեց Սոֆիայում, այնուհետև՝ 1931 թ. Պլովդիվում:

1927 թ. ցանկովյան հետադիմական կառավարության տապալումից հետո Բուլղարիայի մի շարք քաղաքներում ռամկավարներն ստեղծեցին ՀԲԸՄ մասնաճյուղեր և ակումբներ: Նրանք այդ կազմակերպությունների օժանդակությամբ նյութական միջոցներ հավաքեցին Սովետական Հայաստան ներգաղթողների, նաև Հայաստանի վերաշինության համար: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ռամկավարները նյութական օժանդակություն ցույց տվեցին բուլղարահայ դպրոցներին: Հայ կոմունիստների և հնչակյանների հետ նրանք պայքարում էին դաշնակցության դեմ, հատկապես տեղերում՝ թաղական խորհուրդներում և դպրոցական հոգաբարձություններում: Իրենց հակադաշնակցական գործունեության համար նրանցից շատերը նժդեհականների կողմից հաճախ ենթարկվում էին հալածանքի[85]:

1930-ական թվականներին բուլղարահայ ռամկավարները ՀԲԸՄ մասնաճյուղերի միջոցով աշխույժ գործունեություն ծավալեցին հայ երիտասարդների շրջաններում: Այդ գործունեության նախաձեռնողն էր Սոֆիայի «Մեսրոպյան» ճեմարանի տնօրենը՝ Գևորգ Մեսրոպը, որ 1934 թ. ընտրվել էր ՀԲԸՄ Բուլղարիայի հանձնաժողովի նախագահ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին բուլղարահայ կոմունիստները բանակցելով Պլովդիվում հրատարակվող ռամկավարների օրգան «Փարոս» թերթի խմբագրության հետ, վերջինիս համաձայնությամբ թերթի էջերում տպագրում էին դաշնակցության դեմ ուղղված հոդվածներ:

1944 թ. սեպտեմբերյան սոցիալիստական հեղափոխության օրերին բուլղարահայ ռամկավարները հայ կոմունիստների և հնչակյանների հետ միասին ակտիվորեն մասնակցեցին «Հայրենական ճակատի» հայկական կոմիտեների ստեղծման աշխատանքներին: Նրանք մտան «Երևան» առաջադիմական միության շարքերը և ակտիվորեն մասնակցեցին 1946 թ. ներգաղթի կազմակերպման գործերին:

Բուլղարահայ ռամկավարները խոշոր ավանդ ունեն սփյուռքի հայ դանգվածների հայրապահպանման գործում:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Բուլղարիայում կապիտալիստական հարաբերությունների արագ զարգացմանը զուգընթաց երկրում առաջացավ երիտասարդ բանվոր դասակարգ և բանվորական շարժում, որը հող նախապատրաստեց սոցիալիստական և մարքսիստական գաղափարների տարածման համար։ Այդ գործում մեծ դեր խաղաց Մարքսի և Էնգելսի բոցաշունչ աշակերտ Դիմիտր Բլագոևը[86]։ Բանվորական շրջաններում ստեղծվեցին մարքսիստական խմբակներ, որոնց հիմքի վրա կազմակերպվեց Բուլղարական բանվորական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (1891)։ Բուլղար բանվորների և առաջադեմ մտավորականության ներկայացուցիչների հետ առանձին հայ, հրեա, թուրք բանվորներ ու մտավորականներ ևս ընդգրկվում են մարքսիստական խմբակներում և հետագայում դառնում բուլղարական բանվորական սոցիալ-դեմոկրատական կուսակցության հայտնի գործիչներ։ Հայերից էին Ստեփան Շահբազյանը, Տիգրան Իսմիյանը, Անդրեաս Հակոբյանը, Արտաշես Մուրատյանը, Գառնիկ Թյությունճյանը, Հրանտ Մոմճյանը, Արտաշես Ասլանյանը, Ստեփան Հինդլյանը և ուրիշներ[87]։

1903 թ., երբ ԲԲՍԴ կուսակցությունը բաժանվեց տեսնյակների և շիրոկինների, առաջինների շարքերում վերոհիշյալ կոմունիստներից բացի հետագայում գործում էին Գրիգոր Շիշմանյանը, Հարություն Մելքոնյանը, Հայրապետ Հայրապետյանը, Հակոբ Հայրապետյանը, Արմենակ Թազվորյանը, և ուրիշներ[88]։ Անդրեաս Հակոբյանը և Ստեփան Հինդլյանը շուտով հեռացան տեսնյակներից։ Հետագայում Անդրեաս Հակոբյանն անցավ անարխո-լիբերալների, իսկ ավելի ուշ՝ սպեցիֆիկների շարքերը։

1905 թ. ռուսական առաջին հեղափոխության ազդեցության ներքո բուլղարական բանվորական շարժումը վերելք ապրեց։ Հեղափոխությունը խթան հանդիսացավ դասակարգային պայքարի ուժեղացման և բուլղարական աշխատավորների շրջաններում կուսակցության դիրքի ամրապնդման համար։ ԲԲՍԴ տեսնյակների կուսակցությունը և նրա օրգան «Ռաբոտնիչեսկի վեստնիկը», ինչպես նաև «Նովո վրեմե» ամսագիրն առանձին ուշադրություն նվիրեցին մարքսիստական գաղափարների պրոպագանդմանը, բանվորներին կուսակցության շարքերը ներգրավելու ու բանվորական ինքնազարգացման խմբակներ կազմակերպելու գործին։

1909 թ. Պլովդիվում հայ բանվորների շրջանում հիմնադրվում է «Ինքնազարգացման խմբակը», որտեղ դասախոսություններով հանդես են գալիս Ստեփան Շահբազյանը, Տիգրան Իսմիյանը և ուրիշներ։ Բուլղարահայ տեսնյակները մասնակցում էին ԲԲՍԴ կուսակցության բոլոր միջոցառումներին, մայիսմեկյան ցույցերին, միտինգներին։

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին ԲԲՍԴ կուսակցությունը, այդ թվում նաև հայ տեսնյակները, պայքար ծավալեցին իմպերիալիստական պատերազմի դեմ, բացահայտելով նրա զավթողական, թալանչիական բնույթը։ Պատերազմի սկզբին թուրքական իշխանությունների կազմակերպած հայերի կոտորածների դեմ բլագոևյան կուսակցությունը բուլղարական կառավարությունից պահանջեց միջամտել՝ կոտորածները դադարեցնելու համար։

ԲԲՍԴ տեսնյակների կուսակցությունը 1915 թ. օգոստոսի 13-ին իր հերթական XXI համագումարում ընդունեց հատուկ բանաձև-բողոք՝ ընդդեմ ժողովուրդների պաշտպանության օգտին, որն ուղղված էր նաև թուրքական իշխանությունների՝ հայերի նկատմամբ գործած վայրագությունների դեմ։ Բանաձևի երկրորդ կետում ասված էր. «Համագումարը ամենամեծ վրդովմունքով բողոքում է հայ ժողովրդի ազատագրման համար մարտնչող մարտիկներին կախաղան բարձրացնելու դեմ, որոնց պայքարը ուղղված է թուրքական կառավարության այն սարսափելի գազանություների դեմ, որին ենթարկված է այսօր անպաշտպան հայ ժողովուրդը։ Թուրքական կառավարությունը որոշել է պատմության բեմից վերացնել մի ամբողջ ժողովուրդ, Թուրքիայում ռազմականալվածատիրական վերնախավի իշխանությունը ամրապնդելու համար»[89]։

1915 թ. հոկտեմբերի 14-ին Բուլղարիան դարձավ առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի մասնակից՝ անցնելով կայզերական Գերմանիայի կողմը։

Բուլղարական բանվորական սոցիալ-դեմոկրատական տեսնյակների կուսակցությունը զինվորական համազգեստ հագած բանվորներին ու գյուղացիներին հրահանգեց լայն ագիտացիա տանել զորակոչվածների շարքերում՝ պայքարել իմպերիալիստական պատերազմի դեմ։

Բուլղարական բանակ զորակոչված բազմահիվ հայերի մեջ էր նաև կոմունիստ Ստեփան Շահբազյանը։ Ինչպես բոլոր կոմունիստները, այնպես էլ նա, ռազմաճակատում շարունակում էր գործել ընդդեմ իմպերիալիստական պատերազմի։ Տիրապետելով ֆրանսերենին, նա գրում էր հակապատերազմական թռուցիկներ և տարածում ֆրանսիական բանակի զինվորների մեջ։ Թռուցիկներից մեկում Շահբազյանը գրում էր. «Մեր գնդում մեծամասնությունը բանվորներ ու գյուղացիներ են։ Մեր մեջ չկան գործարանատերերի, կամ գեներալների որդիներ։ Բոլորս պրոլետարներ

ենք։ Երևի ձեզ մոտ էլ նույնն է։ Ինչո՞ւ ենք միմյանց դեմ կռվում, չէ՞ որ մեզ ոչինչ չի բաժանում։ Չէ՞ որ բոլորս յանկանում ենք տուն վերադառնալ։ Եղբայրական ձեռք ենք մեկնում ձեզ։ Կորչի իմպերիալիստական պետությունների կողմից մեր վրին փաթաթված պատերազմը»[90]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և Սովետական Ռուսաստանի պատերազմից դուրս գալը խթանեցին հեղափոխական տրամադրությունները Բուլղարիայում և ռազմաճակատում։ Սովի և թշվառության մատնված աշխատավորական զանգվածները և բանակը 1918 թ. գարնանը սկսեցին հակապատերազմական բողոքներ ու ցույցեր կազմակերպել։ Նույն թվականի աշնանը ռազմաճակատում բուլղար զինվորները լքում էին խրամատները և շարժվում դեպի Սոֆիա, որը վերջացավ Վլադայայի դեպքերով[91]։

Բուլղարիան պատերազմից դուրս եկավ պարտված, տալով հսկայական կորուստներ (100000 սպանված և 150000 վիրավոր)։ Զոհվեցին նաև բազմաթիվ հայեր, այդ թվում գնդապետ Պողոս Պողոսյանը, կրտսեր լեյտենանտ Գրիգոր Գրիգորյանը, շարքայիններ Մկրտիչ Քանթարյանը, Հակոբ Շարապյանը, Արտաշես Հովհաննիսյանը, Հովհաննես Շիշմանյանը և ուրիշներ[92]։

1919 թ. ԲԲՍԴ տեսնչականների կուսակցությունը ուժեղացրեց իր գործունեությունը կուսակցական կազմակերպությունների վերականգնման և աշխատավորական զանգվածների պայքարը ղեկավարելու ուղղությամբ։ Նույն թվականի մայիսին այն դարձավ III Կոմունիստական Ինտերնացիոնալի անդամ, վերանվանվելով բուլղարական կոմունիստական կուսակցություն։

Բանվորական-գյուղացիական հեղափոխական շարժման վերելքի պայմաններում ուժեղացավ ԲԿԿ ազդեցությունը քաղաքի և գյուղի աշխատավորական խավերի վրա, այդ թվում բուլղարահայ աշխատավորների։ Հայ կոմունիստները Ստեփան Շահբազյանի, Տիգրան Իսմիյանի, Գրիգոր Շիշմանյանի և ուրիշների գլխավորությամբ ԲԿԿ շարքերում և բուլղարահայ գաղութի ներքին ղեկավարման մարմիններում ու կազմակերպություններում հսկայական աշխատանք ծավալեցին։ Թաղական խորհուրդների և հոգաբարձությունների մեծ մասից դուրս մղվեցին դաշնակցության ներկայացուցիչները։ Աշխատանքներ ծավալվեցին թեմական խորհրդի ստեղծման ու կենտրոնական մարմինների կազմակերպման ուղղությամբ։ Վերակազմվեցին կրթական-մշակութային և հասարակական կազմակերպությունների վարչությունները։

Բուլղարական կոմունիստական կուսակցությունը զգալի աշխատանք տարավ բուլղարական պրոլետարիատի մաս կազմող հայ, թուրք, հրեա և ուրիշ փոքրամասնությունների աշխատավորական շրջաններում, նրանց ինտերնացիոնալիստական ոգով դաստիարակելու ուղղությամբ։ Նրանց մեծ մասն ընդգրկված էր արհմիությունների շարքերում և անցնելով դասակարգային պայքարի ուղիով, գործում էր ԲԿԿ առանձին սեկցիաներում ու խմբակներում։

1919 թ. ԲԿԿ նախաձեռնությամբ Պլովդիվում կազմակերպվում է «Հայ բանվորական կոմունիստական ինքնազարգացման միություն», որի հիմնական նպատակն էր բուլղարահայ գաղութում ծավալել հեղափոխական գործունեություն։ Կոմունիստական խմբակներ էին հիմնվել նաև Վառնայում, Ռուսեում, Շումենում, Սոֆիայում և այլ քաղաքներում։

Նույն թվականին ԲԿԿ կենտկոմի, և հատկապես Վասիլ Կոլարովի հանձնարարությամբ Պլովդիվում ստեղծվեց «Մամուլի կոմիտե», որի նախագահն էր Ստեփան Շահբազյանը, քարտուղար՝ Գրիգոր Շիշմանյանը, անդամներ՝ Հարություն Մելքոնյանը, Գառնիկ Թյությունճյանը, Արտաշես Ասլանյանը, Արմենակ Թագվորյանը[93]։ «Մամուլի կոմիտեն» հրապարակեց իր առաջին «կոչը»՝ ուղղված բուլղարահայ և սփյուռքի հայ աշխատավորներին։ Այն ծրագրային փաստաթղթի նշանակություն ուներ։

Կոչում ասված էր. «Հայ բանվորներ և աշխատավորներ, ընդհանուր անկումի, համաշխարհային աղետի, համազգային սովի, աղքատության պատմական վայրկյանին, երբ կյանքն անկարելի է դարձած ժողովուրդի համար, իսկ ափ մը անողոք շահագործներ, կոնտրաբանդիստներ, որոնք ազգուկի նման ժողովուրդների մարմինեն կքամեն անոր արյան վերջին կաթիլը՝ ավելի անհոգ, ավելի շռայլ, ավելի կուշտ ապրելու համար...։ Կը կոչենք ձեզ՝ հին և եղեռնական աշխարհի վրա կառուցելու սոցիալիստական աշխարհի հոյակապ շենքը, գիտության, ազատության, եղբայրության ու հավասարության նոր աշխարհը»[94]։

1920 թ. հունվարի 5-ին «Մամուլի կոմիտեն» տեղական կազմակերպություններին ուղարկեց № 1 «Շրջաբերականը», որը վերահիշյալ «Կոչից» հետո բուլղարահայ կոմունիստների գործունեությանը վերաբերող երկրորդ կարևոր փաստաթուղթն էր։

«Մեր խումբին նպատակն է,—ասված էր նրանում,—կազմակերպել հայ բանվորներն ու մանր արհեստավորները հայ ազգայնական՝ հնչակյան, դաշնակցական ու ամիկալար կուսակցություններեն դուրս—անջատ միության մը մեջ հանուն կոմունիզմի և Երրորդ Կոմունիստական Միջազգայնականի... ու միացնել իր համեստ ուժերը կոմունիզմի հզոր հեղա-

փոխական ուժերու հետ, Պուլկարիա, Պալկաններն ու արտասահման, ջնջելու համար ափ մը դրամատերերու ու ֆինանսիստներու տիրապետությունը, որոնք կազմակերպված են հափշտակիչ կապիտալիստական պետության մը մեջ, և կանգներ կոմունիզմի հոյակապ աշտարակը, որ կբերե շահագործվողներու, վարձկան բանվոր դասակարգի և փոքր ազգերու ազատագրումը միջազգային իմպերիալիզմի դազանային ճանկերեն»[95]։

Բկկ քարտուղար Վասիլ Կոլարովի նախաձեռնությամբ, «Մամուլի կոմիտեն» 1920 թ. հուլիսի 15-ին Պլովդիվում լույս է ընծայում սփյուռքում անդրանիկ հայ կոմունիստական պարբերականը՝ «Կարմիր լուրերը»։ Սփյուռքահայ իրականության մեջ «Կարմիր լուրեր» թերթն առաջինն էր, որ ջերմորեն ողջունեց III Կոմունիստական Ինտերնացիոնալը և հայ բանվորներին կոչ արեց համախմբվել նրա դրոշի ներքո։ Նրա երկրորդ համարում ասված է. «Հայ կոմունիստները եղբայրական բարևներով կողջունեն Կոմունիստական միջազգայնականի II համագումարը, որովհետև անոր մոտավոր հաղթանակով հայ ժողովուրդը միայն բան մը պիտի կորցնե՝ իր շղթաները»[96]։

«Կարմիր լուրերը» պրոպագանդում էր Հոկտեմբերյան հեղափոխության համաշխարհային պատմական նշանակությունը, ինչպես ողջ մարդկության, այնպես էլ հայ ժողովրդի համար։

1920 թ. ամռանը Հայաստանի դաշնակցական կառավարությունը որոշել էր, այսպես կոչված, «Անկախության փոխառություն» անցկացնել։ Այդ նպատակով կառավարությունը սկսեց միջոցներ հավաքել և նվիրատվություններ ստանալ սփյուռքահայ գաղութներից։ Բուլղարահայ կոմունիստները բացահայտելով այդ «փոխառության» հակահեղափոխական էությունը, Պլովդիվում, Վառնայում, Ռուսեում և այլ քաղաքներում ցրեցին հազարավոր կոչեր-թռուցիկներ այդ ձեռնարկի դեմ։ «Կարմիր լուրերը» Ա. Խատիսյանին անվանելով «Հայ մահամերձ բուրժուազիայի ուշացած առաքյալը», ծաղրում էր դաշնակցության բուլղարահայ հատվածին, որը ժողովրդի անունից կազմակերպել էր նրան դիմավորելու հանդիսություն—կատակերգությունը։ Բուլղարահայ գաղութում «փոխառության» միսիան տապալվելուց հետո Ա. Խատիսյանը պարզապես փախավ Բուլղարիայից։

Մինչև բուլղարահայ կոմունիստական մամուլի ստեղծումը, Բկկ կենտկոմի օրգան «Ռաբոտնիչեսկի վեստնիկը» հայ բանվորների կոմունիստական դաստիարակության դպրոց էր։ Նրա միջոցով հայ աշխատավորները հավաստի տեղեկություններ էին ստանում ոչ միայն միջազգային պրոլետարիատի և բուլղար աշխատավորների հեղափոխական շարժ-

ման, այլև միջազգային իմպերիալիզմի դեմ ռուսական պրոլետարիատի ձեռք հեղափոխական պայքարի մասին։ 1920 թ. դեկտեմբերի 7-ին Բկկ Բուլղարիայի աշխատավորներին, այդ թվում նաև հայերին, հաղորդեց Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատվելու մասին ուրախալի լուրը։ Թերթը տպագրեց նաև Վ. Ի. Լենինին հղած Հայաստանի Հեղկոմի ողջույնի հեռագիրը։

Բուլղարահայ աշխատավորները մեծ խանդավառությամբ ընդունեցին խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում։ Ստեփան Շահրազյանի հանձնարարությամբ այդ լուրն իսկույն տպագրվեց թռուցիկի ձևով ու տարածվեց հայ աշխատավորների շրջանում[97]։ Պլովդիվում, Վառնայում, Ռուսեում և այլուր բազմամարդ միտինգներ կազմակերպվեցին՝ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առթիվ։

Բուլղարահայ կոմունիստների ինտերնացիոնալ դաստիարակության համար մեծ նշանակություն ունեին «Կարմիր լուրեր» թերթում բուլղար կոմունիստների տպագրած հոդվածները։ Պլովդիվում գործող ականավոր կոմունիստ Նիկոլա Գինևի «Նոր մայիսի մեկ ու նոր Հայաստան» առաջնորդող հոդվածում ասված էր. «Քանի մը տարի առաջ Եվրոպայի մեջ ո՞վ կրնար հավատալ, թե ձյունապատ Արարատի վեհապանծ գագաթները պիտի տեսնեն ընկերային հեղափոխության հաղթականորեն ծածանվող դրոշակները Հայաստանի դաշտերուն մեջ, Ալպերու գագաթներեն առաջ, որոնք կը բարձրանան Եվրոպայի մեծ կապիտալիստական պետություններու սահմաններուն վրա։

...Իսկ ձեր ամենքը, հայ հեղափոխական ժողովրդին ճշմարիտ զավակները, ցրված ամբողջ աշխարհի վրա, Մայիսի մեկին ճակատնիդ պարծանքով բարձրացուցեք, որովհետև Խորհրդային Հայաստանի զավակներն ու պրոլետարական ազատագրման արժանի ռազմիկներն եք, ուր որ ալ դտնվիք։ Հեղափոխական ազատագրական պայքարի փառավոր օրերը դարերու գործն է, որ կը կատարեն։

Կեցցե Խորհրդային Հայաստան»[98]։

Ռուսեի հայ կոմունիստները այդ օրերին տպում ու տարածում են բաց նամակներ՝ ուղղված դաշնակցության և հնչակյան կուսակցությունների շարքերում գտնվող հայ բանվորներին և մանր արհեստավորներին։ Այնտեղ ընդգծվում էր. «Դեկտեմբերի մեկին Հայաստանի դաշնակցական կառավարությունը տապալված է իր սեփական զորքերու հարվածով և ապստամբ բանակը դրավելով Երևանը, հաստատած է Խորհրդային հանրապետություն»[99]։

1920-ական թվականների սկիզբը նշանավորվեց բանվորական շարժման նոր վերելքով։ Աշխատավորների նորանոր խմբեր մտնում էին ԲԿԿ շարքերը։ Բացառություն չէին կազմում նաև բուլղարահայ աշխատավորները։ 1921—1923 թթ. ԲԿԿ շարքերում ընդգրկվել էին ավելի քան 270 հայ աշխատավորներ։ Տեղի գործող հայկական խմբակները միավորվեցին ԲԿԿ կից առանձին սեկցիայում։

Պլովդիվում, Վառնայում, Ռուսեում, Շումենում, Սոֆիայում և այլ քաղաքներում 1919 թ. գործում էին հայ կոմունիստների խմբակների կամ մասնաճյուղեր, որոնք ղեկավարվում էին ԲԿԿ տեղական կոմիտեների կողմից։ Վառնայում ԲԿԿ քաղաքային կոմիտեն Կրոն Գավաֆյանին և Հայրապետ Հայրապետյանին հանձնարարել էր կազմակերպել և ղեկավարել քաղաքի հայկական կոմունիստական կազմակերպությունը, որի շարքերում ընդգրկված էին Մարտիկ Դադեսյանը, Մարկոս Հայրապետյանը, Գաբրիել Գաբրիելյանը, Գրիգոր Հայրապետյանը, Սահակ Գևորգյանը, Կարապետ Գապաքճյանը, Հակոբ Ռուբենյանը, Արամ Սարգիսյանը, Թադևոս Հալաճյանը և ուրիշներ։ Հետագայում Վառնայի ԲԿԿ քաղաքային կոմիտեն Կրոն Գավաֆյանին հաստատեց որպես Վառնայի հայկական կազմակերպության քարտուղար[100]։

1919—1923 թթ. Վառնայի հայկական կոմունիստական կազմակերպությունը անդուլ պայքար էր մղում դաշնակցության դեմ, մերկացնելով նրա հակահայաստանյան, հակասովետական գործունեությունը։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առթիվ Վառնայի հայ կոմունիստները հանդիսավոր ժողով հրավիրեցին։ Նախագահում էր ԲԿԿ Վառնայի քաղաքային կոմիտեի քարտուղար Գենո Պետրովը։ Մակեդոնական կոմունիստական սեկցիայի անունից ելույթ ունեցավ Բլագոյ Գասաբովը, որն իր խոսքն ավարտեց կոչերով. «Կեցցե Սովետական Հայաստանը»։ Վառնայի ԲԿԿ քաղաքային կոմիտեի կողմից հայկական սեկցիային հանձնվեց 1920 թ. մայիսին Մոսկվայում լույս տեսած «Կարմիր դրոշակ» թերթի մի քանի համարներ։ Այդ օրերին Վառնայի հայ կոմունիստներին հաջողվեց նավահանգստում աշխատող բազմաթիվ հայ բանվորների ընդգրկել իրենց շարքերում և դարձնել Վառնայի քաղաքային համայնքի խորհրդի պատգամավորների ընտրությունների մասնակից։ Նրանք քվեարկեցին կոմունիստ Հայրապետ Հայրապետյանի օգտին։ Ընտրություններում հաղթանակ տարավ ԲԿԿ-ը և Վառնայում ստեղծվեց Կոմունա՝ Կոնդովի գլխավորությամբ[101]։ Կոմունայի անդամ ընտրվեց նաև Հայրապետ Հայրապետյանը[102]։ ԲԿԿ Ռուսեի քաղաքային կոմիտեին կից գործում էին հայ կոմունիստներ Արտաշես Ասլանյանը, Սարգիս Այդինյանը, Երեմիա Շիշմանյանը, Արսեն Արսենյանը, Սարգիս Աստարճյանը, Կարապետ Եղեկիելյանը, Արմո Շիրինը, Աբել Կարապետյանը[103]։ Հեղափոխական վերելքի պայմաններում հայ կոմունիստները բուլղար ընկերների օգնությամբ ակտիվացրին իրենց գործունեությունը հայ բանվորների ու աշխատավորների շրջանում և կարողացան նրանց դուրս բերել դաշնակցության պրոպագանդայի ազդեցությունից։

1919 թ. դեկտեմբերի 7-ին Ռուսեի քաղաքային համայնքի խորհրդի ընտրությունների ժամանակ հաղթանակ տարավ ԲԿԿ։ 24 ընտրվածներից 13-ը ԲԿԿ-ի անդամ էին։ «Ռուսչուկը պրոլետարիատի ձեռքում է, կեցցե կոմունան»,— գրում էր այդ օրերի «Ռաբոտնիչեսկի վեստնիկը»[104]։ Ռուսեի քաղաքային համայնքը կոմունայի վերածվելուց հետո անցկացվեցին մի շարք սոցիալ-քաղաքական միջոցառումներ։ Կոմունայի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կազմում ընտրվեցին հայ կոմունիստներ Արտաշես Ասլանյանը և Արսեն Արսենյանը։ 1921 թ. հունիսի 21-ին Ռուսեի ռեակցիոն բուրժուազիային հաջողվեց տապալել կոմունան։

Բուլղարիայի հայահոծ քաղաքներում հայ կոմունիստական խմբակների և ԲԿԿ կենտկոմի կից սեկցիայի ստեղծումը, ապա նաև «Մամուլի կոմիտեի» հիմնումը և «Կարմիր լուրերի» լույս տեսնելը բուլղարահայ բանվորների ու մանր արհեստավորների համար մեծ նշանակություն ունեցան։ Հայ կոմունիստների առաջնահերթ խնդիրներն էին կազմակերպչական և կոմունիստական դաստիարակության հարցերը։ Այստեղ վեճերի տեղիք տվեց ազգային սահմանափակվածություն հանդես բերող և կազմակերպչական աշխատանքներին խանգարող կուսակցության նոր անդամների բռնած դիրքը։ Դա պարզ երևաց առանձին քաղաքների կուսակցական կազմակերպությունների հրապարակած կոչերից, թռուցիկներից և այլ նյութերից։ Այդ ընկերները իրենց դիրքը պատճառաբանում էին նրանով, որ հայ կոմունիստների առջև ծառացած են հայկական կազմակերպություններին առանձնահատուկ խնդիրներ։ Այդ ընթացքը խթանում էր նախկին սոցիալ-դեմոկրատներ Անդրեաս Հակոբյանի և Ստեփան Հինդլյանի կողմից, որոնք պահանջում էին գործել ԲԿԿ-ից անջատ։ Դա սպեցիֆիզմի արտահայտություն էր բուլղարական պայմաններում։

«Մամուլի կոմիտեն» և հայ կոմունիստների մեծամասնությունը գտնում էին, որ բոլոր հայ կոմունիստները ԲԿԿ անդամներ են, այլ ոչ թե առանձին կազմակերպություն։

ԲԿԿ կենտկոմը ճիշտ համարեց «Մամուլի կոմիտեի» դիրքավորումը։ Վասիլ Կոլարովը Ստեփան Շահբազյանին և Գրիգոր Շիշմանյանին առա-

ջարկեց նախապատրաստել բուլղարահայ կոմունիստների առաջին կոնֆերանսի հրավիրումը։ Այն տեղի ունեցավ Պլովդիվում՝ 1921 թ. փետրվարի 13—14-ին։ Կոնֆերանսին մասնակցեցին Պլովդիվի, Վառնայի, Ռուսեի, Սոֆիայի և այլ քաղաքների հայ կոմունիստներին ներկայացնող պատվիրակներ։

Կոնֆերանսին ներկա էին. Պլովդիվից՝ Ստեփան Շահբազյանը, Բրիգոր Շիշմանյանը, Գառնիկ Թյությունճյանը, Հարություն Մելքոնյանը, Հարություն Թելալյանը, Արմենակ Կարապետյանը, Պողոս Շիշմանյանը, Մանուկ Մանուկյանը, Հովհաննես Կարապետյանը, Հակոբ Հայրապետյանը, Տիգրան Խամիյանը, Արմենակ Թագվորյանը[105], Ռուսեից՝ Արտաշես Ասլանյանը, Սարգիս Այդինյանը, Վառնայից՝ Մարտիկ Դագեսյանը, Համբարձում Ռուբենյանը, Սոֆիայից՝ Մհերան Պաքալյանը, Թագվոր Թագվորյանը[106]։

Կոնֆերանսը տեղի ունեցավ Բկկ Պլովդիվի քաղաքային կոմիտեի «Նարոդեն դոմ» դահլիճում։ Բացումը կատարեց Ստեփան Շահբազյանը։ Բկկ Կենտկոմի ներկայացուցիչն էր Յորդան Յորդանովը, իսկ Պլովդիվի կազմակերպության՝ Վլադիմիր Դիմչևը։ Կոնֆերանսի մասնակիցները հոռնկայս հարգեցին Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար պայքարում զոհված մարտիկների հիշատակը, որից հետո անցան օրակարգի հարցերին։

«Մեր աշխատանքի կազմակերպչական ձևերի և ագիտացիայի ու պրոպագանդայի խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ Ստեփան Շահբազյանը։ «Մեր վերաբերմունքը պուլկարահայ ընտրական հիմնարկների հանդեպ» հարցի մասին զեկուցեց Արտաշես Ասլանյանը։ Երրորդ զեկուցումը՝ «Մամուլի կոմիտեի հաշվետվությունը» զեկուցեց Բրիգոր Շիշմանյանը։ Զեկուցումների և օրակարգի մյուս հարցերի շուրջ կոնֆերանսն ընդունեց համապատասխան որոշումներ ու բանաձևեր, որոնք արժանացան Բկկ Կենտկոմի հավանությանը։

Կոնֆերանսին Բկկ կկ անունից ելույթ ունեցան Յորդան Յորդանովը և Վլադիմիր Դիմչևը։ Առաջինը ամփոփեց կոնֆերանսի աշխատանքները։ Կոնֆերանսի անունից ողջույնի հեռագիր ուղարկվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին և Սովետական Հայաստանի կառավարությանը։

Բուլղարահայ կոմունիստների առաջին կոնֆերանսը համախմբելով առանձին կազմակերպությունները, գաղափարական և կազմակերպչական տեսակետից ակտիվացրեց հայ կոմունիստների գործունեությունը Բկկ շարքերում և ուժեղացրեց նրանց ազդեցությունը գաղութի աշխատավոր-

րական զանգվածների վրա։ Նրանք զգալի աշխատանք ծավալեցին նաև հասարակական կազմակերպություններում, գաղութի ներքին ղեկավարման մարմիններում։ Բկկ ցուցումով հայ կոմունիստները մեծ ոգևորությամբ ներգրավվեցին Սովետական Միության, Սովետական Հայաստանին նյութական օգնություն կազմակերպելու գործում։ Այդ օրերին «Կարմիր լուրերը» գրում էր. «Պուլկարիո հայաշատ քաղաքներու մեջ սկսած է համազգային հանգանակություն ի նպաստ Խորհրդային Հայաստանի սովյալներուն ու որբերուն։ Պուլկարահայ կոմունիստներուն սրբազան պարտականությունն է մասնակցիլ այս հանգանակության ամենալայն չափերով, որովհետև այս կերպով պիտի սատարենք հեղափոխության ու Խորհրդային Հայաստանի կառավարության դիրքերուն ամրապնդման»[107]։

Բկկ ցուցումով 1921 թ. հոկտեմբերի 20—30-ը Բուլղարիայում անցկացվեց «Ռուսական շաբաթ»[108]։ Մինչ այդ հավաքված էր 550 հազար լևա և 20 վագոն մթերք։ Բկկ Կենտկոմի հանձնարարությամբ նրա անդամներ Նիկոլա Պենևը և Ստեփան Շահբազյանը հավաքված մթերքը շոգենավով փոխադրեցին Սովետական Ռուսաստան։ Բաթում հասնելուց և մթերքները հանձնելուց հետո Ստեփան Շահբազյանը մեկնեց Երևան, ուր մասնակցեց Հայաստանում սովետական կարգերի հաստատմանը նվիրված հանդիսություններին։

«Խորհրդային Հայաստան» թերթի 1921 թ. դեկտեմբերի 23-ի համարում Ս. Շահբազյանը տպագրում է «Բուլղարական կոմունիստական կուսակցությունը» հոդվածը։ Հանդիպումներ է ունենում Ալեքսանդր Միասնիկյանի, Լուկաշինի, Ասքանազ Մռավյանի, Աշոտ Հովհաննիսյանի և ուրիշ զեկավար ընկերների հետ։ Երկու ամիս Հայաստանում մնալուց հետո նա Կոստանդնուպոլսի վրայով վերադառնում է Բուլղարիա։ Կոստանդնուպոլսից մինչև Պլովդիվ ժամանելը դաշնակցությունը աշխատում էր խանգարել նրա վերադարձը։ Սակայն դա նրան չհաջողվեց, քանի որ Բուլղարիայում իշխանությունն անցել էր Ալեքսանդր Ստամբոլիյսկու ղեկավորած «Զեմեդելսկի սբյուզի» դեմոկրատական կառավարությանը։

Ս. Շահբազյանը Կոստանդնուպոլսում հանդիպումներ է ունենում տեղի հայ կոմունիստներ Պետիկ Թորոսյանի, Պողոս Բաշմուշյանի և ուրիշների հետ, որոնք և կազմակերպում են նրա ապահով վերադարձը Բուլղարիա։

Ս. Շահբազյանը առաջին սփյուռքահայ կոմունիստներից էր, որը վերադառնալով Սովետական Հայաստանից, որպես ականատես, պատմեց ճշմարտությունը հայրենիքում տեղի ունեցող հեղափոխական վերափոխումների մասին։ 1922 թ. դեկտեմբերի 2-ին Շահբազյանը Սովետա-

ջարկեց նախապատրաստել բուլղարահայ կոմունիստների առաջին կոնֆերանսի հրավիրումը։ Այն տեղի ունեցավ Պլովդիվում՝ 1921 թ. փետրվարի 13—14-ին։ Կոնֆերանսին մասնակցեցին Պլովդիվի, Վառնայի, Ռուսեի, Սոֆիայի և այլ քաղաքների հայ կոմունիստներին ներկայացրած պատվիրակներ։

Կոնֆերանսին ներկա էին. Պլովդիվից՝ Ստեփան Շահբազյանը, Բրիգոր Շիշմանյանը, Գառնիկ Թյությունճյանը, Հարություն Մելքոնյանը, Հարություն Թելալյանը, Արմենակ Կարապետյանը, Պողոս Շիշմանյանը, Մանուկ Մանուկյանը, Հովհաննես Կարապետյանը, Հակոբ Հայրապետյանը, Տիգրան Խամիչյանը, Արմենակ Թագվորյանը[105], Ռուսեից՝ Արտաշես Ասլանյանը, Սարգիս Այդինյանը, Վառնայից՝ Մարտիկ Դագեսյանը, Համբարձում Ռուբենյանը, Սոֆիայից՝ Միհրան Պաքալյանը, Թագվոր Թագվորյանը[106]։

Կոնֆերանսը տեղի ունեցավ ԲԿԿ Պլովդիվի քաղաքային կոմիտեի «Նարոդեն դոմի» դահլիճում։ Բացումը կատարեց Ստեփան Շահբազյանը։ ԲԿԿ կենտկոմի ներկայացուցիչն էր Յորդան Յորդանովը, իսկ Պլովդիվի կազմակերպության՝ Վլադիմիր Դիմչևը։ Կոնֆերանսի մասնակիցները հոտնկայս հարգեցին Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար պայքարում զոհված մարտիկների հիշատակը, որից հետո անցան օրակարգի հարցերին։

«Մեր աշխատանքի կազմակերպչական ձևերի և ագիտացիայի ու պրոպագանդայի խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ Ստեփան Շահբազյանը։ «Մեր վերաբերմունքը պուլկարահայ ընտրական հիմնարկների հանդեպ» հարցի մասին զեկուցեց Արտաշես Ասլանյանը։ Երրորդ զեկուցումը՝ «Մամուլի կոմիտեի հաշվետվությունը» զեկուցեց Գրիգոր Շիշմանյանը։ Զեկուցումների և օրակարգի մյուս հարցերի շուրջ կոնֆերանսն ընդունեց համապատասխան որոշումներ ու բանաձևեր, որոնք արժանացան ԲԿԿ Կենտկոմի հավանությանը։

Կոնֆերանսին ԲԿԿ ԿԿ անունից ելույթ ունեցան Յորդան Յորդանովը և Վլադիմիր Դիմչևը։ Առաջինը ամփոփեց կոնֆերանսի աշխատանքները։ Կոնֆերանսի անունից ողջույնի հեռագիր ուղարկվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին և Սովետական Հայաստանի կառավարությանը։

Բուլղարահայ կոմունիստների առաջին կոնֆերանսը համախմբելով առանձին կազմակերպությունները, գաղափարական և կազմակերպչական տեսակետից ակտիվացրեց հայ կոմունիստների գործունեությունը ԲԿԿ շարքերում և ուժեղացրեց նրանց ազդեցությունը գաղութի աշխատավո-

րական զանգվածների վրա։ Նրանք զգալի աշխատանք ծավալեցին նաև հասարակական կազմակերպություններում, գաղութի ներքին ղեկավարման մարմիններում։ ԲԿԿ ցուցումով հայ կոմունիստները մեծ ոգևորությամբ ներգրավվեցին Սովետական Միության, Սովետական Հայաստանին նյութական օգնություն կազմակերպելու գործում։ Այդ օրերին «Կարմիր լուրերը» գրում էր. «Պուլկարիո հայաշատ քաղաքներու մեջ սկսած է համազգային հանգանակություն ի նպաստ Խորհրդային Հայաստանի սովյալներուն ու որբերուն։ Պուլկարահայ կոմունիստներուն սրբազան պարտականությունն է մասնակցիլ այս հանգանակության ամենալայն չափերով, որովհետև այս կերպով պիտի սատարենք հեղափոխության ու Խորհրդային Հայաստանի կառավարության դիրքերուն ամրապնդման»[107]։

ԲԿԿ ցուցումով 1921 թ. հոկտեմբերի 20—30-ը Բուլղարիայում անցկացվեց «Ռուսական շաբաթ»[108]։ Մինչ այդ հավաքված էր 550 հազար լևա և 20 վագոն մթերք։ ԲԿԿ Կենտկոմի հանձնարարությամբ նրա անդամներ Նիկոլա Պենևը և Ստեփան Շահբազյանը հավաքված մթերքը շոգենավով փոխադրեցին Սովետական Ռուսաստան։ Բաթում հասնելուց և մթերքները հանձնելուց հետո Ստեփան Շահբազյանը մեկնեց Երևան, ուր մասնակցեց Հայաստանում սովետական կարգերի հաստատմանը նվիրված հանդիսություններին։

«Խորհրդային Հայաստան» թերթի 1921 թ. դեկտեմբերի 23-ի համարում Ս. Շահբազյանը տպագրում է «Բուլղարական կոմունիստական կուսակցությունը» հոդվածը։ Հանդիպումներ է ունենում Ալեքսանդր Մյասնիկյանի, Լուկաշինի, Ասքանազ Մռավյանի, Աշոտ Հովհաննիսյանի և ուրիշ ղեկավար ընկերների հետ։ Երկու ամիս Հայաստանում մնալուց հետո նա Կոստանդնուպոլսի վրայով վերադառնում է Բուլղարիա։ Կոստանդնուպոլսից մինչև Պլովդիվ ժամանելը դաշնակցությունը աշխատում էր խանգարել նրա վերադարձը։ Սակայն դա նրան չհաջողվեց, քանի որ Բուլղարիայում իշխանությունն անցել էր Ալեքսանդր Ստամբոլիյսկու գլխավորած «Զեմեդելսկի սոյուզի» դեմոկրատական կառավարությանը։

Ս. Շահբազյանը Կոստանդնուպոլսում հանդիպումներ է ունենում տեղի հայ կոմունիստներ Պետիկ Թորոսյանի, Պողոս Բաշմուշյանի և ուրիշների հետ, որոնք և կազմակերպում են նրա ապահով վերադարձը Բուլղարիա։

Ս. Շահբազյանը առաջին սփյուռքահայ կոմունիստներից էր, որը վերադառնալով Սովետական Հայաստանից, որպես ականատես, պատմեց ճշմարտությունը հայրենիքում տեղի ունեցող հեղափոխական վերափոխումների մասին։ 1922 թ. դեկտեմբերի 2-ին Շահբազյանը Սովետա-

կան Հայաստանի 2-րդ տարեդարձի առթիվ 800 հայ աշխատավորների, ինչպես նաև մյուս հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների առաջ ելույթ ունեցավ նորաստեղծ Սովետական Հայաստանի մասին։ Նրա ելույթը խոր տպավորություն գործեց ներկաների վրա։ Հայ աշխատավորները առավել մեծ ոգևորությամբ համախմբվեցին ԲԿԿ և նրա հայկական օրգան «Կարմիր լուրերի» շուրջը, որը 1922 թ. վերանվանվեց «Նոր աշխարհ»։

1922 թ. հուլիսի 4—5-ը Սոֆիայում հրավիրվեց բուլղարահայ կոմունիստների երկրորդ կոնֆերանսը, որտեղ միաժամանակ տեղի էր ունենում ԲԿԿ IV համագումարը[109]։

Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին Սոֆիայից՝ Մ. Պետրոսյանը, Վ. Սարգիսովը, Մ. Գաբալյանը, Թ. Թագվորյանը, Պլովդիվից՝ Գրիգոր Շիշմանյանը, Գառնիկ Թյությունճյանը, Հարություն Մելքոնյանը, Վառնայից՝ Հայրապետ Հայրապետյանը, Կրոն Գավաֆյանը, Ռուսեից՝ Արտաշես Ասլանյանը, Շումենից՝ Նահապետ Կարապետյանը։ ԲԿԿ կենտկոմի ներկայացուցիչն էր Ալ. Աթանասովը։

Կոնֆերանսը լսեց «Մամուլի կոմիտեի» հաշվետվությունը։ Զեկուցող Գրիգոր Շիշմանյանը մանրամասն կանգ առավ բուլղարահայ կոմունիստների գործունեության վրա։ Խոսեց կազմակերպչական և հրատարակչական խնդիրների մասին, ընդգծեց այն հսկայական աշխատանքը, որ կատարել են առանձին կազմակերպությունները՝ ԲԿԿ տեղական կազմակերպությունների ղեկավարության։ Գ. Շիշմանյանն իր զեկուցումն ավարտեց հետևյալ խոսքերով. «Որպեսզի կայունացնենք մեր գործունեությունը և կատարենք մեր հեղափոխական պարտականությունները, առաջին հերթին հարկավոր է պայքարել հայ հակահեղափոխականների դեմ, որոնց գլխավորում է Դաշնակցություն կուսակցությունը և ազատենք հայ աշխատավորներին այն կոշմարային թույնեն, որ կը թունավորե անոր գիտակցությունը»[110]։ Կոնֆերանսում լսվեցին նաև «Բուլղարահայ աշխատավորության օգնությունը Սովետական Հայաստանին», «Կապերը սփյուռքի մյուս հայկական կոմունիստական կազմակերպությունների հետ», «Բուլղարահայ կոմունիստների մասնակցությունը բուլղար բանվոր դասակարգի պայքարին» և այլ զեկուցումներ։

Կոնֆերանսը ընտրեց «Մամուլի կոմիտեի» նոր կազմ (Ստեփան Շահբազյան՝ նախագահ, Թագվոր Թագվորյան՝ քարտուղար, Գրիգոր Շիշմանյան, Արտաշես Ասլանյան, Մովսես Պետրոսյան՝ անդամներ)։ Ընտրվեց «Նոր աշխարհ» թերթի խմբագրական կոլեգիա։ Կոնֆերանսը ողջունելու եկավ ԲԿԿ IV համագումարի աշխատանքներին մասնակցող թուրքական կոմկուսի պատվիրակությունը[111]։

Կոնֆերանսի ավարտին որոշում ընդունվեց շնորհավորական հեռագիր ուղարկել Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմին և Հայաստանի կառավարությանը, Միացյալ Նահանգների բանվորական կուսակցությանը։

1923 թ. սկզբին Վառնայում և Պլովդիվում հայ կոմունիստները հիմնեցին իրենց ակումբ-գրադարանները, որտեղ հայ աշխատավորներն ընթերցում էին բանվորական ու կոմունիստական թերթեր, ամսագրեր, մարքսիստական գրականություն, լսում դասախոսություններ։ Նույն թվականի հունվարի 8-ին Պլովդիվում կատարվեց «Ստեփան Շահումյանի» անվան հայ կոմունիստների ակումբ-գրադարանի բացումը։ Առաջին դասախոսությունը կարդաց Ստեփան Շահբազյանը՝ «Ռուսաստանի հեղափոխության պատմությունից» թեմայով։

«Նոր աշխարհ» թերթը շարունակում էր մերկացնել դաշնակցական մամուլի զրպարտությունները Սովետական Հայաստանի մասին, բուլղարահայ աշխատավորներին ցույց էր տալիս, որ բուլղար աշխատավորների պայքարից է կախված բուլղարահայերի տնտեսական վիճակի բարելավումը։ Թերթի 8-րդ համարում զետեղված էր «Փոքրամասնությանց հարցը և Լոզանի կոնֆերանսը» հոդվածը, որտեղ մերկացվում էին արևմտյան դիվանագիտության խաղերը «հայկական հարցի» շուրջ։

«Մենք ունինք մեր իրական օճախը,—գրված էր այնտեղ,—որ ավազի վրա շինված չէ, ոչ ալ օդին մեջ կառուցված։ Այդ օճախը Խորհրդային Հայաստանն է, ուր կը գերիշխե միայն հայ աշխատավորությունը։ Տաճկահայ հարցը չի կարող լուծվիլ Անթանթայի շնորհովը, որուն հայ ժողովուրդին ազգային բաղձանքները գոհացնելու համար ըրած ամենափոքր խոստումն անգամ, ամենակոպիտ խաբեբայություն մը ըլլալը հաստատվեցավ անոր մինչև այժմ վարած քաղաքականությենեն»[112]։

1923 թ. հունիսի 8-ին Բուլղարիայում ֆաշիստական հեղաշրջման նախօրեին «Նոր աշխարհը» հանդես եկավ «Բանվորագյուղացիական կառավարությունը» հոդվածով։ Թերթը կոչ էր անում պայքարել Բուլղարիայում բանվորագյուղացիական իշխանություն ստեղծելու համար։ Հոդվածը վերջանում էր «Կոմունիստական կուսակցությանն է ապագան, անիկա պիտի հաղթե և անոր հաղթանակին նպաստող նշանաբաններեն մեկը «բանվորագյուղացիական կառավարության նշանաբանն է» կոչով[113]։

Այսպիսով, բուլղարահայ կոմունիստները, համախմբված ԲԿԿ-ի օրգան «Նոր աշխարհի» շուրջը, հեղափոխական վերելքի պայմաններում

ելնելով լենինյան միասնական ճակատի տակտիկայից, հակայակական աշխատանք ծավալեցին՝ հանուն բանվորադյուղացիական իշխանության։ Նրանք մերկացնում էին Բուլղարիայում ապաստան գտած և բուլղարական ֆաշիստական շրջանների հետ համագործակցող դաշնակցական պարագլուխների գործունեությունը։

1923 թ. հունիսի 9-ին բուլղարական ֆաշիստները զինված ջոկատների գլխավորությամբ պետական հեղաշրջում կատարեցին։ Մի քանի ժամվա ընթացքում մայրաքաղաք Սոֆիան գրավվեց հեղաշրջմանը մասնակցող բանակի կողմից։ Բուլղարիայի մի շարք քաղաքներում և շրջաններում հեղաշրջումը հանդիպեց ժողովրդի դիմադրությանը, որը գլխավորում էին կոմունիստները և երկրագործական կուսակցության ղեկավարները։ Պազարջիկում գազանաբար սպանվեց ապստամբած գյուղացիների առաջնորդ Ալեքսանդր Ստամբոլիյսկին։ Երկրի ներսում որոշ տեղերում ապստամբած ժողովուրդը սպասում էր ԲԿԿ կենտկոմի կարգադրություններին։ Հեղաշրջումից հետո կոմունիստական կուսակցությունը Գեորգի Դիմիտրովի և Վասիլ Կոլարովի ղեկավարությամբ աշխատավոր զանգվածներին տարավ դեպի Սեպտեմբերյան ապստամբությունը, որը թույլ տված սխալների հետևանքով պարտության մատնվեց։

1923 թ. սեպտեմբերի 11-ին Պլովդիվի կազմակերպության մի շարք կոմունիստների հետ ձերբակալվեց նաև Ստեփան Շահբազյանը։ Սեպտեմբերի 27-ին ցանկովյան ֆաշիստները գնդակահարեցին Շահբազյանին և նրա բուլղար ընկերներին։

Ապստամբության պարտությունից հետո երկրում մոլեգնում էր ֆաշիստական սպիտակ տեռորը։ Ցրվեցին և օրենքից դուրս հայտարարվեցին դեմոկրատական կազմակերպություններն ու կուսակցությունները։ ԲԿԿ-ի անդամները, այդ թվում նաև հայ կոմունիստները, անցան խոր ընդհատակ։ Փակվեցին դեմոկրատական թերթերը, նաև հայ առաջադեմ պարբերականներ՝ «Նոր աշխարհը», «Պալքանեան մամուլը» և «Լուսարձակը»։

ԲԿԿ կենտկոմի ցուցումներով հայկական կոմունիստական խմբերի «Միասուլի կոմիտեն» անցավ անլեգալ աշխատանքի։ Ստեղծված տեռորի պայմաններում Բուլղարիայից հեռացան Գեորգի Դիմիտրովը, Վասիլ Կոլարովը և ապստամբության մյուս ղեկավարները։ Հայ կոմունիստներից շատերը խոր ընդհատակում շարունակում էին գործել ԲԿԿ շարքերում։ Օգտագործելով Սոֆիայում հայկական «Հառաջ» գրադարան-ընթերցարանի լեգալ հնարավորությունները, նրանք առաջադեմ ուժերի հետ ստեղծեցին «Ազգային ճակատ» և շարունակեցին պայքարը դաշնակցության և ֆաշիզմի դեմ։

1924 թ. Սոֆիա եկավ դաշնակցության պարագլուխներից Սիմոն Վրացյանը։ Երբ նա ելույթի ժամանակ սկսեց զրպարտել Խորհրդային Հայաստանը, դահլիճում գտնվող հայ կոմունիստները բացականչեցին. «Անկցի դաշնակցությունը»։ Ժողովին ներկա գտնվող դաշնակցականները վախեցած, խուճապահար հեռացան։ Հեռացան նաև կոմունիստները, խուսափելով ոստիկանական հետապնդումներից։ Իսկ Պլովդիվում Ս. Վրացյանի ելույթի ժամանակ կոմունիստ Սոֆի Մինասյանը տեղնուտեղը հերքեց նրա զրպարտությունները[114]։

1925 թ. ապրիլյան դեպքերից հետո[115] Արմենակ Թագվորյանը և Սոֆի Մինասյանն անցան Հունաստան, Մովսես Պետրոսյանը՝ ԱՄՆ, Գրիգոր Շիշմանյանը՝ Հարավսլավիա, այնուհետև՝ Վիեննա և Փարիզ։

Հունաստանից Արմենակ Թագվորյանը կապ է հաստատում Սոֆիայի հայ կոմունիստների հետ և գաղտնի ճանապարհով կոմունիստական գրականություն ուղարկում նրանց։

1926 թ. ԲԿԿ արտասահմանյան բյուրոյի առաջարկով ու հանձնարարությամբ Սոֆի Մինասյանը Հունաստանից անցնում է Բուլղարիա։ Սոֆիայում հանդիպում է ԲԿԿ ղեկավար ընկերների հետ, նրանց հանձնում կարևոր փաստաթղթեր, նամակներ և կրկին վերադառնում Հունաստան։

1925 թ. հուլիսի վերջից մինչև սեպտեմբերի սկզբները Մոսկվայում տեղի ունեցավ ԲԿԿ կենտկոմի խորհրդակցություն, որին մասնակցում էին Գեորգի Դիմիտրովը, Վասիլ Կոլարովը, Ստանկե Դիմիտրովը։ Խորհրդակցությունը տվեց 1923—1925 թթ. քաղաքական իրադարձությունների առաջին գնահատականը։ Նրա որոշումները հաստատվեցին Կոմինտերնի Գործադիր կոմիտեի կողմից։

1926 թ. Վիեննայում տեղի ունեցավ ԲԿԿ պլենումը[116], որի հիմնական խնդիրներից մեկը աշխատավոր զանգվածներին բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների ազդեցությունից ազատագրելն էր։ Հայ կոմունիստները, որոնք գործում էին գաղութի զանազան հասարակական կազմակերպություններում, ուժեղացրին պայքարը դաշնակցության դեմ, որպեսզի նրա ազդեցությունից դուրս բերեն հայ աշխատավոր զանգվածներին։ Նրանց հաջողվեց համախմբել Սովետական Հայաստանի կողմնակիցներին և ակտիվորեն մասնակցել գաղութի ներքին ղեկավարման մարմինների ընտրությունների պայքարին։ 1926 թ. թեմական մարմինների ընտրությունների ժամանակ «Ժողովրդական բլոկը» փայլուն հաղթանակ տարավ և նրա թեկնածուները գլխավորեցին Թեմականի ղեկավարությունը։

Այդ ժամանակաշրջանում ԲԿԿ առաջ խնդիր էր դրված գտնել գործունեության լեգալ ձևեր ու հնարավորություններ և դուրս գալ ընդհատակից։ 1925 թ. կուսակցությունը հնարավորություն է ստանում վերականգնելու առանձին արհեստակցական միություններ, որոնք հետագայում վերամիավորվեցին «Անկախ բանվորական արհեստակցական միության» մեջ։ Այդ կազմակերպությունը պայքարում էր աշխատավորների անմիջական իրավունքների համար և մեծ աշխատանք ծավալեց արհեստակցական միությունների վերամիավորման գործում[117]։ Նույն թվականի օգոստոսի 9-ին լույս տեսավ նրա օրգան «Էդինստվո» թերթը։ Այդ ժամանակ ԲԿԿ-ն չուներ իր լեգալ մամուլը, ուստի և այն հանդիսացավ միակ թերթը, որի միջոցով կուսակցության խոսքը հասնում էր աշխատավորական զանգվածներին։

1927 թ. Բուլղարիայում հրավիրվեց անկուսակցական բանվորների ազգային հիմնադիր կոնֆերանսը, որը ստեղծեց լեգալ բանվորական կուսակցություն՝ կենտրոնական «Ռաբոտնիչեսկի դելո» օրգանով։ Բուլղարական կոմունիստական կուսակցությունն ունեցավ իր լեգալ կազմակերպությունը։ Նրա շարքերը համալրվեցին կոմունիստներով և ակտիվ բանվորներով։ Իսկ 1928 թ. մայիսին ստեղծվեց Բանվորական երիտասարդական միությունը (ՌՄՄ), որը Բուլղարական կոմունիստական երիտասարդական միության լեգալ կազմակերպությունն էր[118]։ Այն հանդիսացավ կուսակցության ամուր հենարանը։

1929 թ. սկսած համաշխարհային տնտեսական ճգնաժամը ցնցեց կապիտալիստական ամբողջ աշխարհը, այդ թվում և բուլղարական էկոնոմիկան։ Նա քայքայեց գյուղատնտեսությունն ու նոր զարգացող արդյունաբերությունը։ Աճեց գործազրկությունը, լայն ծավալ ստացավ գործադուլային շարժումը։ Առաջին շարքերում էին ծխախոտի արդյունաբերության բանվորները, որոնց թվում և բազմաթիվ հայեր։ Նրանք մասնակցում էին Բուլղարական բանվորական կուսակցության միջոցառումներին և պահանջում աշխատանքի և քաղաքացիության հավասար իրավունքներ[119]։

1927—1933 թթ. Սոֆիայում, Պլովդիվում, Վառնայում, Ռուսեում, Բուրգասում, Հասկովոյում, Յամբոլում, Սլիվենում, Այտոսում, Պազարջիկում, Շումենում և այլ քաղաքներում ԲԿԿ շարքերում գործում էին առանձին հայ կոմունիստների և ռեմսիստների խմբակներ։ Հայկական գաղութում ԲԿԿ օկրուգային և քաղաքային կոմիտեների ղեկավարությամբ լայն ծավալ ստացավ քաղաքական-կազմակերպչական աշխատանքը։ Ստեղծվեցին զանազան հայրենակցական, սպորտային, տուրիստական և մշակութային միություններ։ Սոֆիայի կոմունիստները ԲԿԿ կենտկոմի ցու-

յումներով, օգտագործելով «Հառաջ» ակումբ-դրադարանի լեգալ հնարավորությունները, դրադարանի ներսում ստեղծում են խմբակ, որի կազմում էին Սարգիս Հալաճյանը, Հրանտ Եփրեմյանը, Ստեփան Կարագյոզյանը, Թագվոր Քյուշեքյանը։ Նրանք ընդհատակում աշխատանք են տանում դրադարանի անդամների շրջաններում։ Թագվոր Քյուշեքյանի բնակարանում տեղի էին ունենում գաղտնի ժողովներ։ Այստեղ գաղտնի հանդիպումներ են կազմակերպել ԲԿԿ կկ ընդհատակում գործող անդամներ։ Հրավիրվել են ՀՕՄ-ի և ՀՕԿ-ի հիմնադրման ժողովները։

Տնտեսական ճգնաժամի խորացման և գործազրկության ուժեղացման պայմաններում 1929—1933 թթ. Բուլղարիայի մի շարք փոքր քաղաքներից բազմաթիվ հայեր տեղափոխվում են Սոֆիա, Պլովդիվ, Ռուսե և այլուր՝ աշխատանք գտնելու համար։ Նրանցից բազմաթիվ բանվորներ աշխատանքի անցնելուց հետո ներգրավվում էին բուլղարական Անկախ բանվորական արհեստակցական միությունների (ՆՐՊՄ) շարքերը։ Նրանցից առանձին բանվորներ մտնելով Բուլղարական բանվորական կուսակցության խմբակները, ամենից որպես հակաֆաշիստական պայքարի և ՀՕԿ-ի լավագույն կազմակերպիչներ։ ԲԿԿ կենտկոմին կից փոքրամասնությունների բաժնի ցուցումով ստեղծվեց հայ կոմունիստների կենտրոնական դեկավարություն, որը բուլղարահայ գաղութում ընդհատակյա ակտիվ գործունեություն ծավալեց[120]։ Այդ մարմինը անց էր կացնում ԲԿԿ կենտկոմի ազգային քաղաքականությունը, համախմբում առաջադեմ ուժերը և համառ պայքար տանում հակաժողովրդական-հակասովետական նացիոնալիստական տարրերի, բուլղարական ֆաշիզմի և դաշնակցության դեմ, պրոպագանդում Սովետական Միության և Հայաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային հաջողությունները հայ և բուլղար, հրեա և թուրք աշխատավորության շրջաններում։ Տարբեր ժամանակներում նրան հաջողվեց Պլովդիվ, Վառնա, Սոֆիա և Բուրգաս քաղաքներում հայ կոմունիստների կոնֆերանսներ հրավիրել։ Հայ կոմունիստները կազմակերպչական մեծ աշխատանք կատարեցին ՀՕԿ-ի ստեղծման և բուլղարահայ գաղութի ներքին դեկավարման մարմիններն իրենց ձեռքը վերցնելու ուղղությամբ։

Նշված ժամանակաշրջանում արագ տեմպերով աճում էին ԲԿԿ անդամների թիվն ու կազմակերպությունները։ Բուլղար բանվորներն ու գյուղացիները համատեղ պայքարում էին ֆաշիզմի դեմ։ Նրանք ստեղծեցին մասսայական այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք էին ՄՕՊՐ-ը (հեղափոխության մարտիկներին օգնող միջազգային կազմակերպու-

բյուն) և ՌԱԲՍԵԼՍ-ները (բանվորագյուղացիական միություններ, փոխօգնության հասատատություններ)[121]։

Կուսակցության ամեն գուգահեռ հանդես եկավ նաև լեգալ բանվորական մամուլը, որը մեծ աշխատանք տարավ կուսակցական անդամների համախմբման, ինչպես և կուսակցության ներսում գործող ձախ սեկտանտական ֆրակցիայի վնասարար ազդեցության դեմ։

1930 թ. փետրվարին Գեորգի Դիմիտրովը և Վասիլ Կոլարովը Կոմունիստական ինտերնացիոնալի Գործադիր կոմիտեին ուղարկած իրենց գեկուցագրում խստորեն դատապարտեցին ձախ սեկտանտների ֆրակցիոն, վնասարար գործունեությունը։ Այնտեղ ասված էր. «Պարզ է և անկասկած, որ նրա հաջողությունները (խոսքը Բուլղարական կոմունիստական կուսակցության մասին է—Զ. Գ.) առավել նշանակալից կլիներն, եթե չլիներ ձախ սեկտանտների ֆրակցիոն վնասարար ազդեցությունը»[122]։ Բուլղարական կոմունիստական կուսակցության օրգան «Էհո»-ն հրապարակեց Գ. Դիմիտրովի և վ. Կոլարովի գեկուցումները, որոնք մեծ նշանակություն ունեցան ձախ սեկտանտների ֆրակցիոն գործունեության վերացման համար։ Միաժամանակ սկսեցին լույս տեսնել լեգալ նոր թերթեր՝ «Զվեզդա» և «Ժուպել»։ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի աշխատությունները լույս էին տեսնում այլ անուններով՝ բռնագրավումից փրկելու համար։

Գործարաններում, հիմնարկ-ձեռնարկություններում հայ կոմունիստներն ու ռեմսիստները գործում էին բուլղար ընկերների հետ, սակայն առանձին խմբակներ գործում էին նաև քաղաքների հայկական թաղամասերում։ Ուստի անհրաժեշտություն էր զգացվում ստեղծել հայերեն թերթ, որը դառնալու էր գրավոր ագիտացիայի և պրոպագանդայի միջոց։ Այդ նպատակով 1932 թ. Պլովդիվում, Մանուկ Բասմաջյանի բնակարանում, հրավիրվում է բուլղարահայ կոմունիստների խորհրդակցություն, որին մասնակցում են 20 պատգամավորներ[123]։ Կոնֆերանսին ներկա էին Սարգիս Հալաճյանը, Թորոս Օհանյանը, Հայկ Շառուկյանը, Սարգիս Այանյանը, Սարգիս Սարգիսյանը, Երվանդ Հովհաննիսյանը, Կարապետ Վարդապետյանը, Հայկ Գրիգորյանը, Պետրոս և Գևորգ Արփաճյանները, Պետրոս Պատվականյանը, Ասատուր Պուրգալլյանը և ուրիշներ։ Կոնֆերանսին մասնակցում էր Պլովդիվի ԲԿԿ օկրուգային կոմիտեի քարտուղար Վասիլ Դիմիտրովը։ Վերջինս հանդես եկավ միջազգային դրության մասին ընդարձակ գեկուցումով։ Կոնֆերանսը որոշեց հրատարակել «Հայ բանվոր» թերթը։ Ընտրվեց խմբագրական կոլեգիա, որի կազմում էին Մանուկ Բաբագյոզյանը՝ գլխավոր խմբագիր, անդամներ՝ Սարգիս Հալաճյանը և

Թորոս Օհանյանը[124]։ 1932 թ. ամռանը լույս տեսավ թերթի ընդամենը մեկ համար, որի 1000 օրինակների կեսը տպարանից դուրս բերելու պահին ոստիկանությունը բռնագրավեց։ Կոմունիստ Դամեր Շիրինին հաջողվում է տպարանում մնացած օրինակները ուղարկել Բուլղարիայի մյուս քաղաքները։ Թերթը վերահրատարակելու բոլոր ջանքերն ապարդյուն անցան։ Խմբագրական կոլեգիան շարունակեց իր գործունեությունը, ստանձնելով բուլղարահայ կոմունիստների կենտրոնական գեկավարության պատասխանատու աշխատանքը։

Թերթի եղակի համարը աշխուժացրեց կոմունիստների և առաջադեմ կազմակերպությունների գործունեությունը։ Նրանք գլխավորեցին ՀՕԿ-ի կազմակերպությունները, ընդլայնեցին նրա գործունեության շրջանակները։

Պլովդիվի հայ երիտասարդ կոմունիստներ Սարգիս Այանյանը, Սարգիս Սարգիսյանը, Հայկ Գրիգորյանը, Կարո Վարդապետյանը, Մանուկ Բասմաջյանը, Հարություն Գրիգորյանը, Հակոբ Թյուֆենքճյանը, Արփաճյան եղբայրները, Վահան Գրիգորյանը, Հարություն Լուսինյանը, Արմենակ Քալայճյանը, Լևոն Պետրոսյանը, Մարտիկ Դագեսյանը, Թագվոր Գևորգյանը և ուրիշներ հնչակյանների «Վանիկ» մարմնամարզական «Շանթ», առուրիստական «Արծիվ» լեգալ կազմակերպություններում ԲԿԿ Պլովդիվի օկրուգային կոմիտեի ցուցումով ստեղծում են հայ կոմունիստների խմբակներ, որոնց պատասխանատուներն անմիջական կապ են պահպանում Պլովդիվի ԲԿԿ քաղաքային կոմիտեի հետ։

Նույն ժամանակամիջոցում որպես ՀՕԿ-ի վարչության անդամներ «Ազգային միության» ակումբում գործում էին Գառնիկ Թյուֆենքճյանը և Հարություն Թելալյանը, իսկ «Գրասիրաց» միությունում Բենիամին Թյուֆենքճյանը։ Բնորոշ էր պայքարի ուժեղացումը դաշնակցության դեմ հասարակական-մշակութային, սպորտային կազմակերպությունների, քաղական խորհուրդների և ազգային վարժարանների հոգաբարձությունների վերընտրությունների ժամանակ։ Այդ պայքարի ընթացքում Բուլղարիայի հայահոծ քաղաքներում բազմաթիվ հայ երիտասարդներ մտնում էին ՌՄՄ-ի և ԲԿԿ-ի շարքերը։

1933 թ. Ռուսեի ՌՄՄ-ի օկրուգային կոմիտեն որոշում է քաղաքի 3-րդ շրջանում երիտասարդ հայերից ստեղծել մարքսիզմ-լենինիզմ ուսումնասիրողների խմբակ, որի կազմում ընդգրկվում են Տիրան Փափազյանը, Կարապետ Մարգարյանը (խմբակի պատասխանատու), Ստեփան Նավասարդյանը, Ռուբեն Վարդանյանը, Պետրոս Շամլյանը, Մանուկ Հայկազ-

յանը, Վարդգես Տյուլկերյանը, Մանուկ Աբելյանը, որոնք հետագայում դառնում են ԲԿԿ և ՌՄՍ-ի լավագույն կազմակերպիչներ[125]։ 1936 թ. վերջին ԲԿԿ-ի Ռուսեի ցուցումով հայկական թաղամասում ստեղծվում է կոմունիստական խմբակ, որի քարտուղարը սկզբում Արտաշես Ասլանյանն էր, իսկ հետո՝ Կարապետ Մարգարյանը[126]։ Խմբակն իր գործունեությունը շարունակեց մինչև 1938 թ.։ Այդ թվականի սեպտեմբեր ամսից ԲԿԿ-ի որոշման հիման վրա ազգային կուսակցական խմբակները ցրվեցին և սկսեցին գործել տերիտորիալ արտադրական սկզբունքով։ Խմբակն իր գոյության ընթացքում, ԲԿԿ Ռուսեի օկրուգային կոմիտեի ղեկավարությամբ կազմակերպչական-քաղաքական լայն աշխատանք կատարեց, մեծ եռանդ ներդնելով ՀՕԿ-ի կազմակերպության ամրապնդման գործում։ Խմբակի անդամներն աշխուժացրին «Արծիվ» տուրիստական միության, «Կոմիտաս» երգչախմբի, «Արաքս» երգչախմբային-գործիքային միության աշխատանքները։ Չնայած դաշնակցության ամբաստանագրերին, որոնց հետևեցին հալածանքներն ու ձերբակալությունները, Ռուսեի հայ կոմունիստներին ու ռեմսիստներին հաջողվեց նոր երիտասարդների ներգրավել հակաֆաշիստական պայքարի մեջ։ Պատերազմի ընթացքում կոմունիստներ ու ռեմսիստներ Տիրան Փափազյանը, Կարապետ Մարգարյանը, Հակոբ Մարգարյանը մասնակցեցին բուլղարական դիմադրական շարժմանը։ 1930-ական թվականներին Վառնայի հայ կոմունիստները՝ Գաբրիել Գաբրիելյանը, Հայրապետ Հայրապետյանը, Կրոն Դավթյանը, Մարտիկ Դագեսյանը, Կարապետ Գապաքճյանը, Թադևոս Հալաճյանը, Գրիգոր Հայրապետյանը և ուրիշներ գործում էին խոր ընդհատակում[127]։ Հետագայում ԲԿԿ շարքերը ընդունվեցին և ակտիվ գործունեություն ծավալեցին Օնիկ և Գրիգոր Օվանեսով-Մարտիկյաններ եղբայրները, Հարություն Պողոսյանը, Կարապետ Խաչատրյանը, Թադևոս Փամբուկճյանը, Հրաչ Ռոլդյանը, որոնք տարբեր ժամանակներում գործել են որպես կուսակցության օկրուգային և շրջանային կոմիտեների անդամներ[128]։ ԲԿԿ հայկական խմբակներում գործում էին Թորգոմ Բոյաջյանը, Ծիրայր Սիմոնյանը, Գրիգոր Հարությունյանը, Լևոն Սողիկյանը և ուրիշներ։ Ընդհատակում անձնազոհ աշխատանք էր կատարում ՌՄՍ-ի Վառնայի շրջանային կոմիտեի անդամ Հակոբ Պարոնյանը։ Առանձին հիմնարկներում գործում էին ռեմսիստներ Գասպար Էքսերճյանը և ուրիշներ[129]։ Նրանցից շատերը, խուսափելով ֆաշիստական ոստիկանության հետապնդումներից, հետևողական աշխատանք ծավալեցին հիտլերյան օկուպանտների դեմ։ Կուսակցության հատուկ հրահանգներն էին կատարում Տիրան Քանոնյանը, Օնիկ Նիկողոսյանը և ուրիշներ։

Բուրգաս քաղաքի հայերի մի մասը աշխատում էր գործարաններում և նավամատույցում։ Նրանցից առանձին բանվորներ ընդգրկված էին ԲԿԿ և ՌՄՍ-ի շարքերում։ Գևորգ Թոնկուլյանը, Սարգիս Ջալկըճյանը, Յրանց Կալայճյանը լինելով շրջանային կոմիտեների անդամներ և քարտուղարներ, բազմիցս ձերբակալվել և դատապարտվել են բուլղարական իշխանությունների կողմից[130]։

1931—1934 թթ. Յամբոլ քաղաքում բռնկվեցին մի շարք գործադուլներ, որոնց մասնակցեցին քաղաքի տեքստիլ ու ծխախոտի արդյունաբերություններում աշխատող բանվորներն ու գիմնազիայի աշակերտները։ Ոստիկանությունը ձերբակալեց ՌՄՍ-ի «Կարգոնա» թաղամասի շրջանային կոմիտեի անդամներին՝ Պանայոտ Կարակաշանովի գլխավորությամբ։ Վերջինս մեծ աշխատանք էր կատարել հայկական շրջաններում և լավ ծանոթ էր ՀՕԿ-ի ներսում գործող հայ ռեմսիստներին։ Ոստիկանությունը որոնում էր նաև Հովսեփ Ջուվանճյանին, որը շրջանային կոմիտեի անդամ էր և մասնակցել էր հայ կոմունիստների՝ Պլովդիվի և Բուրգասի խորհրդակցություններին։

Սլիվեն քաղաքում նույն ժամանակամիջոցին գործում էին հայ կոմունիստներ ու ռեմսիստներ Ազնիվ Խուլյանը, Կարպիս Կյուրեղյանը, Դավիթ Մ. Դավիթյանը, Հովակիմ Պաթմազյանը, Օնիկ Ջանչանյանը, Պետրոս Պատվականյանը և ուրիշներ։

1933 թ. Սլիվենի հայ կոմունիստները և ձախ հնչակյանները ստեղծեցին ՀՕԿ-ի մասնաճյուղ։

Հայ կոմունիստներ և ռեմսիստներ գործում էին նաև Բուլղարիայի Այտոս, Սվիլենգրադ, Պազարջիկ, Ստարա Զագորա, Շումեն, Հասկովո և այլ քաղաքներում։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նրանք աչքի ընկան բուլղարական դիմադրական շարժման մեջ իրենց ակտիվ մասնակցությամբ։ 1934 թ. ԲԿԿ նախաձեռնությամբ Բուլղարիայում տեղի ունեցան բազմաթիվ հրապարակային ժողովներ ու միտինգներ՝ բուլղար ժողովրդի մեծ զավակ, միջազգային կոմունիստական շարժման անվանի մարտիկ Գեորգի Դիմիտրովին հիտլերականների ձեռքից ազատելու օգտին։

Միջազգային պրոլետարիատը, այդ թվում և բուլղարական բանվոր դասակարգը, մեծ ոգևորությամբ ողջունեցին Գ. Դիմիտրովի և նրա ընկերների ազատագրումը և նրանց մեկնումը Սովետական Միություն։

Սովետական Միությունում Գեորգի Դիմիտրովը գլխավորեց ԲԿԿ արտասահմանյան բյուրոն։ Բուլղար կոմունիստներին ուղղված նրա խոր-

հուրդներն ու նամակները հնարավորություն տվեցին ազատվել ձախ սեկտանտական գործելակերպից։

1935 թ. Գ. Դիմիտրովը Կոմինտերնի 7-րդ համագումարում ընտրվեց նրա Գործկոմի գլխավոր քարտուղար և այդ պաստում մնաց մինչև նրա լուծարքը (1943)։ Նա հմտությամբ կարողացավ առանձին երկրներում, այդ թվում Բուլղարիայում, իրականացնել աշխատավոր զանգվածների միասնական ճակատը ֆաշիզմի և պատերազմի հրձիգների դեմ։

1936 թ. օգոստոսի 15-ին Վառնայում Թորգում Բոյաջյանի բնակարանում տեղի ունեցավ բուլղարահայ կոմունիստների III կոնֆերանսը (երկրորդ կոնֆերանսը տեղի էր ունեցել 1933 թ. հունվարին Բուրգասում, առաջին ներգաղթի օրերին), որին մասնակցում էին 14 հայաշատ քաղաքների ներկայացուցիչներ[131]։ Կոնֆերանսում ելույթ ունեցավ ԲԿԿ արտասահմանյան բյուրոյի, հետագայում ԲԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Իվանովը, որը զեկուցեց ԲԿԿ ԿԿ-ի 6-րդ ընդլայնված պլենումի որոշումների, միջազգային դրության և հայ կոմունիստների խնդիրների մասին։ Կոնֆերանսում ելույթ ունեցող ընկերները սուր քննադատության ենթարկեցին ԲԿԿ շարքերում տեղ գտած ձախ սեկտանտական գործունեությունը, որը վտանգի էր ենթարկում հասարակական կազմակերպություններում աշխատող ընկերների, հատկապես ՀՕԿ-ի ղեկավարների կյանքը։ Կոնֆերանսն ընդունեց մի շարք որոշումներ.

1. Ուժեղացնել աշխատանքը հայ հասարակական կազմակերպություններում, սպորտային, մշակութային, հայրենակցական և այլ միություններում ու այդ կազմակերպություններից դուրս մղել դաշնակցության ներկայացուցիչներին։

2. Օգնություն կազմակերպել Իսպանիայում՝ քաղաքացիական պատերազմին մասնակցող ինտերնացիոնալ բրիգադներին։

3. Մերկացնել ֆաշիստական Իտալիայի և Հիտլերյան Գերմանիայի միջամտությունն ու ագրեսիան իսպանական ժողովրդի արդար պայքարում։

1936—1937 թթ. Սոֆիայում գործող հայ կոմունիստների կենտրոնական ղեկավարությունը, ԲԿԿ Կենտկոմի ցուցումով, բուլղարահայ գաղութում քաղաքական հսկայական գործունեություն ծավալեց։ Նրա կազմում գտնվող Սարգիս Հալաճյանը, Դավիթ Շերինյանը, Դավիթ Մ. Դավիթյանը և ուրիշներ ընդլայնեցին իրենց գործունեությունը գաղութում, վերամիավորեցին հայկական գաղութի առաջադեմ ուժերը և համատ պայքար ծավալեցին հակասովետիզմի և նացիոնալիզմի, միջազգային իմպերիալիզմի՝ հատկապես ֆաշիստական Գերմանիայի գործիք դարձած նժդեհականների դեմ։

1936—1937 թթ. Վառնայում, Բուրգասում, Ռուսեում և այլ քաղաքներում բուլղարական ֆաշիստական ոստիկանությունը բացահայտեց ԲԿԿ շարքերում գործող հայ կոմունիստների, որոնք ձերբակալվեցին և դատապարտվեցին ազատազրկման տարբեր ժամկետներով։

Բուրգասում ԲԿԿ անդամներ Ժիվկա Ռադոնովայի, Բորիս Կոստովի, Ստեֆան Չակըրովի հետ դատարանը տարբեր ժամկետներով ազատազրկման դատապարտեց շրջանային կոմիտեի անդամներ Գևորգ Թոնկուլյանին և Սարգիս Չալկըճյանին[132]։

1938 թ. Բուրգասում ՌՄՄ-ի շարքերն են մտնում և ընդհատակյա գործունեություն ծավալում երիտասարդ բանվորներ ու ծառայողներ Գևորգ Փափազյանը, Հովհաննես Բակլավաջյանը, Օհան Բոստանջյանը, Խաչիկ Փիլաֆջյանը, Մերի Դրիգորյանը և ուրիշներ։ Հովհաննես Բակլավաջյանը, որ որպես ՌՄՄ-ի շրջանային կոմիտեի անդամ, գործում էր Բուրգասի գիմնազիանների աշակերտական խմբակներում, աշակերտներին մասնակից դարձրեց «Սորուհյան» ակցիային[133]։

1938 թ. Բուրգասից Սլիվեն է տեղափոխվում Գևորգ Փափազյանը և դառնում ՌՄՄ-ի շրջանային կոմիտեի անդամ։ Պատերազմի նախօրեին ձերբակալվում է և դատապարտվում 15 տարի ազատազրկման։

Բուլղարիայում 1936 թ. «Ռազմական լիգայի» կառավարության տապալումից հետո, այն փոխարինվեց Կյոսեիվանովի կառավարությունով, որը արտաքին քաղաքականության բնագավառում շրջադարձ կատարեց դեպի ֆաշիստական Գերմանիան։ Այդ կառավարությունը, չնայած Սովետական Միության հետ հաստատել էր դիվանագիտական հարաբերություններ, 1938 թ. բուլղարական ժողովրդական ժողովից հեռացրեց կոմունիստ դեպուտատներին և կոմունիստներին արգելեց գլխավորել հասարակական կազմակերպությունների գործունեությունը։ Այդ կառավարությունն էր, որ 1937 թ. վերջին արգելեց ՀՕԿ-ի գործունեությունը բուլղարահայ գաղութում, և լուծարքի ենթարկելուց հետո բռնագրավեց նրա ողջ ունեցվածքը։

1939 թ. ավարտվեց ԲԿԿ և ԲԿ միավորումը մեկ մարքսիստական-լենինյան կուսակցության մեջ[134]։ Կուսակցությունը անվանվեց Բուլղարական բանվորական կուսակցություն և շարունակեց գործել խոր ընդհատակում։

ՀՕԿ-ը լուծարքի ենթարկվելուց հետո հայ կոմունիստներն ու ռեմահոստները ԲԿԿ ցուցումներով իրենց գործունեությունը ծավալեցին հայ

հասարակական, մշակութային, սպորտային, հայրենակցական կազմակերպություններում։

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին Բուլղարիայի հայաշատ քաղաքներում ընդհատակյա ծանր պայմաններում գործում էին հայկական կոմունիստական ու ռեմսիստական խմբակներ։ Նրանք ցուցումներ էին ստանում Սոֆիայի հայկական կենտրոնական ղեկավարությունից, իսկ տեղերում նրանց մեծ օգնություն և կոնկրետ առաջադրանքներ էին տալիս ԲԿԿ շրջանային, քաղաքային ու օկրուգային կոմիտեները։ Նրանք ակտիվ կերպով մասնակցում էին հիմնարկ-ձեռնարկություններում կազմակերպվող միջոցառումներին՝ ցույցերին, գործադուլներին, դրամական միջոցներ հավաքելու աշխատանքներին և այլն։ Հայ կոմունիստները նկատելի աշխատանք էին տանում նաև հայ հասարակական կազմակերպություններում՝ գաղութին հուզող հարցերի լուծման ուղղությամբ, այն է՝ նանսենյան քաղաքացիություն ունեցող բանվորների աշխատանքի տեղավորման, սպորտային, մշակութային կազմակերպությունների օրինականացման և այլն։

1940 թ. Պլովդիվ քաղաքում գործում էին հայկական կոմունիստական և ռեմսիստական բազմաթիվ խմբակներ։ Այդ շարժումը կազմակերպեցին և գլխավորեցին բուլղար կոմունիստներ Պետր Չենգելովը (ԲԿԿ Կենտկոմի անդամ և Պլովդիվի օկրուգային կոմիտեի առաջին քարտուղար), Նիկոլա Բալկանջիևը, Ռադա Թոդորովան, Մարա Տոտևան, Մաքրի Աբրահամյանը, Սլավի Չակըրովը, Գերման Գերմանովը, Գեորգի Յովկովը, իսկ հետագայում դիմադրական պայքարի վերելքի շրջանում ԲԿԿ և ՌՄՄ-ի Կենտկոմի անդամներ Ադալբերտ Անտոնովը, Լիլյանա Դիմիտրովան, Ալեքսանդր Դիմիտրովը[135]։ Հայ կոմունիստներից պայքարի առաջին շարքերում էին Գառնիկ Թյությունճյանը, Սարգիս Այանյանը, Թորոս Օհանյանը, Արշավիր Կարապետյանը, Լևոն Պետրոսյանը, Պետո Սերեմճյանը, Երվանդ Հովհաննիսյանը, Անտուան Դյուլգերյանը, Ռուբեն Փափազյանը, Արփաճյան եղբայրները, Հակոբ Հակոբյանը, Արթին Աշըքյանը։ Պլովդիվի ԲԿԿ օկրուգային կոմիտեի հետ անմիջական կապ էր պահպանում Ս. Այանյանը։ Ազգային փոքրամասնությունների շրջաններում տարվող աշխատանքը գլխավորում էր ԲԿԿ Պլովդիվի օկրուգային կոմիտեի անդամ Նիկոլա Բալկանջիևը[136]։

1939—1940 թթ. Պլովդիվի ԲԿԿ օկրուգային կոմիտեն քաղաքը բաժանել էր 4 շրջանների։ Հայկական թաղամասերը գտնվում էին 2-րդ և 4-րդ շրջաններում։ «Բունարջիկ» (2-րդ շրջան) և «Կապանա» (4-րդ շրջան) հայկական թաղամասերի հայ կոմունիստները մեծ աշխատանք ծա-

վալեցին ՌՄՄ-ի առանձին խմբակներ ստեղծելու ուղղությամբ։ Այդ աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին Պլովդիվի ՌՄՄ-ի օկրուգային և առաջին շրջանի քարտուղարներ և մարտական խմբերի ղեկավարներ Ստավրի Այդարովը, Գեորգի Յովկովը, Գերման Գերմանովը և ուրիշներ[137]։

«Բունարջիկ» թաղամասում ստեղծվեց առաջին հայկական ռեմսիստական ընդհատակյա խմբակը՝ բաղկացած 5 երիտասարդներից. խմբակի ղեկավարը և չորս անդամներ (Ստեփան Թանդրյան, Երամ Թագվորյան, Նուպար Սարգսյան, Մինաս Պետրոսյան)։ Նրանք բացատրական լայն աշխատանք տարան «Արարատ» հայկական ֆուտբոլային միության մեջ՝ քաղաքական զանազան հարցերի և վրա հասած երկրորդ համաշխարհային պատերազմի բնույթի ու ընթացքի վերաբերյալ։ Խմբակը կարողացավ միության անդամներին մասնակից դարձնել նաև 1940 թ. նախաձեռնված, այսպես կոչված, «Սոբոլևյան» ակցիային։ Խմբակի անդամները կազմակերպում էին սովետական ֆիլմերի կոլեկտիվ դիտումներ, միջոցներ հավաքում պարտիզանների համար զանազան քաղաքական միջոցառումների ժամանակ, թռուցիկներ ցրում և այլն։

Պլովդիվի «Կապանա» թաղամասում և նրա շրջակայքում գտնվող հայ հասարակական, սպորտային, մշակութային կազմակերպությունների ակումբներում և գրադարաններում («Շանթ», «Արծիվ», «ՀՄԸՄ», «Գրաբերաց» և ուրիշներ), հավաքվում էր գաղթօջախի համարյա ողջ երիտասարդությունը։

ՌՄՄ-ի Պլովդիվի շրջանային և օկրուգային կոմիտեի անդամներ Գերման Գերմանովի, Գեորգի Յովկովի, Սլավի Չակըրովի, իսկ հետագայում Լիլյանա Դիմիտրովայի, Դանչո Փափազովի և ուրիշների օգնությամբ քաղաքի հիշյալ թաղամասում 1939—1940 թթ. ընթացքում ստեղծվեցին հայկական ռեմսիստական խմբակներ։

Արա Մարուքյանը, որը ռեմսիստական գործունեության պատճառով վտարվել էր Պլովդիվի արական գիմնազիայից, վերահիշյալ ընկերների հետ ակտիվ գործունեություն ծավալեց «Կապանա» թաղամասում։ Այս թաղամասի ռեմսիստական խմբակների անդամները մեծ մասամբ բնակվելով և աշխատելով «Ստարինեն» թաղամասում, հնարավորություն ունեին առանձին տներում կազմակերպել իրենց ժողովներն ու ստեղծել թաքստոց-բնակարաններ ընդհատակում գործող և ֆաշիստական ոստիկանությունից հետապնդվող կոմունիստների ու ռեմսիստների համար[138]։ Խմբակների ստեղծման ու կազմակերպման գործում մեծ դեր խաղացին Սարգիս Այանյանը, Արփաճյան եղբայրները, Արա և Օնիկ Մարուքյան-

ները, Սրապ Շիրինյանը, Էդի Կարապետյանը, Թորոս Օհանյանը, Ռուբեն Փափազյանը, Բենիամին Թյուֆենքճյանը։ Սկզբնական շրջանում խմբակները գլխավորում էին Արա Մարուքյանը, Սրապ Շիրինյանը, Սարգիս Այանյանը։

1940 թ. ԲԲԿ Պլովդիվի օկրուգային կոմիտեն հրավիրեց հայ, թուրք, հրեա, մակեդոնացի և թրակացի կոմունիստների ներկայացուցիչների խորհրդակցություն և տվեց կոնկրետ ցուցումներ ազգային փոքրամասնություններում տարվող աշխատանքների մասին։ Խորհրդակցությունում Պլովդիվի հայ կոմունիստների և ռեմսիստների ներկայացուցիչներն էին Սարգիս Այանյանը և Սրապ Շիրինյանը։ Զեկուցումով հանդես եկավ օկրուգային կոմիտեի քարտուղար Կոստա Լամբրևը։ Խորհրդակցությունը որոշեց է՛լ ավելի ընդլայնել աշխատանքները հասարակական կազմակերպություններում, և աշխատավորական մասսաներին դարձնել ֆաշիզմի և պատերազմի հրձիգների դեմ ուղղված միջոցառումների մասնակիցը[139]։

Նույն թվականի ապրիլի վերջին բուլղարահայ կոմունիստները, օգտագործելով Պլովդիվում ամեն տարի կազմակերպվող ավանդական տոնավաճառը, հրավիրեցին հայ կոմունիստների խորհրդակցություն, որին մասնակցեցին Բուլղարիայի համարյա բոլոր հայաշատ քաղաքների ներկայացուցիչները։ Զեկուցումներով հանդես եկան Մարտիրոս Խաչիկյանը, Սարգիս Այանյանը, Գևորգ Թոնկուլյանը։ Առաջինը զեկուցեց հայ հասարակական կազմակերպություններում հայ կոմունիստների կատարած աշխատանքների մասին, երկրորդը՝ ԲԲԿ Պլովդիվի օկրուգային կոմիտեի հրավիրած խորհրդակցության որոշումների մասին, իսկ երրորդը՝ հաղորդեց Բուրգասի նանսեննյան հպատակություն ունեցող հայ բանվորների համար բուլղարական քաղաքացիություն ձեռք բերելու ուղղությամբ հայ կոմունիստների տարած աշխատանքների մասին։ Խորհրդակցությունը որոշեց և կոմունիստների առաջ խնդիր դրեց ընդլայնել աշխատանքները գաղութի բոլոր հասարակական կազմակերպություններում, գլխավորել նրանց գործունեությունը, այնտեղից դուրս մղել դաշնակցության ներկայացուցիչներին։

Պլովդիվի խորհրդակցությունից հետո բուլղարահայ կոմունիստները և ռեմսիստները համառ պայքար ծավալեցին հակասովետիզմի և նացիոնալիզմի դեմ։ Նրանք ԲԲԿ ղեկավարությամբ պայքարելով բուլղարական ֆաշիզմի դեմ, միաժամանակ մերկացնում, դիմակազերծում և ջախջախիչ հարված էին հասցնում դաշնակցության դավաճանական քաղաքականությանը[140]։

4. ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅԵՐԻ ՀԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՀԱԿԱՖԱՇԻՍՏԱԿԱՆ-ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ՝ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՖԱՇԻԶՄԻ ԵՎ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԿՈՒՊԱՆՏՆԵՐԻ ԴԵՄ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1941 թ. մարտի 1-ին ժողովրդի կամքին հակառակ Ֆիլովի գլխավորած բուլղարական կառավարությունը Վիեննայում ստորագրեց համաձայնագիր, որով Բուլղարիան դառնում էր հիտլերականների ռազմական մեքենայի կցորդը[141]։

1941 թ. մարտի 1-ին գերմանաֆաշիստական զորքերը մտան Բուլղարիա։ Երկրի փաստական ղեկավարությունն անցավ գերմանացիների ձեռքը, որի առաջին միջոցառումներից էր ժողովրդի առանց այն էլ խղճուկ դեմոկրատական իրավունքների վերացումը և քաղաքական կազմակերպությունների արգելումը։ Բուլղար ժողովրդի համար բացվեց օտար ախրակալների և նրանց կամակատարների դեմ պայքարի և համառ մարտերի շրջան, որի մասնակիցը դարձան նաև բազմաթիվ հայեր։

Պատերազմի սկզբին և հատկապես Սովետական Միության վրա ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակումից հետո, Բուլղարիայում ակտիվացան դաշնակցական գործիչները։ Ֆիլովի ֆաշիստական կառավարությունը բացահայտորեն հովանավորում ու քաջալերում էր նրանց հակասովետական գործունեությունը։

1942 թ. սկզբին, երբ Բեռլինում կազմավորվեց «Հայ ազգային խորհուրդը»[142], հիտլերական ռազմական հրամանատարությունը հայկական կամավորական լեգեոն ստեղծելու աշխատանքները հանձնարարեց Գարեգին Նժդեհին, որի այդ ուղղությամբ գործադրած ջանքերը ապարդյուն անցան։

«Ոչ մի զինվոր, ոչ մի կամավոր Արևելյան ճակատի համար» նշանաբանով էին առաջնորդվում հայ կոմունիստներն ու հակաֆաշիստները։ Պատերազմի տարիներին, չնայած ֆաշիստական իշխանության բռնություններին, բուլղարահայ աշխատավորության համակրանքը սովետական ժողովրդի հերոսական պայքարի կողմն էր։ 1941 թ. հունիսի 22-ին ԲԲԿ կենտկոմը Մոսկվայից ստացավ Գևորգի Դիմիտրովի հղած ռադիոգիրը, որտեղ նշված էին կուսակցության հիմնական խնդիրները՝ արդի քաղաքական իրադրության պայմաններում։

1941 թ. հունիսի 24-ին տեղի ունեցավ ԲԲԿ ԿԿ քաղբյուրոյի ընդլայնված նիստ, որտեղ որոշում կայացվեց զինված պայքարի անցնել ֆաշիստական Գերմանիայի դեմ։

Նույն թվականի հունիսի վերջին և հուլիսի սկզբին Կոմինտերնի Գործադիր Կոմիտեի օգնությամբ Բուլղարական բանվորական կուսակցության Արտասահմանյան բյուրոն, որի կազմում էին Գեորգի Դիմիտրովը, Վասիլ Կոլարովը, Ստանկե Դիմիտրովը և Գեորգի Դամյանովը, մշակեց զինված պայքարի ծրագիր։ Կուսակցության գլխավոր խնդրի վերաբերյալ արտասահմանյան բյուրոյի որոշման մեջ ասված էր. «Այժմ, երբ Հիտլերը սկսեց ավազակային արշավը Սովետական Միության դեմ, բուլղարական կոմունիստների անմիջական, գլխավոր, միակ խնդիրն է մասնակցել ֆաշիստական Գերմանիայի բանակների լրիվ ջախջախմանը»[143]։

1941 թ. վերջից Բուլղարիայում լայն ծավալ ստացավ պարտիզանական շարժումը։ Ուժեղանում էր դիմադրական պայքարը գերմանական օկուպանտների դեմ։ ԲԲԿ Արտասահմանյան բյուրոյի անդամ Ստանկե Դիմիտրովի գլխավորությամբ 1942 թ. «Նարոդեն գլաս» և «Հրիստո Բոտև» գաղտնի ռադիոկայանների միջոցով հրահանգներ էին տրվում դիմադրական շարժմանը լայն թափ տալու ուղղությամբ։ Այդ ռադիոկայաններով հաղորդվեցին Գեորգի Դիմիտրովի նախաձեռնությամբ կազմված «Հայրենական ճակատի» ծրագիրն ու կանոնադրությունը։ Սրագրում երկրի բոլոր հայրենասիրական առաջադեմ ուժերին, անկախ նրանց ազգային պատկանելությունից և քաղաքական ու հասարակական դիրքից, կոչ էր արվում համախմբվել «Հայրենական ճակատի» շուրջը և պայքար ծավալել ֆաշիստական օկուպանտների դեմ։

Հակաֆաշիստական պայքարին, ինչպես նաև սովետական ժողովրդին ու կարմիր բանակին աջակցելու գործին նվիրվեցին բազմաթիվ անձնազոհ կոմունիստներ և ռեմսիստներ։ Պայքարելով հիտլերյան օկուպանտների դեմ, նրանք հանդուգն գործողություններ էին ձեռնարկում նաև բուլղարական ֆաշիստական իշխանությունների դեմ։ Հրկիզում ու ոչնչացնում էին հիտլերական զորքերի պահեստները, գնացքները, և նրանց հատկացված գործարանները։ Հիտլերականների զորքերի քանակի, օդանավակայանների, ռազմական ուժերի տեղաբաշխման և շարժման մասին տեղեկություններ էին հավաքում և հաղորդում կարմիր բանակի գլխավոր հրամանատարությանը։ Թշնամուն բազմիցս հաջողվում էր հայտնաբերել ու ձերբակալել խիզախ մարտիկներին, որոնց կյանքը ընդհատվում էր ֆաշիստական բանտերում և համակենտրոնացման ճամբարներում։

1941 թ. ամռանը բուլղարահայ կոմունիստների կենտրոնական ղեկավարության անդամ Դավիթ Մ. Դավիթյանը շրջում էր հայաշատ քաղաքները և հաղորդում ստեղծված քաղաքական նոր իրադրության պայմաններում ԲԲԿ ԿԿ-ի կայացրած որոշումներն ու հրահանգները։ Նա Պլովդիվում անցկացրեց խորհրդակցություն՝ 40-ից ավելի հայ կոմունիստների ու ռեմսիստների մասնակցությամբ։ Խորհրդակցությունը որոշեց ուժեղացնել պայքարը դաշնակցության նժդեհյան թևի դեմ, մերկացնել նրա հակասովետական-հակահայաստանյան գործունեությունը և համախմբել բոլոր հայրենասիրական ու դեմոկրատական ուժերը, ակտիվորեն մասնակցել բուլղարական դիմադրական շարժմանը։

Սոֆիայում հետապնդվող կոմունիստական գործիչներին ապաստան տալու և պարտիզանների հետ կապ պահպանելու գործին ակտիվորեն օգնում էին դիմադրական շարժման մասնակիցները, հայ կոմունիստները։

1942 թ. Սոֆիայի ոստիկանության կողմից մի խումբ բուլղար ընկերների հետ հայտնաբերվեցին և ձերբակալվեցին Սրապ Շիրինյանը, Արմենակ Կալայճյանը և Գեղամ Ջավուշյանը[144]։ Առաջինը մի խումբ կուսակցական պատասխանատու ընկերների հետ ռազմադաշտային դատարանի կողմից դատապարտվեց ցմահ բանտարկության, իսկ երկրորդը՝ երկու տարվա ազատազրկման։

1941—1942 թթ. հայ կոմունիստների կենտրոնական ղեկավարությունը ԲԲԿ ԿԿ-ից ստանում էր հայկական շրջաններում հակաֆաշիստական դիմադրական շարժման կազմակերպման և ծավալման վերաբերյալ կոնկրետ հրահանգներ։ Այդ կապը, սակայն, ձերբակալությունների, զոքակոչումների և Սոֆիայի ռմբակոծումների պատճառով շատ հաճախ ընդհատվում էր։ Եվ քանի որ ԲԲԿ կենտկոմը տեղափոխվել էր Պլովդիվ, իսկ նրա անդամներից շատերը գտնվում էին բանտերում ու համակենտրոնացման ճամբարներում, դժվարանում էր կապի վերականգնումը, իսկ փոքրամասնություններին վերաբերող աշխատանքները վարում էին օկրուգային, քաղաքային և շրջանային կոմիտեները։ Հայ կոմունիստներն ու ռեմսիստները ենթարկվում էին նրանց։

1942 թվականից «Ենի քյոյ» (Կրըստոպոլե) համակենտրոնացման ճամբարում էին հայ կոմունիստներ Արտաշես Ասլանյանը, Գաբրիել Գաբրիելյանը, Դավիթ Մ. Դավիթյանը, Կարապետ Մարգարյանը, Օնիկ Մարտիկյանը, Գևորգ Թոնկուլյանը, Թորգոմ Պոյաճյանը, Գրիգոր Հովհաննիսյանը, Կարապետ Հովսեփյանը, Ստեփան Նավասարդյանը, Օնիկ Ղուկասյանը, Խաչիկ Փիլաֆճյանը, Մանուկ Կարագյոզյանը և շատ ուրիշներ[145]։

1942 թ. Սոֆիայում ՌՄՍ-ի շարքերն է ընդունվում և ընդհատակյա աշխատանք ծավալում Հերմինե Ռազկրաթլյանը։ Հետագայում խուսափելով ոստիկանության հետապնդումներից, նա բուլղար ընկերների հետ անցնում է Սոֆիայից ոչ հեռու Ստարա Պլանինայի Մուրգաշ լեռան լանջերում մարտնչող «Չավդար» պարտիզանական չոկատի շարքերը, որի

ԲԿԿ կկ ներկայացուցիչը Թոդոր Ժիվկովն էր, իսկ հրամանատարը՝ Դոբրի Ջուրովը (առաջինը՝ ԲԿԿ կկ այժմյան գլխավոր քարտուղար և պետական խորհրդի նախագահ, իսկ երկրորդը՝ պաշտպանության մինիստր—Ջ. Դ.)։ Հերմինեն, որի պարտիզանական անունը Սաշկա էր, որպես գնդացրային անձնակազմի ավագ, մասնակցեց մի շարք մարտերի, սակայն նեգուշևո գյուղում ընկավ թշնամու ձեռքը։ 1944 թ. ապրիլի 10-ին ֆաշիստները անասելի խոշտանգումներից հետո նրան կիսամեռ վիճակում թաղեցին իր իսկ ձեռքերով փորած գերեզմանում[146]։ Բուլղար բանաստեղծ Վեսելին Անդրեևը Սաշկային անմահացրել է համանուն պոեմում.

«Ինքը հանեցին Սաշկային ուժով
Եվ գահիճների հայացքից ծրկեցին,
Աչքարկը կարծես պարուրվեց մուժով...
«Ահա գաղտնիքը պարտիզանական,—
Գոռում են գահիճն ու գենքն ահարկու...
. . . . . .
Թե չասես ձերոնց տեղն անվարան,—
Մահդ կգտնես քո փորած փոսում...
Արեգակն արդեն գույն ունի արյան
Եվ քամին արդեն մահերգ էր հյուսում...[147]

1943 թ. Ստալինգրադի ճակատամարտի հաղթական ավարտից հետո Բուլղարիայում դիմադրական շարժումն էլ ավելի ուժեղացավ, իր մեջ ընդգրկելով ժողովրդական տարբեր խավերի ներկայացուցիչներին։ ԲԿԿ առջև նոր խնդիրներ ծագեցին. որոշվեց անհապաղ փոփոխություններ մտցնել պարտիզանական շարժման կազմակերպչական կառուցվածքի մեջ[148]։

1943 թ. ապրիլին ԲԿԿ կկ-ը մշակեց ռազմաօպերատիվ պլան, որի համաձայն երկիրը բաժանվեց 12 ապստամբական օպերատիվ գոտիների (ՎՕԶ), որոնք ընդգրկում էին մեկ կամ ավելի կուսակցական օկրուգային կոմիտեներ։ Օպերատիվ գոտիներում գործում էին 65 պարտիզանական միավորներ, 200 հազարից ավելի յատակներով[149]։ Այդ գոտիներն ունեին իրենց ռազմական ղեկավար շտաբները։ Նրանց կազմում էին ԲԿԿ օկրուգային կոմիտեների անդամները, որոնց գործունեությունը ղեկավարում էր կենտկոմի ներկայացուցիչը։ Կարճ ժամանակամիջոցում ապստամբական բրիգադները տիրապետեցին պարտիզանական պատերազմ մղելու արվեստին։ Բոլոր պարտիզանական ջոկատները կազմեցին, այսպես կոչված, ՆՕՎԱ (Նարոդնա Օսվոբոդիտելնա Վրստաննիչեսկա Արմիա)։ ԲԿԿ-ը և «Հայրենական ճակատի» ազգային կոմիտեն հսկայական աշխատանք ծավալեցին բուլղարական ֆաշիստական բանակից հայրենասեր հրամանատարական կադրերին ՆՕՎԱ-ի շարքերը ներգրավելու ուղղությամբ։ Առանձին վայրերում պարտիզանական ջոկատները գլխավորում էին ՍՍՀՄ-ում ռազմական կրթություն ստացած բուլղարներ, որոնք Բուլղարիա էին եկել ինքնաթիռներով կամ սուզանավերով[150]։

Բուլղարիայի հայաշատ քաղաքներից Սոֆիան գտնվում էր I օպերատիվ գոտում, Պլովդիվը՝ II-ում, Յամբոլը, Սլիվենը, Այտոսը, Բուրգասը՝ VI-ում։ Վառնան գտնվում էր X գոտում, իսկ Ռուսեն ԲԿԿ նախատեսում էր դարձնել XIII գոտի, սակայն ռազմական ուժերի նվազ լինելը հնարավորություն չտվեց այն իրականացնել։ Առանձին հայ կոմունիստներ և ռեմսիաններ գործում էին նաև Հասկովոյի, Շումենի, Պազարջիկի, Սլիվիտրայլի գոտիներում։

1943—1944 թթ. դաշնակցային օդային ուժերի ռմբակոծումների և ատիկանական ուժեղ հսկողության և հետապնդումների պայմաններում բուլղարական դիմադրական շարժման մասնակիցների հետ Սոֆիայի հայ կոմունիստներն ու ռեմսիաններն անձնուրաց կերպով կատարում էին կուսակցության հանձնարարությունները՝ նվիրաբերելով իրենց ուժն ու եռանդը ֆաշիզմի դեմ ծավալվող համաժողովրդական պայքարին։

1942 թ. նոյեմբեր ամսին Պլովդիվի ՌՄՍ-ի II շրջանի շրջանային կոմիտեի անդամների հետ ատիկանությունը ձերբակալեց նաև հայկական խմբակի անդամներին։ Պլովդիվի ռազմադաշտային դատարանը 28 ռեմսիաների դատապարտեց զանազան ժամկետների բանտարկության։ 1943 թ. ապրիլին Կոնստանդին Բելչևի, Դիմիտր Գարչևի, Դիմիտր Ջակալովի, Յվյատկո Գագովի, Հրիստո Սերկեջիևի, Ռուդոլֆ Լեվիի և ուրիշների հետ Զոհրաբ Ղասաբյանին ու Ստեփան Թանդրյանին Պլովդիվի բանտից տեղափոխեցին Հարավսլավիայի (այդ տարիներին Բուլղարիային միացված)—Մակեդոնիայի Սկոպլե քաղաքի մոտ գտնվող «Իդրիզովո» բանտը[151]։ 1944 թ. օգոստոսին հարավսլավական պարտիզանները հարձակում գործելով բանտի վրա, ազատեցին բոլոր բանտարկյալներին (մոտավորապես 460 հոգի՝ մեծ մասը մակեդոնացիներ, սերբեր, չերնոգորցիներ)։ Նույն թվականի օգոստոսի 27-ին, III Մակեդոնական երիտասարդական պարտիզանական բրիգադին կից, ազատագրված բանտարկյալներից կազմակերպվեց բուլղարական «Վասիլ Կոլարով» պարտիզանական ջոկատը, որի կազմում էին Զ. Ղասաբյանը և Ս. Թանդրյանը։

Ջոկատը գեներալ Բլիչի ընդհանուր հրամանատարությամբ III Մակեդոնական և VIII Պրեշովյան բրիգադների հետ մասնակցեց Ռայկո Ջենգիֆով, Դրաչևո, Սվետի Նիկոլա, Նեմանիցա և այլ բնակավայրերի ազատագրման համար մղված մարտերին։ 1944 թ. սեպտեմբերի 16-ին ջո-

կատը, շտաբի գլխավորությամբ (Մեթոդի Ստոև-Հրամանատար, Տակո Ստոյանով-քաղկոմխատ, Հրիստո Սերկեջիև-Հրամանատարի փոխարինող, Նիկոլա Կուֆարջիև-կուսակցական կազմակերպության քարտուղար, Գեորգի Սապունջիև-կոմերիտմիության քարտուղար) և կարգադրությամբ, կտրելով գերմանական ռազմագերիները, հարավսլավաբուլղարական սահմանով մտավ Բուլղարիա[152]։ Ջոկատի մարտիկների մեծ մասը, Բուլղարական ժողովրդական իշխանության զորակոչով I բանակի կազմում մեկնեց սովետագերմանական ռազմաճակատ։ Այդ բանակը գործում էր Ուկրաինական III ռազմաճակատի ձախ թևում՝ մարշալ Տոլբուխինի հրամանատարության ներքո։

Պլովդիվի IV շրջանի հայ կոմունիստներն ու ռեմսիստներն ակտիվորեն, դժվարին պայմաններում հակաֆաշիստական-դիմադրական շարժմանը մատակարարում էին զենք, պարեն և դրամական միջոցներ։ Առանձին խմբակները, որ ղեկավարում էին Տիրան Բարիքյանը, Կարո Ճինգոզյանը, Էդի Կարապետյանը, Հրանտ Նազարեթյանը, համաուժյամբ ընդհատակյա աշխատանքները զուգակցում էին «Շանթ» սպորտային միության լեգալ աշխատանքների հետ և անմիջական կապ պահպանում ՌՄՄ-ի IV շրջանի շրջանային ղեկավարության հետ։ Խմբակների անդամներն էին Կարո Ֆրենկյանը, Գասպար Գասպարյանը, Հայկազ Սվաճյանը, Խաչիկ Փանոսյանը, Կարո Ուստայանը, Գևորգ Բարսեղյանը, Ժիրայր Հակոբյանը, Երամ Փաշոյանը և ուրիշներ։ «Արծիվ» տուրիստական միության շարքերում էին գործում Սմբատ Պալյանը, Նուպար Աղտայանը, Վարդան Եմիշյանը, Մելինե Մարուքյանը։ Հետագայում նրանք իրենց շուրջը համախմբեցին մեծ թվով անկուսակցական բանվոր-բանվորուհիների, որոնք օժանդակեցին հակաֆաշիստական-դիմադրական շարժմանը։ Առանձին հայ կոմունիստներ ու ռեմսիստներ գործում էին Պլովդիվի տարբեր շրջանների հիմնարկ-ձեռնարկություններում։ Անտուան Դյուլգերյանը, Արթին Լուսինյանը, Խաչիկ Փանոսյանը, Կարո Ֆրենկյանը և ուրիշներ գերմանական զինվորական պահեստներից և արհեստանոցներից դուրս էին բերում զանազան ապրանքներ, կոշկեղեն ու պարեն և հանձնում պարտիզաններին[153]։ Աղավնի Բաշմաքյանը և Վարդգես Ռուբենյանը զբաղվում էին անլեգալ գրականության, կոչերի ու թռուցիկների տպագրման և տարածման գործով։ Թղթի, գրենական պիտույքների, տպագրական սարքավորումների մատակարարման և կազմակերպման գործերը հանձնարարված էին Արա Մարուքյանին, Սարգիս Այանյանին և Սմբատ Պալյանին, որոնք կեղծ փաստաթղթերով Երվանդ Ադամյանի գրենական պիտույքների վաճառատնից ձեռք բերեցին մեծ քանակությամբ թուղթ, գրենական

պիտույքներ և ապակետիպ տպագրական մեքենա ու Գերման Գերմանովի միջոցով հանձնեցին կուսակցության և ՌՄՄ-ի շրջանային կոմիտեներին։ Տպագրական գործը շրջանում կազմակերպված էր Կարապետ Մարուքյանի տանը։ Հավաքված զենքերի նորոգման և փորձարկման գործով զբաղվում էին Նուպար Աղտայանը և Օնիկ Մարուքյանը։

1944 թ. Սոֆիայի ռմբակոծումների պատճառով ԲԲԿ Կենտկոմի անդամների մեծ մասը տեղափոխվել էր Պլովդիվ և ապաստանել մի քանի թաքստոց-բնակարաններում։ Յոլա Դրագոյչևան, Անտոն Յուգովը, Լիլյանա Դիմիտրովան, Ալեքսանդր Դիմիտրովը, Ադալբերտ Անտոնովը և ուրիշներ որոշ ժամանակ բնակվել են Արա Մարուքյանի, Աղավնի Բաշմաքյանի թաքստոց բնակարաններում[154]։ Այդ բնակարաններում հանդիպումներ են կազմակերպել Պլովդիվի ընդհատակում գործող ՌՄՄ-ի օկրուգային և շրջանային կոմիտեների անդամներ Սլավի Զակրովը, Գերման Գերմանովը, Գեորգի Յովկովը, Վասիլ Բալևսկին և ուրիշներ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին բուլղարական ֆաշիստական կառավարությունը ճանապարհաշինական և ռազմական օբյեկտների կառուցման համար պարտադիր կարգով պարբերաբար օգտագործում էր նահանջյան քաղաքացիություն ունեցող հայ երիտասարդների աշխատանքը։ Ռեմսիստներ Տիգրան Փեշտիմալճյանը, Գևորգ Բարսեղյանը, Հարություն Ներսիսյանը, արձագանքելով կուսակցության՝ «Հավաքել պարտիզանական ջոկատների շարքերը» կոչին, փախուստ տալով պարտադիր աշխատանքներից, մտան Սրեդնա Գորա լեռան լանջերում գործող «Հրիստո Բոտև» պարտիզանական ջոկատի շարքերը[155]։

1944 թ. հունիսին Պլովդիվի ոստիկանությանը հաջողվում է հայտնաբերել «Կապանա» սեկտորի ընդհատակյա կազմակերպությունը. ձերբակալվում են ՌՄՄ-ի շրջանային կոմիտեի մի քանի և հայկական խմբակների 25 անդամներ, այդ թվում Արա Մարուքյանը, Աղավնի Բաշմաքյանը, Էդի Կարապետյանը, Կարո Ճինգոզյանը, Հրանտ Նազարեթյանը, Անդրեաս Դյուլգերյանը, Սարգիս Այանյանը, Տիրան Բարիքյանը և ուրիշներ, որոնք Պլովդիվի ռազմադաշտային դատարանի կողմից դատապարտվեցին տարբեր ժամկետներով ազատազրկման։ Հայ ռեմսիստների հետ միասին դատապարտվեցին նաև շրջանային կոմիտեի անդամները[156]։

ՆՕՎԱ-ի VI գոտու մեջ էին Յամբոլ, Սլիվեն, Այտոս, Բուրգաս հայաշատ քաղաքները։ Այս գոտու պարտիզանական ջոկատները և դիմադրական շարժման մասնակիցները հիմնականում գործում էին Բալկանյան լեռնաշղթայի արևելյան մասում՝ Սլիվենի և Կոտելի լեռնանջերում ու Սև ծովի ափերին։

1942 թ. Բուրգասի ԲԲԿ օկրուգային կոմիտեն VI գոտու շտաբից հրահանգ է ստանում պարտիզանական ջոկատներ կազմակերպել Պոմորիեի, Այտոսի և Սոբանջա լեռան գոտիներում։ Ընդհատակյա ծանր պայմաններում այդ աշխատանքներին են լծվում Լյուբեն Նիկոլովը և Օհան Բոստանճյանը։ Վերջինիս հանձնարարվում է աշխատանքի անցնել Սարաֆովոյի օդանավակայանում տեղավորված գերմանական շտաբում։ Օ. Բոստանջյանը, տիրապետելով գերմաներենին, կարողանում է շահել Սև ծովի ափերին ռազմաշինարարական աշխատանքները ղեկավարող գերմանական ինժեներ Կունցեի վստահությունը և պարբերաբար տեղեկություններ հաղորդել հիտլերականների խիստ գաղտնի փաստաթղթերի և Բուլղարիայի մերձափնյա շրջաններում տեղաբաշխված գերմանական ռազմական ուժերի տեղաշարժերի մասին[157]։ Նա պատճենահանել էր ռազմական կարևոր օբյեկտների գծագրերը, որոշել էր Սև ծովի ափում ՆՕՎԱ-ի կամ կարմիր բանակի մարտիկներին դեսանտ իջեցնելու հարմար վայրերը[158]։ Այդ բոլոր նյութերը ԲԲԿ Բուրգասի օկրուգային կոմիտեի քարտուղար Ալեքսանդր Օբրետենովի միջոցով ԲԲԿ կենտկոմը հանձնում էր կարմիր բանակի գլխավոր շտաբին։ Օ. Բոստանջյանը ընդհատակյա դժվարին պայմաններում ապաստան էր տալիս ոստիկանության կողմից հետապնդվող կոմունիստներին։

Բուրգասում Ֆրանց Կալայճյանը և Հովհաննես Բակլավաջյանը ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին դիմադրական շարժման կազմակերպման և ընդլայնման գործում։ Վերջինս «Հայրենական ճակատի» կոմիտեների ստեղծման ուղղությամբ բեղմնավոր աշխատանք ծավալեց Բուրգասի գիմնազիաների աշակերտության և ուսուցիչների շրջանում։ Նույնպիսի աշխատանքի էր լծված Բուրգասից ոչ հեռու Սոզոպոլ քաղաքում ՌՄՄ-ի քաղաքային կոմիտեի քարտուղար Խաչիկ Փիլաֆճյանը։ Նա բազմիցս աքսորվել է Բուլղարիայի ֆաշիստական իշխանությունների կողմից։

Բուրգասում 1942 թ. ՌՄՄ-ի շարքերում էր գործում Մերի Գրիգորյանը։ 1944 թ. Բուրգասի օկրուգային կոմիտեի քարտուղար Դիմիտր Պոպովի առաջարկով նա իր բնակարանում ապաստան էր տալիս ընդհատակում գործող ընկերների։

ՆՕՎԱ-ի VI գոտու շտաբը գտնվում էր Յամբոլ քաղաքում։ Շտաբի անդամ Պանայոտ Կարակաչանովի (ծածկանունը՝ Կարապետ) հանձնարարությամբ Հովհաննես և Հարություն Ալեքսանյանները իրենց տունը տրամադրում են ՆՕՎԱ-ի շտաբին, այն վերածելով թաքստոց-ապաստարանի։ Այստեղ կազմակերպվում է կուսակցական տպագրական գործը, պահ-

վում է զենք ու պարեն։ Նույն բնակարանում կազմակերպվում են դիմադրական շարժման ղեկավարների հանդիպումներ։ Հովհաննես Ալեքսանյանը իրականացնում էր Յամբոլի և Սլիվեն քաղաքների կապը, պարտիզանների համար փոխադրում կուսակցական մամուլ, պարեն և ռազմամթերք[159]։

Դիմադրական շարժմանն օժանդակում էին Յամբոլի բազմաթիվ հայ բանվորներ ու արհեստավորներ։ Յամբոլի բուլղարական գիմնազիայի աշակերտական շրջաններում ակտիվ աշխատանք էր տանում ՌՄՄ-ի խմբակի կազմակերպիչ Նևրիկ Բանիկյանը[160]։

1942 թ. վերջին Յամբոլում ոստիկանության կողմից ձերբակալվեցին ՌՄՄ-ի մի խումբ անդամներ, այդ թվում և Մելքոն Ինջիյանը։ Ռազմադաշտային դատարանը նրան դատապարտեց մեկ տարվա ազատազրկման։

Սլիվեն քաղաքում ՌՄՄ-ի շրջանային կոմիտեի անդամ Գևորգ Փափազյանը զենք ու պարեն էր տեղափոխում պարտիզանների համար։ Նա ձերբակալվում է և ռազմադաշտային դատարանի կողմից դատապարտվում 15 տարվա ազատազրկման։ Սլիվենում հայ կոմունիստներն ու ռեմսիստները գործում էին առանձին հիմնարկ-ձեռնարկություններում։ Ազնիվ Խուլյանը, Կարապետ Կյուրեղյանը, ռեմսիստներ Աննիկ Փափազյանը, Գրիգոր և Սրբուհի Դավիթյանների հետ սնունդ և դրամական միջոցներ էին մատակարարում Սլիվենի բանտի քաղբանտարկյալներին։ Դիմադրական շարժման համար պարեն, զենք և նյութական օգնություն էին կազմակերպում Պետրոս Պատվականյանը, Ահարոն Խուլյանը, Հովակիմ Պաթմաղյանը, Սիմոն Ջանչյանը և ուրիշներ։ Ազնիվ Խուլյանը իր բնակարանը տրամադրել էր ընդհատակում գործող և հետապնդվող ընկերներին։ Նրա բնակարանում հաճախ ապաստան էին գտնում Սովետական Միությունից եկող ընկերներ, որոնք գլխավորում էին դիմադրական շարժման աշխատանքները։ Ազնիվ Խուլյանը բազմիցս ձերբակալվել և խոշտանգումների է ենթարկվել բուլղարական ոստիկանության կողմից։

Այտոս քաղաքում էր գործում կոմունիստ Վարդգես Սիրանոսյանը։ 1942 թվականից Այտոսի և Սլիվենի շրջաններում նա կազմակերպում է «Հայրենական ճակատի» կոմիտեներ։ Վ. Սիրանոսյանը մեծ հարգանք էր վայելում շրջանի բանվորների և գյուղացիների շրջանում։ Ընդհատակյա դժվարին պայմաններում նա բազմիցս ապահովել է ոստիկանության կողմից հետապնդվող կոմունիստների գաղտնի անցումը Սովետական Միություն։ Նրա հոր տունը «Բյուլբյուլ դերե» վայրում եղել է թաքստոց՝ հետապնդվող կոմունիստների համար։ Այնտեղ անցկացվել են դիմադրական

շարժումը ղեկավարող ընկերների ժողովներ և հանդիպումներ։ Վ. Սիրանոսյանը Աթանաս Մանչևի, Միհայիլ Դոնչևի հետ շրջելով գյուղերը, հիմնել է պարտիզանական շարժման աջակցող կազմակերպություններ։ Ոստիկանությունը բացահայտում է նրա գործունեությունը, ձերբակալում և խոշտանգումների ենթարկում[161]։

ՆՕՎԱ-ի X գոտում էր Վառնա հայաշատ քաղաքը։ 1941—1944 թթ. Վառնայում գործում էին բազմաթիվ հայ կոմունիստ-վետերաններ, որոնք գլխավորում էին ԲԲԿ շրջանային և օկրուգային կոմիտեների աշխատանքները։ Կարապետ Խաչատրյանը, Հարություն Պողոսյանը, Թադևոս Բամբուկչյանը, Օնիկ Մարտիկյանը, Թորգոմ Բոյաջյանը, Ժիրայր Սիմոնյանը, Տիրան Քանոնյանը, Լևոն Սողիկյանը, Կրոն Գալֆֆյանը և ուրիշներ ամենայն պատասխանատվությամբ կատարում էին կուսակցության հանձնարարությունները։

Վառնայի ԲԲԿ օկրուգային կոմիտեն մի խումբ հայ կոմունիստների վրա խնդիր էր դրել Սև ծովի ափերին գտնվող հիտլերյան նավատորմի, օդանավակայանների և ռազմական ուժերի տեղաբաշխման մասին ստույգ տեղեկություններ հավաքել։ Այդ ուղղությամբ մեծ աշխատանք կատարեցին Տիրան Քանոնյանը, Կարապետ Խաչատրյանը, Հարություն Պողոսյանը[162]։ 1943 թ. վերջին Տ. Քանոնյանը ձերբակալվում է։ Հարություն Պողոսյանն իր ընկերներ Կարապետ Խաչատրյանի, Թորգոմ Բոյաջյանի, Ժիրայր Սիմոնյանի, Լևոն Սողիկյանի հետ շարունակում է պայքարել հիտլերյան օկուպանտների դեմ, ամուր կապ հաստատելով խմբակի ղեկավար Յորդան Դինևի հետ։ Իր թաքստոց-բնակարանը տրամադրելով կուսակցությանը, նա միաժամանակ սեփական արհեստանոցում կազմակերպում է տպարան, որտեղ տպագրվում են դիմադրական շարժման կոչերն ու թռուցիկները։

1944 թ. սեպտեմբերի 9-ի նախօրեին մի խումբ բուլղար ընկերների՝ Ստանկո Ստոյանովի, Յանկո Կոստովի, Հարալամպի Դոնչևի, Յանկո Կարագյավուրովի հետ ձերբակալվում են Հարություն Պողոսյանը և Կարապետ Խաչատրյանը։ Բուլղարական բանակում ծառայող Հակոբ Պարոնյանը պարտիզանների համար զորանոցից վերցրած ռազմամթերքն ու պենքերը տեղափոխելու ժամանակ ձերբակալվում է։ 1944 թ. հունիսի 1-ին անմարդկային խոշտանգումներից հետո Հ. Պողոսյանը, Կ. Խաչատրյանը և Հ. Պարոնյանը ոստիկանության կողմից ջրահեղձ են արվում Սև ծովում[163]։ Մի խումբ բուլղար ընկերների հետ ձերբակալվում է նաև ՌՄՄ-ի շարքերում գործող Գասպար Էքսերճյանը, որը ռազմադաշտային դատարանի կողմից դատապարտվում է տասը տարվա բանտարկության։ Նույն ժամ-

կետով է դատապարտվում նաև Սարգիս Գաբրիելյանը՝ կոմունիստական գործունեության համար։

Վառնայից ոչ հեռու Դոլեն Չիֆլիկ կոչվող գյուղում 1938 թ. ՌՄՄ-ի շարքերն է ընդգրկվում Հակոբ Պողչալյանը։ Նա 1940 թ. մտնում է ԲԲԿ շարքերը։ 1941—1943 թթ. ծառայում է բուլղարական բանակում և Մակեդոնիայի Պրիլեպ քաղաքի զորանոցում, զինվորների շրջանում պրոպագանդում է կոմունիստական գաղափարներ։ Զորանոցի հրամանատարությունը բացահայտում է Հ. Պողչալյանի գործունեությունը, ձերբակալում, խոշտանգումների ենթարկում և ծանր վիրավոր վիճակում ուղարկում Բիտոլյայի հիվանդանոցը, որտեղ և 1944 թ. օգոստոսի 9-ին մահանում է[164]։

Ռուսե քաղաքի հայ կոմունիստներ և ռեմսիստներ Տիրան Փափազյանը, Հակոբ Մարգարյանը, Հայկ Բյուկյուճյանը, Տիրուհի Փափազյանը, Պետրոս Շամլյանը, Վարդգես Դյուլգերյանը, Հակոբ Սեմերճյանը և ուրիշներ, բուլղար ընկերների հետ Ռուսեի օկրուգային կոմիտեի ղեկավարությամբ կազմակերպում են մարտական խմբեր ու պարտիզանական ջոկատներ։ Նիկոլա Պոպովի, Աննա Վենտուրայի, Ձդրավկո Ձամպովի, Տիրան Փափազյանի, Հակոբ Մարգարյանի գլխավորությամբ (բոլորը Ռուսեի ԲԲԿ և ՌՄՄ-ի օկրուգային և շրջանային կոմիտեների քարտուղարներ) որոշակի աշխատանք են տանում պարտիզանական շարժման ծավալման ուղղությամբ։ Նրանց օգնում և ապաստան էին տալիս դիմադրական շարժմանը նվիրված անկուսակցական բանվոր-բանվորուհիներ Միսաք Վարդանյանը, Մարիա Թորոսյանը, Տիգրանուհի Պարոնյանը, Մարա Վարդանյանը, Սարգիս Պանտրմալյանը, Ռուբեն Վարդանյանը[165]։

Տիրան Փափազյանը, որ Չերնի Լոմ գետի շրջակայքում գործող «Չերվենոկա» պարտիզանական ջոկատի հրամանատարն էր, մարտի ընթացքում ձերբակալվում է բուլղարական ժանդարմերիայի կողմից։ Մարտերի ժամանակ հերոսի մահով ընկնում է ջոկատի քաղաքական կոմիսար Տինկա Ջեյինը։

Հակոբ Մարգարյանի գլխավորած «Հոդանսկա» պարտիզանական ջոկատի մարտերից մեկում սպանվում են բազմաթիվ պարտիզաններ, իսկ ջոկատի հրամանատարը ձերբակալվում է։ «Չերվենոկա» և «Հոդանսկա» ջոկատների ձերբակալված պարտիզանները ռազմադաշտային դատարանի կողմից դատապարտվում են տարբեր ժամկետներով բանտարկության, իսկ Տիրան Փափազյանը և Հակոբ Մարգարյանը՝ ցմահ բանտարկության[166]։

Ռուսեի պրոլետարիատը, նրա հետ առաջին շարքերում նաև հայ բանվոր-բանվորուհիները, 1944 թ. սեպտեմբերի 9-ին առաջիններն էին,

որ դիմավորեցին և ողջունեցին Բուլղարիա մուտք գործած կարմիր բանակի առաջին զորամասերին։

Գերմանական օկուպանտների և սեփական ֆաշիզմի դեմ ուղղված բուլղար ժողովրդի դիմադրական շարժմանը մասնակցեցին նաև առանձին հայ կոմունիստներ ու ռեմսիստներ։ Նրանք հակաֆաշիստական պայքարի ընթացքում աչքի ընկան իրենց նվիրվածությամբ և խիզախությամբ։ Այդպիսիներից էին Գրիգոր, Խաչիկ և Օնիկ Օհանյանները՝ Սվիլենգրադում, Հակոբ Մերկերյանը՝ Ստարա Զագորայում, Օնիկ Ղուկասյանը՝ Խասկերիհում, Թադևոս Օվանեզովը՝ Պրովադիայում, Գրիգոր Սինանյանը, Թորոս Օհանյանը Պազարջիկում և ուրիշներ[167]։

Բուլղար ժողովրդի դիմադրական պայքարի պարտիզանական ջոկատները կարմիր բանակի անմիջական օգնությամբ տապալեցին բուլղարական միապետական-ֆաշիստական դիկտատուրան և երկրում հաստատեցին «Հայրենական ճակատի» ժողովրդական իշխանությունը։ Բուլղարահայ կոմունիստները, ռեմսիստներն ու անկուսակցական հայրենասերները ԲԿԿ ղեկավարությամբ իրենց ավանդը ներդրեցին եղբայրական բուլղար ժողովրդի ազատագրական պայքարում։

«Անհրաժեշտ է առանձնապես ընդգծել,—ասել է Գեորգի Դիմիտրովը ԲԿԿ V համագումարում,—որ մեր հայրենիքի ազատագրման, սեպտեմբերի 9-ի հաղթանակի համար ամենամեծ արժանիքը պատկանում է եղբայրական, հերոսական սովետական բանակին։ Ուստի մեր կուսակցությունը, բանվոր դասակարգը և մեր ամբողջ աշխատավոր ժողովուրդը նրա հանդեպ տածում է երախտագիտության խոր զգացումներ»[168]։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԿԱՊԵՐԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ

1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ» (ՀՕՄ), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ» (ՀՕԿ), ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Արդեն նշել ենք, որ բուլղարահայ գաղութը դարերի ընթացքում համալրվել է Հայաստանից արտագաղթող հայերի հոծ զանգվածներով, որոնք օտարության մեջ չեն խզել իրենց կապերը Մայր հայրենիքի հետ, հաղորդակից են եղել Հայաստանում տեղի ունեցող սոցիալական, հասարակական-քաղաքական տեղաշարժերին։ Որպես հայ ժողովրդի անբաժանելի մաս, գաղութի հայերը նյութապես օժանդակել են թուրքական լծի տակ հեծող հայությանը, ակտիվորեն մասնակցել հայրենիքում ծավալվող ազգային-ազատագրական պայքարին։

Բուլղարիայում հրատարակվող «Իրավունք» թերթի 1906 թ. հոկտեմբերի 75 համարի էջերում կարդում ենք. «Վասպուրականի թշվառ սովյալներուն օգնելու նպատակով ձեռնարկված են թատերական հաջորդական ներկայացումներ։ Հանձնախումբը խորին շնորհակալություն կհայտնե Վառնայի «Մասիս» թատերախումբին, «Արաքս» նվագախումբին և «Սոխակ» նվագա-թատերախումբին»։ «Իրավունքի» մեկ այլ համարում կարդում ենք. «Օգնենք կովկասահայուն առանց տրտնջալու, փութանք նպաստամատույց հանձնախումբ կազմելով նպաստ հասցնել մեր եղբայրներուն ու այդպիսով ցույց տանք մեր եղբայրական սիրո և համակրանքի պերճախոս վերաբերմունքը»[1]։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո բուլղարահայերի կապերը Հայրենիքի հետ է՛լ ավելի սերտ դարձան, նրանք իրենց կարողություններից սահմաններում օգնում էին վերածնվող Մայր հայրենիքին։

Բուլղարիայում, ինչպես և սփյուռքի այլ գաղութներում հիմնվեցին Հայրենիքի օգնության մարմիններ։ 1919—1920 թթ. Երևանում ստեղծվեց ՀՕՄ-ի (Հայրենիքի օգնության մարմին) վարչություն։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո նախկին ՀՕՄ-ին փոխարինելու եկավ «Հայաստանի օգնության կոմիտեն» (ՀՕԿ), որն իր մասնաճյուղերը ստեղծեց սփյուռքի բոլոր գաղութներում։ ՀՕԿ-ի արտասահմանյան կենտրոնը գտնվում էր Փարիզում։

1922 թ. բուլղարահայ գաղութում նույնպես ստեղծվեցին ՀՕՄ-ի մասնաճյուղեր։ Մինչ այդ բուլղարահայ աշխատավորները ԲԿԿ ցուցումով հսկայական աշխատանք ծավալեցին Սովետական Հայաստանի բնակչությանը նյութական օգնություն կազմակերպելու ուղղությամբ։ Պլովդիվում հրատարակվող «Կարմիր լուրեր» թերթը գրում էր.

«Պուլկարիո հայաշատ քաղաքներու մեջ սկսած է համազգային հանգանակությունն ի նպաստ Խորհրդային Հայաստանի սովյալներուն ու որբերուն։ Պուլկարահայ կոմունիստներուն սրբազան պարտականությունն է մասնակցել այս հանգանակության ամենալայն չափերով, որովհետև այս կերպով պիտի սատարենք հեղափոխության ու Խորհրդային Հայաստանի կառավարության դիրքերուն ամրապնդման»[2]։

1922 թ. մարտի 26-ին Պլովդիվում հրավիրվեց հնչակյանների, ռամկավարների և հայ կոմունիստների համատեղ ժողով՝ ՀՕՄ-ի մասնաճյուղ հիմնելու համար։ Ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Ստեփան Հինդլյանը։ Ժողովն ընդունեց որոշում, որտեղ ասված էր.

1. ՀՕՄ-ի բուլղարահայ հատվածը օգնելու է միայն Սովետական Հայաստանի սահմաններում ապրող հայերին։

2. ՀՕՄ-ի Պլովդիվի մասնաճյուղը ղեկավարվելու և ենթարկվելու է ոչ միայն ընտրված վարչության, այլև քաղաքական խորհրդին։

3. Իր դրամական միջոցները հավաքելու է ոչ միայն ամերիկյան կենտրոնի հրահանգներով, այլ նաև Կոստանդնուպոլսում գտնվող Սովետական Հայաստանի կառավարության տնտեսական ներկայացուցչի ցուցումներով[3]։

4. Պլովդիվի ՀՕՄ-ի կազմակերպությունը գործելու է ինքնուրույն, նկատի չառնելով մյուս քաղաքներում գործող կազմակերպությունների որոշումները[4]։

Բուլղարահայ գաղութի առանձին համայնքներում ՀՕՄ-ի առանձին կազմակերպությունները շարունակեցին իրենց գործունեությունը մինչև 1928 թ., երբ գաղութում հիմնվեց «Ազգային միությունը», որպես բոլոր առաջադեմ կազմակերպությունների միասնական միություն։

ՀՕՄ-ի մի քանի կազմակերպություններ որոշ գործունեություն ծավալեցին 1926—1927 թթ. Հայաստանում՝ Շիրակի երկրաշարժի ժամանակ նյութական միջոցներ հավաքելու ուղղությամբ։

Մինչ այդ Վառնայում, Ռուսեում, Սոֆիայում և այլ քաղաքներում 1924 թ. վերջից բուլղարահայերը նախաձեռնեցին «Հայաստանի օգնության կոմիտեների» (ՀՕԿ) մասնաճյուղեր հիմնելու և Երևանի ՀՕԿ-ի գլխավոր վարչության հետ կապեր հաստատելու գործին։ Դաշնակցության ներկայացուցիչները, սակայն, խանգարում էին դրան։ Այդ առթիվ ռամկավարների «Լուսարձակ» թերթը գրում էր.

«Պուլկարիո մեջ ասկե ամիսներ առաջ ծնած շարժում մը ՀՕԿ-ի։ Դեռ սաղմին մեջ խեղդելու համար գործը, Սոֆիայի դաշնակցականները մեջը սպրդեցան, շնորհիվ ինքզինքին ՀՕԿ-ի ներկայացուցչի հովը տվող մեկու մը շնորհիվ մեկ քանի հնչակյաններու և «համերաշխության» համար հոգի տվող չեզոքներու մեղսակցության։ Ու անկե ի վեր սկսավ խաչաձեվումը և գործը դանդաղացավ։ Այս չէ՞ր արդյոք Հայաստանի թշնամիներու ուզածը»[5]։

Եվ իրոք, բուլղարահայ գաղութում այդ տարիներին հնարավոր չեղավ ստեղծել ՀՕԿ-ի կազմակերպություն։ Անշուշտ, պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ այդ ժամանակաշրջանում Բուլղարիայում հաստատվել էր ցանկովյան դաժան դիկտատուրան, որը դաշնակցությանը բացահայտ գործելու հնարավորություն էր տալիս և նրա թելադրանքով խափանվում էր Սովետական Հայաստանին օգնելու ամեն մի ձեռնարկում։ Վառնայի հնչակյանների և ռամկավարների ներկայացուցիչների և ընդհատակում գործող հայ կոմունիստների կողմից Բուլղարիայում ՀՕԿ-ի մասնաճյուղ ստեղծելու ու Անդրկովկասի հանրապետությունների ներկայացուցիչների հետ կապեր հաստատելու բոլոր փորձերը ցանկովյան ռեակցիայի պայմաններում հաջողություն չունեցան։

1926 թ. Շիրակի հարթավայրում տեղի ունեցավ սարսափելի երկրաշարժ։ Աղետի հետևանքով անօթևան մնացին հազարավոր ընտանիքներ։ Սոֆիայի քաղաքական խորհուրդը 1926 թ. նոյեմբերի 24-ի նամակով դիմեց բուլղարական կառավարությանը, խնդրելով թույլ տալ ստեղծելու հատուկ հանձնաժողով՝ Շիրակի երկրաշարժից տուժածներին նյութական օգնություն կազմակերպելու համար[6]։

1926 թ. նոյեմբերի 29-ին № 4486 հրամանով բուլղարական կառավարությունը բուլղարահայերին արտոնեց մեկ տարի ժամկետով ստեղծել «Կենտրոնական հանձնախումբ», որի կոմիտեների կողմից հավաքված գումարները բուլղարական «Կարմիր խաչի» միջոցով փոխանցվեին Սովետական Հայաստանի «Կարմիր խաչին»[7]։

Այդպիսի կոմիտեներ ստեղծվեցին Սոֆիայում, Պլովդիվում, Վառնայում, Ռուսեում, Բուրգասում, Յամբոլում, Ստարա Զագորայում, Վի-

դինում և այլ քաղաքներում։ Բուլղարահայերի համար ստեղծվեց Հայրենիքի հետ անմիջական կապ հաստատելու հնարավորություն։ Դրան օժանդակում էին նաև առաջադեմ բուլղարները։ Ընչակյանների «Զանգ» շաբաթաթերթի 1926 թ. հունիսի 29-ի համարում տպագրվեց դոկտոր Հրիստո Բոյաջիևի հոդվածը՝ ուղղված բուլղարահայերին։ Այնտեղ, ի միջի այլոց, ասված էր. «Պուլկարիա գտնվող հայ գաղթականության վրա խիստ կարևոր խնդիր կը ծանրանա։ Ան բոպե մը իսկ պետք չէ մոռնա, որ արյան կապերով շաղկապված է Հայաստանին և, թեև հեռու իր հայրենիքեն, պետք է աշխատի անոր բարգավաճման և ամրապնդման։ Նորակազմ հայ պետությանը այս ուղղությամբ կատարվելիք ամեն տեսակ ազգօգուտ աշխատանքի լայն ասպարեզ կը ներկայանա։ Պուլկարիո մեջ ապրող հայերը կարելիություն ունին նյութապես ալ օգնելու իրենց հայրենիքին»[8]։

Շիրակի երկրաշարժից տուժածներին օգնության փութացին բոլոր բուլղարահայերը, անկախ քաղաքական ու սոցիալական պատկանելությունից։ Մամուլը, աշխատավորությունը, հայրենակցական և մշակութային միությունները, աշակերտները և ուսուցիչները, սեփականատերերն ու մտավորականությունը, բոլորը ոգևորվել էին նյութական միջոցներ հավաքելու գործով։ Բազմաթիվ բուլղարներ նույնպես ներդրեցին իրենց լուման։ Մեկ տարվա ընթացքում հավաքվեց 724201 լևա գումար, որն ուղարկվեց Սովետական Հայաստան։

Այդ շարժումը կարճ ժամանակամիջոցում աշխուժացավ, ամրապնդելով բուլղարահայերի հայրենատենչ զգացումները Սովետական Հայաստանի նկատմամբ։ Այն հետագա տարիներին խթան հանդիսացավ բուլղարահայ գաղութում ևս ՀՕԿ-ի մասնաճյուղ հիմնելու համար։

1931 թ. հայ կոմունիստների նախաձեռնությամբ Վառնայում ստեղծվեց ՀՕԿ-ի մասնաճյուղ[9]։ Նույն թվականի վերջին Ռուսեում նույնպես հիմնվեց ՀՕԿ-ի մասնաճյուղ։

Սոֆիայում ՀՕԿ-ի կազմակերպություն հիմնելու ուղղությամբ մեծ աշխատանք տարան Թագվոր Քյուշուքյանը, Կարապետ Գուրպանճյանը, Սարգիս Հալաճյանը, Սարգիս Աստարճյանը, Գամեր Շիրինը, Քայոս Քեչյանը, Հրանտ Եփրեմյանը, Ստեփան Կարակյոզյանը, Հրանտ Նալչաճյանը, Մկրտիչ Պյունատյանը և ուրիշներ[10]։ Մասնաճյուղը դեռևս բուլղարական կառավարության կողմից չվավերացված 1932 թ. ներգաղթի ֆոնդի համար հավաքեց 16000 լևա և ինքնուրույն գործունեություն ծավալեց մայրաքաղաքի հայկական համայնքում։

1932 թ. ՀՕԿ-ի մասնաճյուղ հիմնվեց նաև Պլովդիվում, որը կարճ ժամանակամիջոցում իր շարքերում ընդգրկեց 480 անդամներ[11]։ Մի-

ությունը մեծ աշխատանք կատարեց բուլղարահայերի առաջին ներգաղթի կազմակերպման ժամանակ։

Մինչև 1932 թ. վերջը Բուլղարիայի առանձին քաղաքներում հիմնված ՀՕԿ-ի միությունները գործում էին ինքնուրույն, մեկը մյուսից անջատ։ Անհրաժեշտ էր դրանք համախմբել մեկ ընդհանուր կազմակերպության մեջ, ստեղծել կենտրոնական վարչություն և ծրագիր-կանոնադրություն։

1932 թ. վերջին ներգաղթի կազմակերպման օրերին, օգտվելով Հայաստանի լիազորների ներկայությունից, ընդհատակյա պայմաններում, Սոֆիայում գումարվեց ՀՕԿ-ի անդրանիկ պատգամավորական ժողովը։ Հինգ հայաշատ քաղաքներից եկած 12 պատգամավորները մշակեցին միության ծրագիր-կանոնադրությունը և ընտրեցին կենտրոնական վարչություն։ Վերջինիս հանձնարարեցին վավերացնել կազմակերպությունը և հիմնել մասնաճյուղեր բոլոր հայաշատ քաղաքներում։ Մինչև 1934 թ. վերջը բուլղարահայ ՀՕԿ-ի կազմակերպության կենտրոնական վարչության նստատեղին Ռուսե քաղաքն էր։ Նրա առաջին նախագահը դարձավ Արտաշես Ջաքարյանը։ 1935 թ. կենտրոնական վարչությունը տեղափոխվեց Սոֆիա։

Բուլղարահայ կոմունիստների կենտրոնական ղեկավարության համան պայքարի շնորհիվ, ԲԿԿ անմիջական ղեկավարությամբ «Դեմոկրատիչեսկի սգովորի» կառավարության ներքին գործերի մինիստրությունը 1933 թ. ապրիլի 12-ին վավերացրեց ՀՕԿ-ի կազմակերպությունը։

1932 թ. կազմակերպվեց բուլղարահայերի առաջին ներգաղթը Հայրենիք։ Մինչ այդ Այտոս քաղաքում բնակվող Լևոն Արաբյանը, ընդառաջելով բուլղարահայ աշխատավորների ցանկությանը, խնդրել էր Հայաստանի կառավարությանը՝ Հունաստանի և Ֆրանսիայի օրինակով ներգաղթ կազմակերպել նաև Բուլղարիայից։ Հայաստանի կառավարության դրական պատասխանից հետո նա մեկնում է Հունաստան և ներգաղթի լիազորներ Դ. Շահվերդյանին ու Հ. Քարտաշյանին ուղեկցում Բուլղարիա՝ ներգաղթ կազմակերպելու համար։ Բուլղարահայ գաղութում Պարույր Աստատուրի նախաձեռնությամբ ստեղծվում է ներգաղթի կենտրոնական հանձնախումբ։

1932 թ. դեկտեմբերի 12-ին № 15205 հրամանով բուլղարական կառավարության ներքին գործերի և առողջապահության մինիստրությունը հաստատեց ներգաղթի կենտրոնական հանձնախմբի և նրա մասնաճյուղերի գործունեությունը։

1933 թ. հունվարի 14-ին Հայրենիք ներգաղթող բուլղարահայերի

առաջին քարավանը բաղկացած էր 1019 հոգուց (մոտավորապես 250 ընտանիք)[12]։

Ներգաղթի կենտրոնական հանձնախմբի լարված աշխատանքի շնորհիվ բուլղարահայ գաղութը 500000 լևա հատկացրեց ներգաղթի ֆոնդին։ Այդ գումարներով ձեռք բերած շինանյութերը ուղարկվեցին Սովետական Հայաստան։ Այդ օրերին հրապարակվեց ներգաղթի կենտրոնական հանձնախմբի կոչը, որտեղ ասված էր. «Հայրենակիցներ, շատ քիչ օրեր կը բաժնեն մեզ այլևս այն թվականեն, երբ բուլկարահայ առաջին քարավանը պիտի թողու հյուրընկալ և եղբայրական Պուլկարիո հողը և անխախտ հավատքով մ'առնեցուն՝ պիտի ուղղվի դեպի հայրենի աշխարհ...։ Ատեն մը հայուն բաժանումը մահ էր, իսկ հիմա գաղթականության մեղմե բաժանումը ազգահավաքում և ուժ է»[13]։

«Դեմոկրատիչեսկի սգովորի» բուլղարական կառավարությունը ներգաղթող հայերի պետական պարտքերը չեղյալ հայտարարեց և նրանց գույքն ու ունեցվածքը երկաթգծով ձրի փոխադրեց մինչև Բուրգասի նավամատույցը, որտեղ խարիսխ էր գցել «Հելենի» նավը՝ ներգաղթողներին Հայաստան տանելու համար։

Բուլղարահայերին ուղեկցելու էին եկել բուլղարահայ հասարակական-մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև բուլղարական իշխանությունների անդամներ։

Բուլղարահայ ներգաղթի առաջին քարավանը 1933 թ. հունվարի 17-ին հասավ Բաթումիի նավամատույցը[14]։

Հայրենադարձությունը ամրապնդեց կապերը հայրենիքի և բուլղարահայ գաղութի միջև։ Այն շարժման մեջ դրեց առաջադեմ հասարակական կազմակերպությունները։ Բազմաթիվ բանվորներ և մանր առևտրականներ, արհեստավորներ ու մտավորականներ, որոնք մինչ այդ մոլորված լինելով մտել էին դաշնակցության շարքերը, այժմ ներգաղթի ազդեցության ներքո համատարած հրաժարվում էին այդ կուսակցությունից և անցնում նորաստեղծ ՀՕԿ-ի կազմակերպությունները, մեծապես ընդլայնելով նրա գործունեության շրջանակը։

1933 թ. բուլղարահայ գաղութում արդեն գործում էր ՀՕԿ-ի 13 մասնաճյուղ՝ 2223 անդամներով։ Բուլղարական կառավարության ներքին գործերի և առողջապահության մինիստրությունը 1933 թ. մարտի 27-ին № 3681 հրամանով արդեն հաստատել էր ՀՕԿ-ի ծրագիր-կանոնադրությունը[15]։

1933 թ. ապրիլի 12-ից ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը ընդունեց գործունեության լայն ծրագիր։ Նա ստեղծեց բոլոր մասնաճյուղերին կից

կանանց, սպորտի, մշակութային և այլ խմբակներ ու բաժիններ։ Ստեղծվեցին բազմաթիվ երգչախմբեր, թատերախմբեր, նվագախմբեր։ Կենտրոնական վարչությունը ստեղծեց հատուկ ներգաղթի ֆոնդ և սահմանեց անդամավճար բոլոր անդամների համար։

Բուլղարահայերի ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը մշակել էր այնպիսի ծրագիր-կանոնադրություն, որը համապատասխանում էր Բուլղարիայի օրենսդրության կանոններին։ Ծրագրի առաջին կետում ասված էր.

«Բուլղարահայերի Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) մասնաճյուղը մշակութային-շինարարական, անկուսակցական կազմակերպություն է, որի նպատակն է. ա) կազմակերպել բուլղարահայերի ներգաղթը դեպի Սովետական Հայաստան, բ) կազմակերպել նյութական օգնություն Հայաստանի բնակչությանը՝ աղետների և սովի ժամանակ»։

Բուլղարահայերի ՀՕԿ-ի մասնաճյուղի ծրագիր-կանոնադրությունը մի քանի անգամ փոփոխման ենթարկվեց, ելնելով երկրում ստեղծված քաղաքական իրավիճակից։

«ՀՕԿ-ի ճյուղերն են, որ կոչված են դառնալու նախնական այն անկուսակցական կազմակերպությունները, որոնց միջոցով գաղութահայ մասսաները և դրանց թվում աշխատավորությունը անմիջական կապ հաստատի Խորհրդային Հայաստանի հետ։ ՀՕԿ-ի տեղական վարչությունները պետք է վերակազմվեն, ասպարեզ տալով գործին պիտանի գաղութահայ աշխատավոր տարրերին, պարբերական տեղեկագրերի, զեկուցումների, դասախոսությունների, կինոցույցերի և այլ միջոցառումներով։ ՀՕԿ-ի վարչությունները պետք է իրազեկ պահեն մասսաներին Խորհրդային Հայաստանում կատարվող աշխատանքներին, ինչպես նաև իրենց ընթացիկ գործունեությունը։ ՀՕԿ-ի ժողովներն ու համագումարները պետք է դառնան գաղութահայ լայն մասսաների հասարակական կարծիքը դարբնող ու ղեկավարող զորեղ խթաններից մեկը։ Ապա կազմակերպել իրավական կենտրոն, որը անմիջական կախում չունենա Երևանից։

Հայաստանի օգնության այս կազմակերպությունները պիտի կենտրոնացնեն իրենց ուշադրությունը Խորհրդային Հայաստանի վրա, շինարարական աշխատանքներին հրապարակ բերելով իրենց օժանդակությունը»[16]։

Եվ, իրոք, 1933 թ. սփյուռքում ՀՕԿ-ի կազմակերպությունները պրոպագանդում էին Հայաստանի նվաճումները։ Աշխարհով մեկ ցրված հայ զանգվածները ՀՕԿ-ի կազմակերպությունների միջոցով նախաձեռնեցին բազմաթիվ հայրենասիրական միջոցառումներ՝ Հայրենիքում նոր բնա-

գավառներ և ավաններ հիմնադրեցին (Նոր Մալաթիա, Բութանիա, Նոր Արաբկիր, Նոր Սեբաստիա և այլն)։

Բուլղարահայերը առաջադեմ ուժերի, և առաջին հերթին, ԲԿԿ օգնությամբ, կարողացան սերտ կապեր հաստատել Սովետական Հայաստանի հետ և լավագույն ձևով օգտակար լինել հայրենիքի վերաշինությանը։

1933 թ. մայիսի 13-ին Ռուսեում բուլղարահայ ՀՕԿ-ի կենտրոնական վարչության ակումբի բացման արարողությանը մասնակցելու համար հրավիրվել էր ռումինահայ ՀՕԿ-ի կենտրոնական վարչության անդամ Արտաշես Տիրացյանը։ Այնուհետև 1933 թ. հոկտեմբերի 30-ին Բուխարեստից Ռուսե եկավ սփյուռքի ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահ դոկտոր Երվանդ Մինասյանը (Փարիզից)։ Նա բարձր գնահատեց բուլղարահայ ՀՕԿ-ի մասնաճյուղերի կատարած հասարակական-մշակութային գործունեությունը և կոչ արեց ընդլայնել «ներգաղթի ֆոնդի» հավաքման նյութական միջոցները։

Բուլղարահայերը մեծ խանդավառությամբ զգալի գումարներ հատկացրին «ներգաղթի ֆոնդին»։ Նրանք մեծ եռանդով շարունակեցին գումարներ հավաքել, նկատի ունենալով նորանոր քարավանների առաքումը դեպի Սովետական Հայաստան։

Բուլղարահայ ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը որոշեց 1934 թ. ապրիլի 7—9-ը հրավիրել առաջին պատգամավորական ժողով, սակայն խափանվեց վրա հասած քաղաքական դեպքերի պատճառով[17]։ Նույն թվականի մայիսի 19-ին Բուլղարիայում տեղի ունեցավ «Ռազմական լիգայի» հեղաշրջումը, որը արգելեց բոլոր առաջադիմական կազմակերպությունների ու կուսակցությունների, այդ թվում ՀՕԿ-ի գործունեությունը։

Չնայած «Ռազմական լիգայի» և «Զվենո» խմբի ռեակցիոն բնույթին, այդ կառավարությունը 1934 թ. հուլիսի 23-ին դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Սովետական Միության հետ։ ՀՕԿ-ի կենտրոնական վարչության համառ դիմումներից հետո բուլղարական կառավարության ներքին գործերի և առողջապահության մինիստրության նոր հրամանով վերականգնվեց ՀՕԿ-ի մասնաճյուղերի գործունեությունը։ Կազմակերպության կենտրոնատեղին Ռուսեից տեղափոխվեց Սոֆիա։

1934 թ. սեպտեմբերի 17-ին Սոֆիայում և Պլովդիվում հիմնվեցին բուլղարասովետական միության կազմակերպություններ և ակումբ-գրադարաններ։

Բուլղարասովետական միությունները և ՀՕԿ-ի մասնաճյուղերը ստանում էին բազմաթիվ թերթեր ու գրականություն Սովետական Միությունից, այդ թվում Սովետական Հայաստանից։ Բուլղարիայի կինոթատրոն-

ներում ցուցադրվում էին սովետական և հայկական ֆիլմեր, որոնց միջոցով բուլղարահայերը ծանոթանում էին վերածնվող հայրենիքի տնտեսական ու մշակութային նվաճումներին։ Այս բոլորը հայ աշխատավորների մեջ է՛լ ավելի էր ուժեղացնում սերը դեպի Սովետական Հայաստանը, դեպի Սովետական Միությունը։

1937 թ. հունվարի 11-ին Սոֆիայի ոստիկանական տնօրինությունը դեկուցեց ներքին գործերի և առողջապահության մինիստրությանը, որ ՀՕԿ-ը Սովետական Միության օգտին պրոպագանդա է տանում, և խախտում հասարակական կարգը երկրի ներսում։ Ներքին գործերի և առողջապահության մինիստրությունը կարգադրեց լուծարքի ենթարկել ՀՕԿ-ի կազմակերպությունը և նրա մասնաճյուղերը, բռնագրավել նրանց գույքն ու ունեցվածքը։ ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը բողոքեց կառավարության այդ որոշման դեմ։ Բողոքի դիմումներ ներկայացվեցին նաև Սոֆիայի ոստիկանության տնօրինությանը։ Հակոբ Չակըրովի և Մարտիրոս Խաչիկյանի գլխավորությամբ կենտրոնական վարչության անդամները ներկայացան կառավարական գրասենյակներ, որպեսզի վերականգնեն ՀՕԿ-ի գործունեությունը։ Վերականգնելու բոլոր ջանքերը մնացին անհետևանք։

Պլովդիվի ՀՕԿ-ի կազմակերպության վարչության անդամները ՀՕԿ-ի փոփոխված նոր ծրագիր-կանոնադրությամբ նույնպես ներկայացան ներքին գործերի և առողջապահության մինիստրի տեղակալ Կրաստովակոն։ Նրանց դիմումի հիման վրա, 1937 թ. մայիսի 12-ին № 883 հրամանով, ՀՕԿ-ի արգելման վերաբերյալ մինիստրության նախկին հրամանը չեղյալ հայտարարվեց, վերականգնվեց կազմակերպության գործունեությունը և կարգադրվեց վերադարձնել բռնագրավված գույքն ու ունեցվածքը[18]։

Սակայն 1938 թ. մարտի 15-ին բուլղարական կառավարության ներքին գործերի և առողջապահության մինիստրությունը վերջնականապես արգելեց և լուծարքի ենթարկեց բուլղարահայ ՀՕԿ-ի կազմակերպությունը[19]։

Բուլղարահայ ՀՕԿ-ի մասնաճյուղի վերացումից հետո, գաղութի առաջադեմ ուժերը, առաջին հերթին հայ կոմունիստներն ու մյուս հակաֆաշիստական կազմակերպությունները բուլղարական կոմունիստական կուսակցության ցուցումով իրենց գործունեությունը տեղափոխեցին հայ հասարակական, մշակութային, սպորտային, հայրենակցական և այլ կազմակերպություններ։

ՀՕԿ-ի բուլղարահայ մասնաճյուղը կյանքի կոչվելով 1931 թ., տնտեսական ու քաղաքական անբարենպաստ պայմաններում կարողացավ կարճ ժամանակամիջոցում դառնալ համագաղութային առաջադեմ կազմակերպություն, որը եռանդուն գործունեություն ծավալեց աշխատավորական շրջաններում՝ ամուր կապ ստեղծելով Մայր հայրենիքի հետ։

2. ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

Հայ և բուլղար ժողովուրդների բարեկամությունն ու մշակութային կապերը ստեղծվել ու ամրապնդվել են դարերի ընթացքում։ Բուլղարահայ գաղութի միջոցով երկու ժողովուրդների տնտեսական, քաղաքական ու մշակութային համագործակցությունը խորացավ ու զարգացման բարձր աստիճանի հասավ։

Բուլղարահայ գաղութը մշտական կապերի մեջ է եղել հանդրվանած բուլղար ժողովրդի և երկրի պետական մարմինների, Բուլղարիայում բնակվող ազգային փոքրամասնությունների, ինչպես և սփյուռքի հայկական գաղութների հետ։ Այդ կապերը հիմնականում եղել են տնտեսական-քաղաքական, մշակութային-կրթական բնույթի։ Քաղաքական տարբեր կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, էջմիածնի և Կոստանդնուպոլսի հոգևոր գործիչներ, դերասանական խմբեր, երգչախմբեր, արվեստի գործիչներ մշտապես այցելել են Բուլղարիա ու համապատասխան կապեր հաստատել գաղութի և բուլղար ժողովրդի կյանքի տարբեր բնագավառներում գործող անհատների ու կազմակերպությունների հետ։

XIX դարի վերջին բուլղար ժողովրդի ազգային ազատագրումը նպաստեց այդ կապերի ավելի ընդլայնմանը։ Հայ և բուլղար ժողովուրդների ազգային-ազատագրական և սոցիալական պայքարի ընդհանրությունը և համագործակցությունը մարքսիզմ-լենինիզմի գաղափարների ազդեցության ներքո հասավ պրոլետարական ինտերնացիոնալիզմի աստիճանի։

Բնական է, Բուլղարիայում հաստատված հայությունը, առաջին հերթին, ինքը պիտի ջանք թափեր առավել սերտ կապեր ստեղծել բուլղար ժողովրդի հետ, հաղորդակից դարձնելով նրան հայ ժողովրդի դարավոր պատմությանն ու մշակույթին։ Աշխատանքն այդ ուղղությամբ է՛լ ավելի է ընդլայնվում բալկանյան և առաջին համաշխարհային պատերազմներից հետո։

Եռապատերազմյան ժամանակաշրջանում, հեղափոխական շարժման բուռն վերելքի տարիներին բուլղարահայ աշխատավորական զանգվածները բուլղարական կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ դարձան բուլղար ժողովրդի սոցիալ-դասակարգային շարժումների մասնակիցը։ Այդ շրջանում հայ-բուլղարական կապերը Մեծ Հոկտեմբերի ու Հայաստանում սովետական կարգերի հաստատման ազդեցության ներքո նոր որակ ստացան։ Բազմաթիվ բուլղար հասարակական-քաղաքական գործիչներ բարյացակամ և գնահատելի վերաբերմունք ցուցաբերեցին դեպի հայ ժողովուրդը և նրա հոգևոր արժանիքները։

Բուլղարական առաջադիմական մամուլում, առանձին գրքույկներով, բազմաթիվ գրողներ, պատմաբաններ, արվեստի աշխատողներ մեծ ջայրույթով դատապարտեցին սուլթանների ու երիտթուրքերի կողմից կազմակերպված հայկական եղեռնը։ Վասիլ Կոլարովի «1908 թ. թուրքական հեղափոխությունը և հայկական կոտորածները» հոդվածը[20], բուլղար պրոլետարական գրող Դ. Պոլյանովի կողմից Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքի» թարգմանությունը և հրապարակումը «Նովո վրեմե» հանդեսում[21], Պ. Մինկովի «Արարատից» բանաստեղծության տպագրումը, Բաֆֆու «Ջալալեդդինի» թարգմանությունը բուլղարերեն, Վ. Զլատարսկու, Յ. Իվանովի, Գ. Կացարովի և ուրիշների աշխատությունները, որոնց մեջ շոշափվում էին հայ ժողովրդի պատմության առանձին հարցեր, դրսևորեցին հայ-բուլղարական փոխադարձ կապերի կենսունակությունը։ Այդ կապերի արտացոլումն իր կատարելությանը հասավ Պեյու Կրաչոլով Յավորովի անմահ ստեղծագործության «Հայեր» քերթվածում, որը բազմիցս թարգմանվել է հայերեն։ Առաջին թարգմանողը եղել է հայտնի բուլղարահայ իրավաբան-հրապարակախոս, Սովետական Հայաստանի մեծ բարեկամ Ստեփան Հինդլյանը։ Բերում ենք «Հայերից» մի հատված սովետահայ բանաստեղծ Համո Սահյանի թարգմանությամբ[22]։

Տարագիրներ են նրանք, բեկոր են չնչին՝
Ոսոխներից հալածված քաջակորով մի ազգի,
Եվ զավակներն են զրկված հայրենիքի իրենց հին,
Որ աղջակեզն է դարձել անօրինակ սիրանքի։

. . . . . .

Ինչպես նախիրը քաղցած գազանների ոհմակից՝
Նրանք փախել են, ցրվել աշխարհներում հեռավոր,
Եվ սպառնում է նրանց շառաչյունով զայրագին,
Բնաջնջել հիմնովին ոսոխի թուրն ահավոր։

. . . . . .

Ոտաբոբիկ, վշտաբեկ, պատառոտված շորերով,
Հայրենիքից անջատված, նրանք գինի են խմում,
Եվ ձգտելով մոռանալ տանջանքները բյուրավոր
Նրանք՝ այնպես են երգում, որ կարծես լաց են լինում։

Բուլղար աշխատավորները մեծ խանդավառությամբ ընկալեցին խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում։ Սովետական Հայաստանի առաջին տարեդարձը նշվեց Բուլղարիայի բոլոր հայաշատ քաղաքներում։

1922 թ. Թուրքիայից հայերի զանգվածային արտագաղթը, տարագրված հայերի հանգրվանումը Բուլղարիայում, դարաշրջանի հեղափոխական մեծ իրադարձությունները, որոնք Բուլղարիայում վերջացան Սեպտեմբերյան փառապանծ ապստամբության համազարկով, էլ ավելի ընդլայնեցին հայ-բուլղարական կապերը։ Ջնայած դրանք 1924—1926 թթ. ցանկովյան մռայլ, սպիտակ տեռորի պայմաններում թուլացան այնուամենայնիվ հայ-բուլղարական կապերը պահպանեցին իրենց ավանդական կենսունակությունը և շարունակեցին գոյատևել։

1927 թ. Սոֆիայում հիմնվում է «Հայ-բուլղարական մերձեցման ու համագործակցության կոմիտե», որի վարչության կազմում ընտրվեցին հայեր և բուլղարներ։ Կոմիտեի կազմում էին Հմայակ Թոռնոյանը, Արմենակ Հալըճյանը, Տրդատ Պոլսեցյանը, փաստաբան Վլադիմիր Տակովը, պրոֆեսոր Դավրիլ Կացարովը, մակեդոնական հասարակական-քաղաքական գործիչ Լյապովը և ուրիշներ։ Սակայն այս կազմակերպությունը չկարողացավ ընդլայնել իր գործունեությունը աշխատավորական լայն շրջաններում։

1930-ական թվականներին, երբ Բուլղարիայում և բուլղարահայ գաղութում հիմնվեցին մի շարք առաջադեմ հասարակական-մշակութային կազմակերպություններ, հատկապես ՀՕԿ-ի և բուլղարա-սովետական կազմակերպությունները, հայ և բուլղար ժողովուրդների մերձեցումն ու մշակութային համագործակցությունը տեղի էին ունենում աշխատավորական լայն զանգվածների միջև։ ՀՕԿ-ի և Բուլղարասովետական միությունների ակումբ-գրադարանները վերածվեցին հայ-բուլղարական մշակութային համագործակցության վառ օջախների։

Բուլղարասովետական միությունների ակումբ-գրադարաններում բուլղար աշխատավորները առաջին անգամ լինելով, ծանոթանում էին Սովետական Հայաստանի գրականության, կինոյի և մշակույթի մյուս բնագավառների նվաճումներին։

1934 թ. սեպտեմբերի 17-ին Սոֆիայում հիմնվեց «Բուլղարասովետական միություն»։ Կարճ ժամանակամիջոցում այդ միության մասնաճյուղեր ստեղծվեցին Պլովդիվում, Ռուսեում, Վառնայում և այլուր։ Միության մասնաճյուղերում կազմակերպվում էին ռուսաց լեզվի և էսպերանտոյի դասընթացներ, որտեղ սովորում էին հայ և բուլղար երիտասարդները։ Նրանք հնարավորություն ունեցան ծանոթանալու Հ. Հակոբյանի, Ե. Չարենցի, Ա. Վշտունու, Մ. Արազու արձակ և չափածո ստեղծագործությունների՝ հայկական հեքիաթների ու պատմվածքների հետ։

Բուլղարահայերը բուլղարասովետական և ՀՕԿ-ի ակումբ-գրադարաններում հնարավորություն ունեցան ընթերցելու Դ. Պոլյանովի, Հր. Սմիրնենսկու, Գեո Միլևի, Կր. Կուլյակովի և ուրիշների բոցաշունչ ստեղծագործությունների հայերեն թարգմանությունները[23]։

Բուլղար և հայ ընթերցողները հայ գրականության նվաճումներին ծանոթացան բուլղար թարգմանիչներ Ի. Արնաուդովի, Ա.ս. Ռաղցվետնիկովի, Ն. Ջերովի, Կ. Դինոլովի և ուրիշների հայերենից թարգմանած գործերի միջոցով, որոնք առանձնապես ընդգծել և բարձր են գնահատել հայ ժողովրդի գրականության և պատմական մտքի նվաճումները, շեշտելով նրանց հայրենասիրական, համամարդկային բնույթը[24]։

Այդ տարիներին, հակառակ ոստիկանական ուժերին և խստություններին, Բուլղարիայի հայաշատ քաղաքներում ցուցադրվում էր «Սովետական Հայաստան» վավերագրական կինոնկարը։ Հայ և բուլղար հանդիսականները դիտեցին Հայֆիլմի արտադրության առաջին ֆիլմերը («Պեպո», «Նամուս», «Խաս փուշ», «Զանգեզուր» և այլն)։ Կազմակերպվում էին սովետական ֆիլմերի («Տասներեքը», «Զապաև», «Ալեքսանդր Նևսկի», «Յիրկ», «Ուրախ տղաներ», «Հյուսիսային բևեռ», «Սահմանի վրա» և այլն) կոլեկտիվ դիտումներ։

«Բուլղարասովետական» և «ՀՕԿ»-ի կազմակերպությունների գրադարաններում ստացվող թերթերի և գրականության միջոցով բուլղար և հայ ընթերցողները ծանոթանում էին Սովետական Միության և Սովետական Հայաստանի տնտեսական ու մշակութային նվաճումներին, որն ամրապնդում էր սերը և հարգանքը դեպի ռուս ժողովուրդը։ Ամրապնդվում էր հայ-բուլղարական մշակութային համագործակցությունը։

1933 թ. Պլովդիվում շուքով նշվեց բուլղար ժողովրդի մեծ բանաստեղծ Պեյու Կրաչոլով Յավորովի (1878—1914) մահվան քսանհորդ տարեդարձը։ Քաղաքի ժողովրդական թատրոնում, հանդիսավոր նիստի ժամանակ, դերասան Ալ. Օգնյանովը մեծ ոգևորությամբ արտասանեց

Յավորովի «Հայեր» բանաստեղծությունը, որը նվիրված է հայ ժողովրդի ողբերգական ճակատագրին և նրա հերոսական պայքարին։

Պ. Կ. Յավորովի հոբելյանը մեծ տպավորություն թողեց բուլղարահայերի վրա։ Որոշվեց կանգնեցնել բանաստեղծի արձանը։ Կարճ ժամանակում Յավորովի արձանի ֆոնդի օգտին հավաքվեց 60000 լևա։ Բուլղարահայ հայտնի քանդակագործ Գրիգոր Ահարոնյանը հանձն առավ քանդակելու Պ. Կ. Յավորովի կիսանդրին[25]։

1933 թ. նոյեմբերին բանաստեղծի ծննդավայրը Չիրպան քաղաքում տեղի ունեցավ բուլղարական կառավարության կանգնեցրած Պ. Կ. Յավորովի արձանի բացումը։ Երախտապարտ հայ ժողովրդի անունից ջերմ ելույթ ունեցավ Ստեփան Հինդլյանը[26]։

1935 թ. օգոստոսի 18-ին Սոֆիայում տեղի ունեցավ բուլղարահայերի միջոցներով ստեղծված Պ. Կ. Յավորովի արձանի բացման արարողությունը։ Բուլղար և հայ մտավորականներից բաղկացած հանձնախումբը հրատարակեց հատուկ հոբելյանական համար՝ «Յավորովի թերթիկ» պիտակով։ Հայոց ս. Աստվածածին եկեղեցում կատարվեց Յավորովի հիշատակին նվիրված պատարագ, որը հաղորդվեց Սոֆիայի ռադիոյով։ Բուլղարական սպայի տանը կայացած հանդիսավոր նիստից հետո հավաքված 10000 հայեր ու բուլղարներ շքերթով ուղևորվեցին դեպի մայրաքաղաքի կենտրոնական զբոսայգին (այժմ՝ Ազատության այգի), որտեղ Հրիստո Բոտևի և Իվան Վազովի կիսանդրիների կողքին կանգնեցված էր բուլղարահայերի կերտած Պ. Կ. Յավորովի արձանը։ Պատվանդանին փորագրված էր. «Յավորովին՝ երախտապարտ հայերից»։ Արձանի բացման ժամանակ պրոֆեսոր Գավրիլ Կացարովը ելույթ ունեցավ բուլղարական կառավարության անունից, կանգ առավ «Հայեր» քերթվածի վրա, ընդգծեց հայ-բուլղարական դարավոր բարեկամության նշանակությունը։

Երկրորդ համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին, մինչև գերմանաֆաշիստական հորդաների հարձակումը Սովետական Միության վրա, բուլղարական մի շարք թերթեր առանձին համարներ հատկացրին հայ ժողովրդի պատմությանը, աշխարհագրությանը, տնտեսական կյանքին և մշակույթին։

1939 թ. փետրվարի 18-ին «Սլովո» թերթի բոլոր 16 էջերը նվիրված էին հայ ժողովրդի պատմական անցյալին, ճարտարապետությանը, մշակույթին և մասնավորապես բուլղարահայերի կյանքին։ Թերթի առանձին բաժիններում տպագրված էին բուլղար հասարակական ու պետական գործիչների հոդվածները։

Բուլղարական կառավարության հաղորդակցության նախկին մինիստր Վլադիմիր Ավրամովը գրել էր. «Պատմությանը հայտնի են շատ ժողովուրդներ, որոնց ճակատագիրը եղել է ծանր ու դաժան։ Սակայն քչերն են, որ հայերի նման մեծ ողբերգությունից հետո, ցրված լինելով բազմաթիվ երկրներում, շարունակում են պահպանել իրենց հոգևոր միասնությունը։ Մեր հասարակական-տնտեսական կյանքում ու մշակույթի ասպարեզում նրանց ներկայացուցիչները մեծ հռչակ են վայելում»[27]։

Նույն թերթում հայտնի պատմաբան Գ. Կացարովը գրել է. «Հայերի և բուլղարների փոխադարձ, անկեղծ ու խորը համակրանքը արդյունք է պատմական համանման ճակատագրի, որի անցյալը լի է բազում տառապանքներով ու զրկերով։ Մեր պատմական կապերը ստեղծվել են վաղնջական ժամանակներում, շարունակվել են միջին դարերում և հասել մեր օրերը։ Առանց դժվարության կարելի է նկատել, որ երկու ժողովուրդների համագործակցությունը մղելու է նրանց դեպի երջանիկ եղբայրության օրերը»[28]։

Բուլղար ժողովրդի աշխատավորական խավերի ներկայացուցիչները մեծ հիացմունքով են արտահայտել իրենց համակրանքն ու հարգանքը դեպի հայ ժողովուրդը, նեցուկ կանգնել նրան, աջակցել նրա ազգային-ազատագրական և սոցիալական պայքարին։

1941 թ. «Բուլղարական գրականության կոմիտեն» նամակով դիմեց բուլղարահայ թեմական խորհրդին, խնդրելով հայերին վերաբերվող նյութեր տրամադրել իր օրգան «Պոհոդ» թերթում տպագրելու համար։ Այդ առթիվ Պլովդիվի թեմական խորհուրդը լույս ընծայեց մի «Հաղորդագրություն», կոչ անելով բուլղարահայ մտավորականությանը հոդվածներով գործուն մասնակցություն բերել այդ համարի հրատարակման աշխատանքներին։ «Հաղորդագրությունում» ասված էր. «Պուլկար գրականության կոմիտեի» ինքնաբուխ այս գեղեցիկ նախաձեռնությունը, որ ամեն հայու սիրտեն կխոսի, ավելի քան գնահատելի է։ Պատվարժան թեմական խորհուրդը իր № 2354 և դեկտեմբերի 6-ի թվակիր պաշտոնագրով չերմապես կը հանձնարարե ընդառաջել վերոհիշյալ «Պոհոդ» թերթի շուրջ հավաքված հայասեր աղնիվ պուլկար մտավորականներու հույժ գովելի այս ձեռնարկին ոչ միայն նյութապես օժանդակելու, այլև հայ ազգը պուլկարներուն ծանոթացնելու համար պաշտոնական վավերաթղթեր ալ հայթայթելու»[29]։

Թերթի հրատարակման համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ Կ. Դինոլովի և Թ. Փափուչյանի գլխավորությամբ։ 1941 թ. ապրիլի 27-ին

լույս տեսավ «Պահոդ» թերթի՝ հայերին նվիրված համարը, որի առաջնորդող հոդվածում կարդում ենք. «...Հայերը Բուլղարիայում աչքի են ընկնում որպես համեստ, խաղաղասեր իսկական քաղաքացիներ։ Նրանք բուլղարների չափ սիրում են Բուլղարիան։ Որպես հավատարիմ զավակներ նրանք մասնակցեցին Բուլղարիայի ազատագրման պայքարին, բալկանյան ու առաջին համաշխարհային պատերազմներին։ Ազատագրումից հետո նրանք խոշոր ավանդ ներդրեցին մեր երկրի տնտեսական ու մշակութային վերելքի գործում»[30]։

1941—1944 թթ. ֆաշիզմի դեմ համատեղ պայքարում էլ ավելի ամրապնդվեցին բուլղար և Հայ աշխատավորների կապերը, որոնք բուռն վերելք ապրեցին 1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ ՄԻՆՉԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲՆԵՐԸ

1. ԴՊՐՈՑՆԵՐ, ՄԱՄՈՒԼ, ՏՊԱՐԱՆՆԵՐ, ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

XIX դարի վերջին բուլղար ժողովրդի ազգային պետականության վերականգնումը, հասարակական-քաղաքական մտքի և ազգային մշակույթի վերելքը բարերար ազդեցություն ունեցան նաև բուլղարահայ գաղութի համար, նախ և առաջ մայրենի լեզվի վերականգնման գործում։ Մինչ այդ, բուլղարահայերի խոսակցական լեզուն հիմնականում թուրքերենն էր, որը մուտք էր գործել նաև հայ մշակույթի տարբեր ասպարեզները (թատրոն, երգ, գեղարվեստական գրականության թարգմանություններ և այլն)։

Թուրքիայից տարագրված հայերը նոր պայմաններում առանձնահատուկ ուշադրություն նվիրեցին դարավոր հայ մշակույթի վերականգնման և հետագա զարգացման գործին։

Բուլղարահայ գաղութը դարձավ սփյուռքի մշակութային աշխույժ կենտրոններից մեկը։ Մշակութային առաջընթացը իր հերթին հանդիսացավ հայապահպանման գործի հիմնական գործոնը։

ա. Դպրոցներ

Դարպասգըղեն Բուլղարիայի Պլովդիվ, Վառնա, Ռուսե, Սոֆիա, Շումեն, Սլիվեն, Պազարջիկ, Բուրգաս հայաշատ քաղաքներում և այլ վայրերում հայկական եկեղեցիներին կից գործում էին տարրական դպրոց-վարժարաններ, որտեղ մինչև 1895—1896 թթ. տարում էին 9-ից 15—16 տարեկան հայ տղաները։ 1903 թ. հետո բուլղարահայ աղջիկները նույնպես սկսեցին հաճախել հայկական դպրոցներ[1]։

1903 թ. հունվարի 1-ին Բուլղարիայում գործում էին 10 հայկական տարրական դպրոց-վարժարաններ՝ 947 աշակերտներով և 33 ուսուցիչներով[2]։ *Կային նաև անհատների, կրոնական, կուսակցական կազմակերպությունների կողմից հիմնված մասնավոր դպրոցներ։ Մատաղ սերնդի*

պաստիարակության կայուն օջախներ էին ազգային վարժարանները, որոնց բյուջեի ապահովման հարցերով զբաղվում էին թաղական խորհուրդներն ու հոգաբարձությունները։ Հայկական եկեղեցիների սեփականության հանդիսացող կալվածքներից, հողամասերից, խանութներից ստացված եկամուտների մեծ մասը հատկացվում էր ազգային վարժարաններին։ Հայկական դպրոցներին նյութական օգնություն էին ցույց տալիս բազմաթիվ դպրոցասիրաց, բարեսիրաց, օրիորդաց և այլ կազմակերպություններ, գաղութում գործող դերասանական խմբեր և առանձին անհատներ։

1897—1898 թթ. ուսումնական տարում Բուլղարիայի լուսավորության մինիստրության № 12 հրամանով նախատեսվում էր նյութական օգնություն ցույց տալ երկրում գործող հայ, հույն, հրեա և թուրք փոքրամասնությունների դպրոցներին[3]։ Սակայն տեղական իշխանությունները ֆինանսական դժվարությունների պատճառով միշտ չէ որ կիրառում էին այդ օրենքը։

Մինչև 1912—1915 թթ. բուլղարահայ գաղութում գործում էին հետևյալ հայկական ազգային և մասնավոր տարրական դպրոց-վարժարանները[4]։

Քաղաքներ	Դպրոցների թիվը	Աշակերտների թիվը	Դպրոցների անվանումը
Պլովդիվ	3	170—180	«Վարդանանց—Վռամշապուհյան» «Ջորյան»—մասնավոր «Հայկազյան» — ավետարանական — բողոքական
Վառնա	3	270—300	«Արծրունյաց» և «Սիսական» ազգային վարժարաններ «Ամիրխանյան» ավետարանական — բողոքական
Ռուսե	1	180—200	«Մեսրոպյան» ազգային և մանկապարտեզ
Բուրգաս	1	55 60	«Ազգային վարժարան»
Սլիվեն	1	30—40	«Սուրբ լուսավորիչ»
Շումեն	2	150—160	«Վարդանյան» ազգային, «Պարույր Ալեհոսյան» ավետարանական-բողոքական
Պազարջիկ	1	30—40	«Խորենյան» ազգային
Սոֆիա	1	30—40	«Արամյան» ազգային
Ընդամենը	13	910—1020	

Բացի վերը նշված դպրոցներից, Բուլղարիայի այն քաղաքներում, որտեղ բնակվում էին փոքրաթիվ հայեր, կազմակերպվում էին երեխաներին հայերեն գրել ու կարդալ սովորեցնելու դասընթացներ[5]։

Դարասկզբին բուլղարահայ դպրոցներում դասավանդող մի խումբ ուսուցիչներ որոշեցին հրավիրել ուսուցչական համագումար և դպրոցներում մտցնել ուսուցման միասնական ծրագիր, հիմք ունենալով երկրում գործող բուլղարական դպրոցների ընդհանուր ծրագիրը։ Համագումարը, որը հրավիրվեց 1906 թ., քննարկեց դասավանդման մեթոդների բարելավման հարցերը և ընդունեց հետևյալ որոշումները.

1. Գաղութում ստեղծել ուսուցչական միություն հինգ հոգուց բաղկացած վարչությունով։ Հրատարակել «Ռահվիրա» ուսուցչական թերթը։

2. Նկարչությունը և ֆիզկուլտուրան մտցնել դպրոցների ծրագրում որպես պարտադիր առարկա։ Սակայն հնարավոր չեղավ մինչև 1933 թ. դպրոցներում ուսուցման միասնական ծրագիր մտցնել։

1908—1909 թթ. լուսավորության մինիստրությունը ընդունեց մի շարք որոշումներ Բուլղարիայում գործող փոքրամասնությունների դպրոցների վերաբերյալ։ Կառավարության որոշմամբ (360-րդ հոդվածի համաձայն) նախատեսվում էր այդ դպրոցներին նյութական օժանդակություն ցույց տալ և արգելվում էր օտար վկայականներով բացել մասնավոր դպրոցներ։ Դպրոցների բացումն ու փակումը պետք է կատարվեր միայն լուսավորության մինիստրության միջոցով։ Թույլատրվում էր փոքրամասնությունների դպրոցներում դասավանդել մայրենի լեզվով[6]։

Բալկանյան և առաջին համաշխարհային պատերազմների տարիներին բուլղարահայ դպրոցների մեծ մասը փակվեց։ Բազմաթիվ ուսուցիչներ, թաղական խորհուրդների և հոգաբարձությունների անդամներ մեկնեցին ռազմաճակատ։ Խանգարվել էր գաղութի հասարակական-մշակութային կյանքը։

1922 թ. գաղթից հետո բուլղարահայ դպրոցների թիվը հասավ 16-ի։ Գաղութի ղեկավար մարմիններից բացի, դպրոցների վերականգնման և նորերի բացման համար նյութական օժանդակություն ցույց տվեցին մի շարք հայ և օտար միություններ ու կազմակերպություններ, ինչպես «Հայ բարեգործական ընդհանուր միության» մասնաճյուղը, «Գերմանական բարեսիրաց միությունը» և այլն։ Սակայն հավաքված գումարները չէին բավարարում դպրոցների պահանջները։ Բուլղարական կառավարության որոշումով տեղական համայնքային վարչությունները պարտավորվեցին փոքրամասնությունների դպրոցներին միջոցներ տրամադրել։

Որոշման 359 հոդվածի համաձայն նյութական միջոցները չբավարարելու դեպքում, տվյալ դպրոցի բյուջեն լրացնելու համար փոքրամասնության քաղաքացիներից, ըստ նրանց եկամտի, գանձվում էր հատուկ հարկ։ Այդ օրենքի կիրառման օրինակ էր ցույց տալիս Վառնայի հայկական դպրոցի հոգաբարձությունը, դպրոցի բյուջեն ապահովելով առանց կողմնակի օգնության։ Մնացած հայաշատ քաղաքների հոգաբարձությունները երբեմն անտարբերություն ցուցաբերելով օրենքի նկատմամբ, կանգնում էին անելանելի դրության առաջ և ստիպված փակում էին դպրոցը։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո բուլղարական սահմանադրության համաձայն յոթնամյա կրթությունը բոլոր քաղաքացիների համար պարտադիր դարձավ։ Դադրության առջև ծառացավ հայկական պրոգիմնազիաներ ունենալու խնդիրը։ Հայկական գիմնազիաներ՝ լրիվ միջնակարգ դպրոցներ, բուրժուական Բուլղարիայում գոյություն չեն ունեցել։ Միայն Սոֆիայի Մեսրոպյան ճեմարանն էր, որ կարճ ժամանակամիջոցում համարվեց միջնակարգ դպրոց։

Հետագայում հայկական 7-ամյա պրոգիմնազիաներ բացվեցին Պլովդիվում և Սոֆիայում։ Պլովդիվում՝ «Ազգային» և «Մխիթարյան» դպրոցները, իսկ Սոֆիայում «Մեսրոպյան» ճեմարանը փակվելուց հետո ազգային «Արամյան» դպրոցը դարձավ պրոգիմնազիա։ Մնացած բոլոր հայաշատ քաղաքներում հայ երեխաները ու պատանիները սովորում էին հայկական տարրական 4-ամյա դպրոցներում, որոնք ավարտելուց հետո ընդունվում էին բուլղարական պրոգիմնազիա, իսկ հետագայում, նյութական հնարավորություն ունեցողները, շարունակում էին իրենց կրթությունը բուլղարական գիմնազիաներում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում։

Բուլղարահայ պատանիների մեծ մասը ստանալով 7-ամյա կրթություն, մտնում էր արտադրության մեջ, շարունակելով սովորել երեկոյան պրոֆտեխնիկական ուսումնարաններում։ Ավարտողները մասնագիտանում և վարպետի վկայական էին ստանում սեփական ձեռնարկություն հիմնելու իրավունքով։

1934 թ. Բուլղարիայի հայաշատ քաղաքներում գործում էին հետևյալ հայկական դպրոցները[7]։

Բերված թվական տվյալները հարաբերական են, քանի որ հետագա տարիներին հայերը փոքր քաղաքներից տեղափոխվում էին երկրի առավել մեծ կենտրոնները (Սոֆիա, Պլովդիվ, Ռուսե և այլն)։ Օրինակ, Պլովդիվի «Ազգային» և «Մխիթարյան» վարժարաններում սովորում էին 947

Քաղաքները	Դպրոցների թիվը	Աշակերտների թիվը	Ուսուցիչների թիվը	Դպրոցի անվանումը
Պլովդիվ	2	790	32	«Վարդանանց-Վաղարշյան» «Մխիթարյան» վարժարան
Վառնա	1	288	8	«Միսաքյան»
Սոֆիա	2	2 3	15	«Արամյան» «Մեսրոպյան» ճեմարան»
Ռուսե	1	248	7	«Սահակ-Մեսրոպյան»
Բուրգաս	1	237	6	«Հայկազյան»
Հասկովո	1	163	4	«Մեսրոպյան»
Յամբոլ	1	80	4	«Օշական»
Շումեն	1	66	4	«Վարդանյան»
Սլիվեն	1	55	4	«Լուսավորչի»
Ստարա Զագորա	1	50	3	«Մեսրոպյան»
Պազարջիկ	1	45	3	«Խորենյան»
Նովա Զագորա	1	38	3	«Մամիկոնյան»
Այտոս	1	28	2	«Սահակյան»
	15	2361	95	

աշակերտներ (35 ուսուցիչ), այսինքն այնքան, որքան բոլոր հայկական դպրոցներում՝ դարասկզբից մինչև առաջին համաշխարհային պատերազմը։

1937—1938 ուսումնական տարում բուլղարահայ տարրական և քերի միջնակարգ դպրոցներում սովորում էր 2212 աշակերտ (89 ուսուցիչ)։ Ֆինանսական ծանր պայմանների պատճառով Սոֆիայում փակվեց «Մեսրոպյան» ճեմարանը, զգալի թվով հայ երեխաներ սկսեցին հաճախել բուլղարական և օտար դպրոցներ։

Նույն ուսումնական տարում Սոֆիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էին 24 հայ երկսեռ ուսանողներ։ Նրանցից 6-ը՝ պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում, 4-ը՝ իրավաբանական, 2-ը՝ լեզվաբանական, 1-ը՝ անասնաբուժական, 1-ը՝ քիմիական, 1-ը՝ գյուղատնտեսական։ 5 ուսանողներ սովորում էին Սոֆիայի ազատ համալսարանում, 3 ուսանող՝ երաժշտական ակադեմիայում և 1 ուսանող Գիտական ընկերության բարձրագույն դպրոցում։

Այդ տարիներին հայկական դպրոցները գործում էին ոչ միասնական ուսումնական ծրագրով։ 1933 թ. հուլիսի 12—14 Պլովդիվում հրավիրվեց հայ ուսուցիչների խորհրդակցություն։ Ժողովի հիմնական հարցը հայոց լեզվի դասավանդման խնդիրն էր։ Անհրաժեշտ էր միասնական ծրագիր մշակել և ունենալ ընդհանուր դասագրքեր։ Ծրագրի մշակման և դասա-

գրքերի ստեղծման համար ընտրվեց վարչություն, որի կազմում էին ուսուցիչներ Բենիամին Թյուֆենքճյանը, Մկրտիչ Շահնազարյանը և Կարո Ասարլըքյանը[8]։

Պլովդիվի 1834 թ. բացված հայկական ազգային վարժարանը եղել է ոչ միայն ամենահինը, այլև առաջին հայկական ուսումնական հաստատությունը Բալկաններում[9]։ Ենթադրվում է, որ այն գործել է դեռևս XVII դարի վերջից, երբ Ղրիմից և Արևելյան Հայաստանից բազմաթիվ հայեր գաղթել և հաստատվել են Պլովդիվում[10]։

Սկզբնական շրջանում Պլովդիվի, «Վարդանանց» դպրոցը եղել է միայն տղաների համար։ Հետագայում նրան կից սկսել է գործել աղջիկների «Վաուվաույան» դպրոցը։ Ավելի ուշ նրանք միացան և ստեղծեցին **«Վարդանանց-Վաուվաույան» ազգային վարժարանը (1944 թ. կոչվեց «Գ. Թյուֆյունճյան»[11], իսկ 1949 թ. «Ստեփան Շահումյանի» անվան հայկական միջնակարգ դպրոց)[12]։**

XIX դարի վերջում Պլովդիվի հայկական դպրոցի աշակերտների թիվը հասել էր 100-ի։ Այս շրջանում «Վարդանանց-Վաուվաույան» դպրոցի լավագույն մանկավարժներն էին Գարեգին և Հմայյակ Շիշմանյանները, որոնք Կոստանդնուպոլսից Պլովդիվ տեղափոխվելով, դպրոցի ուսման ծրագրում և մատաղ սերնդի դաստիարակման գործում մտցրին մի շարք վերափոխումներ։ Լավագույն ուսուցիչներից ու կազմակերպիչներից էր Տաճատ Լութֆյանը, որի նախաձեռնությամբ հիմնվեց Պլովդիվի «Դրասիրաց եղբայրություն» միությունն ու գրադարանը։

Հետագայում դպրոցի մանկավարժ-ուսուցիչներ դարձան նրա սաները, որոնք ստանալով բարձրագույն կրթություն, տարիներ շարունակ գլխավորեցին ոչ միայն դպրոցի կրթական գործերը, այլ աչքի ընկան իրենց հասարակական-քաղաքական գործունեությամբ՝ գաղութի ներքին կենսավարման և բուլղարական կոմունիստական կուսակցության շարքերում։ Գառնիկ Թյուֆյունճյանը, Ստեփան Հինդլյանը, Ստեփան Շահբազյանը, Գրիգոր Շիշմանյանը և ուրիշներ եղել են քաղաքական և մանկավարժական ակտիվ գործիչներ։

1896 և 1922 թթ. գաղթերից հետո, երբ բուլղարահայ գաղութը հասել էր 47—50 հազար հոգու, իսկ Պլովդիվի հայկական համայնքը՝ 8—10 հազարի, քաղաքի հայկական դպրոցի աշակերտների թիվը հասնում է 800-ի[13]։ 1925—1926 ուսումնական տարվանից այն վերածվեց 7-ամյա թերի միջնակարգ դպրոցի։ 1933—1934 ուսումնական տարում դպրոցի աշակերտների թիվը մանկապարտեզի հետ միասին հասնում էր 1012-ի։ 1932—1933 ուսումնական տարում դպրոցում սովորող 850 աշակերտից

373-ը տղաներ էին, 484-ը՝ աղջիկներ։ Դպրոցն ունեցել է 17 դասարան, 19 հայ և 3 բուլղար ուսուցիչներ։ Մանկապարտեզն ունեցել է երեք բաժին (բողբոջ, կոկոն, ծաղիկ)։ Անհրաժեշտություն առաջացավ նախաձեռնել նոր դպրոցի շենքի կառուցման աշխատանքները։ 1944 թ. Գևորգ Գ. Թյուֆյունճյանի նախաձեռնությամբ և դրամական միջոցներով կառուցվում է նոր շենք, որով դպրոցն անվանվում է իր բարերարի անունով։

1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխությունից հետո աշակերտների թիվը տատանվում էր 550—700 հոգու միջև, առանց մանկապարտեզի երեխաների։ Դպրոցն ուներ բարձրորակ ուսուցչական կազմ և իր առաջադիմությամբ աչքի էր ընկնում Բուլղարիայի միջնակարգ դպրոցների համակարգում։

1928 թ. Վիեննայի Մխիթարյան միաբանության նախաձեռնությամբ Պլովդիվում հիմնվեց «Մխիթարյան» վարժարանը։ 1933—1934 ուսումնական տարում դպրոցն ուներ 156 երկսեռ աշակերտ։ Այն հիմնվել էր հետագայում գիմնազիա դառնալու հեռանկարով։ Դպրոց-վարժարանն ուներ նախակրթարան և պրոգիմնազիա՝ 5—7-րդ դասարաններով։

Դպրոցն ունեցել է բարձրորակ ուսուցչական կազմ՝ 7 հայ վարդապետ, 6 բուլղար ուսուցիչ և 3 հայ աշխարհիկ մանկավարժ։ Ուսման վարձը բարձր լինելու պատճառով դպրոց հաճախում էին ունևոր դասի երեխաները։ Դպրոցն ուներ գիշերօթիկ բաժին, որտեղ սովորում էին նաև այլ քաղաքներից եկած հայ երեխաներ։ «Մխիթարյան» վարժարանն ունեցել է մատենադարան-գրադարան և հրատարակել է «Ուսումնարան» թերթը։ Դպրոցը փակվեց 1947 թ., 20 տարի շարունակ հանդիսանալով բուլղարահայերի մշակութային կարևոր օջախներից մեկը[14]։

Սոֆիայի հայկական տարրական դպրոցը, որը հիմնվել է 1896 թ. ս. Աստվածածին եկեղեցուն կից, բալկանյան և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին դադարեց գործելուց, 1922 թ. նորից բացվեց։ Այն ժամանակ դպրոցում սովորում էր 120 երկսեռ աշակերտ։ Մինչև 1937 թ. այն քառամյա էր։ Նույն թվականին, երբ «Մեսրոպյան» ճեմարանը փակվեց, դպրոցն ընդունեց նաև ճեմարանի սաներին, վերածվելով պրոգիմնազիայի։ Սոֆիայի «Ազգային տան» կառուցման ժամանակ նախատեսվում էր շենքի հարկերից մեկը հատկացնել «Ազգային վարժարանին»։ Բուլղարահայ թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Հովակիմյանը այդ նպատակին հատկացրեց 200000 լևա։ Հայկական դպրոցը վերջինիս անունով կոչվեց «Հովակիմյան վարժարան»[15]։

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին դպրոցն ունեցել է 200 աշակերտ։ Այնտեղ դասավանդում էին բուլղարահայ մտավորակա-

նության ներկայացուցիչներ՝ Սարգիս Փաշաճյանը, Հարություն Պողոսյանը, Վիկտորյա Մոմճյանը, Գրիգոր Ահարոնյանը, Զարեհ Պլպուլը, Օնիկ Փանիկյանը, Գևորգ Մեսրոպը, Արմեն Սևանը և ուրիշներ։

1923 թ. վերջին Պլովդիվում հիմնվել էր «Մեսրոպյան» ճեմարանը՝ Գևորգ Մեսրոպի նախաձեռնությամբ։ 1924 թ. այն տեղափոխվեց Սոֆիայի Պավլովո արվարձանը։ 1928—1929 ուսումնական տարում ճեմարանն ուներ նախակրթարան և պրոգիմնազիա, իսկ 1929—1930 ուսումնական տարում այն դարձավ 10-ամյա դպրոց (գիմնազիա)։ Ֆինանսական դժվարությունների պատճառով 1937 թ. Սոֆիայի հայկական երկու դպրոցները միացվեցին և միացյալ հայկական դպրոցը դարձավ պրոգիմնազիա։ 1937—1938 ուսումնական տարում այն ուներ 150 երկսեռ աշակերտ նախակրթարանում և 56 աշակերտ՝ պրոգիմնազիայում[16]։

Մնացած հայաշատ քաղաքներում գործող հայկական տարրական դպրոցներն ավարտած հայ երեխաներն ու պատանիները իրենց կրթությունը շարունակում էին բուլղարական պրոգիմնազիաներում, իսկ նրանց փոքր մասը՝ գիմնազիաներում։ Բուլղարիայում գործող հայկական տարրական և թերի միջնակարգ դպրոցների միջոցով վերացվեց անգրագիտությունը Թուրքիայից տարագրված հայ զանգվածների շրջանում։

բ. Մամուլ

Բուլղարահայերի մշակութային զարգացման գործին մեծապես նպաստեց բուլղարահայ պարբերական մամուլը, որն իր նշանակալից տեղն ունի սփյուռքահայ մամուլի պատմության մեջ։

Առաջին բուլղարահայ թերթը լույս է տեսել 1884 թվականին։ Այն Անդրանիկ Յոանեսկուի (Ռումինիայից տեղափոխվել էր Վառնա) նախաձեռնությամբ ու խմբագրությամբ «Huis» (Հույս) շաբաթաթերթն էր, որը տպվում էր նրա տպարանում՝ լատինատառ հայերենով։ Բայց այն անհասկանալի էր գաղութի մեծամասնության համար, որով նույն թվականի մայիսին փակվեց։ Հետագայում նույն տպարանում լույս տեսավ առաջին հայատառ թերթը՝ «Իրավունքը», Թագվոր Փափազյանի խմբագրությամբ և Հակոբ Մավիի աջակցությամբ[17]։

1896 թ. մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը բուլղարահայ գաղութում լույս տեսան մեզ հայտնի 75-ից ավելի թերթեր։ Բուլղարահայ մամուլը զգալի զարգացում ապրեց դրսից՝ Կոստանդնուպոլսից, Սոսկվայից, Թիֆլիսից, Փարիզից, Մարսելից և ԱՄՆ-ից ստացվող թերթերի և գրականության բարերար ազդեցության ներքո։

1903 թ. ուժեղացավ Կովկասում հրատարակվող հայկական թերթերի մուտքը Բուլղարիա։ Բուլղարահայերը այդ թերթերի միջոցով հաղորդակից էին լինում Արևելյան Հայաստանում և Ռուսաստանում տեղի ունեցող հասարակական-քաղաքական իրադարձություններին։

Նոր սերունդը մամուլի միջոցով հաղորդակից դարձավ ազգային և սոցիալական ազատագրության գաղափարներին։ Բուլղարահայ գաղութում լույս տեսնող թերթերն ու ամսագրերը հիմնականում քաղաքական երանգ ունեին, հանդիսանում էին այս կամ այն կուսակցության օրգանը։

Դաշնակցական մամուլին հակադրվում էր հնչակյան և ռամկավար մամուլը։ Այսպես, դաշնակցության «Շարժում» (1898—1907) «Ռազմիկ» (1905—1909), «Հայաստան» (1915—1925) օրգաններին հակադրվում էին հնչակյանների «Աշխարհ» (1898), «Ապագա» (1905), «Վերածնունդ» (1903—1904), «Պալքանեան մամուլ» (1915—1923), «Զանգ» (1926—1931) և ռամկավարների «Լուսարձակ», «Հայրենիքի ձայն» իսկ վերջում նաև «Փարոս» թերթերը։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, 1919 թ. Պլովդիվում գործող հայ կոմունիստների «Մամուլի կոմիտեն» բուլղարական կոմունիստական կուսակցության նախաձեռնությամբ լույս ընծայեց սփյուռքում առաջին հայ կոմունիստական պարբերականը՝ «Կարմիր լուրերը» (1922—1923 թթ., «Նոր աշխարհ»), որոնք հակադրվելով հայ բուրժուական ու մանրբուրժուական մամուլին, պարբերաբար պրոպագանդում էին հոկտեմբերյան հեղափոխության համաշխարհային պատմական նշանակությունը, ցույց տալիս նրա դերը համայն մարդկության և հայ ժողովրդի համար։

1920—1930-ական թվականներին բուլղարահայ գաղութում լույս են տեսել 20 անուն պարբերական, հրատարակվել են 50-ից ավելի գրքեր (պատմական, գեղարվեստական, թարգմանություններ և այլն)։

1926 թ. դաշնակցության օրգան «Հայաստանին» փոխարինեց «Արաքսը»։ Հետագայում այն կոչվեց «Նոր Արաքս», իսկ վերջում «Ազատ խոսք», որը գոյատևեց մինչև 1944 թ.։ 1937 թ. Գարեգին Նժդեհի խմբագրությամբ սկսեց լույս տեսնել դաշնակցության երկրորդ օրգանը՝ «Ռազմիկը»։ «Ազատ խոսքը» մնաց որպես դաշնակցության բյուրոյականների թևի օրգան։ Այդ թերթերի դեմ պայքարը շարունակեցին ռամկավարների «Փարոսը» (1929—1945) և հնչակյանների «Պալքանեան մամուլը» (1931—1944)։ Ինչպես նկատեցինք, 1932 թ. հայ կոմունիստներն ընդհատակյա ծանր պայմաններում փորձեցին հրատարակել «Հայ բանվոր» թերթը, սակայն լույս տեսավ թերթի ընդամենը մեկ համար։

1926—1938 թթ. լույս տեսան բուլղարահայ տարեգրքեր (որոնք տպագրվում էին Սոֆիայի և Պլովդիվի տպարաններում), զանազան հասարակական կազմակերպությունների (հայրենակցական, սպորտային, մշակութային, ուսանողական, բանկերի) օրգաններ և ամսաթերթեր։ Նրանցից շատերը մեկ երկու համար լույս տեսնելուց հետո, ֆինանսական պատճառներով, դադարում էին հրատարակվելուց[18]։

Բուլղարահայ մամուլի և տարեցույցների էջերում հաճախ տպվում էին բուլղարահայ բանաստեղծների և գրողների ստեղծագործությունները։ Նրանց թեմատիկան ու ներշնչման աղբյուրը հայրենիքի կարոտն էր և բուլղարական բնաշխարհը։ 1920—40-ական թվականներին իրենց չափածո, արձակ, պատմական ու բանասիրական ստեղծագործություններով աչքի ընկան Զարեհ Պլպուլը, Արմեն Շիրանյանը, Հրանտ Հրահանը, Պարույր Ասատուրը, Օնիկ Զարմունին (Օնիկ Փանիկյան), Կարո Ղազարոսյանը, Հովհաննես Տեեճյանը, Ներսես Գասապյանը, Սարգիս Փաշաճյանը, Վիկտորյա Մումճյանը, Տիգրան Մարտիրոսյանը, Գրիգոր Դարբինը, Կարո Ճինգողյանը և ուրիշներ, որոնք կրում էին նոր ժամանակների հասարակական-գրական հոսանքների ազդեցությունը։

1927—1930-ական թվականներին լույս տեսան Միքայել Գալստյանի «Ակնա ժողովրդական երգերի» ժողովածուն, Զարեհ Պլպուլի «Ճակատագրի փուշի վրա» բանաստեղծությունների ժողովածուն և առանձին բանաստեղծություններ՝ սիրո և հայրենիքի մասին։ Բուլղարահայ տարեգրքերում և մամուլի էջերում լույս տեսան Հրանտ Հրահանի, Պարույր Ասատուրի, Գրիգոր Դարբնու, Կարո Ճինգողյանի բանաստեղծություններն ու պատմվածքները։ 1946 թ. բուլղարահայ գրական կյանքի մասնակիցների մի զգալի մասը ներգաղթեց Սովետական Հայաստան, շարունակելով իր համեստ ավանդը ներդնել Մայր Հայրենիքի մշակույթի տարբեր բնագավառներում։

XIX դարի վերջից մինչև XX դարի կեսերը բուլղարահայ գաղութում լույս տեսան մի շարք պատմագիտական աշխատություններ, որոնց հեղինակները հայ քաղաքական կուսակցությունների ղեկավարներ և Թուրքիայից տարագրված հայ մտավորականության ներկայացուցիչներ էին։ Նրանք իրենց աշխատություններով ձգտում էին վառ պահել հայրենասիրական ոգին ու ազգային գիտակցությունը տարագրված հայերի մեջ։ Նրանց աշխատությունները պատմագիտական տարբեր ուղղությունների ու բնույթի ուսումնասիրություններ էին հայ ժողովրդի պատմության առանձին ժամանակաշրջանների վերաբերյալ։

XX դարի սկզբին բուլղարահայ պատմագիտությունը սկսեց մշակել նաև հայ մանրբուրժուական ու բուրժուական քաղաքական կուսակցությունների ծագման ու գործունեության հարցերը։ Այս վերջին աշխատություններում վերլուծության էին ենթարկվում միջկուսակցական և ներկուսակցական հակասությունները ու պայքարը հայ ժողովրդի ազգային ազատագրության հարցում։

Բուլղարահայ կոմունիստներ Անդրեաս Հակոբյանը, Ստեփան Շահբազյանը, Տիգրան Խամիյանը և ուրիշներ զգալի աշխատանք կատարեցին մարքս-լենինյան գաղափարները պատմագիտության մեջ արմատավորելու գործում։

Բուլղարիայում լույս են տեսել պատմագիտական այնպիսի աշխատություններ, ինչպիսիք էին Սապահգյուլյանի, «Եվրոպայի քաղաքական դրությունը» (1898, Ռուսե), Երվանդ Պալյանի «Հայ սոցիալ-դեմոկրատ միությունը և անոր «Պրոլետարիատ» օրգանը» (1903, Ռուսե), Վարդ Պատրիկյանի «Տասը տարի ՀՀ դաշնակցության շարքերուն մեջ» (1908, Վառնա), «Ստեփան Շահումյանի հիշատակին» (1922, Պլովդիվ)։

1910 թ. երբ Արշակ Ալպոյաճյանը հանգստանում էր Վառնայում, գրեց մի փոքրիկ գրքույկ՝ «Պուլկարների պատմությունը» վերնագրով։ 1926 թ. Սոֆիայում լույս տեսավ Գրիգոր Քուլուլյանի «Անդրանիկ, կյանք և մարտեր» աշխատությունը։

1931 թ. Սոֆիայում լույս տեսավ Գևորգ Մեսրոպի «Հայկարանը» և Օնիկ Մխիթարյանի «Վանի հերոսամարտը»։ 1947 թ. Պլովդիվում Տիգրան Մարտիրոսյանը հրատարակեց մեծածավալ «Նոյեմբերյան Հայաստանի հուշարձան» մենագրությունը և այլն։

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը բուլղարահայ գաղութում լույս տեսան պատմագիտական մի շարք աշխատություններ հայկական առանձին գաղթօջախների մասին։ Դրանցից էին՝ Երվանդ եպիսկոպոս Փերտահճյանի «Փիլիպոպոլսո հայ գաղութին ծագումը և անոր եկեղեցին» (1929 Պլովդիվ), Հակոբ Աղասյանի «Ադրիանուպոլսո հայ գաղութը» (1935, Պլովդիվ), Սարգիս Փաշաճյանի «Ռոդոստոյի հայ գաղութը» (1929, Սոֆիա և 1964, Բեյրութ), Վարդան Խաչիկյանի «Մալզարայի հայ գաղութը» (1943, Սոֆիա)։

Բուլղարահայ գաղութում հրատարակվել են հայագիտական մի շարք աշխատություններ բուլղարերեն, գերմաներեն՝ Վահան Թոթոմյանցի, Հայկ Ասատուրյանի, Ներսես Գասապյանի, Պարույր Ասատուրի և այլոց հեղինակությամբ։

գ. Տպարաններ

Մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը Բուլղարիայում գոյություն չունեին տպարաններ և տպագրական տառեր պատրաստող հիմնարկներ։ Կոստանդնուպոլիսն էր այն կենտրոնը, որտեղից ստացվում էր հայերեն, բուլղարերեն և հայատառ թուրքերեն գրականություն։ Այդ գործում զգալի դեր էին կատարում հայերը։ Սկզբնական շրջանում տպարանատերերը միաժամանակ գրավաճառներ էին, որոնք երբեմն մասնակցում էին նաև զանազան տոնավաճառների՝ իրենց տպագրած գրականությունը վաճառելու համար[19]։

Կոստանդնուպոլսում հայտնի էր Թադևոս Տիվիթճյանի տպարանը, որտեղ տպվում էին բուլղարերեն, հայերեն և այլ լեզուներով գրքեր, դասագրքեր ու եկեղեցական գրականություն։

Բուլղարիայում առաջին մեծ տպարանները Յանկո Կովաչևի և Հրիստո Գ. Դանովի հիմնարկներն էին (1881 և 1885), որոնցից առաջինը գործում էր Սոֆիայում, իսկ երկրորդը՝ Պլովդիվում։ 1885 թ., երբ Սոֆիայում հիմնադրվեց բուլղարական պետական տպարանը, նրա համար տառեր ձուլելու գործը հանձնարարվեց Կոստանդնուպոլսից հրավիրված մասնագետ Հարություն Մանուկյանին։ Մինչ այդ տպագրական տառերը ներմուծվում էին արևմտաեվրոպական ձուլարաններից։

1895—1896 թթ. չարդերի ժամանակ Թուրքիայից Բուլղարիա գաղթեց և Սոֆիայում հաստատվեց Երվանդ Փալաքաշյանը, որն իր հետ բերեց նաև տպագրական տառեր ձուլելու աշխատանոց։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ե. Փալաքաշյանին փոխարինեց Հակոբ Մերունյանը, որի աշխատանոցը տեղադրվեց Պլովդիվում։

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը Բուլղարիայում գործող տպագրական տառերի հինգ ձուլարաններից երկուսը պատկանում էին հայերին։ Դրանք Բըյըկովի և Մինասյանի ձուլարաններն էին Սոֆիայում։

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին Բուլղարիայում գործում էին 300-ից ավելի մեծ և փոքր տպարաններ, որոնց հիմնադրման գործում զգալի էր հայերի մասնակցությունը։ Առաջին հերթին պետք է հիշատակել Հակոբ Փյունջյուճյանի և Վահան Պետելյանի ձուլարանները, որոնց դերը մեծ էր Բուլղարիայում տպագրական գործի զարգացման ասպարեզում[20]։

XIX դարի վերջին բուլղարահայ թերթերն ու գրքերը մեծ մասամբ տպվում էին բուլղարական տպարաններում։ Դարասկզբից գործել են նաև հայկական մի շարք տպարաններ, որոնց մեծ մասը հիմնադրվել է առա-

ջին համաշխարհային պատերազմից հետո։ Պետրոս Պալըքճյանի տպարանը Սոֆիայում, ուր «Պալքանեան մամուլը» տպագրվում էր հայերեն, բուլղարերեն և լատիներեն, Ռուսեից տեղափոխվեց Սոֆիա, «Մասիս» տպարանը, որը գործում էր Սոֆիայում՝ կոոպերատիվ հիմունքներով, Վառնայի «Փարոսը», 1929 թ. տեղափոխվեց Սոֆիա, իսկ 1931 թ.՝ Պլովդիվ։ Այս տպարաններն ամենամեծերն էին, որտեղ տպվում էին հայ քաղաքական կուսակցությունների օրգանները։

Փոքր տպարաններից էին «Ավետարանականը»՝ Շումենում, Մկրտիչ Թյությունճյանի «Դանուբը»՝ Ռուսեում, Թովմաս Իզմիրլյանի «Պրոգրեսը»՝ Պլովդիվում, Գ. Թերզյանի և Գ. Թահմիզյանի «Նոր տառը»՝ Սոֆիայում, Գրիգոր Մարտիրոսյանի «Զարիֆաթ» («Նորություն») տպարանը Պլովդիվում՝ հիմնված 1928 թ., 1934 թ. Պլովդիվում հիմնված Ասարլըքյան եղբայրների և Սոֆիայում գործող Գաբրիել Ենովքյանի տպարանները[21]։

Այս վերջին տպարանների մեծ մասը փոքր արհեստանոցներ էին, որոնք կատարում էին անհատական և հիմնարկ-ձեռնարկությունների պատվերներ, տպագրում բուլղարահայ գրողների փոքրիկ գրքույկները, դասագրքեր, երբեմն էլ թերթեր ու հանդեսներ։ Այդ տպարաններում դարասկզբից մինչև 1940 թ. տպվել են 200-ից ավելի հայերեն գրքեր, որոնց մեծ մասը թարգմանություններ էին[22]։

դ. Գրադարան-ընթերցարաններ

Բուլղարահայ գաղութում հասարակական-քաղաքական կազմակերպությունների ակումբները միաժամանակ գրադարան-ընթերցարաններ էին, որտեղ պահվում էին հայ և օտար հեղինակների բազմաթիվ ստեղծագործություններ։ Այդ գրքերը ձեռք էին բերվում գրադարանի անդամների անդամավճարների գումարներով կամ առանձին բարերարների նվիրատվություններով։

Գրադարան-ընթերցարաններում կազմակերպվում էին հայերի մեջ անգրագիտությունը վերացնելու հատուկ դասընթացներ։ Կարդացվում էին դասախոսություններ հայոց պատմության, Հայաստանի աշխարհագրության, գրականության, տոմարագիտության և այլ թեմաների վերաբերյալ։ Թերթերի և գրականության միջոցով բուլղարահայերը հաղորդակից էին դառնում Սովետական Հայաստանում և սփյուռքում տեղի ունեցող հասարակական-քաղաքական իրադարձություններին։ Առաջադեմ կազմակերպությունների գրադարաններում ուսումնասիրում էին մարքսիստա-

կան գրականություն և կոփվում որպես հայրենասերներ ու ինտերնացիոնալիստներ:

Բուլղարահայ գաղութում առաջին և ամենամեծ գրադարան-ընթերցարանը 1883 թ. Պլովդիվում հիմնադրված «Գրասիրաց եղբայրություն» գրադարանն էր: Նրա հիմնադիրն էր Պլովդիվի հայկական ազգային վարժարանի ուսուցիչ Տաճատ Լութֆյանը[23]: Հետագա տարիներին այդ գրադարանը վերածվեց հայ երիտասարդության և դրքասեր մարդկանց սիրված կազմակերպության: «Գրասիրաց եղբայրությունը» դարձավ հայապահպանման կարևոր օջախներից մեկը Եվրոպայում: Այն իր 800 անդամներով ավանդույթ դարձրեց համահայկական մշակութային տոների, տարեդարձների, հոբելյանների նշումը:

1890 թ. Ռուսեում հիմնվեց «Ազգային ընթերցարանը», որը բուլղարահայ գաղութում մշակութային երկրորդ կարևոր օջախն էր իր ընթերցողների լայն շրջանակով: Դարասկզբին կուսակցական պատակտումների հետևանքով այն բաժանվեց երկուսի՝ «Կ. Թուխմանյան» և «Վ. Տաքեսյան» անուններով: Երկու գրադարաններն ունեին 1200—1300 անուն դիրք և 150 ընթերցող:

1905 թ. Բուրգասում գործում էր «Արարատ» ընթերցարանը, Սլիվենում՝ «Անդրանիկ», Վառնայում՝ «Բաբկեն Սյունի», Շումենում՝ «Պուկարացի Պետո», Պազարջիկում՝ «Արամյան», Պլովդիվում՝ «Պետո Սեբեմճյան» և այլ գրադարաններ:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո բուլղարահայ գաղութում հիմնվեցին նոր գրադարան-ընթերցարաններ: Եռապատերազմյան առաջին տարիներին բուլղարահայ կոմունիստները լեգալ պայմաններում հնարավորություն ունեցան հիմնելու իրենց գրադարան-ակումբները: 1919 թ. Պլովդիվի հայ կոմունիստները հիմնեցին «Ստեփան Շահումյան» գրադարան-ընթերցարանը: Նույնը կատարեցին Վառնայի, Ռուսեի և այլ քաղաքների հայ կոմունիստները:

Այդ նույն ժամանակամիջոցում Սոֆիայում հիմնվեցին «Հառաջ», «Քրիստափոր», «Դոկտոր Պեննե» գրադարանները, Հասկովոյում՝ հնչակյանների «Փարամազ» և «Դաշնակցություն» գրադարանները, Բուրգասում՝ «Հրայր Վահան» և «Կուլտուրական», Յամբոլում՝ «Վարանդյան» ընթերցարանները և այլն:

1931—1938 թթ. ընթերցողների լայն շրջան ընդգրկեցին ՀՕԿ-ի գրադարան-ակումբները: Հայաշատ քաղաքներում ՀՕԿ-ի մասնաճյուղերն ունեին բազմաթիվ թերթեր ու գրքեր, այդ թվում Սովետական Հայաստանից մատուլ և հարուստ գրականություն:

Բուլղարիայում գործող հայկական գրադարան-ընթերցարանները դարձան հայապահպանման կենտրոններ, որոնց միջոցով բուլղարահայ գաղութում համարյա վերացվեց անգրագիտությունը:

2. ԱՐՎԵՍՏ

Բուլղարահայ գաղութը չի ունեցել պրոֆեսիոնալ թատրոն: Գործել են կիսապրոֆեսիոնալ և սիրողական ինքնագործ թատերական խմբակներ, որոնք վարպետ դերասանների օգնությամբ ու մասնակցությամբ տվել են բազմաթիվ ներկայացումներ:

1880-ական թվականներին Շումենի հայկական դպրոցի տնօրեն Տաճատ Պեչլերյանը աշակերտների ուժերով ստեղծում է ինքնագործ թատերական խմբակ: Այդ խմբակի ղեկավար Տիգրան Աճեմյանն իր շուրջն է համախմբում մի խումբ սիրողներ (Մեսրոպ Հաճի Համբարձումյան, Խաչիկ Մարտիրոսյան, Հովսեփ Մանուկյան, Վռամշապուհ Մարգարյան) և նրանց մասնակցությամբ աշխուժացնում գաղութի թատերական կյանքը: Այս ինքնագործ թատերական խումբը 1900 թ. Արշակ Շալճյանի և Գրիգոր Դավիթյանի գլխավորությամբ դառնում է կիսապրոֆեսիոնալ թատերասիրական միություն՝ «Արարատ» անունով[24]:

Նման ինքնագործ թատերախմբեր գործել են նաև Պլովդիվում՝ «Գեղարվեստասիրաց Վահան Մանուելյան» մշակութային միության, Վառնայում՝ «Անձնվեր երիտասարդներին» միության և այլ հասարակական-քաղաքական կազմակերպություններին կից:

XIX դարի վերջին Բուլղարիայի մշակութային կյանքի ընդհանուր վերելքին զուգընթաց զարգանում է նաև բուլղարահայ գաղութի թատերական արվեստը, որը բուլղարահայ աշխատավորական զանգվածներին դաստիարակել է հայրենասիրական, ազգային-ազատագրական ու սոցիալական պայքարի գաղափարներով:

Դարասկզբին առաջին ինքնագործ թատերախմբերը գործում էին հայկական դպրոցներին կից: Դրանք ուսումնական տարվա ընթացքում, հատկապես տարեվերջի հանդեսների ժամանակ սիրողների և աշակերտների մասնակցությամբ ներկայացրել են պատմական, հայրենասիրական բովանդակությամբ զանազան պիեսներ:

Այդ ժամանակաշրջանում Պլովդիվում, Վառնայում, Սոֆիայում, Ռուսեում, Շումենում և այլուր գործող կիսապրոֆեսիոնալ թատերական խմբերը բեմադրում էին «Վարդան Մամիկոնյան», «Վահան Մամիկոնյան», «Արշակ II», «Ջալալեդդին», «Ջեյթունի ապստամբությունը», «Խաղամո-

ը», «Երկու հիանապետները» և այլ ինքնուրույն ու թարգմանական պիեսներ։ Կանանց դերերը կատարում էին տղամարդիկ։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին բուլղարահայ գաղութում հյուրախաղերով հանդես էին գալիս Կոստանդնուպոլսից, Կովկասից, Ռուսաստանից և այլ վայրերից ժամանած դերասաններ ու դերասանական խմբ-ներ։ 1896 թ. Թ. Ֆասուլյաճյանը Ֆելեքյան քույրերի (Վարդիթեր, Մարի-Հրանուշ) հետ եկավ Բուլղարիա և տարբեր քաղաքներում թուրքերեն և հայերեն ներկայացումներ տվեց։ 1899 թ. Պայծառ Ֆասուլյաճյանի մասնակցությամբ բեմադրվեցին Վիկտոր Հյուգոյի «Անջելո», «Լուկրեցիա Բորջիա» դրամաները, «Վասպուրականի հերոսները» և այլ պիեսներ հայերեն և թուրքերեն՝ հաշվի առնելով ունկնդիրների պահանջը[25]։ Բուլղարիա են եկել նաև Պենկլյան և Պապայան խմբերը, Կովկասից՝ Սևումյան, Թուրքիայից՝ Ֆասուլյաճյան ամուսինները և այլ պրոֆեսիոնալ խմբեր։

Բուլղարահայ գաղութում հանդես են եկել անվանի դերասաններ Սիրանույշը, Վահրամ Փափազյանը, Արշավիր Շահխաթունին և ուրիշներ։

Բուլղարիայում առաջին կիսապրոֆեսիոնալ հայկական թատերախումբը Պապայանի «Վեսելո» խումբն էր, որի գլխավոր դերակատարները ամուսիններ Սվաճյաններն էին։ Ի դեպ, տիկին Սվաճյանը առաջին հայուհին էր, որ բուլղարահայ թատրոնում բարձրացավ բեմահարթակը։ 1901 թ. «Վեսելոն» բեմադրեց «Առումն Անիի» ողբերգությունը[26]։ Այդ խումբը թեպետև իր կազմում ուներ Պենկլյանի, Պապայանի, ամուսիններ Շաքարյանների, Երամյանի, Ստեփանյանի, Հակոբյանի նման տաղանդավոր դերասաններ, չկարողացավ բավարարել գաղութի աշխատավոր շրջաններին և 1905 թ. դադարեց գործելուց[27]։

Երկրորդ բուլղարահայ կիսապրոֆեսիոնալ թատերախումբը «Նադեժդա» խումբն էր՝ Շավարշի գլխավորությամբ, որը եգիպտահայ գաղութից տեղափոխվել էր Բուլղարիա։

Երկու խմբերն էլ շրջում էին Բուլղարիայի հայաշատ քաղաքները և կազմակերպում ներկայացումներ, որոնց մեծ մասը ողբերգություններ և մելոդրամներ էին։ 1904 թ. հոկտեմբերին Ռուսեում Սիրանույշը և Շավարշի խումբը հայերեն ներկայացրին Հակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբարը», որը մեծ ոգևորություն առաջացրեց բուլղարահայ հասարակության լայն շրջաններում[28]։ Սիրանույշը նույն խմբի հետ գաղութի մյուս քաղաքներում բեմադրեց «Համլետ», «Կամելիազարդ տիկինը», «Դավաճանները», «Մեդեա», «Սեր և ատելություն» և այլ պիեսներ։

1906 թ. Հակոբյան ամուսինները Վառնայում կազմակերպում են «Օրիենտալ» թատերախումբը։ Այդ կիսապրոֆեսիոնալ կոլեկտիվը, որի

կազմում ընդգրկված էին նախկին «Վեսելո» և «Նադեժդա» թատերախմբերի որոշ դերասաններ, Ս. Երամյանի ղեկավարությամբ շրջում էր Բուլղարիայի հայաշատ քաղաքները[29]։

1911 թ. Սոֆիա եկավ Վահրամ Փափազյանը և «Սլավյանսկա բեսեդա» թատրոնում բուլղար դերասանների մասնակցությամբ ներկայացրեց Շեքսպիրի «Համլետը», «Օթելլոն» և այլ պիեսներ։ Վահրամ Փափազյանը գեղեցիկ ֆրանսերենով, իսկ բուլղար դերասանները՝ բուլղարերեն մեծ հաջողությամբ կատարում էին իրենց դերերը։ Պլովդիվում «Օթելլոյի» ներկայացմանը Դեզդեմոնայի դերում հանդես եկավ Յվետանա Կոլարովան։ Բուլղար դերասանները և մամուլը բարձր գնահատեցին Վ. Փափազյանի և Յ. Կոլարովայի կատարողական արվեստը[30]։

1914 թ. կովկասահայ «Սևումյան» պրոֆեսիոնալ թատերախումբը իր հյուրախաղերով ոգևորեց բուլղարահայ հանդիսատեսին։ Խումբը բեմադրեց Շերվանզադեի «Պատվի համար», «Չար ոգի» և այլ պիեսներ։ Թատերախումբը շրջելով Բուլղարիայի հայաշատ քաղաքները, կյանքի կոչեց բազմաթիվ ինքնագործ թատերական խմբակների։ Սակայն նրանց գործունեությունը խանգարվեց առաջին համաշխարհային պատերազմի պատճառով։ Այդ տարիներին Բուլղարիա եկավ նաև Դուրյան-Արմենյան թատերախումբը, որը ներկայացրեց մի շարք պիեսներ։

1919—1923 թթ. Բուլղարիայում հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման հետ միասին, իրենց գործունեությունը վերսկսեցին նաև հայ հասարակական-քաղաքական կազմակերպությունները, որոնց յուրաքանչյուրն ուներ իր թատերախումբը և եկվոր դերասանների մասնակցությամբ ներկայացնում էր տարբեր պիեսներ։ 1919—1921 թթ. Կոստանդնուպոլսի հայ դրամատիկ թատերախումբը Տրդատ Նշանյանի գլխավորությամբ Բուլղարիայի տարբեր քաղաքներում և այլուր բեմադրում է «Օթելլո», «Համլետ» և այլ ողբերգություններ։

1919 թ. հնչակյան կուսակցության Վառնայի կազմակերպության թատերախումբը հյուրախաղերով շրջում էր Բուլղարիայի հայաշատ քաղաքները և ներկայացնում «Անդրանիկ», «Մուրատ», «Քսան կախաղաններ», «Պատվի համար» և այլ պիեսներ։ Այդ շրջանում Վառնայում աշխույժ թատերական գործունեություն է ծավալում Տիգրան Գալամճյանը։ Նրա թատերական գործունեությանը մեծապես նպաստեց Վահան Գասապյանը՝ իր սիրող դերասանների խմբով[31]։

Վառնայում համամնան գործունեություն ծավալեց «Ժիրայր» թատերախումբը՝ իր հաճախակի ներկայացումներով։ Խմբի դերասանները սիրողներ էին, որոնք հանդես էին գալիս Սեթ Գալեմճյանի, Կարապետ Քեշ-

կեկյանի և Խորեն Գասապյանի ղեկավարությամբ։ Երիտասարդ դերասաններից բաղկացած այդ թատերախմբի (Մ. Դուկասյան, Թ. Սապոնճյան, Ս. Ճերմակյան, Մ. Նշանյան, Ե. Մենկեմենյան, Ա. Գուրգենյան, Ժ. Սիմոնյան, Ս. Գրիգորյան) անդամները բեմի սիրված ու հարգված մշակներ էին[32]։

Քաղաքական լեգալ գործունեության պայմաններում Վառնայի հայ կոմունիստների խումբը նույնպես կազմակերպեց սիրողական թատերախումբ։ Սովետական Հայաստանի առաջին տարեդարձի առթիվ այդ խումբը «Սբեդինենիե» ակումբի և «Վառնենսկա կոմունա» թատրոնի բեմերում ներկայացրեց «Մարատ» պիեսը, որը նվիրված էր ֆրանսիական հեղափոխությանը։ Բուլղարիայում ֆաշիստական հեղաշրջման հետևանքով թատերախմբի կյանքը շատ կարճատև եղավ։ 1922 թ. Ադրիանուպոլսից Բուլղարիա գաղթած Վահան Շահինյանը, Կ. Մնակյանը և Արշակ Էլմասը Պլովդիվում «Վահան Մանուելյան» գեղարվեստասիրաց միությանը կից սիրողական թատերախմբի դերասանների հետ ներկայացնում են «Հավատք, հույս և սեր» ու «Սյուզան» ներկայացումները։ Արշավիր Շահխաթունին «Ղազարյան» թատերախմբի հետ Պլովդիվում և Վառնայում բեմադրում է մի շարք պիեսներ։ 1923 թ. նա մեկնում է ԱՄՆ։

1921 թ. հոկտեմբերի 30-ին Սոֆիայի «Բրիստոլ» թատրոնում «Անդրանիկ» թատերախումբը ներկայացնում է Թ. Դրայզերի «17 տարեկանը»։ Դա հիշյալ գործի առաջին հայերեն բեմականացումն էր։ Հաջորդեց «Ջարդ ոգին», որը մեծ ոգևորությամբ ընդունվեց Սոֆիայի թատերասերների կողմից[33]։ 1922 թ. Պլովդիվում սկսեց գործել «Ադամյան» թատերախումբը։ Սակայն ցանկովյան հեղաշրջումն ընդհատեց նրա գործունեությունը։ 1925 թ. Սոֆիայի «Հառաջ» հայկական ընթերցարանին կից մի խումբ առաջադեմ սիրող դերասաններ հիմնում են ինքնագործ թատերախումբ։ Խմբի դերասաններ Օնիկ Քեչյանը, Խաչիկ Պալյանը, Պետիկ Ջավենը միաժամանակ բեմադրողներ էին։

Բուլղարահայ գաղութում ՀՕԿ-ի կազմակերպության մասնաճյուղերի առաջացման հետ միասին հայաշատ քաղաքներում ստեղծվեցին նրանց կից գործող թատերախմբեր։ Ընդլայնվեցին սիրող դերասանների շրջանակները, կազմակերպվեցին ինքնագործ երգչախմբեր, պարի անսամբլներ, նվագախմբեր և այլն։ ՀՕԿ-ի կազմակերպությունները համախմբեցին բուլղարահայ առաջադեմ երիտասարդներին ինքնագործ խմբակների մեջ։ Թատերական խմբակներն իրենց ներկայացումների միջոցով հայ աշխատավորական զանգվածներին էին հասցնում հայ և օտար դրամատուրգիայի առաջադեմ գաղափարները։ Նրանք հսկայական աշխա-

տանք ծավալեցին սովետահայ գրողների գործերը բեմականացնելու, այդ միջոցով բուլղարահայերի հայրենասիրական զգացումները զարգացնելու ուղղությամբ։ ՀՕԿ-ի Վառնայի մասնաճյուղի թատերախմբի անդամներ Ժ. Սիմոնյանը, Վ. Գասապյանը, Ս. Գորիզյանը, Հ. Պողոսյանը, Ա. Մանուկյանը, Ն. Գասապյանը, Թ. Պոյաճյանը, Տ. Քանոնյանը, Խ. Ճերմակյանը, Ս. Մկրտիչյանը և ուրիշներ լայն ճանաչում ունեին բուլղարահայ գաղութում։

Սոֆիայի, Պլովդիվի, Ռուսեի, Բուրգասի, Յամբոլի, Հասկովոյի ինքնագործ թատերախմբերը մեծ հաջողությամբ բեմադրում էին Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ», «Պաղտասար աղբար», Շիրվանզադեի «Նամուս», «Պատվի համար», «Ջար ոգի», Ե. Օտյանի «Ջարդը Արթին աղա», Ն. Գոգոլի «Ռևիզոր», Կորնեյչուկի «Պլատոն Կրեչետ», Ն. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ» և այլ պիեսներ։

1930-ական թվականներին բուլղարահայ գաղութում հյուրախաղերով հանդես էին գալիս սփյուռքի տարբեր գաղութներից ժամանած պրոֆեսիոնալ դերասաններ։ Ռումինահայ դերասան Վարդ Պատրիկը բուլղարահայ սիրող դերասանների հետ ներկայացրեց «Կոկոն վարդ», «Սոս և Վարդիթեր», «Նամուս» և այլ պիեսներ, որոնք մեծ գոհունակությամբ ընդունվեցին բուլղարահայ հանդիսատեսների կողմից։ 1932 թ. Կոստանդնուպոլսից Բուլղարիա եկան հյուրախաղերով էդուարդ Ավճյանը և Հրանտ Թոփաքյանը։ Նրանք սիրող դերասանների հետ Յամբոլում, Սլիվենում, Շումենում և այլուր մեծ հաջողությամբ ներկայացրին «Նամուսը»[34]։

1933 թ. Տրդատ Նշանյանը իր կնոջ և սիրող դերասանների հետ բեմադրեց «Օթելլո», «Սրտերու պայքարը» և այլ ներկայացումներ։ Պերճ Կարապետյանն իր ընտանիքով ներկայացրեց «Մարվող ճրագներ», «Անմեղ մեղավորներ», «Լավ կարված ֆրակը»։

1935 թ. պրոֆեսիոնալ դերասան Էդուարդ Ջափրազը շրջեց բուլղարահայ գաղութում և մի շարք ներկայացումներ տվեց սիրողական դերասանների օգնությամբ։

1935 թ. Ռուսեում «Ժիրայր» թատերախումբը մեծ հաջողությամբ բեմադրեց «Թալիաթի անկումը» պիեսը։ Սիրողականների այս խումբը երկու տասնամյակ շարունակ գործում էր Ռուսեում և վայելում հայ աշխատավորների սերն ու հարգանքը[35]։ Դերասաններ Սիրան Աբելյանը, Մարիցա Ջուլֆայանը, Հովհաննես Աբելյանը, Գառնիկ Մեսուլյանը մեծ վարպետության էին հասցրել իրենց դերասանական արվեստը։

1937 թ. վերջին բուլղարական կառավարությունը արգելեց ՀՕԿ-ի գործունեությունը բուլղարահայ գաղութում, խիստ գրաքննություն սահ-

մանեց բեմադրվող հայկական ներկայացումների նկատմամբ, որը բացասական ազդեցություն ունեցավ ինքնագործ թատերախմբերի գործունեության վրա։ Այդուհանդերձ, ինքնագործ թատերախմբերում աճեցին և դաստիարակվեցին այնպիսի կադրեր, որոնք հետագայում սոցիալիստական Բուլղարիայում դարձան հայտնի պրոֆեսիոնալ դերասաններ ու բեմադրիչներ։

Բուլղարահայ գաղութում թատերական արվեստից բացի, զգալի զարգացում ապրեցին երաժշտությունն ու կատարողական արվեստը։ XIX դարի վերջից այստեղ գործել են վոկալ և գործիքային խմբեր, որոնք հասել են զգալի հաջողությունների և իրենց վրա հրավիրել Բուլղարիայի երաժշտագետների ուշադրությունը։

Բուլղարահայ երաժշտական կյանքում երեսուն տարի դիրիժոր և կոմպոզիտոր Սարգիս Պալթայանի գործունեությունը։ Նրան հաջողվեց ինքնագործ խմբերի և երգչախմբերի մասնակցությամբ բեմադրել սեփական և այլ հեղինակների օպերետներ, կազմակերպել վոկալ և գործիքային խմբեր։ 1930-ական թվականներին Սոֆիայում, Պլովդիվում, Ռուսեում, Վառնայում, Բուրգասում բեմադրեց «Սոնա», «Չյունե թագուհին», «Ռուզան», «Արշին մալ ալան», «Աշուղ Ղարիբ» և այլ օպերետներ[36]։ Ս. Պալթայանը, որպես Պլովդիվի հայկական դպրոցի երկարամյա ուսուցիչ, կարողացավ դաստիարակել և աճեցնել երաժշտասեր աշակերտների մի ամբողջ սերունդ։ Նրա երաժշտական, դիրիժորական և կոմպոզիտորական գործունեությունը փայլեց «Վահան Մանուելյան», «Շնորհալի» քառաձայն խմբերի ղեկավարման ժամանակ։

Բուլղարահայ գաղութում հայ երաժշտության զարգացման գործում արդյունավետ աշխատանք կատարեցին Կարո Կարապետյանը և Պ. Աղասյանը։ Կ.Կարապետյանը Պլովդիվում «Վահան Մանուելյան» գեղարվեստասիրաց միությանը կից ստեղծեց գաղութում առաջին գործիքային անսամբլը (կիթառ-մանդոլին), Պ. Աղասյանը՝ ջութակահարների առաջին խումբը[37]։ Նրանց օրինակով բուլղարահայ հասարակական-մշակութային և քաղաքական կազմակերպությունները հայաշատ քաղաքներում կազմակերպեցին բազմաթիվ վոկալ և գործիքային անսամբլներ, կվարտետներ և ջազեր։

Կարո Կարապետյանի երաժշտական գործունեությունն աչքի ընկավ հատկապես 1930-ական թվականներին, երբ բուլղարահայ գաղութում հիմնվեցին ՀՕԿ-ի կազմակերպությունները։ Նա ՀՕԿ-ի Պլովդիվի մասնաճյուղին կից ստեղծեց քառաձայն երգչախումբ։

Ամբողջ Բուլղարիայում և մասնավորապես բուլղարահայ գաղութում իր բարձր կատարողական արվեստով փայլեց դաշնակահարուհի Զարուհի Սայանը[38]։ Բուլղար և հայ երաժշտասերների առաջ նա հանդես էր գալիս Կոմիտասի, Բեթհովենի, Շումանի, Չայկովսկու, Մոցարտի, Լիստի, Սեն Սանսի, Ռավելի և ուրիշների գործերի փայլուն կատարմամբ։

Գաղութում մեծ համբավ վաստակեցին ընտրյալ դաշնակահարուհիներ Հերմինե Աստուրը, Մալվինա Խաչատուրյանը, ջութակահարներ Ստեփան Խանջյանը, Հակոբ Աղասյանը։ Ս. Խանջյանը բուլղարական թաղավորական սիմֆոնիկ նվագախմբի առաջին ջութակահարն էր։ Դաշնամուրի և ջութակի բուլղարահայ վարպետները միաժամանակ մանկավարժներ ու երաժշտության դասատուներ էին միջնակարգ ու բարձրագույն ուսումնական հաստատություններում։

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին, երբ բուլղարական ֆաշիստական իշխանությունները արգելեցին ՀՕԿ-ի կազմակերպության գործունեությունը գաղութում, և խիստ գրաքննություն սահմանվեց թատերական ներկայացումների նկատմամբ, զգալի զարգացում ապրեց օպերետային արվեստը։ Բուլղարահայ գաղութում իր հյուրախաղերով փայլեց քյամանչահար Ռուբեն Կարախանյանը։ Նրա վիրտուոզային կատարողական արվեստը դրսևորվեց Վառնայում՝ Քոչարյան ամուսինների և «Ռուստամ» թատերախմբի բեմադրած «Աշուղ Ղարիբ» օպերետում[39]։

Բուլղարահայ գաղութը զգալի հաջողություններ ունեցավ քառաձայն երգչախմբային արվեստի ասպարեզում։ Բուլղարահայ առաջին քառաձայն երգչախմբերը ստեղծվել են XIX դարի վերջին հայկական դպրոցներին և եկեղեցիներին կից։ Այսպես, 1883 թ. Պլովդիվի «Գրասիրաց եղբայրություն» մշակութային միությանն առընթեր ստեղծվում են «Դայլայլիկ» և «Մեղեդի» երգչախմբերը, կազմված աղգային վարժարանի սաներից։

1904 թ. Պլովդիվի «Ջորյան» մասնավոր դպրոցի ուսուցիչ Վահան Մանուելյանը (Կարապետ Տոդրամաճյան) դպրոցի 44 սաներով կազմակերպում է քառաձայն երգչախումբ։ 1905 թ. նրա մահից հետո Պլովդիվում հիմնված «Գեղարվեստասիրաց» միությունը և նրա երգչախումբը կոչվել են Վահան Մանուելյանի անվան։ Հիշյալ երգչախումբը, ընդլայնելով իր գործունեությունը, ընդգրկում է 60-ից ավելի հայ երաժշտասեր երիտասարդներ։ Առաջին համաշխարհային պատերազմը խանգարում է նրա գործունեությանը։ Ետպատերազմյան տարիներին, երբ նրա գեղարվեստական ղեկավարն ու դիրիժորը դարձավ Սարգիս Պալթայանը, երգչա-

խումբը վերականգնեց իր նախկին համբավը։ Նույն ժամանակամիջոցում (1920) Կոմիտասի սան Բարսեղ Կանաչյանը Վառնա քաղաքում 20—25 երաժշտասեր երիտասարդներից կազմակերպում է երգչախումբ, որը ելույթներով հանդես է գալիս նաև Պլովդիվում և Սոֆիայում, կոմիտասյան հայաշունչ երգերով մեծ ոգևորություն առաջացնում ունկնդիրների մեջ[40]։

1922—1926 թթ. Ս. Պալթայանի ժրաջան աշխատանքի շնորհիվ «Վահան Մանուելյան» երգչախումբը բազմաթիվ ելույթներ է ունենում Բուլղարիայի հայաշատ քաղաքներում, տարածելով հայ երգն ու երաժշտությունը հայ և բուլղար երաժշտասերների շրջաններում։ 1927 թ. ապրիլի 7-ին Բեթհովենի մահվան 100-ամյակին նվիրված փառատոնում բարձր գնահատվեց երգչախմբի կատարողական արվեստը։ 1930-ական թվականներին «Վահան Մանուելյան» երգչախումբը դարձավ գաղութի սիրված մշակութային կոլեկտիվը։ Այն վերածվեց հայ երգասերների դպրոցի։ «Վահան Մանուելյանի» օրինակով Բուլղարիայի հայաշատ քաղաքներում՝ Ռուսեում, Վառնայում և Սոֆիայում նույնպես հիմնվեցին քառաձայն երգչախմբեր։

1932 թ. Ռուսե քաղաքի ՀՕԿ-ի մասնաճյուղին կից հիմնվեց «Կոմիտաս» երգչախումբը։ 25 երիտասարդներից կազմված երգչախմբի հիմնադիրներն էին Գրիգոր Երամյանը, Արթո Պերպերյանը, Թոթո Փափազյանը և Տիգրան Տյուլկերյանը։ Երգչախմբի դիրիժորներն էին Աբել Կարապետյանը և Հակոբ Նգանյանը։ Հետագայում, երբ երգչախումբը մեծացավ, շուրջ 60 անդամներով, դիրիժոր դարձավ Մինչո Անգելովը[41]։ Երգչախումբը իր անդրանիկ համերգը տվեց 1934 թ. Ռուսեի հայ հասարակայնության համար։ 1937 թ. Ռուսեի երգչախմբերի համաքաղաքային մրցույթում «Կոմիտաս» երգչախումբը գրավեց պատվավոր տեղ։

Այդ տարիներին Ռուսեում գործում էր նաև քառաձայն «Հայ գուսան» երգչախումբը։ 1938 թ. երկու երգչախմբերը միացան և սկսեցին համատեղ ելույթներ ունենալ Ռուսեի հայ և բուլղար հասարակայնության առջև։ Միացյալ «Կոմիտաս—Հայ գուսան» երգչախումբը համաքաղաքային համբավ վայելեց։ Նրա համերգները հաճախ հաղորդվում էին Ռուսեի քաղաքային ռադիոյով[42]։ Երգչախումբը կատարում էր հայկական, բուլղարական և այլ ժողովուրդների երգեր։ Միացյալ երգչախմբի դեկավար-դիրիժորն էր դաշնակահար Ռ. Միհրանյանը։

1937 թ. Սոֆիայում հիմնվեց «Քնար» հայկական քառաձայն երգչախումբը՝ 80 երիտասարդներով։ Նույն թվականի վերջին երգչախումբը Ս.Վ-

րամ Վաչևի դեկավարությամբ ելույթ ունեցավ հայ և բուլղար ունկնդիրների առջև։ Բուլղարական, հայկական և ռուսական ժողովրդական երգերի հիանալի կատարողականության համար «Քնար» երգչախումբը արժանացավ գովասանքի։ Ունկնդիրների մեջ էր նաև բուլղարական թագավորական սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր, անվանի երաժշտագետ Սաշո Պոպովը։ Համերգի վերջում նա ասաց. «Ինչ լսեցի, հիանալի էր, ինչ երգեցին՝ լավ էր, պահպանեցեք այդ երգչախումբը»[43]։

1933 թ. Պլովդիվում հիմնվեց երկրորդ քառաձայն երգչախումբը՝ «Շնորհալին», որի դեկավարն էր Սարգիս Պալթայանը։ ՀՕԿ-ի մասնաճյուղերին կից ստեղծված երգչախմբերը իրենց ազգանվեր գործունեությունը շարունակեցին մինչև կազմակերպության արգելումը բուլղարական կառավարության կողմից։

Բուլղարահայ գաղութում գործել են նաև բազմաթիվ գործիքային անսամբլներ (մանդոլին, կիթառ, ջութակ, ժողովրդական գործիքների), որոնք մասնակցել են օպերետների, պարերեկույթների ու ցերեկային հանդեսների։

Դեռևս 1881 թ. ապրիլին Շումենում հիմնվել էր առաջին նվագախումբը՝ Միքայել Շաֆրանի դեկավարությամբ։ Հետագայում Օհան Հակոբյանի դեկավարությամբ հիմնվել էր «Կռունկ» մանդոլինի խմբակը[44]։

Դարասկզբին Շումենում, Պլովդիվում, Ռուսեում, Վառնայում գործել են տարբեր նվագախմբեր, որոնք առաջին համաշխարհային պատերազմից հետո վերաճեցին ու վերածվեցին ջազային գործիքային անսամբլների։ 1915 թ. Վառնայում գործում էր «Գողթան» վոկալ-գործիքային անսամբլը[45]։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո «Վահան Մանուելյան» գեղարվեստասիրաց միությանը կից ստեղծվում են մանդոլինի և ջութակի խմբակներ։ Մանդոլինի խումբը դեկավարում էր Կարո Կարապետյանը, իսկ ջութակինը՝ Հ. Աղասյանը։ Ռուսեում գործում էր «Արաքս» նվագախումբը։ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին բազմաթիվ ջազային անսամբլներ գործում էին «Քրիստափոր», «Դոկտոր Պենևե», «Վարանդյան», «Շանթ», «Պետո Սերեմճյան» և այլ ակումբներին կից։

Կերպարվեստն ու գեղանկարչությունը փոքր տեղ են գրավել բուլղարահայ գաղութի մշակութային կյանքում։ Արվեստի այդ բնագավառները աղմնավորվել են հայկական դպրոցներում և գեղարվեստասիրաց միություններում։ Դեռ 1905 թ. Պլովդիվի «Վահան Մանուելյան» գեղարվեստասիրաց միությանը կից հիմնվել էր գեղանկարչության խմբակ, որտեղ

հայ պատանիները և երիտասարդները սովորում էին գեղանկարչություն, կազմակերպում ցուցահանդեսներ[46]։ Գաղութում առանձին անհատներ պրազվել են գեղանկարչությամբ որպես սիրողներ։

1896 և 1922 թթ. Բուլղարիայում հաստատված հազարավոր հայերի մեջ եղել են նաև անհատներ, որոնք մասնագիտորեն զբաղվել են կերպարվեստով ու գեղանկարչությամբ։ Նրանք ավարտել են Արևմտյան Եվրոպայի, Ռուսաստանի և Բուլղարիայի կերպարվեստի և գեղանկարչության բարձրագույն ուսումնական հաստատությունները։ Բուլղարահայ առանձին երիտասարդներ ավարտելով բուլղարական Գեղարվեստի ակադեմիան, հասել են զգալի հաջողությունների։ Բուլղարահայ ավագ սերնդին են պատկանում քանդակագործ-նկարիչներ Գրիգոր Ահարոնյանը, տիկին Հայկուհի Հարությունյան-Խաչատուրյանը (Հիլդա), տիկին Կալինե Փապազյանը, Տորք Ջաքարյանը, Տիրան Սարգիսյանը, Հրանտ Անանյանը և ուրիշներ[47]։

Գրիգոր Ահարոնյանը ծնվել է 1896 թ. Թիֆլիսում։ Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա մեկնում է Պետերբուրգ և սովորում Գեղարվեստի ակադեմիայում։ 1923 թ. տեղափոխվել է Բուլղարիա։ Այստեղ ավարտում է Սոֆիայի Գեղարվեստի ակադեմիայի քանդակագործության բաժինը և որոշ ժամանակից հետո մեկնում Փարիզ։ Նրան հաջողվում է խորանալ ռեալիստական արվեստի բնագավառում, մասնակցել «Սալոն դ'օթոն»-ի և 1929 թ. «Սալոն դեզ արտիստ ֆրանսեզ»-ի ցուցահանդեսներին և արժանանալ բարձր գնահատականի։ 1930 թ. նա վերադառնում է Սոֆիա։ Նրա ուշագրավ գործերից են բուլղար հեղափոխականներ Քրիստո Բոտևի, Պենչո Յավորովի, «Քանդակագործ Անդրեևը», «Ննգրուհին», «Վիդան», «Հայուհին» կիսանդրիները։

Գրիգոր Ահարոնյանը կազմակերպել է ինքնուրույն ցուցահանդեսներ։ 1939 թ. նկարիչ Տիրան Սարգիսյանի հետ Սոֆիայում կազմակերպում է ցուցահանդես, ներկայացնելով իր լավագույն ստեղծագործությունները՝ «Հեյլենուհու գլուխը» և «Պորտրետ» դիմանկարները։ Գ. Ահարոնյանը նաև մանկավարժ էր և հասարակական գործիչ։ Նա Սոֆիայի «Մեսրոպյան» Ճեմարանում դասավանդում էր արվեստի պատմություն։ Բուլղարիայի «Ռուս նկարիչների միության» հիմնադիրներից էր և նրա երկարամյա նախագահը։

Գրիգոր Ահարոնյանի ստեղծագործությունները տոգորված են հայրենասիրական շնչով։ Նա մնաց որպես հայ արվեստագետ, չնայած երկար տարիներ ստեղծագործեց արտասահմանում։ 1946 թ. ներգաղթեց Սո-

վետական Հայաստան և արժանացավ ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի և ժողովրդական նկարչի կոչումների։

Նկարիչ Տիրան Սարգիսյանը ծնվել է 1894 թ. Սիլիստրա քաղաքում։ Սկզբնական կրթությունը ստացել է Սիլիստրայի հայկական դպրոցում։ Հետագայում ավարտում է Սվիշտովի Առևտրական գիմնազիան։ 1914—1915 թթ. ավարտում է Բուխարեստի Բարձրագույն առևտրական ակադեմիան։ Ծառայությանը զուգընթաց զբաղվում է գեղանկարչությամբ։ Իր անդրանիկ ցուցահանդեսը կազմակերպել է 1934 թ., քանդակագործ Գրիգոր Ահարոնյանի հետ և աչքի ընկել իր ռեալիստական նկարներով։ Նրա «Երկու առագաստանավերը Դանուբի վրա» աշխատանքը խոր տպավորություն գործեց բուլղար և օտար գեղանկարիչների վրա։ Տ. Սարգիսյանը ընտրվում է «Բուլղարական արվեստագետների ընդհանուր միության» անդամ և մասնակցում բազմաթիվ ցուցահանդեսների[48]։

Հայկուհի Հարությունյան-Խաչատուրյանը (Հիլդա)[49] ծնվել է 1912 թ. Վառնայում։ 1930 թ. ընդունվում է Սոֆիայի Գեղարվեստի ակադեմիան։ 1935 թ. այն ավարտելուց հետո զբաղվում է գեղանկարչությամբ։ Որպես դիմանկարիչ մասնակցում է «Բուլղարական արվեստագետների միության» կազմակերպած ցուցահանդեսներին և աչքի ընկնում իր «Դոկտոր Ջիդրով», «Միլչո», «Ժեննյա Յանկովա», «Քրիստոսի խաչելությունը» և այլ ստեղծագործություններով։

1938 թ. Հ. Հարությունյան-Խաչատուրյանը կազմակերպեց իր անդրանիկ ցուցահանդեսը Սոֆիայի Գեղարվեստի ակադեմիայի սրահում։ Նա ներկայացրեց 50 բնանկար ու դիմանկար։ Նրա «Վիտոշա» և «Ռոդոպներ» բնանկարներն արժանացան բարձր գնահատականի[50]։

Տորք Ջաքարյանը ծնվել է Կոստանդնուպոլսում և սովորել գեղարվեստասիրաց վարժարանում։ Ավարտելուց հետո աշխատել է որպես բնանկարիչ։ Կոստանդնուպոլսում հանդիպել է հայ մեծ ծովանկարիչ Հովհ. Այվազովսկու հետ։ 1896 թ. հաստատվել է Պլովդիվում, այնուհետև՝ Սոֆիայում։

Երվանդ Անանյանը ծնվել է 1905 թ. Ադրիանուպոլսում և սովորել «Արշակունյաց» դպրոցում։ Հետագայում սովորել է Կոստանդնուպոլսի ֆրանսիական «Սեն Բոնոա» վարժարանում։ Այն ավարտելուց հետո զբաղվել է գեղանկարչությամբ։ 1922 թ. գաղթում է Բուլղարիա։ Նրա ստեղծագործությունների մեջ աչքի են ընկնում «Հանդարտ Միջերկրականը», «Փոթորկից հետո» բնանկարները և այլ մեծ կտավներ։ Սոֆիայում աշխատել է որպես դեկորատոր-բեմադրիչ[51]։

Այսպիսով, XIX դարի վերջից մինչև XX դարի կեսերը բուլղարահայ գաղութում նոր վերելք ապրեցին և առաջընթաց քայլ կատարեցին հայ մշակույթի ու արվեստի տարբեր բնագավառներ, հանգրվանած երկրի մշակույթի բարերար ազդեցության ներքո։ Այն ներդրում էր ինչպես բուլղարական, այնպես էլ հայ մշակույթի հետագա զարգացման գործում։ Բուլղարահայ մշակույթի ու արվեստի զարգացումը մեծապես նպաստեց հայապահպանման գործին։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1944 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ

1. «ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ» ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1944 թ. սեպտեմբերի 9-ին բուլղար աշխատավորները բրկ զեկավարությամբ, կարմիր բանակի անմիջական օգնությամբ տապալեցին բուլղարական միապետական-ֆաշիստական դիկտատուրան և երկրում հաստատեցին «Հայրենական ճակատի» ժողովրդական իշխանություն։

Բուլղար ժողովրդի սոցիալիստական հեղափոխությունը վերացրեց ամեն տեսակի ազգային-սոցիալական խտրականությունն ու ճնշումը, հավասար իրավունքներ տալով ազգային փոքրամասնություններին, նրանց ևս մասնակից դարձնելով սոցիալիզմի հիմքերի կառուցման գործում։ Բուլղարահայ գաղութում արգելվեց դաշնակցության հետագա գործունեությունը։ Հայ կոմունիստների նախաձեռնությամբ միավորվեցին բոլոր հայկական առաջադիմական, հայրենասիրական կազմակերպությունները և հայաշատ քաղաքներում ստեղծվեցին «Հայրենական ճակատ» հայկական տեղական կոմիտեներ։ Հայկական համայնքներում թաղական խորհուրդներն ու հոգաբարձությունները փոխարինվեցին նորերով։

1944 թ. սեպտեմբերի 17-ին բուլղարական ժողովրդական իշխանությունը նախաձեռնեց «Հայրենական ճակատի» երկրորդ ծրագրի իրագործման աշխատանքները (*1944 թ. սեպտեմբերի 9-ին* իշխանության գրավումով և պետական մարմինների փոխարինումը նորերով ավարտվեց առաջին ծրագրի իրականացումը—Ջ. Գ.)։

Երկրորդ ծրագրով ժողովրդական իշխանությունը պետք էր պայմաններ ստեղծեր սոցիալիզմի հիմքերի կառուցման համար։ Անհրաժեշտ էր համախմբել հեղափոխական ուժերը և աշխատավորական լայն շրջաններին ներգրավել նոր հասարակարգի կառուցման գործում։

1944 թ. սեպտեմբերի 21-ին բուլղարական ժողովրդական իշխանության Ներքին գործերի մինիստրի № 137 հրամանով վավերացվեց «Հայրենական ճակատի» բուլղարահայ փոքրամասնության ժամանակավոր կենտրոնական կոմիտեն հետևյալ կազմով. ատենապետ՝ Դաբրիել Դաբրիելյան, ատենադպիր՝ Մարտիրոս Խաչիկյան, գանձապահ՝ Սարգիս Սարգիսյան։ Կոմիտեի անդամներն էին Դավիթ Մ. Դավիթյանը, Սարգիս Փաշաճյանը, Կարապետ Լոկմանյանը, Կարապետ Գուրպանճյանը, Պարույր Մազլումյանը և Գրիգոր Դարբինյանը[1]։

«Հայրենական ճակատի» բուլղարահայ ժամանակավոր կենտրոնական կոմիտեն (առաջամյա վարչության Պուլկարիո Հայ փոքրամասնության—Հ. Ճ.) հայկական թաղական խորհուրդներին և տեղական կոմիտեներին հայտնեց, որ Սոֆիայում ստեղծված է «Հայրենական ճակատի» հայկական կենտրոնական կոմիտե, որը այսուհետև գործելու է որպես ղեկավար մարմին։ Կենտրոնական կոմիտեն տեղերում ուղարկեց առաջին շրջաբերականը, որով պահանջում էր մանրամասն տեղեկություններ հաղորդել տեղերում կատարվող վերափոխումների մասին։

1944 թ. սեպտեմբերի 24-ին տեղի ունեցավ բուլղարահայ թեմական խորհրդի նոր կազմի (Ալեքսան Քյուրքյան, Վ. Յազմաճյան, Ա. Աստարճյան, Գ. Տերեճյան, Ն. Զարչուկյան) անդրանիկ նիստը։ Նիստում ընտրվեց և հաստատվեց Սոֆիայի թաղական խորհրդի կազմը (Կարապետ Գուրպանճյան, Սարգիս Աստարճյան, Վահե Յազմաճյան, Ներսես Զալոյան)[2]։ Նույն թվականի հոկտեմբերի 7-ին հրապարակվեց «Հայրենական ճակատի» բուլղարահայ փոքրամասնության ժամանակավոր կենտրոնական կոմիտեի կոչը, որտեղ նշված էր կապիտալիստական Բուլղարիայում բուլղարահայ փոքրամասնության տնտեսական ու քաղաքական ծանր վիճակը, բուլղարական ֆաշիստական կառավարության բացասական վերաբերմունքը դեպի նրա կենսական հարցերը (աշխատանքի հավասար իրավունքի և բուլղարական քաղաքացիության խնդիրները), որոնց լուծումը տասնամյակներ շարունակ ձգձգվում էր։

Կոչի վերջում ընդգծված էին բուլղարական «Հայրենական ճակատի» կառավարության ծրագրի այն կետերը, որոնցով նախատեսվում էին Բուլղարիայում բնակվող ազգային փոքրամասնությունների տնտեսական ու քաղաքական կյանքի շրջադարձային վերափոխությունները։ Նշված էր 1944 թ. սեպտեմբերի 9-ի հեղափոխության պատմական նշանակությունը, ինչպես բուլղար ժողովրդի, այնպես էլ բուլղարահայերի համար։

Բուլղարահայ առաջադիմական ուժերի գործունեությունը համախմբելու և կազմակերպելու նպատակով 1944 թ. հոկտեմբերի 22-ին Վառ-

նայում հրավիրվեց «Հայրենական ճակատի» հայկական տեղական կոմիտեների կոնֆերանս, որին 12 հայաշատ քաղաքներից մասնակցում էին 60 պատգամավորներ[3]։ Կոնֆերանսը որոշում ընդունեց «Երևան» առաջադիմական միության հիմնադրման և միության օրգան «Երևան» թերթի լույս ընծայման մասին, ինչպես նաև հաստատեց կազմակերպության ծրագիր-կանոնադրությունը։ Ընտրվեց կենտրոնական վարչություն, որի նստատեղին Սոֆիան էր։ «Երևան» թերթի առաջին համարը լույս տեսավ 1944 թ. դեկտեմբերի 1-ին։

1944 թ. հոկտեմբերի 27-ին «Հայրենական ճակատի» բուլղարահայ փոքրամասնության կենտրոնական վարչությունը № 2 շրջաբերականով տեղական կոմիտեներին կարգադրեց արժանավայել նշել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և Հայաստանում սովետական կարգերի հաստատման տարեդարձերը[4]։

1944 թ. դեկտեմբերի 3-ին բուլղարահայ գաղութում առաջին անգամ ազատ պայմաններում նշվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման տարեդարձը։ ԲԲԿ և «Հայրենական ճակատի» ներկայացուցիչները հրապարակային ժողովներում ընդգծում էին Սովետական Միության բազմազգ ընտանիքում հայ ժողովրդի վերածնունդն ու բարգավաճումը, բուլղարահայ փոքրամասնության քաղաքական ու մշակութային զարգացման համար բուլղարական ժողովրդական իշխանության կողմից տրված իրավունքներն ու ազատությունները։

2. ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Բուլղարական «Հայրենական ճակատի» ժողովրդական իշխանության երկրորդ ծրագրում կարևոր տեղ էին գրավում արտաքին քաղաքականության հարցերը, այդ թվում ֆաշիստական Գերմանիայի դեմ պատերազմի վերջին փուլին մասնակցելու որոշումը։

Բուլղար ժողովրդի մասնակցությունը պատերազմին նշանակում էր գերմանական օկուպանտների և ֆաշիզմի դեմ 1941 թ. սկսած դիմադրական շարժման շարունակություն։

1944 թ. հոկտեմբերի 28-ին Բուլղարիայի, Սովետական Միության, Անգլիայի և Միացյալ Նահանգների միջև կնքվեց զինադադար։ Սովետական Միության օգնությամբ Բուլղարիան կարողացավ պահպանել իր տարածքները։ Բուլղարական ժողովրդական կառավարությունը պատերազմ հայտարարեց ֆաշիստական Գերմանիային[5]։ Ազատագրված Բուլղարիան

զարձավ Հայրենական պատերազմի մասնակիցը։ Բազմաթիվ կոմունիստներ ու ռեմսխատներ, որոնք պարտիզանական ջոկատներում մարտնչում էին ֆաշիստական օկուպանտների դեմ, նորաստեղծ բուլղարական ժողովրդական բանակում նշանակվեցին քաղաքական կոմիսարներ։ Բանտերից ու համակենտրոնացման ճամբարներից ազատված բազմաթիվ քաղբանտարկյալներ արձագանքելով «Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար», «Հայրենական ճակատի» և ԲԲԿ կոչին 3-րդ Ուկրաինական ճակատում, բուլղարական առաջին բանակի զորաբաժիններում մասնակցեցին Հարավսլավիայի, Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման համար մղվող մարտերին։

Բուլղարահայերը ևս ԲԲԿ և ՌՄՄ-ի կոչով դարձան «Հայրենական ճակատի» ժողովրդական կառավարության բոլոր ձեռնարկումների մասնակիցը։ Նրանք ևս ժողովրդական կառավարության կոչով իրենց ակտիվ մասնակցությունը բերեցին բուլղար ժողովրդի Հայրենական պատերազմի հաղթական ավարտին։

Բացի պարտիզանական գումարտակների ու կամավորական վաշտերի շարքերում մարտնչող հայ երիտասարդներից, Բուլղարիայի տարբեր վայրերից զորակոչված բազմաթիվ հայ երիտասարդներ աչքի ընկան Հարավսլավիայի ազատագրման համար Ստրացինում, Կրիվա Պալանկայում, Պչինյայում, Կումանովոյում և Սկոպլեում մղված մարտերում։ Հերոսի մահով ընկան Հովհաննես Գալփաքճյանը, Սարգիս Հովհաննիսյանը, Կարո Սերեմճյանը, Ռուբեն Ռուբենյանը և ուրիշներ։

1944 թ. նոյեմբերի 14-ին Սկոպլեի գրավումով բուլղարական բանակի համար ավարտվեց պատերազմի առաջին փուլը։

1945 թ. հունվարին «Հայրենական ճակատի» կառավարությունը ընդհանուր զորակոչ հայտարարեց, համալրեց առաջին բանակի շարքերը, որը շարունակեց իր մարտական ուղին՝ ֆաշիզմի վերջնական ջախջախման համար։ Զորակոչվեցին նաև բազմաթիվ հայ երիտասարդներ։ Նրանցից շատերը Բալկանյան-Դրավյան դիվիզիայի կազմում Դրավոսոբուլի և Դրավոպակոնիա շրջաններում հերոսաբար մարտնչեցին հիտլերականների դեմ, իրենց ցուցաբերած խիզախության համար պարգևատրվեցին սովետական և բուլղարական շքանշաններով ու կրծքանշաններով[6]։ Այդ մարտերի ընթացքում զոհվեցին Սարգիս Ստեփանյանը, Գևորգ Տեմիրճյանը, Կարապետ Միքայելյանը, Վարդան Հակոբյանը և ուրիշներ։

1945 թ. ապրիլի 25-ին Սոֆիայի զինվորական հիվանդանոցում բուժվող մի խումբ հայ զինվորներ նամակ են ուղարկում «Երևան» թերթի խմբագրությանը, որտեղ գրված էր. «Մենք կռվելով մեր երկրորդ հայրենիքի՝ Պուլկարիայի համար, կռված եղանք նաև մեր սիրելի Խորհրդային Հայաստանի համար։ Նմանապես բոլոր ազատամիտ մարդկության նպատակը իրականացնելու համար, որը ամեն ջանք կը թափե, օր առաջ ոչնչացնելու համար այն գազանը, գերմանական շովինիզմը, որը 6—7 տարիներ իվեր մարդկության արյունը կը ծծե։ Անկցի՛ ֆաշիզմը։ Կեցցի՛ ազատամիտ մարդկությունը»[7]։

Զորակոչված բուլղարահայերից բուլղարական բանակների շարքերում 3-րդ Ուկրաինական ռազմաճակատում արիաբար մարտնչեցին ավելի քան 800 հայ երիտասարդներ, որոնք իրենց ավանդը ներդրեցին բուլղար ժողովրդի Հայրենականի հաղթանակի համար։

Այսպիսով, թե՛ բուլղարական դիմադրական շարժման մասնակցող և թե՛ բուլղարական բանակում մարտնչող 1000-ից ավելի բուլղարահայեր պատվով կատարեցին իրենց ինտերնացիոնալ պարտքը եղբայրական բուլղար ժողովրդի հանդեպ ու արժանացան Հայրենական պատերազմի մասնակցի կոչման։ Այդ հերոսներն իրենց արյունով շաղախեցին հայ-բուլղարական դարավոր բարեկամությունը և համագործակցությունը հանուն առաջադիմության, հանուն սոցիալիզմի։

3. ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ

1945 թ. մայիսի 9-ին բուլղար ժողովրդի Հայրենական պատերազմի հաղթական ավարտումով կենսական նոր խնդիրներ ծառացան «Հայրենական ճակատի» ժողովրդական իշխանության առջև, որոնց լուծումը դարձել էր օրակարգի հարց։ Այդ խնդիրների լուծումը կօգներ հասարակական-քաղաքական խոր վերափոխումներ իրականացնել սոցիալիզմի կառուցման ճանապարհին։ Դրա համար առաջին հերթին հարկավոր էր օրինականացնել և հաստատել «Հայրենական ճակատի» ժողովրդական իշխանությունը՝ ժողովրդական ժողովի միջոցով։ Անհրաժեշտ էր ընտրություններ անցկացնել ժողովրդական ժողովի (պառլամենտ) նոր կազմի համար։

Ընտրությունների նախօրեին իրենց գործունեությունը աշխուժացրին տապալված բուրժուազիայի մնացորդները։ Նրանք ստեղծեցին օպոզիցիոն խմբավորում, որը արտաքին օգնությամբ հանդես էր գալիս «Հայրենական ճակատի» ժողովրդական իշխանության նախաձեռնությունների դեմ, այդ թվում նաև ժողովրդական ժողովի ընտրությունների դեմ։

1945 թ. նոյեմբերին Գեորգի Դիմիտրովը Սովետական Միությունից վերադարձավ Բուլղարիա։ 1945 թ. նոյեմբերի 18-ին անցկացվեցին ընտրություններ և «Հայրենական ճակատի» ժողովրդական իշխանությունը

փայլուն հաղթանակ տարավ երկրում գործող հակահեղափոխական օպոզիցիայի դեմ[8]։ Նորընտիր ժողովրդական ժողովն ընդունեց մի շարք կարևոր որոշումներ, որոնք ամրապնդում էին ժողովրդական իշխանության հիմքերը։

1946 թ. ընդունվեցին օրենքներ ազգարային ռեֆորմի և ժողովրդական հանրաքվեի մասին։ Վերջինի միջոցով 1946 թ. սեպտեմբերի 15-ին Բուլղարիան դարձավ Ժողովրդական Հանրապետություն։ Այնուհետև ընդունվեց օրենք Ժողովրդական մեծ ժողովի[9] հրավիրման մասին, որպեսզի վերջնականապես օրինականացվեր և հաստատվեր Բուլղարական Ժողովրդական Հանրապետությունը։

***Ժողովրդական մեծ ժողովը** ընդունելու էր նաև հանրապետության նոր Սահմանադրությունը։ Այս բոլոր վերափոխումներին զուգահեռ ԲԿԿ ձգտում էր ամրապնդել իր դիրքերը որպես երկրում իրականացվող հեղափոխական-քաղաքական վերափոխումների նախաձեռնող և ղեկավար կուսակցություն։*

1946 թ. հոկտեմբերի 27-ին տեղի ունեցան Ժողովրդական մեծ ժողովի ընտրությունները։ Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո բազմաթիվ հայ կոմունիստներ և ռեմսխատներ բուլղարական ժողովրդական իշխանության կողմից առաջ քաշվեցին պատասխանատու կուսակցական և պետական աշխատանքներում։ 1946 թ. հոկտեմբերի 27-ին Ժողովրդական մեծ ժողովի ընտրությունների ժամանակ Սոֆիայում, Պլովդիվում, Վառնայում և այլուր տեղի ունեցան ժողովներ, որտեղ ելույթ ունեցան ժողովրդի թեկնածուները, այդ թվում և հայեր՝ Գաբրիել Գաբրիելյանը, Մաքրի Աբրահամյանը[10] և ուրիշներ։ Այդպիսի մի ժողովում Վառնայի հայերն ընդունեցին հետևյալ բանաձևը. «Մենք, Վառնայի հայերս, միահամուռ կերպով գորավիգ պիտի հանդիսանանք ՕՖ-ի (Հայրենական Ճակատի) թեկնածուներուն և ոչ մեկ քվե պիտի չտանք չարանենգ ու կաշառված ընդդիմադիրներուն, որոնք միջազգային հետադիմական դործակալներն են Պուլկարիո մեջ։ Հայերս պիտի քվեարկենք ՕՖ-ի թեկնածուներուն, որովհետև չենք կրնար մոռնալ, որ միայն «Հայրենական Ճակատի» իշխանությունն է, որ կարելիություն տվավ մեր իրական բաղձանքն եղող սիրելի Հայրենիքին՝ Սովետական Հայաստանի հետ հաղորդակցության մեջ մտնելու։

Կեցցե՛ Հայրենիքի Ճակատը և անոր հիմնադիր Գեորգի Դիմիտրովը։

Կեցցե՛ Պուլկար Ժողովրդական Հանրապետության և Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության եղբայական ընկերակցությունը»[11]։

Ժողովրդական Մեծ ժողովի ընտրություններն անցան «Հայրենական Ճակատի» ժողովրդական իշխանության հաղթանակով։ Օրակարգի առաջին հարցը ժողովրդական տնտեսության վերականգնման երկամյա պլանի ծրագրի ընդունումն էր։

1947 թ. փետրվարի 10-ին Սովետական Միության անմիջական օգնությամբ Փարիզում ստորագրվեց արդարացի խաղաղության պայմանագիր Բուլղարական Ժողովրդական Հանրապետության և դաշնակից պետությունների միջև։

1947 թ. ապրիլին Բուլղարական Ժողովրդական Հանրապետությունը ընդունեց ժողովրդական տնտեսության վերականգնման երկամյա պետական տնտեսական պլանը։ Չնայած այն հանգամանքին, որ այդ պլանը իրականացվելու էր արդյունաբերության և գյուղատնտեսության մասնավոր սեփականության առկայության դժվարին պայմաններում, այնուամենայնիվ 1948 թ. վերջին բանվոր դասակարգի վերահսկողության ներքո իրականացվեցին այնպիսի հեղափոխական ձեռնարկումներ, ինչպիսիք էին արդյունաբերության և բանկերի ազգայնացումը, տրանսպորտի, ներքին և արտաքին առևտրի պետականացումը և այլն։ Վերացվեց բուլղարական բուրժուազիայի գործունեությունը երկրի տնտեսական կյանքում։ Երկու տարվա ընթացքում սոցիալիստական սիստեմը իշխող դարձավ արդյունաբերության, առևտրի և տրանսպորտի բնագավառներում։ 1948 թ. վերջին հանրային սեկտորը կազմում էր 97 տոկոս[12]։ Այդ տարիներին ԲԿԿ(Կ) և ՌՄՄ-ն առաջ քաշեցին Բուլղարիայում խոշոր նորակառույցներ ստեղծելու բրիգադիրական հսկայական շարժում։

Բուլղարահայ «Երևան» առաջադիմական կազմակերպության կենտրոնական վարչությունն իր հերթին մշակեց հատուկ ծրագիր, որտեղ նախատեսվում էր հայաշատ քաղաքներում ստեղծել հայկական երիտասարդական բրիգադիրական խմբեր։ «Պուլկար ժողովրդական Հանրապետության բրիգադիր ըլլալը կը նշանակե արժանի քաղաքացի դառնալ Սովետական Հայաստանին»[13]։ Այս նշանաբանով Բուլղարիայի բազմաթիվ քաղաքներում ստեղծվեցին հայկական աշխատանքային բրիգադներ, որոնք մեկնեցին Բուլղարիայի խոշոր նորակառույցներում աշխատելու։ Շումենի քաղաքի հայ երիտասարդները օրինակ ծառայեցին բուլղարահայերի համար։ Նրանք ստեղծեցին «Գեորգի Դիմիտրովի» անվան 15 հոգուց բաղկացած երիտասարդական աշխատանքային բրիգադ և մեկնեցին Կոջաբալական ճանապարհաշինական աշխատանքներին մասնակցելու։

«Երևան» առաջադիմական կազմակերպության կենտրոնական վարչությունը հատուկ շրջաբերականով կոչ արեց բուլղարահայերին ակտի-

վորեն մասնակցել բրիգադիրական շարժմանը՝ օրինակ վերցնելով Շումենի բրիգադիրներից[14]։ Սոֆիայում ստեղծվեցին «Ստեփան Շահումյանի», Վառնայում՝ «Հարություն Պողոսյանի» անվան բրիգադներ, որոնք մեկնեցին Պերնիկ-Վոլուեկ, Հային բողազ, Դիմիտրոգրադ օբյեկտները։

«Երևան» միության մասնաճյուղը Պլովդիվում կազմակերպեց 40 հոգուց բաղկացած բրիգադ, որի անդամները մեկնեցին Պերսենկ Պրըվենեց, Յուգովո Մանաստիրի և «Մլադեժկի հըլմ» շինարարական օբյեկտները[15]։ Բրիգադներ ստեղծվեցին նաև Բուլղարիայի հայաշատ մյուս քաղաքներում։

1947—1948 թթ. վերականգնման պետական երկամյա պլանի կատարման ու գերակատարման համար դրամական պարգևներով ու աշխատանքային շքանշաններով պարգևատրվեցին բազմաթիվ հայ բրիգադիրներ ու բրիգադավարներ, որոնք իրենց աշխատանքով աչքի ընկան երկրի մի շարք նորակառույցներում։ Այդ աշխատանքներում հարվածային կոչման արժանացան Մինաս Մինասյանը՝ Շումենից, Սիմոն Գավաֆյանը՝ Վառնայից, Գրիգոր Պարագյանը՝ Սոֆիայից, Գևորգ Աբրահամյանը և Հակոբ Մերկերյանը՝ Ստարա Զագորայից և ուրիշներ։

Բուլղարական «Հայրենական ճակատի» ժողովրդական իշխանության կազմակերպած բրիգադիրական շարժմանը մասնակցեցին 800-ից ավելի բուլղարահայեր։

1947—1948 թթ. Ժողովրդական Բուլղարիայի հիմնարկ-ձեռնարկություններում իրենց արտադրական պլանների կատարման ու գերակատարման համար պարգևատրվեցին բազմաթիվ հայեր։ Բուլղարական Ժողովրդական Հանրապետության Մեծ ժողովի նախագահությունը «Ժողովրդական աշխատանքի հերոսի» շքանշանով պարգևատրեց Պազարջիկի քարհանքերի քարկոփ բանվոր Հարություն Հարությունյանին, «Մարիցա» քարածխի հանքերի հանքափոր Հակոբ Փիլիպոսյանին, Պլովդիվի «Բագրա» տեքստիլ գործարանի բանվորուհի Արշա Խաչատրյան-Տիհոմիրովային, Ռուսեի «Վելա Պիսկովա» տեքստիլ կոմբինատի ջուլհակուհի էֆտիմիա Սահակյանին և ուրիշների[16]։ Սիլիստրայից Թագուհի Կարապետյանը հարվածայինի շքանշանով պարգևատրվեց Ռուինո-Սամուիլ-Սիլիստրա երկաթգծի աշխատանքներին մասնակցելու համար[17]։

1947 թ. առաջավորի կոչման արժանացավ «Հայ ժողովրդական բանկի» կոլեկտիվը։ Այն ստեղծվել էր 1945 թվականին, Սոֆիայում՝ Բուլղարիայում գործող հայկական կոոպերատիվ հիմնարկ-ձեռնարկությունների հիման վրա։ Սոֆիայի «Թրակիա» և «Սևան» բանկերի, Պլովդիվի «Արաքսատ» սպառողական կոոպերացիայի և վարկային բանկի վարչությունները որոշել էին իրենց կապիտալները կենտրոնացնել ընդհանուր բանկի մեջ և այն անվանել «Հայ ժողովրդական դրամատուն (բանկ)»[18]։ 1948 թ. ապրիլի 11-ին տեղի ունեցավ «Հայկական ժողովրդական բանկի» ընդհանուր ժողովը։ Բանկի հաշվետվությունից պարզվել էր, որ այն ունեցել է 1010728 լևա շահույթ, որ 221000 լևա տրամադրվել է ներգաղթի ֆոնդին, Հայկական ազգային վարժարանի ճաշարանին՝ 121000 լևա և 222000 լևա՝ բանկի լավագույն աշխատողներին որպես պարգևատրում։ Մնացած 446728 լևան տրամադրվել էր պահեստի ֆոնդին։ Ընդհանուր ժողովում առաջարկություն եղավ «Հայկական ժողովրդական բանկը» միացնել բուլղարական ժողովրդական բանկերի հետ։ Այսպիսով, հայկական վարկային կոոպերատիվ բանկերը միացան բուլղարական ժողովրդական բանկերի ճյուղերին ինչպես առանձին քաղաքներում, այնպես էլ մայրաքաղաք Սոֆիայում[19]։

Երկամյա պետական պլանի կատարումով ժողովրդադեմոկրատական կառավարությունը կատարեց սոցիալ-տնտեսական վերափոխումներ և բուլղարական բուրժուազիային հեռացրեց երկրի տնտեսական կյանքիղեկավար դիրքերից։ 1947 թ. վերջին, և 1948 թ. սկզբին ազգայնացվեցին բանկային կապիտալը, խոշոր առևտուրը և տրանսպորտը։ 1948 թ. վերջին Բուլղարիան վերականգնեց տնտեսության բոլոր բնագավառները և հնարավորություն ստացավ շարունակելու հետագա զարգացումը։

«Մեր երկիրը,— ասաց Գևորգի Դիմիտրովը ԲԿԿ V համագումարում,— արդեն ընթանում է սոցիալիզմի ուղիով։ Առկա են հիմնական նախադրյալները։ Դրանք են. ժողովրդադեմոկրատական իշխանությունը, պրոլետարիատի դաշինքը գյուղացիության հետ՝ պրոլետարիատի ղեկավարությամբ, արդյունաբերություն, որը գտնվում է ժողովրդական իշխանության տնօրինության ներքո նոր տնտեսական քաղաքականության հիման վրա, արտադրողական ուժերի արագ զարգացում, կոոպերացված գյուղատնտեսություն (ԹԿՅՀ) և արհեստագործական կոոպերացիաներ։ Կարևոր նախադրյալ է ՍՍՀՄ-ի եղբայրական օգնությունը և ժողովրդադեմոկրատական երկրների հետ տնտեսական սերտ համագործակցությունը, որոնք ապահովում և արագացնում են սոցիալիզմի կառուցումը մեր երկրում»[20]։ Այս ամբողջը հիմք ծառայեց երկրի տնտեսությունը պլանավորելու համար և համագումարը հաստատեց 1949—1953 թթ. առաջին պետական հնգամյա պլանը։

1948 թ. մարտին, Մոսկվայում, Սովետական Միության և Բուլղարական Ժողովրդական Հանրապետության միջև ստորագրվեց բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության 20-ամյա պայմա-

նագիր, որը մեծապես նպաստեց Բուլղարիայում իրագործվող սոցիալիստական վերափոխումներին։ Առանց այդ պայմանագրի հնարավոր չէր Բուլղարիայում սոցիալիզմի նյութատեխնիկական հիմք ստեղծել։

ՍՍՀՄ-ի անմիջական օգնությամբ Բուլղարիայում ստեղծվեցին ծանր և թեթև արդյունաբերության ճյուղեր։ Սովետական սարքավորումների մի մասը կազմում էին Հայաստանից ներմուծվող մետաղամշակման մեքենաների, տրանսֆորմատորների, գեներատորների, էլեկտրատեխնիկական և քիմիական արդյունաբերության սարքավորումների կոմպլեքսները։ Այդ հարաբերություններն իրենց հետագա զարգացումն ստացան 1967 թ. ստորագրված նոր պայմանագրով, որը փոխարինելու եկավ 1948 թ. պայմանագրին։ Նոր պայմանագիրը ապահովեց էկոնոմիկայի առավել մեծ զարգացումը՝ մեծապես նպաստեց երկու երկրների միջև տնտեսական, քաղաքական, գիտական և ռազմական համագործակցությանը[21]։

Բուլղարիայում սոցիալիզմի հիմքերի կառուցման գործում իրենց ավանդն ունեն նաև բուլղարահայերը։ Առաջին հնգամյակի սկզբին Սոֆիայի հայ կոշկակարները հիմնեցին «Ստեփան Շահումյանի» անվան կոշկակարական արտադրական կոոպերացիան, որը 1951 թ. Պլովդիվի տոնավաճառում ստացավ փոխանցիկ դրոշը և պարգևատրվեց 20000 լևայով։ 1955 թ. այն արժանացավ նաև կոոպերացիաների միության փոխանցիկ դրոշին[22]։

Բուլղարահայ արհեստավորներն ու բանվորները Բուլղարիայի հայաշատ քաղաքներում հիմնեցին մետաղամշակման, կոշկակարական, ոսկերչական և այլ արտադրական կոոպերացիաներ։ Այդ կոոպերացիաների արտադրական միավորների հիմքի վրա հետագայում՝ երկրորդ, երրորդ և չորրորդ հնգամյակների տարիներին, բարձրացան գործարաններ։ Այդպիսիներից էին Վառնայի «Արարատ» մետաղամշակման կոոպերացիան, որը միացավ «Պոբեդա» կոոպերացիային և վերածվեց հսկայական արտադրական ձեռնարկության։

Անցյալում հայ գործարանատերերին պատկանող հիմնարկությունների հիման վրա 1949 թ. կազմակերպվեցին արտադրական տարբեր միավորներ՝ «Դունավսկա կոպրինա», «Սիլվա», «Կոպրինա» մետաքսաթելի գործարանները և մի շարք ուրիշներ։ Այդ գործարաններում աշխատող հայ բանվոր-բանվորուհիները, գերակատարելով իրենց հնգամյա առաջադրանքները, պարգևատրվեցին շքանշաններով և կրծքանշաններով։

Սոցիալիստական շինարարության տարիներին, հատկապես Սովետական Հայաստանի 30-ամյակի առթիվ, բուլղարահայ առաջադիմական «Երևան» կազմակերպության կենտրոնական վարչությունը հայ աշխատավորներին կոչ արեց սոցիալիստական մրցություն ծավալել հիմնարկ-ձեռնարկություններում։ Առաջին հնգամյակի տարիներին բազմաթիվ հայ բանվոր-բանվորուհիներ արժանացան առաջավորների և հարվածայինների կոչման և պետական մրցանակներ ու դրամական պարգևներ ստացան։

Առաջին հնգամյակի տարիներին բուլղարահայ աշխատավորները Սոֆիա, Պլովդիվ, Վառնա, Ռուսե, Բուրգաս քաղաքներում և այլուր աչքի ընկան առաջին հերթին մետաքսաթելի, տեքստիլ և կոշիկի արդյունաբերության բնագավառներում[23]։ Պայծառ Յաղուպյանը տեքստիլ արդյունաբերության մեջ արժանացավ ոսկե մեդալակրի կոչման[24]։

1951 թ. առաջին հնգամյակի 3-րդ տարում բուլղարական ժողովրդական ժողովի նախագահությունը արդյունաբերության, շինարարության ու տրանսպորտի մեջ ձեռք բերած հաջողությունների համար մի շարք առաջավոր բանվոր-ծառայողներին պարգևատրեց պետական մրցանակներով ու շքանշաններով, այդ թվում Հասկովոյի «Սիլվա» մետաքսաթելի գործարանի բանվորուհիներ Աննիկ Թովմասյանին, Հերմինե Նուրիկյանին, Սրբուհի Մարկոսյանին, Ռուսեի քաղաքային սովետի դեպուտատ «Դունավսկա կոպրինա» մետաքսաթելի գործարանի երկարամյա դիրեկտոր Արթո Պերպերյանին, Թորգոմ Հեքիմյանին և Էֆտիմիա Սահակյանին[25]։ Պետական առաջին հնգամյակը Բուլղարիայում ավարտվեց հաջողությամբ՝ արդյունաբերության և գյուղատնտեսության բոլոր բնագավառներում։ 1953 թ. Բուլղարական ժողովրդական Հանրապետության կառավարությունը ընդունեց պետական երկրորդ հնգամյա պլանը։ Նոր հնգամյակի հիմնական խնդիրն էր՝ ավարտել անցման ժամանակաշրջանը։ Հնգամյակի տարիներին շրջադարձային նշանակություն ունեցան 1956 թ. ԲԿԿ Կենտկոմի Ապրիլյան պլենումի որոշումները, որոնք բխում էին ՍՄԿԿ XX համագումարի որոշումներից։ Այդ որոշումները բարերար ազդեցություն ունեցան Բուլղարիայում նոր հասարակարգի հետագա զարգացման համար։ Պլենումը, որը տեղի ունեցավ 1956 թ. ապրիլի 2—6-ը, սուր քննադատության ենթարկեց անհատի պաշտամունքը և մերժեց այն որպես անհամատեղելի երևույթ լենինյան սկզբունքներին[26]։

Պլենումի որոշումներում կարևոր տեղ գրավեցին պետական ղեկավարման հարցերը, հատկապես պայքարը դոգմատիզմի և սեկտանտական սխալների դեմ։ Պլենումը որոշեց վերացնել անհատի պաշտամունքի հետ կապված բոլոր դրսևորումները, հասարակական-քաղաքական ակտիվ գործունեության մեջ ներգրավել աշխատավոր զանգվածներին։

1958 թ. ավարտվեց գյուղատնտեսության կոլեկտիվացումը և Բուլ-

դարիան դարձավ աշխարհում երկրորդ պետությունն իր սոցիալիստական գյուղատնտեսությունով։ Զգալի էին հաջողություններն արդյունաբերության և մշակույթի ասպարեզներում։ Ընդլայնվեց գիտատեխնիկական համագործակցությունը սոցիալիստական երկրների, առաջին հերթին՝ Սովետական Միության հետ։ Բուլղարիան դարձավ սոցիալիստական երկրների Տնտեսական Փոխօգնության խորհրդի ակտիվ մասնակիցը[27]։

Երկրորդ հնգամյակի տարիներին Սոֆիայի հայ աշխատավորները բարձր գնահատականի արժանացան բուլղարական կառավարության կողմից։ ԲԿԿ Սոֆիայի քաղաքային կոմիտեի և «Երևան» միության կենտրոնական վարչության նախաձեռնությամբ կազմակերպվեց հանդիպում հայ առաջավոր բանվոր-բանվորուհիների հետ[28]։ Նրանց շարքերում էին ռացիոնալիզատորներ և կոնստրուկտորներ՝ այդ թվում էներգետիկ Հայկ Թագվորյանը, «6 սեպտեմբերի» գործարանի կոնստրուկտոր Երվանդ Սիլիկճյանը և ուրիշներ[29]։

Հանդիպմանը բուլղարահայ թեմական խորհրդի նախագահ Օնիկ Ասլանյանը իր ելույթում ասաց. «Բուլղար Ժողովրդական Ռեսպուբլիկայի հնգամյակի ժամկետի կրճատումով ձեռք բերելիք շինարարությունների իրագործումով, մեր երկիրը պիտի ծաղկի ու կյանքը պիտի դառնա ալ ավելի երջանիկ»[30]։

Բուլղարիայում սոցիալիզմի հիմքերի կառուցման բոլոր նախաձեռնություններում Սոֆիայի հայերը եղել են առաջավոր դիրքերում։ Բուլղարական ժողովրդական տնտեսության զարգացման, IV—VI հնգամյակների տարիներին տասնյակ սոֆիաբնակ հայեր արժանացել են պետական շքանշանների ու կրծքանշանների։

Առաջին-վեցերորդ հնգամյակների ընթացքում Ռուսեի «Դունավակա կոպրինա», «Էլպրոմ», «Նայդեն Կիրով» գործարաններում, ինչպես նաև «Ժիդի», «9 սեպտեմբերի» ֆաբրիկաներում, «Վասիլ Կոլարով» կոմբինատում, «Ռոդոպա» միսկոմբինատում, «Ալեքսանդր Անաստասով» կահույքի գործարանում և այլ հիմնարկ-ձեռնարկություններում բազմաթիվ հայեր աչքի ընկան իրենց աշխատանքային նախաձեռնություններով։ 1964 թ. «Գեորգի Դիմիտրովի» անվան գյուղատնտեսական մեքենաների գործարանի բանվոր Արամ Անտոնյանը առաջավորների շարքում էր Ռուսե-Ջուրջովո «Բարեկամության» կամուրջի շինարարական աշխատանքներում[31]։

Բուլղարահայ առաջավոր բանվորներն իրենց ժրաջան աշխատանքով սիրված ու հարգված քաղաքացիներ դարձան սոցիալիստական Բուլղարիայում։ Նրանք բազմիցս ընտրվեցին որպես ժողովրդական պատգամավորներ՝ երկրի Ժողովրդական ժողովում, օկրուգային և շրջանային ժողովրդական խորհուրդներում։ Արշա Խաչատրյան-Տիհոմիրովան, Պայծառ Յաղուպյանը, Տիրան Բարիքյանը, Արտաշես Ասլանյանը, Տիրան Փափազյանը, Էֆտիմիա Սահակյանը և ուրիշներ քանիցս ընտրվել են Պլովդիվի և Ռուսեի քաղաքային ու շրջանային սովետների դեպուտատներ։

Նույնը տեղի էր ունենում Բուլղարիայի բոլոր հայաշատ քաղաքներում, որտեղ տասնյակ հայեր արժանացան շքանշանների և ժողովրդական պատգամավոր ընտրվելու պատվին։ Բուրգաս քաղաքում ինժեներ-մոնտաժող Դիմիտրովյան մրցանակի եռակի շքանշանակիր Գալուստ Գալուստյանը եղել է Բուրգասի նավթաքիմիական կոմբինատի հիմնադիրներից մեկը և կոմբինատում ԲԿԿ կոմիտեի առաջին քարտուղարը[32]։ Նա բազմիցս ընտրվել է Բուրգասի օկրուգային և քաղաքային սովետների դեպուտատ։ Տարիներ շարունակ եղել է «Երևան» առաջադիմական միության կենտրոնական վարչության անդամ։

Բուլղարական Ժողովրդական Հանրապետությունում բուլղարահայերը ներգրավվելով սոցիալիզմի կառուցման տարբեր բնագավառներում, դուրս եկան երկրի տնտեսական և մշակութային կյանքի լայն ասպարեզ։ Այս պրոցեսն առավել ցայտուն դրսևորվեց սոցիալիզմի կառուցման հետագա հնգամյակներում։ Բուլղարիայի սոցիալիստական զարգացման ընթացքը առաջ բերեց տեղաշարժեր կյանքի բոլոր բնագավառներում։ Արագ թափով կատարվում էր բնակչության ուրբանիզացիան, որն իր արտահայտությունը գտավ նաև բուլղարահայ կյանքում։ Նրանց տեղաշարժը կատարվում էր փոքր քաղաքներից դեպի մեծ քաղաքներ՝ Սոֆիա, Պլովդիվ, Վառնա, Ռուսե, Բուրգաս և այլուր։ Սոցիալիստական Բուլղարիայում բուլղարահայերի կենտրոնացումը մեծ քաղաքներում բարձրացրեց նրանց պրոֆեսիոնալ-տեխնիկական պատրաստվածությունը։ Նշանակալիորեն բարձրացավ նրանց դերը Բուլղարիայի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի ասպարեզներում։ Բուլղարական էկոնոմիկայի ինդուստրացման տարիներին լուրջ փոփոխություններ տեղի ունեցան ինչպես բուլղար, այնպես էլ հայ մտավորականության կազմում։ Ստեղծվեցին ինժեներատեխնիկական բարձրորակ կադրեր։ Առաջ եկան սոցիալիստական աշխատանքի հերոսներ, ռացիոնալիզատորներ, կոնստրուկտորներ։ Դրա հետ միասին փոխվում են բուլղարահայ բանվորների, ծառայողների ու մտավորականության կենցաղն ու սովորությունները, հոգեբանությունը՝ ընդհանրանալով բուլղար ժողովրդի հետ կյանքի բոլոր բնագավառներում։

Բուլղարահայերը թոթափելով տարագրված հայի հոգեբանությունը, այժմ իրենց զգում են սոցիալիստական Բուլղարիայի լիիրավ քաղաքացիներ։

Սոցիալիստական Բուլղարիայի տնտեսության, գիտության և մշակույթի բնագավառներում աշխատանքային շքանշաններ ու մեդալներ են ստացել ավելի քան 360 հայեր։ Այժմ սոցիալիստական Բուլղարիայում չկա մի բնագավառ, որտեղ հայերը չլինեն առաջավորների շարքերում։

4. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԱՂՈՒԹԻ ՆԵՐՔԻՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ

Արմատական փոփոխություններ կատարվեցին նաև գաղութի ներքին ղեկավարման մարմիններում՝ թեմական խորհրդում, թաղական խորհուրդներում և ուսման բնագավառում։

1945 թ. մարտի 4-ին բուլղարական ժողովրդական կառավարության Արտաքին գործերի մինիստրությունը և «Պուլկարիո հայ փոքրամասնության առժամյա վարչությունը» («Հայրենական ճակատի») հրավիրեցին բուլղարահայ փոքրամասնության (ծխական) համայնքային ներկայացուցիչների պատգամավորական ժողով։ Ժողովը պետք է մշակեր ու հաստատեր բուլղարահայ գաղութի ներքին ղեկավարման մարմինների նոր կանոնադրությունը[33]։

Մինչ նոր կանոնադրության մշակումն ու հաստատումը, 1944 թ. սեպտեմբերի 9-ից հետո նշանակված բուլղարահայ թեմական խորհուրդը, առաջնորդարանը հաշվետու էին «Երևան» առաջադիմական կազմակերպության կենտրոնական վարչությանը, որտեղից ստանում էին համապատասխան հրահանգներ ու կարգադրություններ։ Թեմական խորհրդի և թաղական խորհուրդների բյուջեները նույնպես հաստատվում էին «Երևանի» կենտրոնական վարչության կողմից։

Պատգամավորական ժողովում բուլղարահայ թեմի առաջնորդ ընտրվեց մինչ այդ թեմի առաջնորդի տեղապահ՝ Գրիգոր վարդապետ Կարապետյանը։ Ընտրվեց նաև նոր թեմական խորհուրդ։ 1949 թ. բուլղարահայ խորհուրդը մշակեց և ընդունեց նոր կանոնադրություն՝ գաղութի կրոնական-եկեղեցական գործերը վարելու համար։ Նույն թվականի վերջին բոլոր նախսենյան քաղաքացիություն ունեցող հայերն ընդունեցին բուլղարական քաղաքացիություն՝ համահավասար իրավունքներով[34]։

Բուլղարական ժողովրդական («Հայրենական ճակատի») կառավարությունը սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխությունից հետո անջատեց եկեղեցին պետությունից։ Վերացվեց կրոնի ուսուցումը դպրոցներում, այդ թվում նաև հայկական դպրոցներում։ Տեղի ունեցան փոփոխություններ թաղական խորհուրդների, թեմական խորհրդի և առաջնորդարանի փոխհարաբերություններում։ Վերացվեցին հոգաբարձությունները, քանի որ հայկական դպրոցներն անցան բուլղարական պետության հովանավորության ներքո և նրանց ֆինանսավորումն ու կրթական ծրագրերի մշակումը կատարվում էր ժողովրդական իշխանության լուսավորության մինիստրության կողմից։ Վերացվեցին նախկինում գործող թաղական խորհուրդներին կից «աղքատախնամ» և «դատաստանական» մարմինները։

Նոր կանոնադրության համաձայն թեմական խորհուրդն այժմ ղեկավարում էր միայն հայ առաքելական եկեղեցիների գործունեությունը և լուծում եկեղեցական-կրոնական հարցեր։

Բուլղարահայ առաքելական-լուսավորչական եկեղեցու բարձրագույն մարմինը՝ թեմական պատգամավորական ժողովը հրավիրվելու էր 3 տարին մեկ, բուլղարական կառավարությանը կից դավանանքի կոմիտեի տեսչության համաձայնությամբ։

Նոր կանոնադրության համաձայն պատգամավորական ժողովին մասնակցելու էին երկրի առավել մեծ քաղաքների հայկական համայնքների կողմից ընտրված ներկայացուցիչները (1000 շունչից ընտրվում էր մեկ պատգամավոր)։ Մինչև 3000 շունչ ունեցող հայ համայնքը ընտրում էր երկու պատգամավոր, իսկ ավելի շնչի դեպքում՝ երեք։ Յուրաքանչյուր պատգամավոր ուներ մեկ ձայնի իրավունք (նախկինում պատգամավորը կարող էր ունենալ երկու, կամ ավելի ձայնի իրավունք, եթե լիազորվում էր երկու, կամ ավելի համայնքների կողմից—Զ. Գ.)։

Բոլոր համայնքներից հայ քահանաներն ի պաշտոնե մասնակցում էին թեմական պատգամավորական ժողովին և միաժամանակ թեմական խորհրդին կից հոգևոր խորհրդի անդամներ էին։

Ըստ նոր կանոնադրության 7 կամ 9 անդամներից և փոխարինողներից բաղկացած թեմական խորհուրդն ընտրվում էր երեք տարի ժամկետով։ Թեմական խորհուրդն ուներ նախագահ, փոխնախագահ, քարտուղար, գանձապահ և գույքապահ։ Թեմի առաջնորդը կամ տեղապահը ընտրվում էր երեք տարի ժամկետով և իր գործունեության մասին հաշվետու էր թեմական խորհրդին։ Թեմական խորհրդին էին ենթարկվում բոլոր եկեղեցական խորհուրդները, որոնք այժմ գործում էին տեղերում, հայ առաքելական-լուսավորչական եկեղեցիներին կից։ Եկեղեցական վարչությունները ընտրվում էին մեկ տարի ժամկետով։ Ընտրելու և ընտրվելու իրավունք ունեին բոլորը՝ և՛ կանայք, և՛ տղամարդիկ։ Եկե-

ղեցական վարչությունները բաղկացած էին 5—7 հոգուց։ Յուրաքանչյուր եկեղեցական վարչություն ուներ նախագահ, քարտուղար և գանձապահ[35]։

Այսպիսով սոցիալիստական Բուլղարիայում բուլղարահայ թեմական խորհրդի և եկեղեցական վարչությունների գործունեությունը ստացավ նոր բովանդակություն՝ սոցիալիստական Սահմանադրության հիման վրա՝ պաշտպանելու հայ աշխատավորների խղճի ու դավանանքի ազատությունն ու իրավունքները։

1951 թ. բուլղարահայ թեմի առաջնորդ Դրիգոր եպիսկոպոս Կարապետյանի[36] վախճանվելու կապակցությամբ թեմի առաջնորդի տեղապահ ընտրվեց Աթանաս քահանա Այվազյանը[37]։ 1954 թ. օգոստոսի 29—30-ին Սոֆիայում հրավիրվեց հերթական թեմական պատգամավորական ժողով։ Ներկա էին բոլոր հայկական համայնքների ներկայացուցիչները։ Ժողովին մասնակցում էին Բուլղարիայի Մինիստրների խորհրդին կից բուլղարական եկեղեցու և դավանանքի գործերի կոմիտեի խորհրդական Ստեֆան Դոնչևը, բուլղար ավետարանական եկեղեցու գերապատվելի Մակովը, որոնք իրենց ողջույնի խոսքը հղեցին պատգամավորական ժողովին։

Ժողովում նախագահում էր էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, ռումինահայ թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Պալճյանը (այժմյան Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը)։

Թեմական խորհրդի հաշվետու զեկուցումից հետո ժողովը քննարկեց բազմաթիվ հարցեր, որոնք վերաբերում էին թեմական խորհրդի հետագա գործունեությանը։ Ժողովը փակ գաղտնի քվեարկությամբ ընտրեց նոր թեմական խորհուրդ։ Առաջադրված թեկնածուներից ընտրվեցին Ավետիս Ռումյանը, Լևոն Համբարձումյանը, Սարգիս Հովհաննիսյանը, Եղիա Թեփելեկյանը, Սարգիս Փաշաճյանը, Հակոբ Պալյանը։ Փոխանդամներ ընտրվեցին Կարո Փեչեյանը, Աղավնի Աժտերյանը։ Հոգևոր խորհրդի կազմում ընտրվեցին Պլովդիվի ավագ քահանա տեր Գևորգը, Սոֆիայի քահանա տեր Վահանը և Շումենի քահանա տեր Գարեգինը[38]։ Բուլղարահայ թեմի առաջնորդ ընտրվեց Վազգեն եպիսկոպոս Պալճյանը։ Նա դարձավ ռումինահայ և բուլղարահայ գաղութների թեմերի առաջնորդ։

1955 թ. հունիսին հրավիրվեց արտահերթ թեմական պատգամավորական ժողով։ Ընտրվեցին բուլղարահայ թեմական խորհրդի կազմը և էջմիածնի ազգային եկեղեցական ժողովի պատգամավորներ՝ կաթողիկոսական ընտրությունների կապակցությամբ։

1956 թ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանի Ամենայն հայոց կաթողիկոս ձեռնադրվելուց հետո բուլղարահայ թեմի աթոռը միաժամանակ մնաց թափուր։ 1968 թ. ռումինահայ և բուլղարահայ թեմերի առաջնորդ ընտրվեց Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը, որը մինչև օրս էլ վարում է այդ պաշտոնը։

1960—1982 թթ. բուլղարահայ թեմական խորհրդի նախագահն էր բուլղարահայ հասարակական գործիչ, տնտեսագետ Օնիկ Ասլանյանը։ Սոցիալիստական Բուլղարիայում առաջին անգամ մշակվեց հայկական գաղութի ներքին ղեկավարման մարմինների կանոնադրությունը, որը բխում էր Բուլղարական Ժողովրդական Հանրապետության սոցիալիստական սահմանադրության ժողովրդական բնույթից, նոր հասարակարգի էությունից։

5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԵՐԵՎԱՆ» ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

1944—1945 թթ. բուլղարահայ առաջադիմական «Երևան» կազմակերպության կենտրոնական վարչության աշխույժ գործունեության շնորհիվ մեկ տարվա ընթացքում միության 18 մասնաճյուղերում ընդգրկվեցին ավելի քան 5000 անդամներ։ Այդպիսի մասսայական կազմակերպություն բուլղարահայ գաղութը երբեք չէր ունեցել։ Այն դարձավ բուլղարահայերի միակ հասարակական-վարչական կազմակերպությունը ԲԿԿ ղեկավարությամբ։ Մինչև 1953 թ. «Երևան» առաջադիմական միության կենտրոնական վարչությունը որպես հայ փոքրամասնության ներկայացուցիչը, գաղութում կատարում էր վարչական գործունեություն և զբաղվում տնտեսական հարցերով։ Միությանն էին ենթարկվում գաղութի թեմական խորհուրդը, թաղական խորհուրդները և դպրոցական հոգաբարձությունները։ Ներքին ղեկավարման մարմինների ֆինանսական հարցերով զբաղվում էր «Երևանի» կենտրոնական վարչությունը։

«Երևան» առաջադիմական կազմակերպությունը ինչպես կենտրոնական վարչությունում, այնպես էլ տեղերում՝ մասնաճյուղերում, ուներ երիտասարդական, սպորտային, կանանց և մշակութային բաժիններ։ Մասնաճյուղերին կից ստեղծվեցին բազմաթիվ ինքնագործ խմբեր՝ թատերախմբեր, երգչախմբեր, նվագախմբեր, երգի-պարի անսամբլներ, ասմունքի վարպետներ, ակումբ-գրադարաններ, որոնք եռուն գործունեություն ծավալեցին։ «Երևանի» կենտրոնական վարչության ֆիզկուլտուրայի բաժնին կից ստեղծվեց «Կենտրոնական սպորտային խորհուրդ», որն ամեն տարի կազմակերպում էր ավանդական նավասարդյան սպորտային միջդպրոցային մրցումներ[39]։

Նախկինում պառակտված և տարիների ընթացքում բուլղարական ֆաշիստական կառավարության և դաշնակցության կողմից արհեստականորեն չլատված մշակութային, սպորտային և այլ միությունները «Երևանի» շարքերում, գործում են միության տարբեր բաժիններում։ «Երևանը» սերտ կապեր սաեղծեց մայր Հայրենիքի հետ և սկսեց գործել որպես մարքս-լենինյան գաղափարներով տոգորված միասնական կազմակերպություն։ Իր շուրջը համախմբելով առաջադեմ ուժերին, շարունակեց ՀՕԿ-ի ավանդույթները, կամուրջ հանդիսանալով Հայրենիքի և բուլղարահայ գաղութի միջև։

1953 թ. հունիսի 21—22-ին հրավիրվեց «Երևան» առաջադիմական կազմակերպության V պատգամավորական ժողովը[40]։ Օրակարգում դրված էին մի շարք կարևոր հարցեր, որոնք ունեին սկզբունքային նշանակություն կազմակերպության հետագա գործունեության համար։ Այդ հարցերը սերտորեն աղերսվում էին Բուլղարիայում սոցիալիզմի հիմքերի կառուցման հետ։ Տեղի էին ունեցել արմատական վերափոխումներ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ, որոնք իրենց հերթին պահանջում էին փոփոխություններ մտցնել նաև մշակութային-կրթական կյանքում։ Բկկ 1953 թ. ապրիլյան պլենումի որոշումներից ելնելով, անհրաժեշտ էր իրականացնել միասնական սոցիալիստական կուլտուրական վերափոխություններ, որոնք խոշոր նշանակություն ունեին Բուլղարիայում բնակվող ազգային փոքրամասնությունների համար։ Նկատի ունենալով Բուլղարական ժողովրդական Հանրապետության տնտեսական-քաղաքական զարգացման նոր պայմանները, երբ պետությունն իր վրա էր վերցրել ազգային փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական և մշակութային-կրթական ֆինանսավորումն ու ղեկավարումը, «Երևան» առաջադիմական կազմակերպությունը այլևս չէր ղբաղվելու գաղութի վարչատնտեսական և կրթական հարցերով։ Հետևաբար պատգամավորական ժողովը որոշում ընդունեց վերանվանել կազմակերպությունը և փոփոխություններ մտցնել նրա ծրագիր-կանոնադրության մեջ։

Որոշվեց կազմակերպությունը անվանել «Երևան-մշակութային միություն» և նրա գործունեության իրավասությունից վերացնել ֆիզկուլտուրայի և կանանց բաժինների աշխատանքները։ Այսուհետև հայ պատանիներն ու երիտասարդները ֆիզկուլտուրայով և սպորտի զանազան ձևերով ղբաղվելու էին այն կազմակերպություններում ու միություններում, որոնք գործում էին բուլղարական ազգային սպորտի ֆեդերացիայի ղեկավարության։

Նոր պայմաններում «Երևան» մշակութային միությունը ամրապնդելով բուլղարահայերի բարոյաքաղաքական միասնությունը, պրոպագանդելու էր Բուլղարական Ժողովրդական Հանրապետության և Սովետական Հայաստանի մշակութային նվաճումները, դարձնելով նրանք բուլղարահայ աշխատավորական զանգվածների սեփականությունը։

Միության կենտրոնական վարչության և մասնաճյուղերի ղեկավարությունների գործունեության առանցքն էր լինելու հայկական դպրոցներում մայրենի լեզվի դասավանդումն ու եկեղեցական խորհուրդների աշխատանքների կազմակերպումը, առանց միջամտելու նրանց տնտեսական-ֆինանսական գործերին։

«Երևան» մշակութային միության մասնաճյուղերին կից կազմակերպվեցին ինքնագործ թատերախմբեր, երգչախմբեր, նվագախմբեր, երգի-պարի անսամբլներ, գրադարան-ընթերցարաններ և այլ մշակութային միջոցառումներ։

Կարճ ժամանակամիջոցում, միության V պատգամավորական ժողովից հետո մասնաճյուղերին կից գործող գրադարան-ընթերցարանները հարստացան Սովետական Հայաստանից ստացված ընտիր գրականությամբ։ Աննախընթաց թափ ստացան ինքնագործ խմբերի աշխատանքները։

1950—1960-ական թվականներին բուլղարահայ գաղութում գործում էր 9 թատերախումբ, 4 երգչախումբ, 3 երգի-պարի անսամբլ, 4 նվագախումբ, 15 գրադարան-ընթերցարան՝ երեք տասնյակ հազար գրքերով[41]։

Բուլղարահայ աճող սերունդը մարքս-լենինյան գաղափարներով ու ինտերնացիոնալիստական ոգով դաստիարակելու գործում մեծ աշխատանք են տանում բուլղարահայ «Երևան» մշակութային միության կենտրոնական և մասնաճյուղային վարչություններում գործող կոմունիստները և դիմիտրովյան կոմերիտմիությունը։ Նրանց հսկայական օգնություն են ցույց տալիս «Հայրենական ճակատ» ազգային կոմիտեի օկրուգային և շրջանային կազմակերպությունները։

Անբասիր հասարակական-քաղաքական գործունեության համար բազմաթիվ հայ կոմունիստներ, բուլղարական դիմադրական շարժման մասնակիցներ, վետերան կոմունիստներ և պատասխանատու աշխատողներ, որոնք միաժամանակ գործում են «Երևան» մշակութային միության վարչություններում, ընտրվել են տեղական, օկրուգային սովետների և Բուլղարական Ժողովրդական Հանրապետության Ժողովրդական Ժողովի (պառլամենտի) պատգամավորներ։

«Երևան» մշակութային միության կենտրոնական վարչությունը ամրապնդելով կապը մայր Հայրենիքի և բուլղարահայ գաղութի միջև, նպաստում է սովետաբուլղարական և հայ-բուլղարական կապերի հետագա զարգացմանը։

6. ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ։ ՍՈՎԵՏԱԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ԵՎ ԳԱՂՈՒԹԻ ՈՒ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՊԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Բուլղարահայերը մեծ խանդավառությամբ ողջունեցին սովետական կառավարության 1945 թ. նոյեմբերի որոշումը՝ սփյուռքահայերի հայրենադարձության մասին։ Այն բխում էր ամբողջ սփյուռքահայության Հայրենիք վերադառնալու բուռն ցանկությունից։ Այդ առթիվ բուլղարահայ «Երևան» առաջադիմական միության կենտրոնական վարչությունը ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին կից արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեից ստացել էր հետևյալ նամակը.

«Ընդառաջ գնալով արտասահմանում բնակվող հայության Հայրենիք վերադառնալու բուռն ձգտումներին, ՀՍՍՀ կառավարության միջնորդությամբ, ս/թ նոյեմբերի 21-ին ՍՍՀՄ կառավարությունը որոշում է կայացրել թույլատրելու արտասահմանում բնակվող և Սովետական Հայաստան վերադառնալ ցանկացող հայության վերադարձն իրենց հայրենիքը՝ Սովետական Հայաստան»[42]։

«Երևան» առաջադիմական միության կենտրոնական վարչությունը հանդես եկավ № 10 շրջաբերականով, որտեղ հայտնում էր, որ ստեղծվել են ներգաղթի կենտրոնական և տեղական կոմիտեներ Բուլղարիայի բոլոր հայաշատ քաղաքներում։ Սոֆիայի ներգաղթի կոմիտեն, որը կենտրոնական մարմնի դեր էր կատարում, № 11 շրջաբերականով առաջ քաշեց «Ամեն ինչ ներգաղթի համար» նշանաբանը[43]։

1946 թ. մարտի 12-ի տվյալներով բուլղարահայերից 8000 հոգի ցուցակագրվել էին Հայաստան ներգաղթելու համար։ Սովետական Հայաստանի կառավարության լիազորներ Արմենակ Խրիմյանը և Մկրտիչ Օթարյանը հմտորեն վարեցին ներգաղթի գործը։ Նրանք բուլղարական կառավարության անմիջական օգնությամբ նպաստեցին ներգաղթը լավագույն կերպով կազմակերպելու գործին։ Բուլղարական ժողովրդական կառավարությունը Գեորգի Դիմիտրովի և Վասիլ Կոլարովի գլխավորությամբ ըստեղծեց բոլոր հնարավորությունները՝ ներգաղթը լավագույն ձևով կազմակերպելու համար։ Ներգաղթողների գույքն ու ունեցվածքը հատուկ

գնացքներով երկրի բոլոր հայաշատ քաղաքներից ձրի փոխադրվեցին Վառնայի և Բուրգասի նավահանգիստները։ Բուլղարիայում գտնվող սովետական զորքերի հրամանատարությունը ներգաղթողների գույքը տեղափոխելու համար տրամադրեց բեռնատար մեքենաներ։ Բուլղարահայերն իրենց հերթին օժանդակեցին նյութական միջոցներով, ընդառաջելով ներգաղթի կենտրոնական կոմիտեի կոչին։ 1946 թ. վերջին Սովետական Հայաստան էին ներգաղթել 4352 բուլղարահայեր[44]։ Մինչև 1949 թվականը այդ թիվը հասավ մոտավորապես 5000 հոգու։ Բուլղարիայում մնացին շուրջ 25000 հայեր։ Հետագայում շուրջ 2000 հայեր արտագաղթեցին արևմտյան երկրներ, հիմնականում ԱՄՆ։

Ներգաղթից ու արտագաղթից հետո բուլղարահայ գաղութում տեղի ունեցած տեղաշարժերից հետո 1971 թ. տվյալներով Սոֆիայում բնակվում էին 4000-ից ավելի հայեր, Պլովդիվում՝ 5000, Վառնայում՝ 3800, Ռուսեում՝ 1800, Բուրգասում՝ 1300[45]։ Մոտավորապես 7000 հայեր բնակվում էին Հասկովո, Յամբոլ, Սլիվեն, Պազարջիկ, Տոլբուխին և այլ քաղաքներում։

Աշխատունակ հայերից շուրջ 8000-ը ներգրավված են նյութական արտադրության բնագավառներում։ Նրանցից 4000 հոգի աշխատում են արդյունաբերության մեջ, իսկ 6000՝ շինարարության։ 300 հոգի աշխատում են տրանսպորտի, 1300՝ առևտրի և 2000՝ կենցաղ-սպասարկման բնագավառներում[46]։ Նրանցից 1600 հայեր ունեն բարձրագույն կրթություն։ Բազմաթիվ բուլղարահայեր գործում են արվեստի և գիտության բնագավառներում։ Նրանք հանդես են գալիս որպես հիանալի կազմակերպիչներ սոցիալիստական Բուլղարիայի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի ասպարեզներում։

Սովետաբուլղարական բարեկամական կապերն ու փոխհարաբերությունները, նրանց բազմակողմանի տնտեսական, քաղաքական, մշակութային հարաբերությունները նոր իմաստ և բովանդակություն հաղորդեցին հայ և բուլղար ժողովուրդների դարավոր կապերին։ Եթե նախկինում հայ-բուլղարական բարեկամական կապերն արտահայտվում էին բուլղար ժողովրդի և բուլղարահայ գաղութի փոխհարաբերություններում, ապա այժմ Բուլղարական Ժողովրդական Հանրապետության և Սովետական Հայաստանի տնտեսական, քաղաքական ու մշակութային փոխհարաբերությունները դրսևորվում են սոցիալիստական երկրների ընդհանուր համակեցության շրջանակներում։

Այդ ուղղությամբ արդյունավետ աշխատանք է կատարում Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը և Հայաստանի կառա-

վարությունը՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի հայկական ընկերության միջոցով: Զգալի աշխատանք են կատարում նաև Սովետաբուլղարական բարեկամության ընկերության հայկական բաժանմունքը և նրա կոլեկտիվ անդամ կազմակերպությունները:

Ամրապնդվեցին կապերն ու ստեղծագործական համագործակցությունը Հայաստանի գիտնականների, դերասանների, երաժիշտների, արվեստագետների հետ, որոնք իրենց ստեղծագործություններով և փոխայցելություններով նպաստեցին բուլղարահայ գաղութի մշակութային կյանքի վերելքին[47]: Բուլղարահայ գաղութի և Հայրենիքի փոխհարաբերությունները մեծ դեր խաղացին հայրենասիրական ու հայապահպանման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

1950—1960 թթ. Սովետական Միության խաղաղասիրական արտաքին քաղաքականության շնորհիվ աշխուժացան փոխհարաբերությունները Սովետական Միության և արտասահմանյան երկրների միջև: Աշխուժացան փոխադարձ այցելությունները մայր Հայրենիքի և սփյուռքի միջև: Անմիջական կապ ստեղծվեց Բուլղարական Ժողովրդական Հանրապետության և Սովետական Հայաստանի միջև:

1954 թ. (ՎՕԿՍ՝ Վսեսոյուզնոե օբշչեստվո կուլտուրնիխ սվյազեյ) պատվիրակությունը Բուլղարասովետական համաժողովրդական կոմիտեի հրավերով այցելեց Բուլղարիա: Պատվիրակության կազմում էր նաև Հայաստանի ներկայացուցիչ գրող Գարեգին Սևունցը: Հայաստանի տնտեսական ու մշակութային վերելքի մասին նրա ելույթներն ու զեկուցումները խանդավառ ոգևորություն առաջ բերեցին բուլղարահայ գաղութում: Երեք տարի անց ՀՍՍՀ-ի երգի-պարի անսամբլի հյուրախաղերը, անսամբլի ղեկավար Թաթուլ Ալթունյանի խորհուրդներն ու ցուցումները մեծապես նպաստեցին «Երևան» մշակութային միության ինքնագործ խմբերի (երգչախմբեր, պարախմբեր, թատերախմբեր) կատարելագործմանը[48]: Իսկ 1961 թ. Հրաչյա Քոչարի և Արամ Խաչատրյանի այցելությունները նոր շնչեց հաղորդեցին գաղութի մշակութային կյանքին[49]:

1961 թ. փետրվարին Երևանի կաբելի գործարանի երգի և պարի անսամբլը Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակի առթիվ հյուրախաղերով հանդես եկավ Սոֆիայում, Պլովդիվում, Ստարա Զագորայում և այլուր:

1965 թ. նոյեմբերի 21-ից դեկտեմբերի 9-ը Սոֆիայում կազմակերպվեց հայկական մշակույթի տասնօրյակ՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 45-ամյակին: Այն կազմակերպվեց Բուլղարասովետական համաժողովրդական կոմիտեի և Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի հայկական ընկերության նախաձեռնությամբ: Այդ առթիվ Հայաստանից Սոֆիա ժամանեց 20 հոգուց բաղկացած պատվիրակություն, որը գլխավորում էր ՀՍՍՀ կուլտուրայի մինիստր Ռոբերտ Խաչատրյանը[50]: Պատվիրակության կազմում էին գրողներ, կոմպոզիտորներ, նկարիչներ, երաժիշտներ, ռեժիսներ և արվեստի գործիչներ, այդ թվում՝ Գարեգին Սևունցը, Առնո Բաբաջանյանը, Գոհար Գասպարյանը և ուրիշներ:

Տասնօրյակի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Սոֆիայի օպերայի դահլիճում: Նախագահությունում էին ԲԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Թոդոր Ժիվկովը, ԲԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ Բորիս Վելչևը, Բուլղարական մշակույթի և արվեստի կոմիտեի նախագահ Բորիս Վուտովը, Բուլղարասովետական համաժողովրդական կոմիտեի նախագահ Ցոլա Դրագոյչևան, Բուլղարական գիտությունների ակադեմիայի պատվավոր նախագահ Թոդոր Պավլովը, Հայաստանի կուլտուրայի մինիստր Ռոբերտ Խաչատրյանը և ուրիշներ:

Տասնօրյակի ընթացքում կազմակերպվեցին հայկական կինոֆիլմերի ցուցադրումներ, հայ գեղանկարչության և կիրառական արվեստի ցուցահանդեսներ: Սոֆիայում և Բուլղարիայի հայաշատ մյուս քաղաքներում կազմակերպվեցին հայկական գրքի ցուցահանդեսներ: Հայկական տասնօրյակն անցավ բացառիկ հաջողությամբ, որը վերածվեց հայ և բուլղար ժողովուրդների բարեկամության ու եղբայրության վառ տոնի: Այն մի նոր, փայլուն էջ արձանագրեց սովետական և բուլղար ժողովուրդների պարավոր բարեկամության պատմության մեջ:

1966 թ. մայիսի 24-ին Հայաստանում կազմակերպվեց բուլղարական մշակույթի տասնօրյակ: Բուլղարական պատվիրակությունը բաղկացած էր 80 հոգուց, որի կազմում էին Բուլղարական ժողովրդական Հանրապետության պետական և հասարակական գործիչներ, նշանավոր դերասաններ, երաժիշտներ, գրողներ, նկարիչներ: Պատվիրակությունը գլխավորում էր Բուլղարասովետական համաժողովրդական կոմիտեի Սոֆիայի բաժանմունքի նախագահ՝ Իվան Պալիյսկին, իսկ նրա կազմում էին գրող, Դիմիտրովյան մրցանակի դափնեկիր Ստոյան Դասկալովը, բուլղարական ականավոր կոմպոզիտոր Դիմիտր Պետկովը, Սովետական Միությունում բուլղարական դեսպանության խորհրդական Նայդեն Մալչևը, ԲԿԿ Դիմիտրովգրադի քաղկոմի քարտուղար Միտկո Իվանովը, «Երևան» միության կենտրոնական վարչության նախագահ Գաբրիել Գաբրիելյանը, երգիչ Գեորգի Տնեևը, երգչուհի Նադյա Աֆեյանը և ուրիշներ[51]: Տաս օր շա-

րունակ Հայաստանի մայրաքաղաքում, Լենինականում, Կիրովականում, Ալավերդում, Ղափանում, Քաջարանում, Դիլիջանում, Հոկտեմբերյանում, Իջևանում և այլուր հնչեց բուլղարական երգն ու երաժշտությունը: Բուլղարացի հյուրերը ջերմ հանդիպումներ ունեցան մեր հանրապետության արվեստի ու գրականության գործիչների, բանվորական կոլեկտիվների և գյուղի աշխատավորության հետ: Նրանք ամենուրեք պատմում էին բուլղար ժողովրդի նվաճումների մասին: Տասնօրյակի մասնակիցներն այցելեցին Հայաստանի տեսարժան ու պատմական վայրերը, Մատենադարան ու թանգարաններ: Երևանում բացվեց բուլղարական կերպարվեստի ցուցահանդես: Մայիսի 25-ին Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում բեմադրվեց բուլղար բանաստեղծ և թատերագիր Պեյու Յավորովի «Վիտոշի փեշերին» պիեսը: Ելույթ ունեցան բուլղարական գեղարվեստական լավագույն կոլեկտիվները և արվեստի վարպետները, ցուցադրվեցին բուլղարական գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր:

Հայաստանում բուլղարական մշակույթի տասնօրյակը վերածվեց սովետաբուլղարական բարեկամության պայծառ տոնի: Մայիսի 24-ին բուլղար ժողովրդի ազգային տոնի՝ սլավոնական գրի և դպրության ստեղծողների՝ Կիրիլ և Մեթոդիի օրը Երևանում բացվեց բուլղարական գրքի ցուցահանդես:

Տասնօրյակի օրերից մեկը դարձավ «Յավորովի օր», մայիսի 30-ին տեղի ունեցավ բուլղար մեծ բանաստեղծին նվիրված ցուցահանդեսի բացումը: Երևանի 131 միջնակարգ դպրոցի բակում կատարվեց Յավորովի արձանի բացման արարողությունը և դպրոցը կոչվեց Պ. Կ. Յավորովի անվան միջնակարգ դպրոց:

1967 թ. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին Սովետական Միությունում տեղի ունեցավ սովետաբուլղարական բարեկամության միամսյակ: Այն անցկացվեց Լենինյան անխախտ բարեկամության ու եղբայրության ամրապնդման նշանաբանով: Մեծ Հոկտեմբերի 50-ամյակի առիթով Հայաստանում անցկացվեց բուլղարահայերի ինքնագործ ստեղծագործության տասնօրյակ:

Այս միջոցառումները էլ ավելի ամրապնդեցին հայ և բուլղար ժողովուրդների ավանդական բարեկամությունը: Սովետական Միության անշահախնդիր ու եղբայրական օգնության շնորհիվ Հայաստանը և Բուլղարիան գնան իրենց ազգային վերածնության, տնտեսական ու մշակութային զարգացման ճշմարիտ ուղին:

Հայրենիքի հետ սերտ ու գործնական փոխհարաբերությունները մեծ դեր կատարեցին և կատարում են գաղութի գոյատևման ու հայապահպանման գործում: Բուլղարահայերը համոզված են, որ միայն ամուր կապը Մայր Հայրենիքի հետ կարող է պահպանել իրենց ազգային դեմքն ու ոգին:

7. ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ՄԾԱԿՈՒՅԹԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխությունը խոր փոփոխություններ մտցրեց նաև բուլղար ժողովրդի մշակութային կյանքում, այդ թվում նաև Բուլղարիայում ապրող փոքրամասնությունների մշակույթի և կրթության ասպարեզներում:

Բուրժուական Բուլղարիայում հայ պատանիների մեծ մասը ավարտելով հայկական տարրական և թերի միջնակարգ դպրոցները, հնարավորություն չունեին իրենց կրթությունը շարունակելու և ստանալու լրիվ միջնակարգ կամ բարձրագույն կրթություն: Հայկական դպրոցներն ավարտած հայ աշակերտներից Բուլղարիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էին ոչ ավելի քան երկու տասնյակ ուսանողներ, քանի որ ուսումնառությունը կապված էր նյութական մեծ դժվարությունների հետ:

1945 թ. հունիսին բուլղարական ժողովրդական կառավարության կրթության գերագույն խորհուրդը հրավիրեց ազգային փոքրամասնությունների դպրոցների ներկայացուցիչների խորհրդակցություն, որտեղ ընդունվեցին հետևյալ որոշումները. Բուլղարիայում բնակվող բոլոր փոքրամասնությունները պահպանելու են իրենց դպրոցները. դպրոցներում առաջին, երկրորդ և երրորդ դասարաններում բոլոր առարկաները դասավանդվելու են մայրենի լեզվով, իսկ բուլղարերեն լեզու առարկան՝ դասավանդվելու է որպես օտար լեզու[52]:

Այս խորհրդակցությունից հետո 1945 թ. օգոստոսի 5—8-ը հրավիրվեց հայ ուսուցիչների խորհրդակցություն, որը որոշեց. հայկական դպրոցներում կիրառել արևելահայ ուղղագրությունը, նորավարտ աշակերտներից լավագույններին ուղարկել Սովետական Հայաստան՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու, նրանցից հայոց լեզվի որակյալ ուսուցիչներ պատրաստելու համար[53]: Մինչև մասնագետներ պատրաստելը, Սովետական Հայաստանից հրավիրել հայոց լեզվի և պատմության ուսուցիչներ: Հատուկ դասընթացներ կազմակերպել

բուլղարահայ ուսուցիչների վերապատրաստման համար։ Խորհրդակցությունը կարևոր նշանակություն ունեցավ բուլղարահայ դպրոցների միասնական ծրագրի մշակման գործում։

1946—1947 ուսումնական տարում պետականացվեցին Բուլղարիայում գործող բոլոր մասնավոր, այդ թվում և հայկական դպրոցները։ Այդուհետև, հայկական դպրոցների ֆինանսական հարցերը, նրա բյուջեն ապահովում էր բուլղարական ժողովրդական կառավարությունը։ Հայ երեխաները պարտավոր էին հաճախել հայկական դպրոցները։ Հայկական դպրոցների համար սահմանվեց հետևյալ կարգը.

Պլովդիվի, Սոֆիայի, Վառնայի, Ռուսեի, Բուրգասի դպրոցները վերածվեցին պրոգիմնազիաների, իսկ Հասկովոյի, Սլիվենի և Յամբոլի դպրոցները մնացին տարրական, քանի որ նրանց աշակերտների թիվը թույլ չէր տալիս դրանք պրոգիմնազիաների վերածել[54]։

1953 թ. հայկական դպրոցներում մանկապարտեզների հետ միասին սովորում էր 1200 աշակերտ։ Հատուկ ուշադրություն դարձվեց հայոց լեզվի, գրականության, պատմության և Հայաստանի աշխարհագրության առարկաներին։

1960 թ., երբ Բուլղարական Ժողովրդական Հանրապետությունում մտցվեց միասնական կրթական ծրագիր, հայ երեխաներն ու պատանիները հնարավորություն ստացան միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո շարունակել իրենց ուսումը երկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում։

Մինչև 1981 թ. գաղութում բարձրագույն կրթություն էին ստացել 1500-ից ավելի հայ քաղաքացիներ[55]։ Այսօր սոցիալիստական Բուլղարիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են 300-ից ավելի հայ երիտասարդներ։ Տարբեր ուսումնական հաստատություններում դասավանդում են 5 հայ դոկտոր-պրոֆեսորներ, 17 դոցենտներ[56]։

Բուլղարական Ժողովրդական Հանրապետության կառավարական բարձր պարգևների են արժանացել բազմաթիվ հայ ուսուցիչներ, գիտաշխատողներ, դոցենտներ ու պրոֆեսորներ։ Բազմավաստակ ուսուցիչ-մանկավարժներ Սարգիս Փաշաճյանը, Վիկտորյա Մոմճյանը, Կարո Ասարլըքյանը, Սարգիս Պալթայանը, Բենիամին Թյուֆենքճյանը և ուրիշներ հայտնի են ոչ միայն հայ մտավորականության, այլև բուլղար մանկավարժների շրջաններում։ Նրանց մեծ մասը պարգևատրվել են «Կիրիլ և Մեթոդիի» առաջին և երկրորդ աստիճանի շքանշաններով։

Վաստակավոր բժիշկ-վիրաբույժ, պրոֆեսոր Հակոբ Զակըրովը, վաստակավոր բժիշկ, պրոֆեսոր Արշավիր Տերեճյանը, Վառնայի բժշկական ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Կարո Գաբրիելյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սարգիս Սարգիսյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարո Մոմճյանը և շատ ուրիշներ մեծ ճանաչում են գտել ոչ միայն Բուլղարական Ժողովրդական Հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս։

1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխությունը լայն հնարավորություններ ընձեռեց նաև բուլղարահայ մամուլի, գրականության ու արվեստի զարգացման համար։

Բուլղարահայ գրական մշակների համար սոցիալիստական կարգերի պայմաններում ներշնչման աղբյուր հանդիսացան նոր հասարակարգի կառուցման թափն ու եռանդը։ Սովետական Հայաստանի հաջողություններն ու անմիջական կապը հայրենիքի հետ նույնպես նրանց մղեցին դեպի նոր ստեղծագործություններ։

Հանդես եկան նոր բանաստեղծներ, արձակագիրներ և թարգմանիչներ, որոնք փոխեցին բուլղարահայ գրականության դեմքն ու բովանդակությունը։ Նախկին առաջադեմ գրչի մշակներին փոխարինելու եկան երիտասարդ գրողներ Սևադա Սևանը, Գրիգոր Փափազյանը, Կարո Ճոպոյանը, Հովհաննես Պարսկունին, Ժիրայր Փափազյանը և ուրիշներ։ Իրենց բարձրորակ թարգմանություններով աշքի ընկան Հակոբ Օրմանճյանը, Կարո Հայրապետյանը, Հակոբ Կիլիկյանը և ուրիշներ։ Նրանք բուլղարերեն թարգմանեցին հայ դասական և սովետահայ գրողներ՝ Խաչատուր Աբովյանի, Րաֆֆու, Պերճ Պռոշյանի, Ռափայել Պատկանյանի, Հովհաննես Թումանյանի, Գրիգոր Զոհրապի, Սիամանթոյի, Պետրոս Դուրյանի, Նահրի Զարյանի, Ստեփան Զորյանի, Դարեգին Սևունցի, Պարույր Սևակի, Եղիշե Չարենցի, Սիլվա Կապուտիկյանի, Հովհաննես Շիրազի, Սերո Խանզադյանի և շատ ուրիշների աշքի ընկնող ստեղծագործությունները։ Այդ թարգմանությունների օգնությամբ հայ գրողները դարձան բուլղար ընթերցողի սիրված հեղինակները։ Այդ թարգմանությունները նշանակալից ավանդ են բուլղար ժողովրդի ազգային գրականության հարուստ գանձարանում։

«Երևան» առաջադիմական կազմակերպության հիմնադրումից հետո բուլղարահայ գաղութում գործող բոլոր գրադարան-ընթերցարանները անցան այդ կազմակերպության հսկողության ներքո։ Կազմակերպության 18 մասնաճյուղերին կից գործում են գրադարան-ընթերցարաններ։ Այդ գրադարանները կարճ ժամանակում ձեռք բերեցին բազմաժանր և բազ-

մալեզու հարուստ գրականություն։ Ընթերցողները հնարավորություն ստացան հաղորդակից դառնալու Սովետական Հայաստանից ստացվող նորագույն գրականությանը։ Ընդլայնվեց գրքերի փոխանակումն առանձին գրադարանների միջև։

Պլովդիվում «Գրասիրաց եղբայրության» հարուստ գրադարանը դարձավ քաղաքի հայության սիրված ընթերցարանը։ Բարելավվեցին և վերակազմակերպվեցին գրադարանի աշխատանքները։ Աշխույժ գործունեություն ծավալեցին Ռուսեի, Վառնայի, Սոֆիայի, Բուրգասի ակումբ-գրադարանները։

Ներկայումս սոցիալիստական Բուլղարիայի 8 հայկական գրադարաններում պահվում են 25000-ից ավելի հայերեն, բուլղարերեն, ռուսերեն և օտար լեզուներով գրքեր ու պարբերականներ։

Գրադարան-ընթերցարանները բուլղարահայ գաղութում կատարում են նկատելի աշխատանք և սերտորեն համագործակցում ժողովրդական Բուլղարիայի մեծ գրադարանների հետ։ Հայկական գրադարան-ընթերցարանները լուսավորության վառ օջախներ են, որտեղ հաճախ կազմակերպվում են բովանդակալից դասախոսություններ և զեկուցումներ քաղաքական-մշակութային հարցերի վերաբերյալ։

Բուլղարահայ «Երևան» մշակութային միության կենտրոնական վարչության միջոցով բուլղարահայ գրադարան-ընթերցարանները Սովետական Հայաստանից ստանում են հարուստ գրականություն և մամուլ։ Այդ գործում նրանց մեծ օգնություն են ցույց տալիս Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն և Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերությունը։

«Երևան» կազմակերպության մասնաճյուղերին կից ստեղծված ինքնագործ թատերախմբերը շարունակեցին բուլղարահայ թատերական արվեստի առաջավոր ավանդույթները։ Նախկին սիրող դերասաններն ու բեմադրիչները լծվեցին բեղմնավոր աշխատանքի և հասան մեծ հաջողությունների։ Նրանք սովետահայ և բուլղարական թատրոնների օրինակով, սոցիալիստական նոր ոգով տոգորված, արտահայտեցին նոր հասարակարգի ուժն ու կենսունակությունը։

1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխությունից հետո, ստեղծագործական կապերը ամրապնդելով բուլղարական պրոֆեսիոնալ թատրոնների, բեմադրիչների ու դերասանների հետ, նրանց օրինակով բուլղարահայ հանդիսատեսների ու թատերասերների սեփականությունը դարձրին դասական ու ժամանակակից դրամատուրգիայի ստեղծագործությունները։

Սոցիալիստական հեղափոխությունից հետո բուլղարահայ ինքնագործ թատերախմբերի առաջին ներկայացումը Նաիրի Զարյանի «Ամենագազանը» կատակերգությունն էր։ Այնուհետև ներկայացվեցին «Աղբյուրի մոտ», «Այրող դիմակը», Շիրվանզադեի «Պատվի համար», «Նամուս», «Զարոգի», Մուրացանի «Ռուզան», Հակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբար», «Մեծապատիվ մուրացկաններ», Կորնեյչուկի «Պլատոն Կրեչետ», Օրլինի վասիլևի «Ահազանգ», Արամ-Աշոտ Պապայանի «Մեծ հարսանիք» և շատ ուրիշ ստեղծագործություններ։

Սոֆիայի, Պլովդիվի, Վառնայի, Ռուսեի, Բուրգասի թատերախմբերում աճեցին բազմաթիվ հայտնի դերասաններ, որոնք մեծ համբավ վաստակեցին բուլղար թատերասերների շրջանում։ Նրանցից էին Սոֆիայի երաժշտական թատրոնի դերասաններ Սաթենիկ և Շավարշ Մանուկյանները, Պլովդիվի թատերախմբից՝ Արշալույս Շահինյանը, Վարդան Մարությանը, Վառնայից՝ Ի. Մալխասյանը, Արմենակ Մալխասյանը, Մ. Զիվիճյանը և ուրիշներ։

Բուլղարական ժողովրդական Հանրապետությունում կուլտուրական վերափոխումներից հետո առաջին և երկրորդ հնգամյակների տարիներին թատերախմբերը հարստացրին իրենց ներկայացումները և հաջողությամբ բեմադրեցին Դրագոմիր Ասենովի «Վարդեր դոկտոր Շոմովի համար», Գուրգեն Բոյանի «Կամրջի վրա», Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը», Ա. Օստրովսկու «Մենք ու մերոնք ենք, կհասկացվենք», Վրթանես Փափազյանի «Ժայռը» և այլն։ Բուլղարահայ թատերախմբերը բարձր գնահատականի արժանացան անվանի ռեժիսորներ Ն. Բալաբանովի, Լ. Իոսիֆովի, Բ. Աֆեյանի, Գ. Գանչևի և Գ. Ազարյանի կողմից։

1961 թ. Վառնայի, Պլովդիվի, Սոֆիայի հայերը մեծ ոգևորությամբ հյուրընկալեցին ՍՍՀՄ ժողովրդական դերասաններ Վահրամ Փափազյանին, Հրաչյա Ներսիսյանին և Դավիթ Մալյանին, որոնք բուլղարահայ ինքնագործ խմբերի հետ հանդես եկան «Պատվի համար», «Ավերակների վրա» և այլ ներկայացումներում։

1961 թ. Վառնայի, Սոֆիայի թատերախմբերը բոլորեցին իրենց 40 տարին։ Բուլղարական կառավարությունը բարձր գնահատեց այդ կոլեկտիվների մշակութային գործունեությունը և պարգևատրեց «Կիրիլ և Մեթոդիի» երկրորդ աստիճանի շքանշանով[57], իսկ ինքնագործ թատերական գործիչներ Պետիկ Ջավենին, Խաչիկ Պալյանին և Օնիկ Քեչյանին՝ երկրորդ աստիճանի պատվո մեդալներով[58]։

1967 թ. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի կապակցությամբ Հայաստանում անցկացվեց բուլղարահայերի ինքնագործ ստեղ-

ծագործության տասնօրյակ, որին մասնակցեցին «Երևան» մշակութային միության մասնաճյուղերին կից գործող Սոֆիայի Սունդուկյանի անվան, Վառնայի Շերվանզադեի անվան և Պլովդիվի մասնաճյուղի թատերախմբերը։ Երևանի, Լենինականի, Կիրովականի, Հրազդանի, Էջմիածնի, Աշտարակի և այլ մշակութային պալատների ու թատրոնների բեմահարթակներում այդ խմբերը ցուցադրեցին իրենց կատարողական արվեստը, արժանանալով Հայաստանի աշխատավորության բարձր գնահատականին։

Ներկայումս Սոֆիայի, Վառնայի, Պլովդիվի, «Երևան» մշակութային միության մասնաճյուղերին կից գործող թատերախմբերը բուլղարական ինքնագործ կոլեկտիվների 5-րդ փառատոնի դափնեկիրներ են ու պարգևատրված են ոսկե մեդալներով։ Բարձր պարգևների արժանացան բուլղարահայ պրոֆեսիոնալ բեմադրիչներ Բ. Աֆեյանը և Գ. Ազարյանը, որոնք մեծ հռչակ են վայելում նաև Բուլղարիայում և նրա սահմաններից դուրս։

Բուլղարիայում սոցիալիստական կարգերի հաստատումից հետո զգալի զարգացում ապրեց բուլղարահայ երաժշտական և կատարողական արվեստը։ Նախկինում առաջադեմ երաժիշտներ-կոմպոզիտորներ, կատարողական արվեստի վարպետներ՝ Սարգիս Պալթայանը, Կարո Կարապետյանը, Զարուհի Սայանը, Ստեփան Խանջյանը, Հակոբ Աղասյանը, Հերմինե Ասատուրը, Խաչիկ Միհրանյանը և ուրիշներ ստեղծագործում էին ոչ միայն որպես հայ երաժշտագետներ, այլև որպես բուլղարական երաժշտական արվեստի ներկայացուցիչներ։

Նոր կարգերի պայմաններում, ԲԿԿ և «Երևան» առաջադիմական կազմակերպության կենտրոնական վարչության անմիջական օգնությամբ Սարգիս Պալթայանի և Կարո Կարապետյանի նախաձեռնությամբ հայ երգն ու երաժշտությունը լայն տարածում գտան ոչ միայն Բուլղարիայում, այլև արտասահմանում։ Նրանք կազմակերպեցին ու ղեկավարեցին մի շարք երգչախմբեր, էստրադային նվագախմբեր, ամեցրին բազմաթիվ մենակատարներ ու դերասաններ, որոնք այսօր մեծ համբավ են վայելում ողջ երկրում։ Հիշատակության արժանի են Սոնյա Համեռնիկ, Նադյա Աֆեյան, Մարի Գրիգորյան, Զարմայր Երանոսյան, Արշալույս Ազարյան, Նվարդ Համայակ, Մանուկ Փիլիպոսյան, Կարո Փեչեյան, Թադևոս Սանճաքյան, Թոթո Փափազյան, Սերոբ Վարդանյան, ինչպես նաև վաստակավոր դերիժորներ Գրիգոր Գրիգորով, Վիլլի Գազազյան, թավջութակահարուհի Սեդա Պալթայան, դաշնակահարուհի Մալվինա Խաչատուրյան, Արշակուհի Սուքիասյան անունները։

Բուլղարահայ երգչախմբային արվեստը առավել մեծ հաջողությունների հասավ «Երևան» կազմակերպության ստեղծումից հետո։ Նրա զար-

գացման գործում հսկայական նշանակություն ունեցան Սովետական Հայաստանի բազմաթիվ երգչախմբերի, կոմպոզիտորների, երաժշտագետների, պարային անսամբլների այցելությունները ու հյուրախաղերը։ Սոֆիայի, Պլովդիվի, Ռուսեի և այլ քաղաքների հայկական քառաձայն երգչախմբերը մասնակցեցին Բուլղարիայում կազմակերպված ինքնագործ խմբերի փառատոներին և նվաճեցին առաջին կարգի մրցանակներ, դարձան ոսկե մեդալակիրներ։

1958 թ. «Երևան» մշակութային միության Պլովդիվի մասնաճյուղի երգչախումբը կոչվեց «Արամ Խաչատրյանի» անվամբ։ Նույն թվականին հայ մեծանուն կոմպոզիտորը այցելեց Պլովդիվի հայկական համայնքը և հայ ու բուլղար ունկնդիրների առջև ղեկավարեց երգչախմբի համերգը։ Հետագա տարիներին երգչախումբը ելույթներ ունեցավ Բուլղարիայի բոլոր խոշոր քաղաքներում և արտասահմանում, ամենուրեք արժանանալով բարձր գնահատականի ու մրցանակների։ Խումբն իր համերգներով փայլեց Սովետական Հայաստանում Մեծ Հոկտեմբերի 50-ամյակին նվիրված բուլղարական մշակույթի տասնօրյակում, ինչպես նաև 1979 թ., երբ խումբը լրիվ կազմով այցելեց Սովետական Հայաստան։ 1981 թ. երգչախումբը նշեց իր հիմնադրման 75-ամյակը և արժանացավ բուլղարական «Կիրիլ և Մեթոդիի» առաջին կարգի շքանշանի[59]։

Նման գործունեություն են ծավալում «Երևան» մշակութային միության Ռուսեի, Սոֆիայի և այլ քաղաքների մասնաճյուղերին կից գործող երգչախմբերը։ Ռուսեի «Կոմիտաս» անվան և Սոֆիայի երգչախմբերն իրենց հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ նույնպես պարգևատրվեցին «Կիրիլ և Մեթոդիի» շքանշաններով։

Ժողովրդական Բուլղարիայում զգալի հաջողությունների հասան նաև երգի-պարի անսամբլները և վոկալ-գործիքային նվագախմբերը։ 1944 թ. հետո հայկական այդպիսի կոլեկտիվներ կազմակերպվեցին Պլովդիվում, Շումենում, Վառնայում։ Շումենի երգի-պարի անսամբլը Ս. Ջիլինգարյանի ղեկավարությամբ համբավ է վայելում ամբողջ Բուլղարիայում։ Վառնայի և Շումենի երգի-պարի անսամբլները օրինակ են ծառայում ոչ միայն հայ, այլև բուլղար և մյուս փոքրամասնությունների ինքնագործ խմբերի համար։ Այդ երկու կոլեկտիվները բուլղարական ինքնագործ խմբերի փառատոների դափնեկիրներ են և պարգևատրվել են ոսկե մեդալներով։

Բուլղարահայ երգի-պարի անսամբլները և վոկալ-գործիքային էստրադային նվագախմբերը հյուրախաղերով հանդես են եկել Հայաստա-

նում և արժանացել սովետահայ ունկնդրի ու երաժշտագետների արժանի գնահատականին:

Բուլղարիայում համաժողովրդական ճանաչում ունեն և բարձր են գնահատված երաժշտության ասպարեզում բուլղարահայ վոկալ և գործիքային մենակատարները: Նրանք բազմիցս պարգևատրվել են կառավարական բարձր պարգևներով և ստացել կոչումներ: «Ժողովրդական դերասանի» կոչման են արժանացել Պլովդիվի օպերային թատրոնի մեներգչուհի Սոնյա Համեռնիկ-Սահակյանը, Վառնայի օպերային թատրոնի մեներգչուհի Մարի Գրիգորյանը, երգիչ Զարմայր Երանոսյանը, դաշնակահարուհի Էմմա Թահմիզյանը, թավջութակահարուհի Սեդա Պալթայյանը: Դիրիժոր-կոմպոզիտոր Սարգիս Պալթայյանը, ժողովրդական դերասաններ Գրիգոր Գրիգորովը, Վիլլի Դազազյանը և Գրիգոր Ազարյանը պարգևատրվել են ոսկե մեդալներով: Կառավարական պարգևների են. արժանացել խմբավար Կարո Կարապետյանը, դաշնակահար Խաչիկ Միհրանյանը և ուրիշներ:

Զարգացում ապրեցին նաև կերպարվեստն ու գեղանկարչությունը: Շարունակեցին գործել ավագ սերնդի ներկայացուցիչներ Գրիգոր Ահարոնյանը, Տիրան Սարգիսյանը, Հայկուհի Հարությունյանը: Հանդես եկան երիտասարդ արվեստագետներ, որոնք շարունակեցին ավագ սերնդի ավանդույթները: Արտաշ Թավուքճյանը և Ոսկան Ադամյանը, ավարտելով Սոֆիայի գեղանկարչական ինստիտուտը, աչքի ընկան իրենց ստեղծագործություններով:

Արտաշ Թավուքճյանը ձևավորել է Ն. Գոնովի «Սպարտակ» պիեսի բեմականացումը[60]: Կազմակերպել է իր անդրանիկ ցուցահանդեսը Կրջալի քաղաքում և արժանացել ջերմ գնահատականի: Սոֆիայում իր գործերն է ցուցադրել գեղանկարիչ Ոսկան Ադամյանը: Նրա ստեղծագործություններից «Սոզոպոլի ձկնորսները», «Արարատյան հովիտը», «Ռոդոպներ» և այլ բնանկարներ հագեցված են հայրենասիրական շնչով, Բուլղարիայի և հայրենի բնաշխարհի ջերմ զգացողությամբ: Ոսկան Ադամյանը բուլղարական նկարիչների միության անդամ է և շարունակում է ստեղծագործել՝ իր թեմատիկայի հիմքում ունենալով նաև աշխատավոր մարդու կերպարը:

Երիտասարդ նկարչուհի Նվարդ Աբգարյանը, որ ավարտել է Երևանի պետական թատերական ինստիտուտի գեղանկարչության բաժինը[61], Բուլղարիայում աչքի է ընկնում իր բեմական ձևավորման աշխատանքներով: Նրա գործերը բարձր գնահատականի են արժանացել բուլղար արվեստագետների կողմից:

Բուլղարական ժողովրդական Հանրապետությունում կատարված մշակութային արմատական վերափոխումները, և բուլղարահայերի ակտիվ մասնակցությունը սոցիալիստական մշակույթի զարգացմանը, տալիս է իր ակնառու պտուղները:

Հայ պատանիներն ու երիտասարդները հնարավորություն ունեցան զբաղվելու նաև սպորտի լայն ասպարեզում: Հանդես եկան այնպիսի մարզիկներ, որոնք համաշխարհային համբավ վաստակեցին և դարձան սպորտի համապատասխան ճյուղերի Բուլղարիայի լավագույն ներկայացուցիչներ: Սոցիալիստական աշխատանքի հերոս, երկու օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի չեմպիոն Նորայր Նուրիկյանը ծանր ատլետիկայի գծով 1979 թ. Բուլղարական ժողովրդական Հանրապետության 10 լավագույն մարզիկների շարքում 3-րդ տեղում էր[62]: Բուլղարիայում և ամբողջ աշխարհում հռչակ էր վայելում բժիշկ, մարզիկ Բյուզանդ Գասապյանը: 1969 թ. սեղանի թենիսի գծով նա արժանացավ ոսկե մեդալի և վարպետի կոչման: 1974 թ. Բ. Գասապյանն իր եղբոր՝ Արսենի հետ, վառնայում փետրագնդակի միջազգային մրցումներում առաջնություն շահելուց հետո մասնակցեցին Անգլիայում, Շվեդիայում, Ավստրիայում և Սովետական Միությունում կազմակերպված միջազգային մրցումներին: Այժմ Բ. Գասապյանը աշխատում է որպես մարզիչ[63]:

Սեղանի թենիսի վարպետներ Գրիգոր Մարթայանը և Հրանտ Գրիգորյանը մեծ հարգանք են վայելում բուլղար մարզական շրջաններում: Բազմաթիվ հայ մարզիկներ, սպորտի վարպետներ, մարզիչներ և մրցավարներ իրենց արդյունավետ աշխատանքով սոցիալիստական Բուլղարիայում բարձր են պահում բուլղարական սպորտի պատիվը:

Մշակութային վերափոխումները Բուլղարիայում ընդլայնվում ու զարգանում են, դառնալով վիթխարի ուժ նոր հասարակարգի կառուցման ճանապարհին:

Բուլղարական ժողովրդական կառավարության և «Երևան» մշակութային միության անմիջական ղեկավարությամբ սոցիալիզմի նպաստավոր պայմաններում բուլղարահայերի մշակույթը զարգացավ և նոր վերելք է ապրում նոր բովանդակությունով ու գաղափարական ուղղությունով: Հայ մշակույթը աշխատավորական լայն զանգվածների սեփականության վերածվեց, որը հայապահպանման հիմնական գործոններից է:

ՎԵՐՋԱԲԱՆ

Բուլղարահայ գաղութը՝ սփյուռքի հնագույն գաղթօջախներից է։ Նրա 15 դարյա պատմությունը հարուստ է սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրադարձություններով՝ կապված բուլղար ժողովրդի պատմական ճակատագրի հետ։ Երկու ժողովուրդների կենցաղի, սովորությունների ու ավանդույթների մեջ կան շատ ընդհանրություններ։ Չնայած հայ և բուլղար ժողովուրդների զարգացումն ընդհատվեց օտար զավթիչների ասպատակությունների ու տիրապետության պատճառով, այնուամենայնիվ, նրանք կարողացան գոյատևել, անթեղ պահել իրենց ազգային ոգին, քանդէ ունեին դարավոր մշակույթ, որի մեջ պահպանել էին ազգային լավագույն հատկանիշները։ Դարեր շարունակ պահպանելով մայրենի լեզուն, գիրն ու գրականությունը, հավատն ու ճարտարապետական կոթողները՝ կարողացան դիմագրավել օտարի լուծն ու բռնությունները։

Բալկաններում և Հայկական լեռնաշխարհում մոլեգնող օսմանյան զավթիչների կամայականություններն ու չարդերը էլ ավելի ամրապնդեցին ստրկացված քրիստոնյա ժողովուրդների հոգևոր միասնությունն ու օտարի լուծը թոթափելու նրանց վճռականությունը։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հաղթական ավարտը բալկանյան ժողովուրդներին բերեց ազգային անկախություն։ Սակայն պայքարը սուլթանական Թուրքիայի դեմ շարունակվեց Արևելյան Ռումելիայի, Արևմտյան Հայաստանի և Մակեդոնիայի ազատագրման համար։ Այդ պայքարի ընթացքում հայ-բուլղարական և հայ-մակեդոնական մարտական համագործակցությունը դրսևորվեց հայդուկային շարժումներով ու ժողովրդական ապստամբություններով։

Բալկանյան և առաջին համաշխարհային պատերազմներից հետո եղեռնը վերապրած արևմտահայերի բեկորները 1922 թ. Թուրքիայից բռնագաղթվեցին և ցրվեցին աշխարհի տարբեր երկրներ, այդ թվում Բուլղարիա։ Ինչպես 1896 թ., այնպես էլ 1922 թ. բուլղար ժողովուրդը եղբայրական ձեռք մեկնեց հազարավոր հայ տարագիրների։ 40—50 հազարի հասած բուլղարահայ գաղութում աշխուժացավ տնտեսական-քաղաքական և մշակութային կյանքը։

Բուլղարիայում կապիտալիստական հարաբերությունների արագ զարգացման պայմաններում բուլղար և օտար կապիտալիստների կողքին

բուլղարահայ բուրժուազիան կարևոր դիրքեր գրավեց թեթև արդյունաբերության և առևտրի ասպարեզներում։ Համագործակցելով բուլղար և օտար ձեռնարկատերերի հետ, հայ գործարար շրջանները նպաստեցին արդյունաբերական մի շարք նոր ճյուղերի զարգացմանը (մետաքսաթելի, ծխախոտի, տեքստիլ, կաշվի, աննդի և այլն)։

Հիմնովին փոխվեց բուլղարահայ գաղութի սոցիալական կազմը։ Այն համալրվեց տարագիր գյուղացիական ու արհեստավորական զանգվածներով։ Գաղթական հայերը զրկված լինելով հողից ու սեփականությունից, արդյունաբերողների համար դարձան էժան աշխատուժ։ Համալրելով բուլղարական երիտասարդ բանվոր դասակարգի շարքերը, նրանք մասնակից դարձան սոցիալ-դասակարգային շարժումներին։

Բուլղարական իշխանությունների թույլտվությամբ և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի ջանքերով բուլղարահայ գաղութը ձեռք բերեց ներքին ղեկավարման ինքնուրույն մարմիններ (թեմական խորհուրդ՝ առաջնորդով, դատաստանական ատյան, թաղական խորհուրդներ և դպրոցական հոգաբարձություններ)։ Գաղութի ներսում սրվեց պայքարը տարբեր խավերի ու դասակարգերի միջև՝ այդ մարմիններում իշխող դիրք գրավելու ուղղությամբ։

Նոր հիմքերի վրա դրվեց ազգ սերնդի կրթության ու դաստիարակության գործը։ Գաղութի առաջյա լեզուն դարձան հայերենն ու բուլղարերենը, մինչ այդ կիրառվող թուրքերենի փոխարեն։ Լայն զարգացում ստացան տպագրական գործն ու պարբերական մամուլը։ Հայ ազգային կուսակցությունների գործունեության աշխուժացման հետ լույս տեսան առաջին բուլղարահայ հասարակական-քաղաքական, մշակութային թերթերն ու ամսագրերը։

Մեծ Հոկտեմբերի հաղթանակը և Հայաստանում սովետական կարգերի հաստատումը բուլղարահայ աշխատավորներին կողմնորոշեցին դեպի վերածնվող Հայրենիքը։ Գաղութի առաջադեմ կազմակերպությունները նեցուկ կանգնեցին Սովետական Հայաստանին նյութապես և բարոյապես օգնելու գործին։ Սկսվեց բուլղարահայ աշխատավորների ներգաղթը մայր Հայրենիք։

Պրոլետարական հեղափոխությունների բուռն վերելքի շրջանում բուլղարահայ բանվորները և առաջադեմ մտավորականությունը հարեցին բուլղարական պրոլետարիատի ծավալած սոցիալ-դեմոկրատական շարժմանը։ Նրանք բուլղարական կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ յուրացրին լենինյան միասնական ճակատի տակտիկան և համագործակցելով հայ ս. դ. հնչակյան և ռամկավար-ազատական կուսակ-

յությունների հետ՝ արժանի հակահարված տվեցին դաշնակցության հակահայաստանյան ազգադավ քաղաքականությանը։ Բազմաթիվ բանվորներ, արհեստավորներ ու մտավորականության ներկայացուցիչներ ընդգրկվելով ԲԿԿ շարքերը, մարքսիզմ-լենինիզմի գաղափարների ազդեցության ներքո հեղափոխական գաղափարներ էին տարածում գաղութի աշխատավորական շրջաններում։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո բուլղարահայ կոմունիստները ԲԿԿ Կենտկոմի ցուցումով ստեղծեցին բուլղարահայ կոմունիստների սեկցիա և լույս ընծայեցին առաջին հայ կոմունիստական թերթը՝ «Կարմիր լուրերը», որը հետագայում վերանվանվեց «Նոր աշխարհ»։

Բուլղարական կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հայ կոմունիստները մասնակցեցին 1923 թ. սեպտեմբերյան ապստամբությանը։ Բուլղարահայ աշխատավորական զանգվածներն իրենց կյանքի բարելավման և բուլղարների հետ համահավասար իրավունքներ ձեռք բերելու միակ ճանապարհը տեսնում էին բուլղար ժողովրդի սոցիալական պայքարի հաղթանակի մեջ։ Գաղութի մեծամասնությունը նահանջյան քաղաքացիություն ունենալով, տասնամյակներ շարունակ զրկված էր աշխատանքի և քաղաքացիության հավասար իրավունքներից։ Յանկովյան ֆաշիստական դիկտատուրայի պայմաններում հայ կոմունիստները ընդհատակյա հետևողական պայքար ծավալեցին այդ անիրավությունը վերացնելու համար։ Բուլղարահայ գաղութի կոմունիստական շարժման գործիչները, յուրացնելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարները՝ պայքարեցին բուլղար ժողովրդի սոցիալական ազատագրման համար։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում բուլղարահայ աշխատավորները հերոսական պայքար մղեցին գերմանական օկուպանտների ու բուլղարական ֆաշիստական իշխանությունների դեմ։

1944 թ. սեպտեմբերի 9-ին սովետական բանակի անմիջական օգնությամբ բուլղար ժողովուրդը տապալեց ֆաշիստական դիկտատուրան և երկրում հաստատեց «Հայրենական ճակատի» ժողովրդական իշխանությունը։ Մեծ հայրենականի հաղթական ավարտից հետո ԲԿԿ ղեկավարությամբ բուլղար ժողովուրդը ձեռնամուխ եղավ երկրում սոցիալիզմի կառուցման գործին։ Բուլղարահայ գաղութը սփյուռքում առաջիններից էր, որ մասնակցեց սոցիալիստական նոր հասարակարգի կառուցման աշխատանքներին։ Բուլղարահայերն այժմ երկրի լիիրավ քաղաքացիներ են և ակտիվորեն մասնակցում են ժողովրդական Բուլղարիայի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքին։

1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխությունը բուլղարահայերին հնարավորություն ընձեռեց անմիջական կապ ստեղծել մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ։ 1946 թ. շուրջ 5000 բուլղարահայեր ներգաղթեցին հայրենիք և ակտիվորեն մասնակցեցին հետպատերազմյան շինարարական աշխատանքներին։

1948 և 1967 թթ. Մոսկվայում ստորագրված Սովետական Միության և ժողովրդական Բուլղարիայի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրերը մեծապես նպաստեցին հայ և բուլղար ժողովուրդների տնտեսական, քաղաքական և մշակութային համագործակցության ամրապնդմանն ու հետագա զարգացմանը։ Բուլղարահայերը համախմբված «Երևան» մշակութային միության շարքերում, մասնակցում են սոցիալիզմի կառուցման գործում ժողովրդական իշխանության ծրագրերի իրականացմանը։

Այժմ սոցիալիստական Բուլղարիայի տարբեր քաղաքներում բնակվող շուրջ 20000 հայերից 8000-ը ներգրավված են նյութական բարիքների արտադրության մեջ։ Նրանցից 4000-ը աշխատում են արդյունաբերության մեջ, 600-ը՝ շինարարության, 300-ը՝ տրանսպորտի, 1300-ը՝ առևտրի ցանցում, 2000-ը՝ կենցաղսպասարկման ոլորտում։ Նրանցից 450-ը պարգևատրված են պետական մրցանակներով ու կրծքանշաններով։ Հինգ հայեր սոցիալիստական աշխատանքի հերոսներ են, իսկ 10-ը՝ պարգևատրված են «Գեորգի Դիմիտրովի» անվան շքանշանով։ Սոցիալիստական Բուլղարիայում բարձրագույն կրթություն են ստացել 1600 հայեր[64]։ Նրանցից 550-ը բարձրորակ ինժեներներ, տնտեսագետներ, առողջապահության բնագավառի աշխատողներ, մանկավարժներ են։ Բազմաթիվ բուլղարահայեր գործում են գիտության և մշակույթի ասպարեզներում։ Նրանք իրենց համեստ լուման են ներդնում սոցիալիստական արվեստի զարգացման գործում։

Բուլղարահայերի համագործակցությունը բուլղար աշխատավորների հետ և նրանց սոցիալիստական համակեցությունն է՛լ ավելի է նպաստում երկու ժողովուրդների հոգևոր մերձեցմանը, սովետաբուլղարական և հայ-բուլղարական դարավոր կապերի ու բարեկամության ամրապնդմանն ու հետագա զարգացմանը։

Այսպիսով, բուլղարահայ գաղութի տնտեսական-քաղաքական ու մշակութային զարգացումը բնորոշում է նրան որպես հայկական սփյուռքի ամենամեծ օջախներից մեկը։ Նրա պատմությունն իր պատշաճ տեղն ունի հայ ժողովրդի ընդհանուր պատմության մեջ։

ОЧЕРКИ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ В БОЛГАРИИ (1896—1970)

Резюме

Армянские колонии на Балканском полуострове возникли, начиная с VI века, вследствие насильственного переселения армян византийскими императорами. Впоследствии они сыграли важную роль в экономической, политической и культурной жизни Византии и Болгарии.

Переселения армян в Болгарии продолжались в течение многих веков. В общении друг с другом росло и крепло духовное и боевое братство армянского и болгарского народов против османского ига, отмеченное подъемом национально-освободительной борьбы двух братских народов, их политической ориентацией на Россию.

После освобождения Болгарии от оттоманского ига (1877—1878 гг.) в тяжелые годы армянских погромов и резни в Западной Армении и западных вилайетах Турции более 50000 армян нашли убежище в Болгарии. С 1890-х гг. армянская колония в Болгарии активно принимала участие в национально-освободительной борьбе армян. К этому же времени относятся попытки упрочить армяно-болгарское и армяно-македонское военное сотрудничество в борьбе с турецким господством в Западной Армении и Македонии.

Младотурецкий переворот 1908 г. в Турции не изменил положения как в Македонии, так и Западной Армении.

В годы Балканской войны руководящие круги армянских политических партий Болгарии взялись за освобождение западных армян. Возникла идея создания армянских добровольческих отрядов, которые должны были принять участие в войне против Турции, во главе с отважным сыном армянского народа—Андраником; большое число армян вошло в состав Македонско-Адрианопольского ополчения.

В эти годы в организациях благоевской социал-демократической партии (тесняков) выросло целое поколение армян-революционеров. Когда началась первая мировая война, Болгарская социал-демократическая рабочая партия, в том числе и ее члены—армяне, развернули борьбу против империалистической войны, разоблачали ее захватнический характер. Сведения о геноциде армян в Турции 1915 г. просочились и в Болгарию. Во многих городах страны состоялись совместные митинги протеста болгар и армян.

В первые послевоенные годы армянская колония в Болгарии провела большую кампанию по сбору средств для турецких армян. В этой кампании участвовало и болгарское население.

После греко-турецкой войны (1920—1922 гг.) тысячи армян бежали из Турции в Болгарию. Хотя после первой мировой войны Болгария находилась в тяжелом экономическом положении, тем не менее правительство А. Стамболийского не препятствовало этому.

В 1923 г. перед численно увеличившейся армянской колонией в Болгарии стали вопросы внутреннего управления, упорядочения экономической, общественной и культурной жизни. Большинство армян проживало в Пловдиве, Софии, Варне, Русе, Бургасе, Сливене, Шумене, Айтосе, Ямболе, Стара Загоре, Нова Загоре, Хасково, Пазарджике и т. д. Наряду с болгарами армяне активно участвовали в экономической жизни страны. Особенно значительно было их участие в торговой жизни Болгарии, а также в текстильной, кожевенной, обувной, табачной, ювелирной, пищевой промышленностях.

Армянская торговая и промышленная буржуазия в Болгарии была связана своими интересами с правящими кругами и буржуазией страны. Армянская мелкая буржуазия в Болгарии была представлена в основном городскими торговцами и ремесленниками. Не выдерживая конкуренции с крупными торговцами и промышленностью, она разорялась, пополняя собой ряды армянского пролетариата Болгарии—неразрывной части болгарского рабочего класса. Значительная часть рабочих-армян состояла в бол-

тарских профсоюзах, в местных организациях БКП были и армяне. Вместе со своими болгарскими братьями по классу армянские трудящиеся принимали участие в рабочем движении Болгарии.

В послевоенный период, особенно в годы революционного подъема в Болгарии, армяне стали участниками социально-классовой борьбы болгарского народа, возглавляемой БКП. Под воздействием Великой октябрьской социалистической революции и победы Советской власти в Армении в Пловдиве, по инициативе В. Коларова и видных коммунистов-армян Т. Исмияна, С. Шахбазяна, А. Мурадяна, Г. Тютюнджяна, Г. Момджяна, Г. Шишманяна и др., был организован «Комитет печати». По инициативе БКП стала выходить первая коммунистическая газета армянской диаспоры—«Кармир лурер» (в 1922—1923 гг.—«Нор ашхар»), которая сыграла значительную роль в пропаганде коммунистических идей, всемирно-исторического значения великой Октябрьской социалистической революции. Во время Сентябрьского 1923 г. антифашистского восстания в Болгарии армянские коммунисты вписали немало славных страниц в летопись всенародной борьбы против фашизма.

С притоком в Болгарию новых масс беженцев-армян из Турции создались благоприятные условия для развития армянской национальной культуры. Болгарская армянская колония стала вскоре одним из крупных культурных центров армянской диаспоры. В Пловдиве, Варне, Русе, Софии, Шумене, Сливене, Бургасе, Ямболе, Хасково и других городах действовали начальные и прогимназиальные школы, многочисленные земляческие союзы, спортивные организации, клубы, библиотеки.

Прогрессивные силы армянской колонии во главе с коммунистами стремились использовать общественные организации для сплочения трудящихся, решения насущных задач армянской колонии.

В 1932 г. была осуществлена первая репатриация армян из Болгарии в Советскую Армению по инициативе «Комитета помощи армянам».

В годы второй мировой войны болгарские армяне во главе с БКП приняли активное участие в антифашистском движении

Сопротивления против болгарского фашизма и немецких оккупантов. В рядах БКП состояло много армян. Коммунисты-армяне считали одной из главных своих задач решительную борьбу против дашнаков, деятельность которых в Болгарии особенно оживилась после нападения фашистской Германии на СССР. Были сорваны их попытки создать профашистские «добровольческие отряды» армян.

9 сентября 1944 г. трудящиеся Болгарии под руководством БКП, при непосредственной помощи Советской армии свергли монархо-фашистскую диктатуру и установили в стране народную власть «Отечественного фронта».

С целью сплочения прогрессивных сил армянской колонии Болгарии в октябре 1944 г. в Варне была созвана конференция местных армянских комитетов «Отечественного фронта», в которой приняли участие 60 делегатов из 12 городов с армянским населением. Конференция приняла решение об основании прогрессивного союза «Ереван» и издании его органа—газеты «Ереван». Было избрано правление союза.

Освобожденная Болгария вошла в антифашистскую коалицию, а участие ее в Отечественной войне явилось продолжением движения Сопротивления против немецких оккупантов и фашизма.

Армяне в рядах болгарских войск, партизанских отрядов принимали участие в завершающих операциях Отечественной войны, в освобождении вместе с частями Советской армии Югославии, Венгрии и Австрии. На III Украинском фронте сражалось более 800 армян.

Армяне Болгарии с большим воодушевлением восприняли решение правительства СССР об организации репатриации зарубежных армян. В конце 1946 г. в Советскую Армению из Болгарии возвратилось около 5000 армян. В Болгарии осталось около 25000 человек.

В годы строительства социализма в Болгарии произошли большие изменения внутри армянской колонии. Значительная часть армян оказалась вовлеченной в ряды болгарского рабочего класса, получила классовую закалку. Быстрые темпы приобрел процесс урбанизации; армяне перемещались из малых горо-

дов в крупные—Софию, Пловдив, Варну, Русе, Бургас. Произошли изменения и в органах внутреннего управления колоний.

В настоящее время в социалистической Болгарии проживают около 22 тысяч армян. Сохраняя свой национальный облик, язык, письменность и литературу, они продолжают и умножают вековые традиции армяно-болгарской дружбы и сотрудничества, вносят свою лепту в дело построения социализма в Болгарии, содействуют упрочению и дальнейшему развитию советско-болгарских и армяно-болгарских многосторонних связей.

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1 «Պատմութիւն Սեբէոսի», աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 105։

2 «Արշաւանք Արաբաց ի Հայս, Արարեալ Ղևոնդ վարդապետի Հայոց», Փարիզ, 1857, էջ 97, ինչպես նաև՝ А. Н. Тер-Гевондян, Армения и арабский халифат, Ереван, 1977, с. 100, *տե՛ս նաև Ֆեոդալիզմի եպիս. Փեշտիմալյան, Փ. Պոլսոյ Հայ գաղութի ծագումը և անոր եկեղեցին, Կ. Պոլիս, 1929, էջ 24։*

3 *Г. М. Бартикян,* Движение тондракидов в Византии, Вестник общественных наук АН Арм. ССР, № 9, с. 58—68, Ереван, 1980.

4 «История на България», том 1, София, 1961, с. 160—161, *տե՛ս «Պատմութիւն Արիստակեայ Լաստիվերցւոյ», Վենետիկ, 1844, էջ 58։ Կ. Հ. Ձիճզդյան, Հայ-բուլղարական գրական կապերի պատմությունից, Երևան, 1966, էջ 14։*

5 *В. Н. Златарски,* История на българската държава през средните векове, том 2, София, 1934, с. 535. Также С. В. Овнанян, Армяно-болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во второй половине XIX века, Ереван, 1968, с. 24.

6 Այդ գաղթերի և բուլղարահայ համայնքների մասին առանձին ուսումնասիրություններ են գրել բուլղարահայ բանասեր-պատմաբաններ Ներսես Գասապյանը, Սարգիս Փաշմաճյանը, Դանիել Թադիքաթիլյանը, Վիկտորիա Մոմճյանը, Արմեն Սևանը, Պարույր Աստուրը, Հակոբ Մարաշլյանը, Արա Մարկոսը, Տիգրան Մարտիրոսյանը, Վահե Ջերչյանը, Հակոբ Օրմանճյանը, Միքայել Տոնիկյանը, Կարո Հայրապետյանը, Հակոբ Կիլիկյանը, Էդուարդ Սելյանը, Մարտիկ Հագիցյանը և ուրիշներ, որոնց մասին հիշատակել ենք աշխատության առանձին բաժիններում։

7 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 4, Երևան, 1972, էջ 95—111։ Տե՛ս նաև՝ Ե. եպիս. Ֆեոդալիզմի, նշվ. աշխ., էջ 2։

8 Ե. եպիս. Ֆեոդալիզմի, նշվ. աշխ., էջ 3—4։

9 *К. Маркс* и *Ф. Энгельс,* Сочинения, т. 9, с. 9.

10 Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955, էջ 74։

11 Նույն տեղում։

12 Զ. Մ. Գասպրյան, Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից, Երևան, 1978, էջ 8—9։

13 «Слово», София, 1939, февруари 18.
14 «Кратка история на България», София, 1981, с. 264.
15 Ա. Գ. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմությունից, գիրք 1, Երևան, 1957։ Գիրք 2, Երևան, 1961։*
16 Մ. Գ. Ներսիսյան, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955։* Геноцид армян в Османской империи, Ереван, 1966, также второе дополнительное издание, Ереван, 1983 г.
17 Ե. Պ. Ադայան, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976։ «Հոկտեմբերյան revolutsiyan և հայ ժողովրդի ազատագրումը», Երևան, 1975։*
18 Գ. Բ. Զարիբջանյան, *Մեծ Հոկտեմբերը և պրոլետարական ինտերնացիոնալիզմը, Երևան, 1977 թ.։ Գ. Մ. Դիմիտրովը և հայ ժողովուրդը, Երևան, 1982,* Камо за рубежом, Ереван, 1982.
19 Գ. Ս. Գալոյան, *Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները։ Ուրվագծեր նրանց փոխհարաբերությունների քաղաքական պատմության հին ժամանակներից մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը, Երևան, 1978։*
20 Ջ. Ս. Կիրակոսյան, *Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 80-ական թթ., Երևան, 1980։ Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914—1915 թթ., Երևան, 1965։ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), (Փաստաթղթերի ժողովածու) Երևան, 1972։*
21 Վ. Ս. Միքայելյան, *Ղրիմի հայկական գաղութի պատմություն 1801—1917 թթ., Երևան, 1970։*
22 Հ. Ռ. Սիմոնյան, *Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երևան, 1976։*
23 Վ. Բ. Բարխուդարյան, *Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, գիրք I, Երևան, 1967, գիրք II, 1985։*
24 *Р. М. Бартикян,* Источники для изучения истории павликианского движения, Ереван, 1961.
25 *Г. А. Аветисян, В. И.* Ленин и пролетарский интернационализм в революционном молодежном движении, Ереван, 1979.
26 Վ. Ս. Պարսամյան, *Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Երևան, 1973։*
27 Ա. Ս. Համբարյան, *Երիտթուրքերի ազգային և հոգային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908—1914), Երևան, 1979։*
28 Վ. Կ. Ոսկանյան, Վ. Բ. Բարխուդարյան, *Հայ-ռուսական պատմական կապերը և Արևվելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան, 1978։*
29 *В. Р. Григорян,* История армянских колоний Украины и Польши (Армяне в Подолии), Ереван, 1980 г.
30 *Л. А. Погосян,* Армянская колония Армавира, Ереван, 1981.
31 Ա. Գ. Աբրահամյան, *Համառոտ ուրվագիծ հայ դպրեվանքերի պատմության, Ա և Բ հատորներ, Երևան, 1964 և 1966 թթ.։*
32 Ռ. Հ. Եսայաբյան, *Արտաշատ քաղաքի հայ կոմունիստական մամուլի պատմությունից Երևան, 1960։*
33 Կ. Հ. Ալիգոզյան, *Հայ-բուլղարական գրական կապերի պատմությունից XIX դար, Երևան, 1966։*

34 *С. В. Овнанян.* Армяно-болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во второй половине XIX века, Ереван, 1968.
35 Ա. Ա. Ալպոյաճյան, *Պատմություն հայ գաղթականության, Հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը, հատ. 1, 2, Գահիրե, 1941—1961 թթ.։*
36 Սաատուր Մակարյան, *Հուշեր Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութների, Սելանիկ, 1929։*
37 Ե. Թոփչյան, *«Լույս» պատկերազարդ օրացույց, Թիֆլիս, 1904, 1905, 1915։*
38 Հակոբ Մարաշլյան, Ներսես Գասապյան, *Հայերենի տարեցույց, Պլովդիվ, 1938։*
39 Եվաղդ եպիս. Փերտահճյան, *Փ. Պոլսոյ հայ գաղութի ծագումը և անոր եկեղեցին, Փ. Պոլիս, 1929։*
40 *Васил Коларов,* Младотурската революция и армянските кланета. Пловдив, 1908. *ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 464, ց. 1, գ. 6, թ. 1—40։*
41 Նիկոլա Գիճև, *Նոր մայիսի մեկ, նոր Հայաստան, Հոդվածը բուլղարերենից թարգմանված է հայերեն, «Կարմիր լուրեր», Պլովդիվ, 1921, № 5։*
42 *Г. Кацаров,* Армения и арменският въпрос преди и слод войната, София, 1927.
43 *В. Златарски,* История на българската държава през средните векове, том 2, София 1934.
44 *И. Иванов,* Богомилски книги и легенди, София, 1925.
45 *Д. Ангелов,* Богомилството в България, София, 1961.
46 *И. Дуйчев,* История на България от Блазнус Клайнер, съставена в 1761 г., под редакцияти на И. Дуйчев и Карол Телоизов, София, 1977.
47 *«Ազգային ճակատը» կամ «Ազգային բլոկը» հայ կոմունիստների, հնչակյան և ռամկավար կուսակցությունների միասնական ճակատն էր՝ ընդդեմ դաշնակցության, գաղութի ներքին դեկավարման, կրթական-մշակութային մարմինների ընտրությունների ժամանակ։ Նրանք հանդես էին գալիս ընդհանուր թեթթիկով։*
48 *Բուլղարիայի բոլոր հայաշատ քաղաքներում եկեղեցական խորհուրդների գրասենյակներում գոյություն ունեն արխիվներ, որտեղ պահպանվում են նախկին քաղաական խորհուրդների և դպրոցական հոգաբարձությունների արձանագրությունների մատյաններ։ Նույնպիսի արխիվ գոյություն ունի նաև Սոֆիայի թեմական խորհրդին կից։*

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 «Кратка история на България», София, 1981, с. 262.
2 Софийски градски окръжен държавен архив, ф. 453, оп. 2, ае 8. *Տե՛ս* Գաբիել Բազկրաբյան, *Պոլկարահայուն տարեցույցը, Սոֆիա, 1926, էջ 38։*
3 *«Մուրճ», Թիֆլիս, 1903, № 9։ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, Երևան, 1981, էջ 480—481։*
4 *«Հայրենիք», Բոստոն, 1930, փետրվար։*
5 *Նույն տեղում։*
6 *М. Г. Нерсисян,* Геноцид армян в Османской империи, Ереван, 1982, с. 180.
7 «Кратка история на България», София, 1981, с. 278.
8 *Նույն տեղում, էջ 283։*

9 Централен държавен Исторически архив (ЦДИА), ф. 568, оп. 1, ае. 367, л. 1. *Նամակը գրված է ֆրանսերեն, այստեղ բերված են առանձին հատվածներ։*

10 «Հայրենիք», Բոստոն, 1933, դեկտեմբեր, էջ 44։

11 Աստղուր Մակարյան, Հուշագիրք Թրակիո և Մակեդոնիոյ հայ գաղութներու, Սելանիկ, 1929, էջ 534—539։

12 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, 1981, էջ 521։

13 Դ. Ռագկրաբլյան, նշվ. աշխ., էջ 47։

14 Վ. Ի. Լենին, Երկ հատ. 23, էջ 44—45։

15 Վ. Ի. Լենին, Երկ, հատ. 26, էջ 17։

16 «Работнически вестник», София, 1914, януари 5. «Работнически вестник», София, 1915, август 15.

17 «Հայաստան», Պլովդիվ, 1915, հունիսի 15։

18 «България», София, 1915, август 13.

19 «Պալքանեան մամուլ», Ռուսե, 1915, ապրիլի 14։

20 «Հայաստան», Պլովդիվ, 1915, օգոստոսի 26։

21 «Армянский вестник», М., 1916, № 4, с. 13.

22 ՀՍՍՀ Պատմական պետական կենտրոնական Արխիվ, Ֆ. 464, ցուցակ 1, գործ 6, թ. 13—14։

23 «Վիթոշ-Արարատ», Պուլկարահայ տարեգիրք, Պլովդիվ, 1935, էջ 27։

24 «Պալքանեան մամուլ», Սոֆիա, 1918, դեկտեմբերի 12։

25 «Պալքանեան մամուլ», Սոֆիա, 1918, դեկտեմբերի 5։

26 «Պալքանեան մամուլ», Սոֆիա, 1919, փետրվարի 16։

27 Ա. Մակարյան, նշվ. աշխ., էջ 544։

28 «Ժողովուրդի ձայն», Կոստանդնուպոլիս (Ղալաթիա), 1922, հունվարի 14։

29 Քաղաք էգեյան ծովի ափին, որտեղ արևմտյան իմպերիալիստներն ընդունեցին քեմալական կառավարության վինադադարի պայմանագիրը 1922 թ. սեպտեմբերի 15-ին և Հունաստանի հետ միասին ստորագրեցին «Մուդանիայի պայմանագիրը»։

30 «Հայաստան», Պլովդիվ, 1922, սեպտեմբերի 25։

31 Նույն տեղում։

32 «Ճակատամարտ», Կոստանդնուպոլիս, 1922, հոկտեմբերի 5։

33 Ջ. Ս. Մարափեռյան, Ռ. Գ. Սահակյան, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 583։

34 «Зора», София, 1922, № 1036.

35 «Ճակատամարտ», Կոստանդնուպոլիս, 1922, հոկտեմբերի 8։

36 Եկեղեցական խորհրդի արխիվ, արձանագրությունների մատյան, Պլովդիվ, 1922, էջ 243։

37 Նույն տեղում։

38 «Ազգային իշխանությունը» գաղութի տեղական և կենտրոնական ներքին դեկավարման մարմիններն են (քեմական խորհուրդ, թաղական խորհուրդներ)։

39 «Հայաստան», Պլովդիվ, 1922, նոյեմբերի 4։

40 Եկեղեցական խորհրդի արխիվ, արձանագրությունների մատյան, Պլովդիվ, 1922, էջ 247։

41 «Հայաստան», Պլովդիվ, 1922, հոկտեմբերի 25։

42 «Հայաստան», Պլովդիվ, 1922, նոյեմբերի 4։

43 Echo de Bulgarie, Sofia, 1922, octobre 30.

44 Echo de Bulgarie, Sofia, 1922, octobre 30.

45 «Ժողովուրդի ձայն», Կոստանդնուպոլիս (Ղալաթիա), 1922, դեկտեմբերի 16։

46 «Հայաստան», Պլովդիվ, 1922, սեպտեմբերի 25։

47 «Հայաստան», Պլովդիվ, 1922, նոյեմբերի 25։

48 Բուլղարահայ կոմունիստները հնարավորություն ունենալով լեգալ աշխատելու, ամբապնդեցին հայ քաղաքական կուսակցությունների՝ ս. դ. հնչակյանների և ամկավաթադատականների հետ միասնությունը դաշնակցության դեմ։

49 «Նոր Աշխարհ», Պլովդիվ, 1923, № 19։

50 Софийски градски окръжен архив, (СГОИА), ф. 453, оп 2, ае 8.

51 1920 թ. հայերի նվազումը Բուլղարիայում բացատրելի է այն հանգամանքով, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը էգեյան ծովափի և Արևմտյան Թրակիայի մի շարք հայաշատ քաղաքներ (Դյումիլյինա, Կավալա, Դեդեագաչ, Քսանտի և այլն) պատերազմից հետո անցան Հունաստանի սահմանների մեջ, ինչպես նաև 1926 թ. արտագաղթի պատճառով։

52 СГОИА, ф. 453, оп 2, ае 8.

53 «Поход», София, 1941, февруари 18.

54 «Տեղեկագրություն Դրասիրաց եղբայրության երեսունամյա գործունեության», Կոստանդնուպոլիս, 1914, էջ 20։

55 «Պուլկարահայ տարեգիրք», «Վիթոշ-Արարատ», Պլովդիվ, 1935, էջ 106։

56 Ե. Փոփչյան, «Լույս» տարեգիրք, Թիֆլիս, 1905, էջ 170։

57 «Պալքանեան մամուլ», Սոֆիա, 1935, հունիսի 6։

58 Աբա Մարկոս, Վառնայի հայ գաղութը, «Երևան», Սոֆիա, 1961, դեկտեմբերի 9։

59 Նույն տեղում։

60 Նույն տեղում։

61 «Երևան», Սոֆիա, 1961, դեկտեմբերի 9։

62 «Մշակ», Թիֆլիս, 1904, № 222։

63 «Հայաստան», Պլովդիվ, 1922, նոյեմբերի 4։

64 Արմեն Սևաճ, «Մասիս» տարեգիրք, Սոֆիա, 1934, էջ 283։

65 «Վիթոշ—Արարատ», Պլովդիվ, 1935, էջ 156—157։

66 «Մուրճ», Թիֆլիս, 1904, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 1362։

67 Ե. Փոփչյան, նշվ. աշխ., էջ 170։

68 «Երևան», Սոֆիա, 1962, սեպտեմբերի 28։

69 Դ. Ռագկրաբլյան, Պուլկարահայոց տարեցույցը Սոֆիա, 1926, էջ 79։

70 Ս. Փաչաճյան, Նյոթեր Սլիվենի հայ գաղութի պատմության շուրջ, «Երևան», Սոֆիա, 1963, օգոստոսի 9։

71 Ե. Փոփչյան, նշվ. աշխ., էջ 181։

72 *Ара Маргос,* Арменската колония в Шумен, XVII—XIX векове, Известия на Народния музей Шумен, т. 4, Варна, 1957, с. 103.

73 «Ռազմիկ», Պլովդիվ, 1906, փետրվարի 14։

74 «Փարոս», Պլովդիվ, 1939, հոկտեմբերի 19։

75 «Արաքս», Սոֆիա, 1926, մարտի 2։

76 «Հայաստան», Պլովդիվ, 1922, նոյեմբերի 4։

77 «Պալքանեան մամուլ», Սոֆիա, 1932, հուլիսի 12։

78 Դ. Ռագկրաբլյան, նշվ. աշխ., էջ 71։

79 Նույն տեղում։
80 Արմեն Սևան, նշվ. աշխ., էջ 86։
81 Գ. Ռազկրաբլյան, նշվ. աշխ., էջ 72։
82 «Արաքս», Սոֆիա, 1926, մայիսի 21։
83 «Արաքս», Սոֆիա, 1926, մայիսի 21։
84 «Պալքանեան մամուլ», Սոֆիա, 1933, մայիսի 5։
85 «Ռազմիկ», Պլովդիվ, 1905, նոյեմբերի 12։
86 «Բաղմավեպ», Վենետիկ, ս. Ղազար, 1929, էջ 12։
87 Ա. Սևան, նշվ. աշխ., էջ 313։
88 «Փարոս», Պլովդիվ, 1942, փետրվարի 26։
89 «Երևան», Սոֆիա, 1968, դեկտեմբերի 28։
90 «Փարոս», Պլովդիվ, 1944, փետրվարի 26։
91 «Ռազմիկ», Պլովդիվ, 1905, նոյեմբերի 12։ Տե՛ս «Իրավունք», Վառնա, 1897, հուլիսի 19։
92 «Մշակ», Թիֆլիս, 1906, ապրիլի 26։
93 «Վիքոշ—Արարատ», Պլովդիվ, 1935, էջ 154։
94 Նույն տեղում, էջ 160։
95 Նույն տեղում։
96 Նույն տեղում, էջ 161։
97 Նույն տեղում, էջ 162։
98 Նույն տեղում, էջ 163։
99 Նույն տեղում։
100 Նույն տեղում։
101 Центральный Государственный исторический архив УССР, Киев, ф. 59, оп 1. л. 1
102 Նեռսես Գասապյան, Մեսրոպի գործը, «Մասիս», տարեգիրք, Սոֆիա, 1935, էջ 125։
103 «Հայերեն տարեցույց», Պլովդիվ, 1938, էջ 125։
104 Ա. Մակարյան, նշվ. աշխ., էջ 281։
105 «Հայերեն տարեցույց», էջ 127։
106 «Արաքս», Սոֆիա, 1926, մայիսի 24։
107 1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո այս ձեռնարկությունների հիմքի վրա ստեղծվեց «Դունավսկա կոպրինա» միավորի կոմբինատը՝ սոցիալիստական Բուլղարիայի խոշոր ձեռնարկություններից մեկը մեքսաքսաթիլի արտադրության մեջ։
108 «Ազատ խոսք», Սոֆիա, 1935, հունիսի 5։
109 Հ. Մարաշլյան, Ն. Գասապյան, Հայերենի տարեցույց, Պլովդիվ, 1938, էջ 127։
110 Նույն տեղում։
111 «Արաքս», Սոֆիա, 1926, մայիսի 21։
112 «Слово», София, 1939, февруари 18.
113 Նույն տեղում։
114 «Արաքս», Սոֆիա, 1926, մայիսի 18։
115 Նույն տեղում։
116 *Э. Б. Валев,* Болгария, М., 1949, с. 110.
117 Նույն տեղում, էջ 222։
118 «Մասիս», տարեգիրք, Սոֆիա, 1934, էջ 172։

119 Սարգիս Փաշաեյան, Սոֆիայի հայերը, «Էջմիածին», 1965, «Ե», էջ 47։
120 *Э. Б. Валев,* նշվ. աշխ., էջ 222։ Տե՛ս *Стефан Великов,* Организации и борби на кожаро-обущарските и каучуковите работници в България, София, 1963, с. 155, 177.
121 Գ. Մ. Դաստաբյան, Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից, Երևան, 1978, էջ 27։
122 «Մասիս», Սոֆիա, 1935, էջ 228։
123 Նույն տեղում։
124 «Վիքոշ—Արարատ», Պլովդիվ, 1935, էջ 169։
125 Ա. Մակարյան, նշվ. աշխ., էջ 351—352։ Տե՛ս *Д. Косев, Х. Христов, Д. Ангелов,* Кратка история на България, София, 1962, с. 221, 226.
126 «Ռազմիկ», Պլովդիվ, 1905, ապրիլի 20։
127 «Վիքոշ-Արարատ», Պլովդիվ, 1935, էջ 169։
128 Նույն տեղում։
129 «Մասիս», տարեգիրք, Սոֆիա, 1935, էջ 185։
130 Նույն տեղում։
131 Նույն տեղում։
132 Նույն տեղում։
133 Ս. Փաշաեյան, «Էջմիածին», 1965, «Ե», էջ 47։
134 «Работническо дело», София, 1959, септември 11.
135 Վիճակագրական տվյալների սակավության պատճառով հնարավոր չեղավ պարզել բուլղարահայ առևտրականների ու արդյունաբերողների կապիտալ ներդրումների հարաբերությունը բուլղարական կապիտալ ներդրումների նկատմամբ։
136 ՌՄՄ, Ռարոտնիչեսկի Մլադեժկի Սբյուզ (Կոմերիտմիություն)։ Այսուհետև այդ միության անդամներին մենք կանվանենք ռեմսխաներ, իսկ կազմակերպությունը՝ ՌՄՄ։
137 «Հայաստան», Պլովդիվ, 1923, հունվարի 23։
138 «Պալքանեան մամուլ», Սոֆիա, 1932, հուլիսի 16։
139 Հայ ժողովրդի մեծ բարեկամ, Ագգերի լիպալի գերագույն կոմիսար Տրիտոֆ Նանսենի նախաձեռնությամբ վավերացվեց «Նանսենյան անձնագիրը»։ Սփյուռքում, այդ թվում Բուլղարիայում բոլոր տարագրված հայերն ունեին այդպիսի անձնագրեր և համարվում էին Նանսենյան քաղաքացիներ։ 1934 թ. նրանք Բուլղարիայում առանձին հարկ էին վճարում աշխատանքի իրավունք ստանալու համար։ Գործադրության դնելով նրանց առաջին հերթին ազատում էին աշխատանքից առանց նախազգուշացման։ Բուլղարական ժողովրդական իշխանությունը վերացրեց այդ անհավասարությունը (1944 թ. սեպտեմբերի 9-ին)։
140 «Պալքանեան մամուլ», Սոֆիա, 1935, փետրվարի 23։
141 Նույն տեղում։
142 *Димитр Младенов,* Първите работнически синдикати в България, София, 1959, с. 17.
143 Ա. Հաշատրյան, Տ. Բամբյան, «Լենինյան ուղիով», Երևան, 1963, № 1։ Тодор Болчев, Димитр Благоев в Пловдив (1885—1903), Пловдив, 1964, с. 31.
144 «Մասիս», տարեգիրք, Սոֆիա, 1935, էջ 127։
145 Նույն տեղում, էջ 128։
146 Գ. Շիշմանյան, Հուշեր, էջ 21։

147 «Նոր աշխարհ», Պլովդիվ, 1923, № 19։
148 «Վիթոշ—Արարատ», էջ 127։
